

ԱՆԱ ԱՍՏՐՅԱՆ

**«ԱՐԵԱԿ Բ»**

ՀԱՅՈՑ ԱՆԴՐԱՆԻԿ  
ՕՊԵՐԱՆ





University of  
Hohenheim  
Faculty of  
Agricultural  
and Environmental  
Sciences



Հովհաննես Թումանյան  
H. T.

ՏԻԳՐԱՆ ԶՈՒԽԱՃՅԱՆ  
(1837-1898)

ДУБЛЕТ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

«ԱՐՏԱԿ Բ».

ՀԱՅՈՑ ԱՆԴՐԱՆԻԿ ՕՊԵՐԱՆ

Առաջարանը՝ Ա.Վ.ԱՂԱՍՅԱՆԻ



ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2006

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՏ 782. 1/. 7 (479. 25)

ԳՄԴ 85. 23 (22)

Ա. 732

## Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ

### ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՆԱ


Ա. 732 «Արշակ Բ». Հայոց անդրանիկ օպերան /Պատ. խմբագիր՝ Ա.Վ.Աղասյան. -Եր.: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հրատ., 2006, 268 էջ:

Ընթերցողին ներկայացվող մենագրությունը նվիրված է Տիգրան Չուխաճյանի (1837-1898) և Թովմաս Թերզյանի (1840-1909) հեղինակած Հայոց անդրանիկ «Արշակ Բ» պատմառումանտիկական օպերայի գիտական ուսումնասիրությանը: Հեղինակը վերլուծում է թատերատեսրը, բացահայտում օպերայի երաժշտական լեզվի առանձնահատկությունները, պատմում ստեղծագործության բեմական արտասարքը ճակատագրի մասին: Աշխատությունը հագեցած է նոտային օրինակներով, հավելվածում տեղ են գտել «Արշակ Բ»-ի թերզյանական և գուլակյանական լիբրետոնները:

Հասցեագրված է երաժշտագետներին, հայագետներին և ընթերցող լայն շրջաններին:

ԳՄԴ 85. 23 (22)

ISBN 99941-68-01-0



© ԱՍԱՏՐՅԱՆ Ա.Վ., 2006

• © ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՀՐԱՏ., 2006

Գրախոսներ՝

ԽՍՀՄ և Հայաստանի ժողովրդական արտիստ, պլոֆեսոր  
ԷԿԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ

ԽՍՀՄ և Հայաստանի ժողովրդական արտիստ,  
ԽՍՀՄ և Հայաստանի պետական մրցանակների դափնեկիր,  
պլոֆեսոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԵԲԻՋՅԱՆ

Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ,  
արվեստագիտության դոկտոր, պլոֆեսոր

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՌՈՒԽԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրինությունն  
իր երախտագիտությունն է հայտնում  
«Ոսկան Երևանցի» տպագրատան տնօրեն

ՄԵԽԱԿ ՊՈՂՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ՝

ԿՐՔԻ տպագրության հոգսերը պատրաստակամությամբ ստանձնելու և  
նրա լույսը նձայումն ամենայն սիրով իրականացնելու համար։

Սիրութեան  
նվազից ամ եմ  
թանկագին ծնողների սիրութեան  
գրի գորե եցորի ասասրածանին  
զոհէ ես ա չաջի ձշուրի սասանին

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ ԲԵՄԱԴՐՎԵԼՈՒ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

«Տիգրան Զուխաճյանն առհավետ կմնա պատմության մեջ ոչ միայն որպես հրաշալի երաժիշտ, հայ երաժշտական թատրոնի հիմնադիր, այլև՝ որպես իր ժողովրդի հայրենասեր ու քաջարի դավակ»:

Ա.ՐԱ.Մ ԽԱ.ԶԱ.ՏՐՅԱ.Ն

Բացառիկ է Տիգրան Զուխաճյանի դերը հայ երաժշտության անդաստանում, մեծ ու անդնահատելի՝ նրա վաստակը մեր երաժշտական մշակույթի առջև։ Զուխաճյանի անվան հետ է կապված ազգային պլոֆեսիոնալ երաժշտական դարրոցի սկզբնավորումն ու աննախադեպ զարգացումը. նա է հեղինակել հայկական առաջին օսպերաները՝ պատմառոմանտիկական «Արշակ Բ»-ը, կոմիկական «Արիֆի խորամանկությունը», «Քյոսե Քեհցյան» և «Լերլերիջի Հոր-Հոր աղան», «Զեմիրե» հեքիաթ-օպերան, առաջին ոռմանսները («Գարուն», «Լոռա») և գործիքային ստեղծագործությունները, արևմտահայ իրականության մեջ կազմակերպել երաժշտական առաջին թատրոնը...

Արևելյան երաժիշտներից նա առաջինն էր, որ մասնագիտական երաժշտական կրթություն ստացավ Խտալիայում. կատարելապես տիրապետելով եվրոպական կոմպոզիտորական տեխնիկային՝ արևելյան երաժշտության մեջ արմատավորեց օպերային, սիմֆոնիկ ու կամերային երաժշտության բարդ ժանրերը։ Ինչպես դիպուկ նկատել է խտալացի քննադատ Ռիկարդո Թորենը բոլոնյան թերթերից մեկում հրապարակած «Il Verdi Armeno» («Հայկական Վերդին») հոդվածում՝ «Չուխաճյանը հիմնեց երաժշտական նոր դպրոց՝ արևելյան ազգային մեղեդիները միահյուսելով եվրոպական տեխնիկայի հետ»։

Չուխաճյանի երաժշտությունը նշանավորում է մի ամբողջ պատմական դարաշրջան և խոր հետք է թողել հայ դասական երաժշտության պատմության մեջ՝ որոշակիորեն պայմանավորելով այդ արվեստի հետագա առաջընթացը։

Չուխաճյանի մահվանը (1898) հաջորդած 108 տարիների

ընթացքում, գարմանալիորեն, հեղինակային մտահղացմամբ հայրենիքում չի բեմադրվել կոմպոզիտորի օպերաներից և ոչ մեկը: Հիմնական պատճառը, թերեւս, Չուխանյանի երաժշտական ժառանգությանը բաժին ընկած դառը ճակատագիրն էր: Մահից հետո աշխարհով մեկ ցրիվ եկան կոմպոզիտորի ամբողջապես անտիպ ստեղծագործությունը՝ ներկայացնող արժեքավոր ձեռագրերը, որոնք ժամանակի ընթացքում, բարեբախտաբար, տեղափոխվեցին հայրենիք և հանգրվանեցին Երևանի Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Տ. Չուխանյանի դիվանում:

Ավելի քան 60 տարի է, ինչ համեստորեն իր բեմելին է սպասում հայոց անդրանիկ օպերան, որի երաժշտության հեղինակն է Տիգրան Չուխանյանը (1837-1898), իսկ լիբրետոն գրել է բանաստեղծ, դրամատուրգ, թատերական գործիչ, ուսուցիչ, թարգմանիչ, գեղագետ ու գրական քննադատ Թովմաս Թերզյանը (1840-1909): Հիրավի, համաշխարհային օպերային գրականության մեջ բացառիկ են այն դեպքերը, երբ հանճարեղ կոմպոզիտորի հետ օպերայի համահեղինակի դառնում ժամանակի տաղանդավոր դրամատուրգը:

Փայլուն էին «Արշակ Բ» օպերայի ծնունդը 1868-ին ու առաջին քայլերը, տխուր ու դրամատիկ՝ հետագա ճակատագիրը: Շոնդալից հաջողություն ծննդավայրում՝ Կ. Պոլսում և... մոռացում: Երկրորդ շնչառություն 1945-ին Երևանում և տեական բեմական լյանք, հաղթարշավ տարբեր օպերային բեմերում, Ստալինյան մրցանակ՝ բայց փոփոխված թերզյանական լիբրետոյով ու մերժված չուխանյանական Նախերդանքով: Եվս վեց ներկայացում՝ հեղինակային մտահղացմամբ 2001-ին. այս անդամ՝ ԱՄՆ, Սան-Ֆրանցիսկո: Անհաջող բեմադրություն ու վերստին տեական լուսաբաշխություն...

Երևի թե «Արշակ Բ»-ին վիճակված է կրկնել իր հեղինակի ճակատագիրը: Զէ՞ որ երկար տարիներ աշխարհի տարբեր քաղաքներում ծափահարությունների արժանացած, իսկ հետո թշվառության ու մոռացության դատապարտված Չուխանյանը փառավոր ու մեծահանդես հուղարկավորություն ունեցավ. դագաղի առջեկից քայլող նվագախումբը նվագում էր մեծանուն հանգույցյալի «Marcia funebre»-ն («Սգո քայլերգ»), որը հեղինակը գրել էր հատուկ իր սպո հանդեսին հնչեցնելու համար...

Կարծում ենք, ժամանակն է մոռացության փոշուց թոթափել և Երևանում բեմադրել «Արշակ Բ» օպերան՝ հեղինակային մտահղացմամբ, Թերզյանի թատերատրով ու չուխաճյանական Նախերգանքով՝ վերականգնելով պատմական արդարությունը և հարազատ ժողովրդին ու աշխարհի երաժշտասեր հասարակայնությանը վերադարձնել հայոց անդրանիկ օպերան, ինչը երախտապարտ սերուղների պարտքն է հայկական օպերային երաժշտության սկզբնավորողի, մեծ մասսարոյի հիշատակի առջե:

Անհրաժեշտ է, որ Տ. Չուխաճյանի հանճարեղ օպերային ստեղծագործությունը վերադառնա տարագրությունից, բեմադրվի Հայրենիքում՝ հայ երաժշտների ջանքերով...

Այդ նպատակին կծառայի ՀՀ ԳԱԱ. Արվեստի ինստիտուտի փոխտնօրեն, արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ Աննա Ասատրյանի ««Արշակ Բ»». Հայոց անդրանիկ օպերան» մենագրությունը, որտեղ ընթերցողը չուխաճյանագիտության մեջ առաջին անգամ կգտնի օպերայի ամբողջական ու խոր գիտական ուսումնաաիրությունը, օպերայի թատերատերի մանրախույզը ու հանգամանալից վերլուծությունը՝ կատարված գրական փայլուն ոճով, և կգիտակցի «Արշակ Բ»-ի իսկական պատմական ու գեղարվեստական արժեքը:

Մենագրության տեքստը «Հնչում է», ընդ որում՝ հնչում է անհրաժեշտ տոնայնության մեջ: Փախագում ենք, որ մոտ ապագայում Երևանի Ա.Լ. Սպենդիարյանի անվան աղքային օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի բեմում ևս հնչի «Արշակ Բ» օպերան՝ հնչի այնտեղից այլևս երբեք չհեռանալու և նորանոր օպերային բեմեր նվաճելու հաստատ մտադրությամբ:

ՀՀ ԳԱԱ. Արվեստի ինստիտուտի  
տնօրեն՝

## ԹԵ ԻՆՉՊԵՍ ԾՆՎԵՑ

«ԱՐՇԱԿ Բ». ՀԱՅՈՑ ԱՆԴՐԱՆԻԿ ՕՊԵՐԱՆ» ԳԻՐՔԸ

«Սիրեցինք մենք դինքը, մելամաղձութեան այդ տխրանոյշ զաւակը, զի մերն էր ան, մեր հոգիին աղնուադոյն մասը։ Իր արցունքով լացինք, իր ցաւերով տխրեցանք, իր անուբջով երաղեցինք ու իր շնչով ոգիացանք։»

«ԲԱԶՄԱՎ.ԷՊ», 1899, Հասոր ԾԵ

1992-ին ես, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Կոմիտասի անվան կրթաթոշակառուս, գերազանցությամբ ավարտեցի կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը։ Բնականաբար, ուսումնառությունս պիտի շարունակեի ասպիրանտուրայում։ Դա ինձ չհաջողվեց, քանի որ «Երաժշտագիտություն» մասնագիտության գծով կոնսերվատորիայում ասպիրանտուրա գոյություն չուներ, և երաժշտագետներն ասպիրանտական ուսումնառությունը շարունակում էին Մոսկվայի կամ Լենինգրադի կոնսերվատորիաներում։ Բայց, ինչպես դեռ հիշում ենք, 1991-ին շատերիս Համար անսպասելիորեն փլվեց Խորհրդային Հզոր Միությունը. փլատակների տակ մնացինք նաև մենք՝ իմ սերնդի երաժշտագետներս։ Խզվեցին ավանդական սերտ կապերը Ռուսաստանի կոնսերվատորիաների հետ։ Մեր կոնսերվատորիան սկսեց ջանքեր գործադրել ասպիրանտուրա ստեղծելու ուղղությամբ, բայց՝ ապարդյուն։ Դրանք հաջողությամբ պսակվեցին միայն տարիներ անց՝ 1997-ին։ Եվ այսպես, ասպիրանտուրա ընդունվելու ցանկությունս գեռեւս չիրականացած երազանք էր։

...Սակայն ճակատագիրն ինձ ուրիշ ճանապարհ ցույց տվեց. ՀՀ ԳԱԱ. Հումանիտար գիտությունների բաժանմունքի գիտքարտուղար Հրանտ Քոչարյանի խորհրդով (ինչի համար մեծապես երախտավարություն ունեան) այդ ուղիով 1996-ին եկա Բաղրամյան 24դ, 5-րդ հարկ, ՀՀ ԳԱԱ. Արվեստի ինստիտուտ և ընդունվեցի ասպիրանտուրա (արտադրությունից չկտրված)` շարունակելով մանկավարժական գործունեությունս իմ հարազատ՝ Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, որի նախկին շրջանավարտն էի։

Այդ օրվանից շուրջ տասը տարի ես ամուռ թելերով կապված եմ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հետ՝ այսուհետև ինձ չպատկերացնելով արվեստագիտության այդ հրաշալի օջախից և նրա բեղուն ու վաստակաշատ կոլեկտիվից դուրս:

2001-ի դեկտեմբերի 12-ին պաշտպանեցի «Տիգրան Զուխաճյանի օպերաները» թեկնածուական ատենախոսությունը, ստացած արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան և հաստատ որոշեցի ուսումնասիրել Զուխաճյանի ողջ ժառանգությունը՝ զուգահեռաբար շարունակելով աշխատանքս Հայկական բաց համալսարանի Կոմիտասի անվան երաժշտագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնում: 2002-ին իմ ջանքերով ծնունդ առաջ Տիգրան Զուխաճյան հիմնադրամը:

2005-ին ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման արժանացավ իմ առաջարկած «Տիգրան Զուխաճյանի երաժշտական թատրոնը» թեման, որի շրջանակներում արդեն հրատարակության է պատրաստ «Տիգրան Զուխաճյանի երաժշտական թատրոնը» ստվարածավալ մենագրությունը. վերջինիս մի բաժինն էլ հենց ձեր գատին հանձնվող ներկա աշխատությունն է:

«Արշակ Բ». Հայոց անդրանիկ օպերան» գրքում չուխաճյանագիտության մեջ առաջին անգամ՝

Ա. Ներկայացված է «Արշակ Բ» օպերայի լիբրետոյի հեղինակ Թովմաս Թերզյանի կյանքն ու գործունեությունը,

Բ. Հանգամանորեն վերլուծված է «Արշակ Բ» օպերայի թատերականը,

Գ. «Արշակ Բ»-ի հեղինակային ձեռագիր պարտիտուրի երաժշտագիտական մանրախույզ ուսումնասիրության հիման վրա բացահայտված են օպերայի երաժշտական լեզվի և գրամատուրգիայի բնորոշ առանձնահատկությունները,

Դ. Համառոտ ուրվագծված է «Արշակ Բ» օպերայի բեմական ճակատագիրը,

Ե. որպես Հավելվածներ զետեղված են «Արշակ Բ» օպերայի թերզյանական և գուլակյանական լիբրետոների տեքստերը, ուրոնք առաջին անգամ են դրվում երաժշտագիտական շրջանառության մեջ:

\* \* \*

Օգտվելով առիթից, խորին երախտագիտությունս եմ հայտնում ՀՀ ԳԱԱ. Արվեստի ինստիտուտի տնօրեն, իմ թանկապին բարեկամ Արարատ Աղասյանին, որը մեծապես նպաստեց գրքի լույս աշխարհ գալուն:

Երախտագիտությունս սիրելի ծնողներիս՝ Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահ, Երևանի Հյուսիսային համալսարանի պրոռեկտոր, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Գրիգոր Ասատրյանին և Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետի դոցենտ, քիմիական գիտությունների թեկնածու Զուլետա Ճշմարիտյանին, ովքեր սովորեցրին ինձ սիրել երաժշտությունը, քրոջս ու անձնական բժշկիս՝ նյարդաբան, բժշկական գիտությունների թեկնածու, բժշկագիտության դոցենտ Նունե Ասատրյանին:

Ենորհապարտ եմ «Ռոկան Երևանցի» տպագրատան տնօրեն, Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի պատվավոր անդամ Մեխակ Սարգսյանին՝ գրքի տպագրության հարցում ցուցաբերած ջերմ ու անդնահատելի աշակցության համար:

Երախտիքի խոսք եմ ուղղում գիտական ղեկավարիս՝ ՀՀ ԳԱԱ. Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի վարիչ, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Գևորգ Գյողակյանին, ում հմուտ առաջնորդությամբ կատարեցի երաժշտագիտության աշխարհում իմ անդրանիկ քայլերը, նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի իմ մասնագիտության դասախոսին՝ Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր, Հոգելույս Էղուարդ Փաշինյանին, որն իր հարուստ մասնագիտական գիտելիքներն ու փորձը շռայլորեն փոխանցելով իր սաներին՝ սիրով ու նվիրումով մեր առջե բացում էր երաժշտության զարմանահրաշ աշխարհը, երաժշտագիտության գաղտնիքները:

Խորին շնորհակալանքի խոսքերս ՀՀ ԳԱԱ. նախկին պրեզիդենտ, ակադեմիկոս Թադեյ Սարգսյանին, ում բարյացակամության ու Հոգատար վերաբերմունքի շնորհիվ իմ առջե բացվեցին ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրայի դռները:

Երախտապարտ եմ իմ հարազատ ինստիտուտին՝ Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ. ակադեմիկոս, երջանկահիշատակ Լևոն Հախվերդյանին, ում տնօրինած ինստիտուտում մուտք գործեցի արվեստագիտության աշխարհը, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, արվեստագիտության գոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Հովհաննիսյանին, ում ղեկավարած գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդում ստացա իմ գիտական մկրտությունը, ՀՀ ԳԱԱ. Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, արվեստագիտության գոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանին, ով իմ խնդրանքով ստեղծեց S. Զուխանջյանի՝ ինձ համար թանկ ու նվիրական գիմմանկարը, ՀՀ ԳԱԱ. Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի գիտնականներին, ի մասնավորի՝ գրքիս գրախոս, արվեստագիտության գոկտոր Մարգարիտա Ռուխսկյանին:

Ենորհապարտ եմ ՀՀ ԳԱԱ. «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ. Պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների գոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Խառատյանին և «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի գլխավոր խմբագիր, ԵՊՀ փիլիսոփայության և սոցիոլոգիայի Փակուլտետի ղեկան, փիլիսոփայական գիտությունների գոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Միրզոյանին՝ Զուխանջյանի ժառանգության համար հանդեպ ցուցաբերած ուշադրության, իրենց խմբագրած հեղինակավոր հայագիտական հանդեսներում կոմպոզիտորի երաժշտության ուսումնասիրությանը էջեր տրամադրելու համար:

Ենորհակալ եմ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն, բանահրական գիտությունների գոկտոր Հենրիկ Բախչինյանին, թանգարանի երաժշտության բաժնի և ընթերցարահի աշխատակիցներին:

Ենորհակալանքի խոսքերս աշխատության գրախոսներին՝ ԽՍՀՄ և Հայաստանի ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանին ու ԽՍՀՄ և Հայաստանի ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և Հայաստանի պետական մրցանակների դափնեկիր, մաեստրո Հովհաննես Զեքիջյանին:

Եվ, իհարկե, իմ սրտագին շնորհակալությունը ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի նախագահ, իմ իմաստուն խորհրդատու, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանին՝ Հայագիտության նվիրյալին ու նրա շահերի անխոնջ պաշտպանին՝ երիտասարդ սերնդի Հայագետների ստեղծագործական աճի, հոգսերի ու կարիքների նկատմամբ ցուցաբերող մշտական ուշադրության ու հոգածության համար։ Շնորհապարտ եմ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, իմ մեծ բարեկամ, արվեստի ընկալման բնաստուր ձիրքով օժտված ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանին։

Երախտապարտ եմ իմ հարազատ ՀՀ գիտությունների ագդային ակադեմիայի նախագահությանը՝ Հանձին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռաֆիկ Մարտիրոսյանի։ Թողղ գիտության մեր թանկագին կաճառը այսուհետեւ ևս բարգավաճի՝ ի նպաստ Հայաստանում գիտական մտքի հետագա բուռն զարգացման, ժողովրդի սոցիալ-տնտեսական ու հոգեսոր կյանքում գիտության դերի հետագա ուժեղացման, երկրի համակողմանի առաջընթացի ապահովման համար գիտության ստեղծարար ուժի առավել ոացիոնալ ու արդյունավետ օգտագործման...

## ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

11.08.2006

## Գլուխ առաջին

### ԹՈՎՄԱՍ ԹԵՐՁՅԱՆԸ ԵՎ «ԱՐՇԱԿ Բ» ՕՊԵՐԱՅԻ ԹԱՏԵՐԱՏԵՏՐԸ

«Թէրզեան մին եղած է ամենէն լուսաւոր ու ներդաշնակ դէմքերէն, որ մեր մէջ երեւցած ըլլան։ Իր կիանքն ու գործը, երկու բառով կարելի է ամփոփել. ան սիրեց ու երգեց, և սէր, գեղեցկովթիւն ու երգ սորվեցուց. բանաստեղծ եղաւ և ուսուցիչ, բանաստեղծութեան ուսուցիչ, գեղեցկութեան ուսուցիչ. այս է ամէն ինչ որ ըրավ, և ի՞նչ կարելի է ընել՝ այս աշխարհիս մէջ աւելի վեհ ու բարերար»։

### ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆ

Բանաստեղծ, դրամատուրգ, թատերական գործիչ, ուսուցիչ, թարգմանիչ, գեղագետ ու գրական քննադատ Թովմաս Թէրզյանի գործունեությունը ծավալվել է ժմ դարի երկրորդ կեսին։ Ծնվել է 1840 թվականի հոկտեմբերի 21-ին, Կոստանդնուպոլիսի Բեռա թաղամասում, օտարախոս ընտանիքում։ Հայրը զմյուռնիացի կաթոլիկ հայ էր, մայրը՝ Փրանսահպատակ կորսիկացի։ Ահա թե ինչ է գրում դրամատուրգի կյանքի և ստեղծագործության ամենամեծ գիտակ Արշակ Չոպանյանը՝ 1929-ին Վենետիկում հրատարակված թ. Թէրզյանի երկերի ժողովածուի ընդարձակ առաջաբանում։ «Իր կենդանութեանը, գրեթէ ամէնքը կը կարծէին թէ անոր հայրն ու մայրը օտարազգի էին, հայրը հտաւացի մը, մայրը թոյն մը։ Նոյն իսկ այն դամբանականին մէջ զոր արտասանած է վարպետին յուղարկաւորութեան օրը, Հ. Սահակ Տէր-Մովսէսեան ըսած է՝ «Թովմաս Թէրզեան Հայ չէ, իր արիւնը չելէն է, հտաւացի է. ինչ որ իր մէջ Հայ կայ՝ սիրտն է»։ Ճիշտ է որ մայրը, Աննա, Փրանսահպատակ Քորսիկացի մըն էր, բայց հայրը, ինչպէս փաստացի կերպով կը հաւաստեն բանաստեղծին որդիները, Յակոբ Ռոսսի անունով իզմիրցի կաթոլիկ Հայ մըն էր, դերձակի մը զավակ, ինքն ալ դերձակ, լատինացած, բայց որ իր

<sup>1</sup> Թ. Թէրզեան, Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ, Հ. Ա., Վենետիկ - Ս.Ղաղար, 1929, էջ ԺԱ.

Հայութեան գիտակցութիւնն ունէր և «Հայր մեր»ը հայերէն լեզուով կ'արտասանէր»<sup>2</sup>: Թերզյանի մանկության ընկեր Մկրտիչ Աճեմյանը՝ «Բյուղանդիոնի» 1909 թվականի փետրվարի 21-ի համարում գրեց. «Թէրզեանի հայրը, Հայ Հռոմէական, անունը Յակոբ, բնիկ Զմիւռնացի էր, և իր կինը, ծագումով Քորսիքացի, Փրանսահպատակ էր. երկուքն ալ բարձրահասակ ու գեղադէմ անձեր էին, Պոլիս գաղթած և հաստատված»:

Համաձայն Զմյուռնիայում տարածված սովորության՝ Թերզյանների ընտանեկան խոսակցական լեզուն հունարենն էր, խոսում էին նաև իտալերեն, ֆրանսերեն, թուրքերեն: «Հայերենը վտարված էր այդ օջախից: Այս օտարացած ընտանիքում և թերայի ազգային խայտաբղետություն ունեցող միջավայրում անցավ Թերզյանի մանկությունը՝ չստանալով ազգային որևէ ներշնչում և անհաղորդ մնալով հայ ժողովրդի հոգսերին, կարիքներին ու ցավերին»<sup>4</sup>:

Թովմասը, իր ծնողների անդրանիկ զավակը, 1850-51թթ. ուսանում է Սագգ-Աղաճիի մխիթարյան վարժարանում: «Այդ ժամանակամիջոցին, - հիշում է Մ. Աճեմյանը, - Թէրզեան բնաւ հայերէն չէր գիտեր, վասն զի իրենց ընտանեկան լեզուն յունարէն էր և այս պարագան շատերուն կարծեցնել տուած է թէ իր ծնողքը ազգաւ Յոյն էին...: Պատանին Թէրզեան, ուշիմ ու մտացի, անխոնջ ջանքով կը հետեւէր իր դասերուն, և Մխիթարեան Հարք, գնահատելով իր բացառիկ կարողութիւնները, որոշեցին Վենետիկ Ռաֆայէլեան վարժարան դրկել զինքը խումբ մը աշակերտաց հետ, որոնց մէջ էի ես ինքս, ինչպէս նաեւ Գ. Ապտուլլահ, Ա. Թղլեան և այլք»<sup>5</sup>: 1852-58թթ. Թերզյանը սովորում է Վենետի-

<sup>2</sup> Նույն տեղում, էջ ԺԲ:

<sup>3</sup> Մկրտիչ Աճեմյան (1838-1917) – Հայ բանաստեղծ: Ծնվել է Կ. Պոլսում, սովորել Վենետիկի Մուլար-Ռաֆայէլյան վարժարանում: 1858-ից մինչև կյանքի վերջը պաշտոնավարել է Կ. Պոլսի հեռագրատանը: Բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն («Ժամանք և արտասուբք») լույս է տեսել 1871-ին: Աճեմյանի ստեղծագործության հիմնական գաղափարը բողոքն է սոցիալական անարդարությունների դեմ, մարդկանց ահավլոր թշվառություններին է Հակաբրել բնության գեղեցկությունները: Մ. Աճեմյանը 1870-80թթ. արևմահայ իրականության մեջ ռեալիզմի համար ծավալված պայքարի առաջամարտիկներից էր:

<sup>4</sup> Թ. Թերզյան, Երկեր, Երևան, 1992, էջ 4:

<sup>5</sup> Թ. Թէրզեան, Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ, Հ. Ա., էջ ԺԲ-ԺԳ:

կի Մուրադ-Ռաֆայելյան նշանավոր վարժարանում, կատարելագործում իր իմացած լեզուները՝ հունարենը, իտալերենը, ֆրանսերենը և թուրքերենը, սովորում հին հունարեն, լատիներեն, անգլերեն ու իսպաներեն, կատարելապես տիրապետում հայերենին, լեզու, որ հետագայում պիտի կիրառեր ավելի լավ, քան իր մանկության լեզուները, լեզու, որ պիտի գառնար մայրենի: «Այդ լեզուին քաղցրութեանը, ճոխութեանը, ճկունութեանը սիրահարուած էր, և այդ սէրը իր մէջ զարթեցնելով հօրենական արեան մէջէն իրեն փոխանցուած առհաւական հին բնագդը, սրտին մօտիկ դարձուցած է իր հօր ցեղն ու հայրենիքը, գրում է Ա. Չոպանյանը, զոր մինչեւ մահը սիրած է որդիաբար, հարազատօրեն, մտաւորական փափուկ սիրով մը: Այդ կերպարանափոխութիւնը, կամ աւելի ճիշտ՝ վերադարձը իր բուն ինքնութեան, կը պարտինք Մխիթարեան միջավայրին: Թէրզեան հայ բանաստեղծը, Մխիթարեանց թանկագին նուէրներէն մէկն է հայ ազգին»<sup>6</sup>:

Մուրադ-Ռաֆայելյանում ուսանելու տարիներին թովան աչքի է ընկնում բարձր առաջադիմությամբ: «Տարեկան հարցաքննութեանց մէջ թէրզեան կը ստանար ընդհանրապէս առաջին մրցանակը, հիշում է Մ. Աճեմյանը, ինքը նկարչութեան մէջ այնքան յաջող չէր, բայց բաւական քաջ սրնգահար մըն էր, ինքն և ես միասին սրինգով երկացյն եղանակներ կը նուագէինք: Գեղարուեստական ամէն ճիւղի մէջ մեր հակումները նոյնն էին և միւնոյն իտէալներով սնած՝ յաւետ սրտով կապուած մնացինք, ինքը սակայն միշտ զուարթախօս, սրամիտ ու կատակասէր և լաւ խօսող մըն էր, որ զուարճալի մանրապէպերով գիտէր համեմել իր խոսակցութիւնը, մինչ ես այդ յատկութենէ զուրկ՝ լոիկ իրեն կ'ունկնդրէի ախորդով»<sup>7</sup>:

Բազմահմուտ ուսուցչապետի՝ Դեռնդ Ալիշանի, ղեկավարությամբ թէրզյանը ծանոթանում է հայ և համաշխարհային գրականության դասականների ստեղծագործություններին: Մինչ վարժարանն ավարտելը՝ 1856-ին, «Բազմապէպում» տպագրվում են նրա անդրանիկ երեք բանաստեղծությունները՝ «Մանուկն և Վտակ», «Լերինք» և «Մահ Ահարոնի»: Այդ քերթվածներն աղդարարեցին բանաստեղծի ծնունդը, բանաստեղծ, որը պիտի

<sup>6</sup> Նույն տեղում, էջ ԺԳ-ԺԴ:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ ԺԵ:



կամբջեր արևմտահայ պոեղիայի երկու սերունդները. մի կողմից՝ Ղեռնդ Ալիշան, Մկրտիչ Պեշիկթաշլյան և Պետրոս Դուրյան, մյուս կողմից՝ Միսաք Մեծարենց, Դանիել Վարուժան և Սիամանթո: Հենց նորարար Թերզյանը պիտի արևմտահայ քնարերդության մեջ վերջնականապես հաստատեր ոռմանտիզմի սկզբունքները: «Թերզյանը ոչ միայն հարստացրեց մեր պոեղիան նոր ժանրերով ու թեմաներով, դադափարներով ու մոտիվներով, մեծ վարպետությամբ հղկեց ու կատարելագործեց ոտանավորը, օգտագործեց եվրոպական գրականության մեջ տարածված գործնական նորույթները, օրինակ՝ սոնետը, որն ինքը «նվագ» էր անվանում, առաջինը մեզանում կիրառեց տաղաչափական մի շարք ձևեր, որոնք հետագայում լայնորեն գործածվեցին և՝ արևմտահայ, և՝ արևելահայ բանաստեղծների կողմից, այլև առաջիններից էր, որ եվրոպական մտածողություն բերեց մեր գրականության անդաստանը, ազգայինից վեր բարձրանալով՝ ձգտեց արտահայտել տիեզերական կյանքն ու ողջ մարդկության ճակատագիրը»<sup>8</sup>:

Ավարտելով Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը և 1858-ին<sup>9</sup> վերադառնալով Պոլիս՝ Թերզյանը նվիրվում է մանկավարժությանը, շուտով դասավանդելու հրավիրվում Պոլսի Ներսիսյան վարժարան: Այստեղ նրան աշակերտած Մինաս Չերազը 1927-ին իր սիրելի ուսուցչի որդուն՝ Եղուարդ Թերզյանին ուղղված նամակում գրում է. «Շատ սիրած ու յարգած եմ ձեր բարեյիշատակ հայրը, որ ուսուցիչս եղած է Հասգիւղի Ներսէսեան վարժարանին մէջ: Իր դասերը ոգեւորիչ էին, և գրականութեան ճաշակը ներշնչեց իր բոլոր աշակերտներուն»<sup>10</sup>: Մ. Չերազի կարծիքը կիսում էին Թերզյանի բոլոր աշակերտները: Բնությունից բարոյական ու Փիղիկական ձիրքերով օժտված շնորհալի ու հրապուրիչ անձնավորություն էր, բանաստեղծ «մինչեւ եղունդներուն ծայրը, եւրոպական հին ու նոր դասական ու ոռմանթիկ լաւագոյն բանաստեղծներուն մօտեն ծանօթ, ան գիտցած է իր բո-

<sup>8</sup> Թ. Թերզյան, Երկեր, էջ 16:

<sup>9</sup> Թ. Թերզյանի հետ Վենետիկից Կ. Պոլիս են վերադառնում նրա դասընկերները՝ հետագայում Հայ մշակույթի երախտավորներ բանաստեղծ Մկրտիչ Աճեմյանը, լուսանկարիչ Գևորգ Ապտուլլահը (Ապտուլլահյան), թատերգակ Սրապիոն Թըլլյանն ու դերասան Դավիթ Թըրյանցը. Նախկին դասընկերները մտերիմ ու սրտակից բարեկամներ մնացին իրենց ողջ կյանքում:

<sup>10</sup> Թ. Թէրզեան, Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ, հ. Ա, էջ Ժ:

լոր աշակերտներուն սիրցնել բանաստեղծութիւնը, արուեստը, ինչպէս և հայերէն լեզուն, գիտցած է սիրցնել ինքդինքը, իբր հմայիչ առաքեալ մը զեղեցկութեան, իբր քարողիչ մը բարձր իտեալներով կեանքը լուսաւորելու պէտքին»<sup>11</sup>:

Խասպյուղից հետո Թերզյանը հրավիրվում է Պոլսի մյուս թաղամասերի վարժարաններ ևս՝ շուտով դառնալով քաղաքի ամենափնտրված ուսուցիչը: Զուգահեռաբար նա մասնակցում է Պոլսում ծավալված հայ թատերական շարժմանը, որը տարիներ առաջ նախաձեռնել էին Սրապիոն Հեքիմյանն ու Մկրտիչ Պեշիկթաշլյանը (դեռևս Խասպյուղում ուսուցչություն անելու շրջանում Թերզյանն աշակերտների ուժերով կազմակերպել էր թատերական փոքրիկ ներկայացումներ): Բնդուն էր Թերզյանի գործունեությունը 1860-70-ականներին. իրար ետևից նա գրում է շուրջ երեսուն պիես, հայ թատրոնի խաղացանկը հարստացնում եվրոպական դրամատուրգիայի նմուշների բարձրարկեստ թարգմանություններով ու փոխադրություններով, որոնցից նշելի են Վ. Աքոթի «Լուսուհին» դրաման, Մոնտիի «Արխտողեմ» ողբերգությունը (ըեմագրվեց Նաումի թատրոնում 1860թ. փետրվարի 26-ին), Ռոթայի «Երկու հիսնապետեր» պիեսը. սրանով 1861 թվականի դեկտեմբերի 14-ին իր գործունեությունն սկսեց առաջին հայ պրոֆեսիոնալ թատրոնը՝ «Արևելյան թատրոնը»<sup>12</sup>:

1850-ականների վերջերին Օրթագյուղի բարեսիրաց ընկերության թատրոնում Թերզյանի «Սանդուխտ» ողբերգության անդրանիկ ներկայացման ավարտից հետո արքունի ճարտարապետ, Փարիզում կրթված նրբաճաշակ և հմուտ արվեստագետ, գեղարվեստի ու գրականության մեծ սիրահար Հակոբ Պալյանն իր օթյակն է հրավիրում պիեսի երիտասարդ հեղինակին, շնորհավորում նրան և այդ օրվանից դառնում նրա մեկնասն ու հավատարիմ բարեկամը<sup>13</sup>: Հ. Պալյանն իր տանը հաճախ էր կազմակերպում հավաքույթներ՝ հրավիրելով ժամանակի լավագույն գործիչներին, տաղանդավոր անձանց, արվեստագետների, գրասեր ու ար-

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> «Արևելյան թատրոնի» լավագույն բնմարկություններից էր գտանալու Թ. Թերզյանի «Սանդուխտ» ողբերգությունը, որն առաջին անգամ ներկայացվեց այստեղ 1862թ. մարտի 11-ին, ապա մայիսի 12-ին՝ խաղաշրջանից գուրս:

<sup>13</sup> Հակոբ Պալյանի նյութական օժանդակությամբ 1862թ. վերջերին լույս է տեսնում Թերզյանի «Սանդուխտ» ողբերգությունը:

վեստասեր մարդկանց, որոնք ջերմ ընդունելություն էին գտնում ու արվեստի մասին խոսակցություններով հաճելի և օգտակար ժամանակ անցկացնում: Ժամանակակիցները պատմում են, թե «իրիկուն մը որ հաւաքոյթ ունէր թակոր պէյ, քանի մը օրէ ի վեր թէրզեանին հանդիպած չըլլալով և այդ իրիկունն ալ զայն բացակայ տեսնելով, անհանգստութիւն ցոյց կուտայ ու եկող հիւրերուն մէկիկ մէկիկ կը հարցնէ թէ տեսա՞ծ են զայն այդ օրերուն, ու կըսէ՝ «Եթէ այս իրիկուն ալ զայն պիտի չտեսնեմ, գոնէ տեսնեմ մէկը որ զայն տեսած ըլլայ»<sup>14</sup>:

1865 թվականին Կ. Պոլսի «Պեգասյան թռչնիկ» պատկերագարդ հանդեսում տպագրվում են Թերզյանի «Առավոտ», «Աստղունք», «Երգ սիրո» և «Նմանություն» քերթվածները, իսկ «Մասիսում» հատվածաբարը լույս է տեսնում «Բանաստեղծություն» հոդվածաշարը, որի նպատակն էր հայ ընթերցողին ներկայացնել դրականության և արվեստի հրատապ հարցերը և համաշխարհային հոչակ վայելող գրողների երկերը:

1866-ին Թ. Թերզյանն ստեղծում է իր՝ «Հայկական թատրոնն» ու մի շարք ներկայացումներ տալիս նառամի թատրոնի բեմում:

Բարձր գնահատելով հայ թատրոնի հիմնադրման ու զարգացման գործին մատուցած ծառայությունը, Հակոբ Պալյանը Թերզյանին և Ս. Թղթյանին տրամադրում է խոչոր գումար՝ Փարիզ մեկնելու, թատերական արվեստի նշանավոր գործիչների հետ շփվելու և ֆրանսիական թատրոնի նորագույն նվաճումներին ծանոթանալու նպատակով: 1869 թվականին բանաստեղծն այցելում է եվրոպական մայրաքաղաքներ, որոշ ժամանակ հաստատվում Փարիզում, որտեղ էլ ի թիվս մշակութային շատ գործիչների, ծանոթանում ու մտերմանում է իտալացի հոչակավոր կոմալովիտոր Զուակինո Ռոսինիի հետ: Իր կյանքում արտասահմանյան այդ վերջին ուղերորդությունից Կ. Պոլսիս վերադառնալով գրական-գեղարվեստական հարուստ պաշարով, Թերզյանն ակտիվորեն համագործակցում է Օրթագյուղում գործող Մաղաքյան թատրոնի հետ, որի 1872-73թթ. թատերաշրջանը արևմտահայ թատրոնի ծաղկման բարձրակետն էր, ինչին մեծապես նպաստեցին Թերզյանն ու Թղթյանը: Հատկանշական է, որ հայկական դրամատուրգիայից Մաղաքյանի խումբն այդ թատերաշրջանում ներկայացնում էր միայն «Սանդուխտը»:

<sup>14</sup> Թ. Թէրզյեան, Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ, Հ. Ա., էջ ԺԹ:

Կյանքի առաջին շրջանում թերզյանն իր մանկավարժական ու թատրոնական անդուլ և արգասարեր գործունեության, ինչպես նաև Հակոբ Պալյանի նման ազնվագույն մեկենասի շնորհիվ հասել էր բարեկեցիկ դիրքի: Դեռևս Փարփղ մեկնելուց առաջ Բերա թաղամասում երկհարկանի քարաշեն ընդարձակ տուն էր գնել, ուր տեղավորվել էր նրա բազմանդամ ընտանիքը՝ ծնողները, մորեղբայրներն ու մորաքույրները, երեք եղբայրներն ու երկու քույրերը: Հայրը գերձակի իր արհեստով կարողանում էր ապրուստի համեստ միջոցներ գտնել միայն. որդին, չնայած իր երիտասարդ տարիքին, ծնողների ու ողջ ընտանիքի նեցուկն էր արգեն:

1870 թվականի մայիսի 24-ին մի խումբ երիտասարդների հետ թերզյանը մասնակցում է Ազգային սահմանադրության տասնամյա տարեդարձին նվիրված հանդեսին: «Իրիկուան ուրախ զուարթ կը դառնայինք, Հիշում է Մ. Զերազը, երբ տեսանք Փերայի հորիզոնը կասկարմիր կտրած, և մեր ցնծութիւնը սուգի վոլուսցավ»<sup>15</sup>: Բանաստեղծի համար այդ սուգը հատկապես ծանր էր. սարսափելի հրդեհի ավարտից հետո, երբ հրո ճարակ էր դարձել Բերայի մեծ մասը, նա մոխրացած գտավ ոչ միայն իր տունը, այլև՝ հարազատ հորը: Լսելով հրդեհի լուրը, հայրն ընտանիքն ուղարկել էր ուրիշ ապահով տեղ, իսկ ինքը մնացել որպես տանը գտնվող արժեքավոր իրերի պահապան (որդին Փարփղից սնդուկներով արձաթե սպասաք, նուրբ կարասիներ էր բերել)՝ կարծելով, թե իրենց քարաշեն տունը կդիմանա հրդեհին: Բայց, ավաղ, կրակի բոցերը պաշարել էին շենքը բոլոր կողմերից, և ծերունին՝ չկարողանալով փախչել, զոհվել էր կրակի ճիրաններում: «Այդ մեծ դժբախտութենէն յետոյ, գրում է Ա. Չոպանյանը, որ իր գորովոտ սրտին մէջ անամոքելի վէրք մը բացած է՝ վէրք որ անկեղծ, աղնիւ ու խոր ցաւի մը շեշտերով կը կոտտայ իր շարք մը եղերերգերուն մէջ, իր մայրն էր որ, ինչպէս թովմաս ինքն իսկ իր տաղերէն մէկուն մէջ կը յիշէ, կորով ու նկարագիր ունեցող կին, ընտանիքին բարոյական ղեկավարը, քաջասիրտ ինամակալը կը դառնայ, բայց բուն պետն ընտանիքին, անոր նիւթական պէտքերուն հասնողը թովմասն էր այլևս: Ինքն է որ հոգածու կ'ըլլայ իր երեք եղբայրներուն և կ'ամուսնացնէ իր երկու քոյրերը, մին կաթողիկ ու միւսը լուսաւորչական հայու մը հետ:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 1:

իր կրտսերագոյն եղբայրը ինքն իսկ դրած է Կալաթա-Սերայի վարժարանը և յետոյ Միլքիէ, և յետոյ իր յարաբերութեանց ալ շնորհիւ զայն կովկասի մէջ թրքական գեր-հիւպատոս անուանել տուած է, պաշտօն, զոր ան կատարած է երկար տարիներ»<sup>16</sup>:

Հակոբ Պալյանի մահից հետո Թերզյանը լիովին նվիրվում է ուսուցչությանը՝ այդ բնագավառում հասնելով բարոյական ու նյութական նորանոր ձեռքբերումների: Աստիճանաբար նրա համբավը տարածվում է Հայկական շրջանակներից դուրս. նա հրավիրվում է Օսմանյան պետական վարժարաններ՝ որպես ֆրանսերենի ուսուցիչ, իսկ 1886-ին Կ. Պոլսի նորաբաց Կեդրոնական վարժարանում նրան է վստահվում ֆրանսերենից Հայերեն թարգմանության դասընթացը: Միաժամանակ՝ իր հայ և թուրք աշակերտների համար նա հրատարակում է Հայերեն, ֆրանսերեն ու թուրքերեն լեզուներով դասագրքեր: Թերզյանն ունեցել է հայ և թուրք բազմաթիվ աշակերտներ, որոնցից շատերը թեև հետագայում հասել են դիրքի ու գրափել բարձր պաշտոններ, սակայն միշտ խորին հարգանք են տածել իրենց սիրելի ուսուցչի հանդեպ: Նրա սաներից են հայ մշակույթի երախտավորներ Արշակ Զոպանյանը, Գրիգոր Զոհրապը, Հրաչյա Աճառյանը, Եղիսա Տեմիրճիպաշյանը, Երուխանը, Անայիսը, Մինաս Զերապը, Ռեթեսոս Պերպերյանը, Տիգրան Արփիարյանը և էլի շատ ուրիշներ, ովքեր միշտ մի առանձին սիրով ու ջերմությամբ են հիշել իրենց Ուսուցչին, խոստովանել, որ նրա շնորհիվ է բացահայտվել իրենց տաղանդը: «Անոնք որ Թէրզեանի աշակերտ եղած են, հով մը ունին իրենց վրայ, զոր ուրիշներուն քով չես տեսներ»<sup>17</sup>: Թերզյանն իր աշակերտներին ոչ միայն գեղարվեստական ու գրական ճաշակ էր փոխանցում, այլև սովորեցնում էր կյանքի արվեստը՝ լինել ուղղամիտ ու հավատարիմ, չափավոր ու ինքնազուսպ, գաղափարապաշտ ու բարեկիրթ, բարեհետ ու ընկերասեր: «Անոր դասերը սրարտականութիւններ չեին, այլ հաճելի պահեր որ կ'անցկացնէինք գրասեղաններուս վրայ, սրտերնիս բարախուն հաւնելու յոյսով, լաւագոյնը ընելու իրական տենջով»<sup>18</sup>:

1874 թվականին Թ. Թերզյանն ամուսնանում է պոլսահայանվանի մտավորական Հովհաննես Սագրզյանի քրոջ դստեր՝ Սա-

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>18</sup> Անայիս, Յուշերս, Փարփակ, 1949, էջ 29:

թենիկ Սոֆյալյանի հետ, որը Բերայի լավագույն ընտանիքներից մեկին պատկանող գեղանի հայուհի էր: «Թէրզեան անոր հանդիպեր էր՝ իր մէկ ազգականութեան տունը,՝ հիշում է Ա. Չոպանյանը 1929-ին,՝ ուր դաս տալու կ'երթար, և առաջին տեսնելուն՝ անոր սիրահարուած, քիչ յետոյ ձեռքը խնդրած էր հօրմէն, Վիչէն Սոֆեալեանէն, որ ինքն ալ զարդացած Հայ մը, Փրանսերէնի և հայերէնի ուսուցիչ, հիացող մըն էր Թէրզեանի և հաճոյքով իր հաւանութիւնը տուած էր: Իր ամուսնութենէն, որ կեանքին մինչեւ վերջը երջանկութեամբ, խաղաղութեամբ, գորորով լի բոյն մը շնորհած է իրեն, Թէրզեան ունեցած է չորս զաւակ, Լեւոն, գոր դրկած է Փարիզ ատամնաբուժութիւն ուսանելու, Եղուարդ, որ ճարտարապետական մասնագիտութիւն ուսած է հտալիա, Հրանդ, որ Փերայի կաթոլիկ հայոց Ա. Լուսաւորիչ վարժարանէն շրջանաւրատ՝ Պոլսոյ Պանք Օթօմանին մէջ պաշտօնեայ է, և Արման որ տասնուեց տարեկան ծաղիկ հասակին մէջ վախճանեցաւ 1903-ին, ամենախոր վիշտ պատճառելով հօրն ու մօրը»<sup>19</sup>:

1882 թվականին Կ. Պոլսում լույս է տեսնում Թէրզյանի «Քերականություն աշխարհաբար լեզվի» դպրոցական դասագիրքը՝ հետագայում բազմից վերահրատարակվելով: Նա ձեռնամուխ է լինում արևմտահայ դպրոցում գրականության՝ որպես առանձին առարկայի, դասավանդմանը, ինչը նորություն էր: Գրաբարի քերականության միապաղադ սառույցից հետո, ինչպես նկատում է Գրիգոր Զոհրապը, «ուր բենուային ուղևորությանց մեջ պատահածին պես, գացողները մեծ մասով կը փատնան, ճշմարիտ գարունի մը տապավորությունը ըրավ այս դասախոսությունը աշակերտներուն վրա. ամենքը կանանցան՝ ծաղկեցան»<sup>20</sup>: Իսկ Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանում Փրանսերէնից հայերեն թարգմանության դասընթացն ընկալվում էր որպես գրականության դաս. «մեզի կը կարդար Փրանսիական այս կամ այն մեծ բանաստեղծին մէկ էջը,՝ հետագայում հիշում է Կեդրոնական վարժարանում Թէրզյանին աշակերտած Ա. Չոպանյանը,՝ ու կը բացատրէր անոր ներքին իմաստը, անոր գեղեցկութիւնները, խօսքի ու ձեւի ամենէն խուսափուկ նրբութիւնները, այնպիսի ճարտա-

<sup>19</sup> Թ. Թէրզեան, Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ, Հ. Ա., էջ իթ:  
<sup>20</sup> Գլ. Զոհրապ, Երկերի ժողովածու, Հատոր 1, Երևան, 1962, էջ 428-429:

ու հրապոյրով, այնպիսի յափշտակութեամբ, ու նաեւ սրամիտ, փափկագէտ, ուշագրաւ դիտողութիւններով, որ ամենէն չոր միտք ունեցող աշակերտն իսկ զմայլած մտիկ կ'ընէր ու գրասէր կը գառնար: Ամբողջ դասարանը, լուռ, ամփոփուած, շունչը բոնած, իր բերնէն կախուած կը մնար: Իր ազգած մոգութեան մէկ պատճառն ալ, իր հմտութեան, իր ճաշակին, իր բացատրելու կարողութեան հետ, իր հմայիչ դէմքն էր և իր նուրբ, ներդաշնակ, շնորհալի ձեւերը. Հիւկոյի կամ Միւսէի կտոր մը կարդացած ու մեկնաբանած ատեն, իր այնքան համակրելի դէմքը, ներքին վճիտ պայծառութեամբ մը լուսաւորուած, աւելի եւս գեղեցիկ կը դառնար, դէմքին դաշն ու նուրբ գծերը, փափուկ ու թեթեւօրեն գանդուր մազերով շրջանակուած բարձր ու խաղաղ ճակատը՝ աւելի նուրբ, աւելի քաղցր, աւելի վեհ կ'երեւային, կապոյտ մեղուշ աչուըներուն փափուկ նայուածքը, հոգելից, տարտամ ու մեղմ ժպիտով մը վառած, կը յառէին աշակերտներուն գլխէն վեր, դիմացը, հեռուն, խորհրդաւոր անտես կէտի մը, և կը խօսեր ինչպէս քահանայ մը որ նուիրական արարողութիւն մը կը կատարէ, առանց սակայն ո և է թատերաձեւ չափաղանցութեան, պահելով իրեն յատուկ պարզ, բնական, անկեղծ ձեւը»<sup>21</sup>:

Սիփական նախաձեռնությամբ Թ. Թերզյանը շուտով դասավանդում է գեղագիտություն, ինչը նույնպես աննախագենպերեւույթ էր արևմտահայ դպրոցի պատմության մեջ: Նա աշակերտների համար կազմում է դասագիրք, որը «Գեղեցկագիտություն» վերնագրով 1899-1901թթ. հրատարակվում է «Բազմավիճակ» հանդեսում. աշխատությունը կոչված էր հղկել երիտասարդության ճաշակը, արթնացնել սեր և հետաքրքրություն ընթերցանության հանդեպ:

Թերզյանն արժանացել է օսմանյան կառավարական միշտակեների՝ առանձնապես նշանակություն չտալով դրանց: Մինչդեռ բանաստեղծի համար հատկապես թանկ էր, ինչպես վկայում են ժամանակակիցները, «Ակադեմիական արմավենի» շքանշանը, որով պարզեատրվել էր ֆրանսիական կառավարության կողմից՝ Արեւելքում ֆրանսերեն լեզուն ու ֆրանսիական մշակույթը տարածելու գործում ծանրակշիռ ավանդի համար:

<sup>21</sup> Թ. Թերզյան, Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ, Հ. Ա., էջ ի գ:

Թերզյանն ապրեց ընդհանուր առմամբ խաղաղ ու ներդաշնակ կյանք, որը, ցավոք, մթագնեցին անձնական երկու ողբերգությունները՝ երիտասարդ շրջանում հոր ողբերգական մահն ու կյանքի վերջին տարիներին կրտսեր որդու վաղաժամ կորուստը, երկու խոր վիշտ, որ խոցեցին նրա այնքան զգայուն սիրտն անանց մորմոքով։ Բանաստեղծի կյանքի խաղաղությունը վրդուվեցին ևս երկու անախորժություններ։

Համիդյան մռայլ օրերին Հարպիեի դինվորական ուսումնարանի տնօրին Զեքի բեյը Թերզյանին խնդրում է պատրաստել անեկդոտների ժողովածու որպես ֆրանսերենի դասագիրք։ Տարբեր գրքերից մանր պատմություններ հավաքելով, նա կազմում է ժողովածուն։ Զեքի բեյը, անչափ գոհ մնալով, հրատարակում է դա «*La fleur des anecdotes*» (Մանրավեպերի ծաղիկը) վերնագրով և իբրև դասագիրք գործածության մեջ դնում Հարպիեում։ Աշխատության մի քանի օրինակներ տալիս է իր կայսերազուն աշակերտներին։ Մի քանի օր անց Սուլթան Համիդը կանչում է Զեքի բեյին ու խոժոռ դեմքով հարցուվորձ անում Թերզյանի մասին։ Վտանգի հոտն առնելով, Զեքի բեյը պատասխանում է, թե հեղինակը Հարպիեի ֆրանսերենի ուսուցիչն է, սակայն չի համարձակվում խոստավանել, որ դիրքը ստեղծվել է ի՞ր առաջարկով ու նախաձեռնությամբ, տպագրքելուց առաջ հավանության արժանացել ի՞ր կողմից։ Սուլթանը մատնանշում է այն չերը, ուր տեղ էին գտել կայսրերի մասին պատմություններ՝ դրանցում ակնարկներ տեսնելով սեփական անձի մասին։ Սուլթանի հրամանով գիրքը հանվում է գործածությունից, իսկ հեղինակը՝ վտարվում բոլոր պետական վարժարաններից։ Իմանալով այդ, Թերզյանը խորապես վշտանում է, վրդովվում և քանի որ ընտանիքով Անատալիա աքսորվելու վտանգ կար, որոշում է հեռանալ Թուրքիայից ու հաստատվել եվրոպական որևէ երկրում, քանզի համիդյան վարչակարգի հեղձուցիչ մթնոլորտում ապրելն այլևս անկարելի էր։ Սակայն մեկնելու արտոնությունն նրան չի տրվում։ Որոշ ժամանակ անց ազգեցիկ բարեկամների շնորհիվ հաջողվում է վերականգնել ուսուցչի պաշտոնը Միլքիեի ու Ղալաթա-Սերայի վարժարաններում, բայց Հարպիեի դռներն այլևս փակ էին Թերզյանի առջև։ «Բոնակալին թանձր անհասկացողութիւնը և

այդ լիմարական քմահաճոյքը իր վրայ շատ գեշ ազդած էին, և այդ աղդեցութիւնը անջնջելի մնաց իր մէջ, թեեւ կը զգուշանար բնականաբար զայն մտերիմներու շրջանակէն դուրս յայտնելէ»<sup>22</sup>:

Նմանօրինակ մի անախորժ միջադեպ էլ տեղի ունեցավ 1890 թվականին: Թրքական զրաքննությունն արգելել էր մի շարք բառերի՝ այդ թվում «աստղ» բառի գործածությունը. թուրքերեն «ելտրզ» (աստղ) բառով էր հորջորջվում սուլթանի բնակվալը: Եվ ահավասիկ Համիդը լրտեսներից լուր է առնում, թե Հայոց Պատրիարքարանի «Պատկեր» ամսագրում տպագրվել է մոռայլ արտահայտություններով լի ծավալուն բանաստեղծություն՝ Թերզյանի «Առ աստղ» քերթվածը: «Պատկերի» հրատարակությունն ընդմիշտ արգելվում է: «Թէրզեան այնպիսի վրդովմունք ու նաեւ զգուանք զգաց այդ խելագար բունակալութեան արարքէն, որ որոշեց այլեւս ոչինչ հրատարակել. և արդարեւ, մինչեւ Օսմանեան Սահմանադրութեան հռչակումը շատ քիչ բան հրատարակեց թերթերու մէջ: Կը շարունակէր միշտ գրել՝ իր հոգեկան հաճոյքին համար, բայց իր ձեռագիրները կը յանձնէր օտարազգի բարեկամներու, որպէս զի իրենց տունը պահեն դանոնք, վախնալով, որ օր մը իր տունը խուզարկութեան կրնայ ենթարկուիլ. և այդ ալ պատճառներէն մին է որ իրմէ կը մնան այնքան բազմաթիւ անտիպ էջեր»<sup>23</sup>:

Ժթ դարավերջին Թուրքիայում տիրող հասարակական-քաղաքական և գաղափարական կյանքի գժոխային մթնոլորտում աստիճանաբար ձևավորվում էին թուրքական կառավարության հայակործան հրեշտակոր քաղաքականության ուրվագծերը:

Անողոք մահը 1903 թվականին խլում է Թերզյանի կրտսեր որդուն՝ տասնվեցամյա Արմանին, անհուն վիշտ պատճառելով սղակիր ծնողներին: «Կը յիշեմ, գրում է բանաստեղծի որդին՝ Եղուարդը, թե ի՞նչ ահաւոր վշտի մը մէջ թաղուցան հայրս ու մայրս. բայց թէպէտ անմխիթարելի կսկիծով սիրտը պատռտուած էր, հայրս ինքզինքը կը բունադատէր մօրս քով հանդարտ երեւալու, կը ճգնէր զայն մխիթարել, անոր ցաւը մեղմացնել. կը լսէի մերթ իրիկունները, որ անոր կը խօսէր հանդերձեալ կեանքի անամպ երջանկութեան վրայ, կ'ուզեր զայն համոզել, թէ իրենց

<sup>22</sup> Նույն տեղում, էջ իւ:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ իԶ:

Արմանը այլեւս կ'ապրէք աւելի գեղեցիկ, աւելի երջանիկ կեանքով մը՝ աւելի լուսաւոր, աւելի մաքուր աշխարհի մը մէջ»<sup>24</sup>:

1909 թվականին Թերզյանը կաթվածահար է լինում. անդամալույթ է դառնում մարմնի ձախ կողմը՝ նա այլեւս դատապարտվում է ցմահ փակված մնալ տանը: Հիվանդությանը նախորդում է աչքերից մեկի կուրությունը, որոշ ժամանակ կորցնում է խոսելու կարողությունը, բայց փորձառու բժիշկները բարեկավում են վիճակը: «Զէր կրնար,- հիշում է Եղուարդ Թերզյանը,- ոչ գրել, ոչ կարդալ. օրիորդ մը կուգար ամէն օր իրեն ընթերցումներ ընել ու մանաւանդ իր բանաստեղծութիւններն օրինակել ձեռագիրներու վրայէն և իրեն կարդալ՝ որպես զի բերանացի իր դիտողութիւններն ու սրբագրութիւններն ընէր»<sup>25</sup>: Անկողնուն գամված անգամ՝ բանաստեղծը շարունակում էր արարել. կարգի էր բերում տպված ու անտիպ քերթվածները, հորինում նորերը՝ փափագելով հրատարակել բանաստեղծությունների ժողովածուն, բայց՝ ապարդյուն: Սեփական տկարությանը հաջորդում է կնոջ՝ Սաթենիկի ծանր ու ցավատանջ հիվանդությունը: Հիվանդ տիկնոջ տառապանքներն ավելի էին բզկտում Թերզյանի հոգին: Նման պայմաններում, 1909 թվականի փետրվարի 8-ին վախճանվում է բանաստեղծը. երեք ամիս անց ամուսնուն ու վաղամեռիկ զափակին է միանում տիկին Թերզյանը: «Պոլսոյ հայ հասարակութիւնը, իր բոլոր հատուածներով միացած, խորին յարգանքի ցոյցերով պաշարեց վարպետին դագաղը: Յուղարկավորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Փերայի Ս. Յովհան Ուկերեան եկեղեցւոյն մէջ, նախագահութեամբ Սեբաստիոյ առաջնորդ Տ. Լեւոն Քէչէճեան եպիսկոպոսի, ներկայութեամբ Պոլսոյ հայ հասարակութեան ընտրանիին. դասին մէջ կեցած էին իրը սդակիր՝ երկու Հայ վարդապետներ զոր Հայոց Պատրիարքարանի կողմէ զրկած էր իզմիրեան սրբազանը, և Միսիթարեան Միաբանութեան կողմէ՝ Հ. Յուսիկ Մեհրապեան, Հ. Եսայի Տայեցի և Հ. Սահակ Տէր-Մովսէսեան: Այս վերջինն արտասանեց դամբանականը: Յետոյ, տարին զինքը հանգչեցնել Շիշլիի գերեզմանատունը, Պեշիկթաշլեանի, Հեքիմեանի, Աղամեանի մօտիկ...»<sup>26</sup>:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ ԻԲ:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ ԻԹ:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ ԻԹ-Լ:

\* \* \*

Ժմ դարի կեսերին ձևավորվում է Հայ թատրոնի պատմահայրենասիրական խաղացանկը: 1860-ականների սկզբին ստեղծվում է լիմանական մեծաքանակ դրականություն. գեղարվեստական նոր խմաստավորում են ստանում պատմական ավանդույթները վեր Հանելով՝ հերոսականության և ինքնազոհաբերման գաղափարները:

Իրավամբ, Ժմ դարի երկրորդ կեսին թատրոնը Հայ ժողովրդի պատմության հայելին էր: Ժամանակը պահանջում էր լուսավորել ազգը պատմական իդեալներով ու պետականության գաղափարով, բեմում ստեղծել այն, «ինչը կյանքում հեռանկար չէր խոստանում, ապրել ու հանդիսատեսին ապրեցնել «Հայաստան դրախտավայրում» և ազգի համար կովող ու նահատակվող հերոսների ու արքաների միջավայրում»<sup>27</sup>:

Ժմ դարի 50-60-ականներին Հայ թատրոնի խաղացանկում գերաշում էին ազգային-ազատագրական պայքարի գաղափարի անմիջական ծնունդ հանդիսացող պատմական ողբերգությունները: Հարազատ ժողովրդին հավատարիմ, պայքարի ասպարեզում միշտ նրա կողքին կանգնած և ժամանակի հրատապ խնդիրներով ապրող թիրզյանը ևս հանդես է դալիս պատմական ողբերգության ժանրով: Նրա դրամատուրգիան՝ առաջնաթագավորության ժամանակական թատրոնի և դրամատուրգիայի պատմության մեջ, ոռմանտիկական թատրոնի տարրեր կրելով՝ սա ճանապարհ էր Հարթում ոռմանտիկական դրամայի համար:

Պահպանվել են Թիրզյանի թատերախաղերից մի քանիսը միայն՝ «Սանդուխտ», «Հոփիսիմի կույս նահատակ», «Խոսրովորդի Վահեի», «Մովսես մարդարե», «Մահն Արելի», «Անառակորդի», «Հովսեփ Գեղեցիկ», «Ֆառարա», ինչպես նաև «Արշակ Բ» օպերայի լիբրետոն:

«Սանդուխտ» առաջին անգամ բեմադրվել է Օրթագյուղուուրում 1850-ականների վերջին, հեղինակի կյանքի օրոք տպադրվել երեք անգամ՝ Կ. Պոլսում (1862), Վենետիկում (1871) և Երուսաղեմում (1881): Ինչպես գրում է Գ. Ստեփանյանը, ««Սանդուխտը» սկսած 1850-ական թվականների վերջերից մինչև Հայերեն

<sup>27</sup> Հ. Հովհաննիսյան, Հայ թատրոնի պատմություն. XIX դար, Երևան, 1996.էջ 65-66:

Ներկայացումների արգելումը (1879թ.) Պոլսի ու Զմյուռնիայի հայ թատրոնների խաղացանկում գրավել է առաջնակարգ տեղ: 1909թ. հետո էլ, երբ Պոլսում նորից հնարավոր դարձավ հայերեն ներկայացումներ տալ, առաջինը «Սանդուխտը» բեմ բարձրացավ՝ Վահրամ Փափազյանի ջանքերով, դառնալով ամենաշատ խաղացված ողբերգություններից մեկը»<sup>28</sup>: Ի դեպ, «Սանդուխտի» վերադարձն ազդարարող այդ բեմադրությունը մեծ և խորունկ հուզում ու բերկրանք պատճառեց արդեն անկողնուն գամփած Թերզյանին, «որ հիւանդութեան օրըստօրէական նախաճիրներուն ենթակայ, միտքէն իսկ չի պիտի անցընէր այդ վերջին երանութիւնը, մխիթարութիւնը իբր հեղինակ: Ի զուր փափաքած էր ներկայ գտնուիլ տարիներէ վերջ կրկին բեմ ելած այդ թատրութեան ներկայացումին. սակայն եթէ իր փափաքը չկատարուեցաւ, փրկելու համար զինքը ուժգին և ստոյդ յուզումէ մը, նոյն օրուան հանդիսատեսները իր իսկ ներկայութիւնը վայելած ըլլալու տպաւորութեան տակ ծափահարեցին թէրզեանի գերազանցապէս բանաստեղծական խաղը, անոր առթած հիացումին և սքանչացումին հանդէպ»<sup>29</sup>:

«Սանդուխտը» շուրջ 50 տարի չի իջել հայ բեմից՝ դառնալով ամենաշատ խաղացված պատմական ողբերգություններից մեկը: Եվ պատահական չէ, որ հանճարեղ Պետրոս Աղամյանի թիկնոցը Վահրամ Փափազյանի ուսերին է գցվել հենց «Սանդուխտի» ներկայացումներից մեկից հետո<sup>30</sup>:

Ողբերգության նյութը վերցված է հեթանոսական շրջանի հայոց պատմությունից. Թերզյանը մշակել է Սանդուխտի վկայաբանությունը, որի մասին անդրանիկ տեղեկությունը Մովսես Խորենացունն է, իսկ ամբողջությամբ հրատարակվել է Վենետիկում 1853-ին՝ Ղ. Ալիշանի «Սոփիերք հայկականք» ժողովածուի և հատորում: Հեթանոսության և քրիստոնեության դաժան պայքարը թէրզյանը մարմնավորել է հեթանոս հոր՝ Սանաւորուկի և քրիստոնյա դստեր՝ Սանդուխտի բախմամբ: Սակայն կրոնական թեման լոկ քողարկում է ողբերգության հայրենասիրական բովան-

<sup>28</sup> Գ. Ստեփանյան, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, Երևան, 1962, էջ 384:

<sup>29</sup> Թ. Թէրզեան, Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ, հ. Բ, Վեհատիկ - Ա. Աղարք, 1929, էջ 457:

<sup>30</sup> Տե՛ս Թ. Թէրզյան, Երկիր, էջ 12:

դակությունը՝ դժվար չէր հեթանոս Սանատրուկի փոխարեն պատկրացնել թուրք բռնակալներին: Հայտնի է, որ ողբերգությունը միշտ տապալվել է թույլ ու անփորձ դերասանների խաղի դեպքում, մինչդեռ տաղանդավոր դերասանները բացահայտել են հենց այդ բովանդակությունը: Դրա վկայությունն է Զմյուռնիայում 1864թ. մայիսին «Վասպուրական» թատրոնում կատարված հայ թատրոնի պատմության մեջ աննախընթաց եղակի դեպքը, երբ Արուսյակ Փափազյանի Սանդուխտի առաջ բերած ազգային-հայրենասիրական կրքերի ներգործության տակ հանդիսականները բեմ են նետել Հայկական դրոշակ և ներկայացումը վերածել քաղաքական ցույցի<sup>31</sup>: Ինչպես նշում է Հ. Հովհաննիսյանը, «Ոչ մի հեղինակ Թերզյանից առաջ նման իրադրություն չէր ստեղծել. մարդկայնորեն չէր միավորել երկու սկզբունքները (հավատի ու հայրենիքի գաղափարները) և մահը չէր դարձրել հավատարմության խորհրդանիշ: Պատմական ոռմանտիկան իր համոզիչ էմոցիոնալ բովանդակությամբ պիեսը դարձրել է բնմականորեն կենսունակ»<sup>32</sup>: Պիեսը համեմատվել է Կորնելիի «Պոլիխոկտեսի» հետ, բայց «Թերզյանի պիեսը, ձեւական կաղապարում լինելով կլասիցիստական, էությամբ ոռմանտիկական է, հյուգոյական շունչ ունի»<sup>33</sup>: «Սանդուխտը» համեմատվել է նաև Շեքսպիրի «Լիր արքայի» հետ. ողբերգության որոշ հատվածներ (Սանատրուկի ու դստեր հանդիպումները) հիշեցնում են Լիրի և Կորդելիայի տեսարանները: ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Վ. Փափազյանը Սանատրուկի դերը կատարելիս հանդես է եկել Լիրի գրիմով<sup>34</sup>: Դա պատահական չէր. հայտնի է, որ Թերզյանն արտակարգ բարձր է դնահատել Շեքսպիրի հանճարը: «Օթելլո» հոդվածում նա գրում է. «Այնչափ դյուրին է Շեքսպիրը քննադատել՝ որչափ Հիմալայի վրա անջրդին անապատ գտնել: Գաճաճ խելքերու զբոսանք է այնպիսի հսկայահաղթ հանճար մը խծրծել: Բայց երբ մեծ ակնարկով մը անոր ամբողջությունը տեսնեմք՝ երբ անոր խորախորհուրդ տրամադրությունքն ու նպատակները նշմարենք՝ զարմանքն հիացման կը փոխավի, հիացումը՝ պաշտման: Հոլաթեւ որչափ կ'ուզես յուր ստեղծած աշխարհաց մեջ, ավելի միտքդ կը

<sup>31</sup> Տե՛ս Թ. Թերզյան, Երկեր, էջ 13:

<sup>32</sup> Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 67:

<sup>33</sup> Նույն տեղում:

<sup>34</sup> Տե՛ս Գ. Ստեփանյան, նշվ. աշխ., էջ 510:

Հոգնի սքանչանալե՝ քան Շեյքսպիր նորանոր հրաշալյոք աչքդ շացնելե: Յուր հանճարույն զոր շնչով ստեղծագործյալ մարդկությունն՝ այնպես կ'ապրի որչափ իրական մարդկությունը և թերևս ավելի՝ քանզի անմահության սահմանյալ է: Այնչափ է՝ յուր մտաց զորությունն որ շատ անգամ ամբողջ զգացում մը՝ կացություն մը մեկ զորավոր շեշտով առջիդ կը պարզե, ինչպես խոր մթության մեջ հեղակարծ փայլակ մը, ամբողջ տեսարան մը կը նկարե աչքիդ»<sup>35</sup>:

Ի տարբերություն Մ. Պեշիկթաշլյանի, Թերզյանն իր թատրախաղերում կանանց դերեր մտցրեց՝ հայ կինը ևս բեմ բարձրացավ. Սանդուխտի դերով են բեմական մկրտություն ստացել հայ առաջին տաղանդավոր դերասանուհիները:

«Սանդուխտը» գրված է ժամանակի գրական աշխարհաբարով, ճոխ ու ընտիր լեզվով: 1860-70-ականներին բեմադրված պիեսների հեղինակներից իրենց գրական լեզվով առանձնանում էին երկուսը՝ Մ. Պեշիկթաշլյանն ու Թ. Թերզյանը, թեև զարմանալի է, որ վերջինս գրաբարին տուրք է տալիս առավելապես չափածո երկերում, քան գրամատիկ ստեղծագործություններում:

Թերզյան-դրամատուրգի մյուս ուշագրավ ստեղծագործությունը «Արշակ Բ» երգախառն պիեսն է գրված որպես լիբրետո Տ. Զուխաճյանի համանուն օպերայի համար: Թերզյանին բախտ վիճակվեց դառնալ հայոց անդրանիկ օպերայի լիբրետոյի հեղինակը: Եվ սա պատահական չէր՝ չէ՞ որ դեռ մանկուց նա պաշտում էր երգն ու նվագը, իսկ երաժշտության հանդեպ սերը նրա նկարագրի տիրական հատկանիշներից էր: Դեռևս Վենետիկում ուսումնառության շրջանում նա սովորել էր սրինգ նվագել, երբեմն՝ նաև երգում էր: Իսկ ամուսնանալուց հետո ընտանեկան հավաքույթների ժամանակ հաճախ էր սրինգ նվագում՝ տիկնոջ դաշնամուրային ընկերակցությամբ: Թերզյանի բանաստեղծության հիմքում ևս երաժշտականությունն էր. «Պէտք է երաժշտական զգացում ունենալ գեղեցիկ ոտանաւորներ գրելու համար. տողերուն կը ոռութիւնը մարդ պէտք է ականջին մէջ ունենայ...»<sup>36</sup>, - համոզված էր բանաստեղծը:

<sup>35</sup> Տե՛ս Թ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 239-240:

<sup>36</sup> Թ. Թերզյան, Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ, Հ. Ա., էջ Լ. Դ. Ե.:

«Արշակ Բ» օպերայի ստեղծման ժամանակ հայ մշակույթի երկու երախտագործների միջև սկիզբ առած ստեղծագործական բեղուն համագործակցությունը հետագայում վերածվեց ջերմ բարեկամության: Ժամանակակիցների վկայությամբ, Տ. Չուխաճյանն ուներ շատ բարեկամմաներ, սակայն դրանց մեջ առաջնության դափնին պատկանում էր Թիրզյանին: Նա էր, որ երաժշտական արվեստում առաջին քայլերն անող երիտասարդ երաժշտին ներկայացրեց Հակոբ Պալյանին: Կոմպոզիտորի ու դրամատուրգի բարեկամության մի դրվագ է հիշում նրանց սան Անայիսը<sup>37</sup> 1949-ին լույս ընծայված իր հուչագրության մեջ. «Չուհաճեան իր «Լէպէպիճի»-ն նոր գրել սկսած, դրամական չափազանց նեղութեան մատնուած, արիութիւնը կորսնցուցած է նոյնիսկ աշխատելու, վհատութիւնը իր սեւ թեւերուն մէջ կը սպառնայ խեղդել անոր լուսաթոփիչ հողին: Թիրզեան սրտովին կը ցաւի անոր այդ վիճակին ու պատեհ առիթ մը գտնելով կը պատմէ ամէն ինչ Յակոբ պէյին: Աղնուասիրտ մեծատունը սաստիկ կը զգացուի եւ իսկոյն հրաշավէպի մը ձեւը տալ ուզելով իր ընելիք օգնութեան խեղճ երաժշտին, կը խնդրէ իր կնոջմէն, Բէմպէ հանըմէն, իր կարգին արուեստագէտները սիրող մը, հարիւր օսմանեան ոսկի տայ Թիրզեանին, որ ան տանի գիշերով Չուհաճեանի տունը, եւ կնոջ մասնակցութեամբ գաղտագողի զետեղէ երաժշտին բարձին տակ: Թիրզեան կը յաջողի կատարել իրեն յանձնուած դերը եւ առաւօտուն, երբ ետեւէ ետեւ ոսկիները կը գլորին գետին Չուհաճեանի զարթնումին, անպատճում է անոր բերկրանքը, չ'ուզեր հաւատալ աչքերուն, մանկան մը պէս կը հրճուի եւ խնդութենէն խելայեղ վագելով գաշնակին առջեւ իր օփերէթուն ամէնէն զուարթ մօթիքները կը նօթագրէ»<sup>38</sup>: Դա՝ հետագայում, իսկ մինչ այդ...

Ինչպես հայտնի է, «Արևելյան թատրոնն» իր գործունեությունն սկսեց 1861 թվականի դեկտեմբերի 14-ին. ներկայաց-

<sup>37</sup> Անայիս (Եվլիմի Ավետիսյան, 1872-1950) – Ծնվել է Կ. Պոլսում, ավարտել տեղի աղդային վարժարանը, ապրել է Շվեյցարիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, սպա Փարիզում: Աշխատակցել է «Մասոնություն» և այլ պարբերականների: Երկերում արտացոլել է հալածածված, ողբերգություն ապրած մարդկանց կյանքը, բողոքել կնոջ իրավագրիկության գեմ: Նա ոչ միայն աշակերտել է Թիրզյանին, այլև երաժշտության դասեր առել Չուխանից:

<sup>38</sup> Անայիս, նշվ., աշխ., էջ 36:

վեց Ռոթայի «Երկու հիսնապետեր» պիեսը՝ Թերզյանի թարգմանությամբ: «Արևելյան թատրոնի» հիմնադրման օրվանից դրա հետ սերտորեն կապված էր նաև Զուխաճյանի գործունեությունը, որը երաժշտություն էր Հորինել մի շարք ներկայացումների համար: 1862թ. մարտի 11-ին «Արևելյան թատրոնում» բեմ է բարձրանում «Սանդուխտը», ներկայացվելով նաև խաղաշրջանից դուրս՝ մայիսի 12-ին: «Տրամախաղից առաջ կատարւում է Զուխաճեանի «Բաժակ ողջոյնի» երգը: Դրան արձագանգում է հասարակութիւնը (այդ թւում եւ թուրքական, որ երգը թարգմանաբար անուանել էր «Sherefinize»)»<sup>39</sup>: «Սանդուխտի» ներկայացումից շաբաթներ անց, 1862-ի ամռանը գրվեց հայ ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջերից մեկը՝ տեղի ունեցավ Զեյթունի ապստամբությունը<sup>40</sup>: Զեյթունցիների հերոսամարտն ընդ-

<sup>39</sup> Ն. Թահմիզեան, Տիգրան Զուխաճեան. Կեպնքը եւ ստեղծագործութիւնը, Փաստենա, 1999, էջ 21:

<sup>40</sup> Զեյթուն (Ուլնիա, այժմ՝ Սուլեյմանիե) – քաղաք և գավառ Լեռնային Կիլիկիայում (Թուրքիա): Լեռները, քաղաքի շուրջը կազմելով բնական պատնիշ, Զեյթունը դարձրել են դժվարամատչելի թշնամիների համար: Զեյթունն իր անունն ստացել է թուրքերն «զեյթուն» (ձիթենի) բառից. այս պտղի ծառերը մեծ քանակությամբ աճում են քաղաքի շուրջն ու տաք ձորերում: Բազրասունիների անկումից հետո (1045) Անիից գաղթած 7 հայ ընտանիք Զեյթունի տարածքում բնակություն են հաստատել Շեհիրճոկում՝ տալով նրան «Անի-ձոր» անունը: Տարածքը 1080-1375թթ. մտել է Կիլիկիայի հայկական պետության մեջ, իսկ 1517թ. Զեյթունն ընդունել է թուրքահպատակություն՝ պարտավորվելով հարկ վճարել Բարձր Դուռը:

1626-1627թթ. Զեյթունի հայերի համակրանքը շահելու նպատակով Մուրադ IV-ը տալիս է կիսանկախության հրովարտակ. չնայած դրան՝ շրջակա թուրքերը շարունակում են ասպատակությունները, փորձում իրենց ենթարկել գավառը: 1780, 1808, 1819, 1829, 1835թթ. կատարված նման փորձերն ավարտվեցին լեռնականների հաղթանակով: Ըմբռատ, հաղթանդամ, քաջակորով զեյթունցիները դարձր շարունակ զենքի ուժով կարողացան պաշտպանել իրենց արտօնյալ վիճակը: Թուրքիան չէր հաշտվում Զեյթունի կիսանկախ վիճակի հետ և 1860-ական թթ. ձեռնամուկի է լինում գավառի անկախության վերացմանն ու Զեյթունի հիմնահատակ կործանմանը:

1862թ. բռնկվեց Զեյթունի ապստամբությունը թուրքերի դեմ, որն ավարտվեց հաղթանակով: Հուլիսի սկզբին Մարաշի կառավարիչ Ազիզ ֆաշան, ավելի քան 10.000 կանոնավոր զորքերի և բաղմաթիվ բաշխբողուկների գլուխ ան-

դեմ օսմանյան բռնապետության արևմտահայությանը պայքարի միջոցով ազատություն ձեռք բերելու հավատ ներշնչեց և առաջ բերեց ազգային ինքնազիտակցության բուռն վերելք՝ լայն արձագանք գտնելով արևմտահայության կյանքում:

Զեյթունի ազատատենչ ժողովրդի անօրինակ հերոսական սիրանքները վառ արտացոլում գտան պոլսահայ մտավորականների ստեղծագործություններում՝ գրականության մեջ և պոեզիայում: 1862-63թթ. հայ նոր քնարերգության հիմնադիր Մկրտիչ Պեշիկթաշլյանը գրում է «Զեյթունի երգեր» հայտնի շարքը՝ «Հայ քաջորդի», «Մահն քաջորդւոյն», «Թաղումն քաջորդւոյն», «Հայ քաջուհին» և «Եղբայր եմք մեք» բանաստեղծությունները:

Զեյթունյան իրադարձություններն իրենց արձագանքը գտան նաև հայրենասեր երիտասարդների՝ Տ. Չուխաճյանի և Թ. Թերզյանի ստեղծագործության մեջ. կոմպոզիտորը զեյթունցի հերոս բանաստեղծ Հարություն Զագրյանի բառերով հորինում է հոչակավոր «Զեյթունցիների քայլերգը», իսկ դրամատուրգը գրում է առաջին հայկական օպերայի լիբրետոն՝ «Արշակ Բ» քնարական ողբերգությունը: Թատերատետրի սկզբում հեղինակը զետեղում է Հ. Պալյանին ձոնված հետեյալ տողերը.

---

ցած արշավում է Զեյթունի վրա, ավերելով տասնյակ գյուղեր և կոտորելով խաղաղ բնակչությանը՝ հուլիսի 28-ին պաշարում է Զեյթունը:

Հաշվի առնելով թշնամու մեծաքանակ ուժերը, զեյթունցիները պարտավորվում են վճարել Ազիզ փաշայի պահանջած հարկերը իրենց անկախությունը պահպանելու պայմանով: Սակայն ապարդյուն բանակցություններից հետո նըրանք - Հարկադրված դիմում են ինքնապաշտպանության: Օգոստոսի 2-ին թուրքական 40 հազարանոց զորքը մի քանի ուղղություններով գրոհում է Զեյթունի վրա: Զեյթունցիների 7000-անոց զինված ուժը, բաժանվելով ջոկատների՝ Զեյթունի 4 թաղապետների (Նազարեթ Սուլրենյան, Մկրտիչ Յաղուրյան, Ասատուր Ենիկ-Դունյան, Ղազարոս Շավլոյյան) գլխավորությամբ, ոչ միայն ետ է մղում թշնամու բազմաթիվ զրոյները, այլև հարձակման անցնելով՝ պարտության մատնում Ազիզ փաշայի բանակն ու դուրս շպրտում գալիքով սահմաններից:

Թուրքական կառավարությունն Ազիզ փաշային փոխարինում է Աշիր փաշայով (սա Հայտնի էր որպես բալկանյան ժողովուրդների դահիճ՝ Հանձնարարելով նոր արշավանք սկսել Զեյթունի վրա, պատժել ապստամբներին: Ֆրանսիայի միջամտությամբ, սակայն, Զեյթունի խնդիրը լուծվում է «խաղաղությամբ»: Զեյթունցիները պարտավորվում են վերաբարձնել գրաված ու ազմավարն ու վճարել հարկերը: Զեյթունում նշանակվում է թուրքական կառավարիչ:

**ԱՌ ՎՍԵՄԱՇՈՒՔ  
ՊԱԼՅԱՆ ՀԱԿՈԲ ՊԵՅ  
ՈՒՂԵՐՁ**

Ի Պիմպլյան հովտեն  
 Քորքն ինունք ի՝ հույլ՝  
 Դափնեհյուս ոլորս  
 Փունջըս գեղանշույլ  
 Ածյալ բերեին  
 Յափունս Պոսփորին:  
 Եվ նըլվադայնք  
 Յայերս աստղագարդ  
 Յունկն անդ Վեհաղին  
 Կրկնեին զըվարթ.  
 «Ով մեծ՝ զայս Քեզ ձռն  
 Հըղե Ապոլլոն»:

Ու՝ անդեն համախումբք  
 Յաղամանդյա տառ  
 Դրոշմեին անջինջ  
 Փառաց ի՝ տաճար.  
 «Քե՛զ անմահություն՝  
 Հակոբ Վեհաղուն»<sup>41</sup>:

«Արշակ Բ» օպերայի թատերատրը սովորական լիբրետոյ չէ, այլ չափածո դրամատիկական երկ, որը բեմականացման լիակատար հնարավորություն է տալիս:

«Արշակ Բ» դրաման առաջին անգամ բեմադրվել է 1869թ. Նառամի իտալական թատրոնում, ապա բազմիցս խաղացվել արևմտահայ թատրոնների բեմերում:

Դրամատուրգն ստեղծել է իր մտահղացմանն ու հայացքներին համապատասխան ոռմանտիկ շնչով ինքնատիպ թատերություն, որը կոչված էր հայոց մեջ վառ պահել ազգային-ազատագրական պայքարի ողին: Թատերատրի համար հիմք է ծառադաշտական Արշակ Բ-ի<sup>42</sup> թագավորության ըրջանը՝ հարուստ դրամա-

<sup>41</sup> Թ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 177:

<sup>42</sup> Արշակ Բ - (ծն. թ. անհայտ. - մոտ 368) Հայոց թագավոր 350-ից, Տիրան թագավորի որդին և Հաջորդը: 350-ին Ոսխայի ճակատամարտում հայ-հռոմեական

տիկ սուրբ բախումներով և օտար բռնակալության դեմ հայկական պետական ինքնուրույնության համար մղված պայքարի հերոսական դրվագներով։ Պատահական չէ, որ Հիշյալ ժամանակաշրջանի դեղարվեստական պատկերմանն են դիմել շատերը, այդ թվում՝ Արմենակ Հայկունին («Օլիմպիադա»), Խորեն Գալֆայանը («Արշակ Բ»)։ Հայ նոր քնարերգության հիմնադիր և հայկական հայրենասիրական թատրոնի սկզբնավորող Մ. Պեշիկթաշլյանն «Արշակ»<sup>43</sup> ողբերգության մեջ պատկերում է Արշակի կյանքի վերջին շրջանը, Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունից» վերցնում Արշակ և Շապուհ հարաբերությունը, Արշակի բանտարկությունն Անհուշ բերդում և նրա ինքնասպանությունը։ Հեղինակը հորինում է նոր դեմքեր՝ Սիսակ (Արշակի կրտսեր որդի),

ուժերի հաղթանակից հետո Պարսից Սասանյան արքա Շապուհ Ա-ը հարկադրված գերությունից ազատել է Հայոց թագավոր Տիրանին։ Քանի որ Տիրանը կուրացվել էր, գահաժառանդ Արտաշեսը՝ մահացել, իսկ մյուս որդին՝ Տրդատը, պատանդ էր Բյուզանդիոնում, ուստի Հոսոմի և Պարսկաստանի համաձայնությամբ գահ է բարձրացել Արշակը, որը, սակայն, չի դարձել նրանց կամակատարը, այլ վարել է ինքնուրույն քաղաքականություն։ Իրանից վրդովված՝ Վալենտիանոս կայսրը սպանել է Տրդատին և Հարձակվել Հայաստանի վրա։ Արշակը հաշտություն է խնդրել, ճանաչել Հոսոմի գերիշխանությունը և ի նշան երկու երկրների փոխհավատարմության ամուսնացել կայսեր սպանված եղբոր հարսնացուի Օլիմպիայի հետ։ Կայսրը պատանդությունից ազատում է Տրդատի Տիրիթ և Գնել որդիներին և ուղարկում Հայաստան հանձին Գնելի տեսնելով Արշակի գահի հավակնորդին։ Զգուշանալով Հնարավոր դավադրությունից Արշակը ասպարեզից հեռացնում է Գնելին և Տիրանին, որի համակրանքը Գնելի կողմն էր։ 350-ականներին Հոսոմը և Պարսկաստանը, քաղաքած իրենց սահմանների պաշտպանությամբ, չեն միշամտում Հայաստանի գործերին։ մոտ 10 տարի Հայաստանն ապրում է խաղաղ կյանքով, բարգավաճում ու հզորանում։ Արշակի և Ներսես Ա կաթողիկոսի Հնաքերով գրեթե բոլոր դափառներում բացիում են դպրոցներ, որբերի, աղքատների ու տառապայլների նկատմամբ սահմանվում է պետական ինսամատարություն։ Արշակի նպատակն էր համամերել նախարարներին, սանձել նրանց կենտրոնախոսույս ձգտումները։ այդ պատճառով բնաջնջում է անհնագանդ նախարարական տներին և բռնազրպակում նրանց կալվածները։ Արշակը սպառնացել է նաև եկեղեցական և վանական հողատիրույթներին։ Արքունի զորաբանակը Հզորացնելու և թագավորական իշխանությանը սպառնացող նախարարական ավագանուն թուլացնելու նպատակով կողովիտ գավառում Արշակը Հիմնում է արտօնյալ և ապահարկ Արշակավան քաղաքը, որը Հայ նախարարները, Պարսկաստանի օգնությամբ կործանում են և կոտորում բնակիչներին՝ ձախողելով թագավորական իշխանությունը Հզորացնելու Արշակի ծրագրերը։

<sup>43</sup> Մ. Պեշիկթաշլյանի «Արշակ» ողբերգությունն առաջին անգամ բեմադրվել է 1857թ. վերջին։ Կրել է և «Անձնասպան իշխան» անունը։ Արշակի գերբ խաղացել է հեղինակը։

Որմիզդ<sup>44</sup> (Շապուհի որդի), Վաղինակ (հայոց սպարապետ), Մուշկան (պարսից զորավար), ստեղծում բարեկամություն Որմիզդի և Սիսակի միջև: «Արշակ»-ի բեմագրությունն Օրթագյուղի թաղային թատրոնում նշանակալից երեսությունը էր՝ պիեսը երկար տարիներ չի իջել հայ բեմից:

Ի տարբերություն Մ. Պեշիկթաշլյանի, Թ. Թերզյանն իր լիբրետոյի համար հիմք է ընդունում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Ընդհանուր առմամբ հավատարիմ մնալով սկզբնաղբյուրին, որոշ նորամուծություններ Թերզյանն, այնուամենայնիվ, մտցնում է: Նրա Արշակն ի վերջո զղջում է իր կատարած չարագործությունների համար, այսինքն որոշ հարցերում հեղինակը մեղմում է Արշակի դաժան կերպարը և օժտում նրան զղջալու մարդկային կարողությամբ, որից զուրկ է Խորենացու հերոսը:

Թ. Թերզյանի գլխավոր հերոսը՝ Արշակը, դաժան բռնակալ է: Այդ է վկայում նաև Մ. Խորենացին: Ըստ Պատմահոր, Արշակ Բը պատկանում է այն անձանց թվին, որոնք ոչ մի օգտակար գործ չեն անում ժողովրդի համար, անփույթ են լինում «անմահ հիշտատակ» թողնելու, ապրում են լոկ իրենց զվարճության համար. նա, իրավամբ, արժանանում է Խորենացու արդարացի ու խիստ պարսավանքին, իբրև թուլամորթ, որովայնի ստրուկ, վայրենի, անմիտ, անգդամ և այլն: Արշակը մի նենդ չարագործ է, որը նախ սպանում է իր հորը Տիրանին (նրան մինչ այդ կուրացրել էր Պարսից Շապուհ թագավորը), որովհետև նա անցել էր Արշակի՝ Բյուզանդիայում սպանված կրտսեր եղբայր Տրդատի որդի Գնելի կողմն ու խիստ խոսքեր ուղղել իր Արշակ որդուն: Դրա համար էլ Տիրանն «իր սենեկապետների ձեռքով խեղդամահ եղավ՝ Արշակի դադատնի հրամանով և թաղվեց նույն Կուաշ ավանում, չարժանանալով իր հայրերի գերեզմաններին...»<sup>45</sup>:

Այնուհետև արնախում արքան սպանում է իր եղբորորդի Գնելին, որովհետև Արշակի ավագ եղբայր Արտաշեսի Տիրիթ որ-

<sup>44</sup> Հանձին Որմիզդի, Մ. Պեշիկթաշլյանը նկատի է ունեցել կին հերոսուհու, որին անվանել է Ռոկսանե և ստեղծել սիրո իրավիճակ նրա և Սիսակի միջև: Հետապնյում, երբ Հնարավոր դարձավ բեմում կանանց հանդես գալը, ներկայացնումներում տեսնում ենք Ռոկսանեին, մինչդեռ առաջին հրատարակիչները, անտեսելով այս կարևոր հանգամանքը, թողել են Որմիզդին:

<sup>45</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1997, էջ 227:

դին արքային ներշնչում էր, թե «Գնելը միտքը դրել է քեզ սպանել և քո փոխանակ թագավորել»: Եվ, ի վերջո, Արշակը հրամայում է որսատեղում, իբրև թե պատահմամբ, նետահարել Գնելին: Հրամանն իսկույն ի կատար է ածում Տիրիթի մերձավոր Վարդան Մամիկոնյանը: «Թեպետ կարծում էր Արշակ, թե այդ չարիքները թաքուն դորձեց, բայց ինչ որ չի ծածկվում Աստծու ամենատեսաչքից, հայտնի է դառնում և աշխարհին, հանցավորներին ի սարսափ, ինչպես Տիրանի և Գնելի մահը: Երբ բոլորն այս բանն իմացան, իմացավ նաև մեծն Ներսես, որ անիծելով Արշակին և սպանության առիթ եղողին, գնաց սուզ նստավ շատ օրեր, ինչպես Սամվելը Սավուղի համար: Իսկ Արշակ չզղջաց, չապաշխարեց, այլ անամոթաբար, սպանվածի դանձերին ու ժառանգությանն ազահելով, դեռ նրա կնոջը, Փառանձեմին էլ իրեն կին առավ, որից ծնվեց մի պատանի, որ կոչվեց Պապ»<sup>46</sup>:

Այսքանով էլ չբավարարվելով՝ Արշակը հանձնարարում է իր զինակիր Վասակ Մամիկոնյանին՝ հետապնդել արքայի եղբորորդի Տիրիթին ու իր եղբայր Վարդանին և սպանել երկուսին էլ: Այսպիսով «Գնելի անմեղ արյան վրեժը պահանջվեց ամբարիշտ Տիրիթից, ինչպես անիծել էր Ներսեսը, և Վարդանից, որին վիճակվեց իր հարազատ եղբորից սպանվել»<sup>47</sup>:

Ահավասիկ այսքանը Արշակի գործած վայրագությունների մասին, արքա, որ դարձել էր դաժան բռնակալ, իսկական պատուհաս թե՛ իշխանների, թե՛ ժողովրդի և թե՛ երկրի գլխին:

Թերզյանն ընդհանուր առմամբ հարազատ է մնացել Խորենացու Արշակի կերպարին: Նրա Արշակը ևս հակասական կերպար է՝ թաղված ոճրագործությունների ու արյան ծովի մեջ, և միանգամայն բռնական է, որ իր գործած մեղքերի համար նա հատուցում է սեփական կյանքով: Այս առումով տրամաբանական է, որ դրամատուրգը փոխում է գլխավոր հերոսի մահվան հանգամանքները՝ Արշակն սպանվում է խռովարար նախարարների ձեռքով, մինչդեռ իրականում արքան ինքնասպան է եղել. «Երբ աղանդերի հերթը հասավ, նրա առաջ զրին միրդ, խնձոր, վարունդ ու ամիճ և դանակ տվին, որպեսզի կտրի և ուտի, ինչպես կամենում է: Դրաստամատն էլ ոտքի կանգնած՝ նրան շատ ուրախացնում էր

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 228:

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 229:

ու միսիթարում: Երբ նա խմեց, գինին գլուխն ընկավ, նա հարբեց ու հպարտացավ և ասաց. «Վա՛յ ինձ, Արշակիս. որտեղից ուր ընկա և ի՞նչ օրի հասա»: Այս ասելով՝ դանակը, որ ձեռքին բռնած ուներ, որով միրգը կամ ամիճը պիտի կտրեր, խրեց իր սիրտը և իսկույն մեռավ հենց նստած տեղում: Դրաստամատը երբ տեսավ, վրա ընկավ, դանակը քաշեց հանեց նրա մարմնից և խրեց իր կողը: Նա էլ նույնպես նույն ժամին մեռավ»<sup>48</sup>:

Թեև Փափստոս Բուզանդի և Մովսես Խորենացու վկայությամբ Արշակն ինքնասպան է եղել Անհուշ բերդում, սակայն Թերզյանի կարծիքով չար ու դաժան բռնակալը պիտի կործանվի հենց իր դաժանություններից տառապածների ձեռքով: Հեղինակի նման մոտեցումն Արշակի կերպարի հանդեպ միանգամայն բնական էր ու արդիական, քանզի ԺԹ դարի 60-ական թվականների վերջերին, մերկացնելով չարիք դարձած բռնակալին, ստեղծագործության ենթատեքստում քննադատվում էր ժամանակակից թուրքական բռնակալությունը՝ մասնավորապես և բռնակալությունը՝ ընդհանրապես: Այսպիսով, Թերզյանը հանգում է այն մտքին, որ ժողովրդին չծառայող, նրանից օտարացած, ավելին՝ բռնակալ դարձած ցանկացած իշխանություն դատապարտված է կործանման, որովհետև չի կատարում սեփական ժողովրդին խաղաղություն և բարեկեցություն, իսկ երկրին՝ հզորություն ու բարգավաճում բերելու իր գլխավոր առաքելությունը, որովհետև «Երկարատև չէ այն իշխանությունը, որը ի վնաս ժողովրդի է կառավարում»:

Թերզյանի կատարած նորամուծություններից է Արշակի և Ոլոմպիայի որդու կերպարի ներմուծումը. նրա սպանությամբ առավել սոսկալի է դառնում վրիժառու Փառանձեմի կերպարը:

Ի տարբերություն Խորենացու Արշակի, որն անսիրտ չարագործ է, Թերզյանի հերոսն օժտված է զգացմունքայնությամբ, նրա գործողությունները երբեմն անտրամաբանական են ու չհիմնավորված: Այսպես, Գ հանդեսի Ա տեսիլում Արշակի ու Վարդանի երկխոսությունից պարզվում է, որ արքան ժամանակին ջերմ սիրով սիրել է Ոլոմպիային, նա իր առաջին սերն է (Բուզանդի վկայությամբ Արշակն իր կնոջ հանդեպ ջերմ զգացմունքներ չի ունեցել ամենակին, այլ ամուսնացել է նրա հետ լոկ քաղաքական

<sup>48</sup> Տե՛ս Փափստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 250:

նկատառումներով): Հետագայում, անսպասելիորեն, արքան նույն կրքով սիրում է Փառանձեմին, նրան տիրանալու համար սպանում իր արյունակից Գնելին: Թագավորի կերպարի նման զարդացումն ինչոր տեղ դեռևս հասկանալի է՝ անհասկանալին սկսվում է հետո, Գ հանդեսում, երբ արդեն անցել է որոշ ժամանակ (երկու տարի), Արշակը վաղուց արդեն բանտարկել է Ոլոմպիային աշտարակում և հանկարծ զղջում է նրա նկատմամբ իր հալածանքների համար, մերժում Փառանձեմին, փորձում ներում հայցել Ոլոմպիայից և վերադառնալ իրենց երջանիկ ու խաղաղ անցյալին:

Նախապես իտալերեն շարադրված, այնուհետ՝ հայերեն թարգմանված թատերատեարը, որը հրատարակվեց 1871թ.<sup>49</sup>, գրված է պատմառոմանտիկական օպերաների նմանողությամբ, որոնցում հիմնականը գործող անձանց զգացմունքների, հույզերի, ապրումների ու կրքերի բացահայտումն է՝ դարաշրջանի սոցիալ-քաղաքական իրադարձությունների ընդհանուր ֆոնի վրա: Հեղինակի ուշադրության կենտրոնում է Արշակի, թագուհի Ոլոմպիայի, իշխանուհի Փառանձեմի, իշխան Գնելի անձնական դրաման: Թերզյանը լիբրետոն հագեցրել է սպանություններով, թունավորումներով, նախարարական վրեժինդրության փաստերով՝ արդյունքը Արշակ Բ-ի թագավորության կործանումն է:

Լիբրետոն, որի գործողությունները ծավալվում են Արմավիր քաղաքում 365 թվականին, բաղկացած է 4 հանդեսից<sup>50</sup>: Տեքստը գրված է գրաբար՝ տեղ-տեղ արևմտահայ գրական լեզվով (նկատենք, որ Թերզյանն իր չափածո երկերում նախապատվությունը տալիս էր գրաբարին առավել, քան դրամատիկական ստեղծագործություններում): Որոշ հատվածներում տեքստը շարադրված է արձակ՝ հիմնականում լինելով չափածո: Հեղինակը 1871

<sup>49</sup> «Արշակ Բ» դրաման հետագայում հրատարակվել է Երևանում, 1992-ին, երբ Թ.Թերզյանի ծննդյան 150-ամյակի առթիվ պետական հովանավորությամբ լույս տեսավ նրա «Երկեր»-ը: Ժողովածուն ամփոփում էր Հեղինակի լավագույն չափածո երկերը, «Արշակ Բ» դրաման և գրական-քննադատական հոդվածները: Թերզյանի գրական ժառանգությունն առաջին անգամ ներկայացվեց ընթերցող լայն շրջաններին:

<sup>50</sup> Տե՛ս «Արշակ Բ», թատերանուագ ի չորս հանդէսս, քերթուած Թովմաս Ռ. Թէրզեանի, երաժտութիւնը Զուլսաճեան Տիգրանայ: Կ. Պոլիս, տպ. Քիրիշեան, և Ընկ., 1871: ԳԱԹ, Տ. Զուլսաճյանի դիվան N 134, ձեռագիր 24 թերթ, կից՝ մեքենագիր 58 թերթ:

թվականին հրատարակած լիբրետոյի նախաբանում, որը վեր-  
նագրված է «Ազդ», գրում է. «Խաղը բուն իսկ իտալերեն գրած  
ըլլալովս բավական դժվարավ եղած են թարգմանության այն  
տեղվանքն ուր հարկ էր՝ երգին համար՝ իտալերեն ոտանավոր  
նույնչափ՝ ի հայ փոխել: Արտասանելի (recitativo) տողերը ար-  
ձակ թարգմանեցի»<sup>51</sup>:

**Ա. Հանդեսը բաղկացած է երեք տեսիլից:** Ա տեսիլում ներ-  
կայացված է դաշտավայր. աջ կողմում տեղավորված են անտա-  
ռախիտ ժայռեր, իսկ ձախ կողմում՝ հեռվից նշանակում է Արա-  
րատ լեռը: Ներս է մտնում Արշակ թագավորը՝ շրջապատված  
հաղթանակած բանակով: Ժողովուրդը ցնծությամբ է դիմավո-  
րում իր սիրելի արքային և փառաբանում՝ պարսիկների դեմ տա-  
րած փայլուն հաղթանակի առթիվ.

Անարատ լուսոն  
Երկնավոր հոսանք,  
Ո՞վ պերճ թագավոր  
Հյուսեն քեզ պլսակ:

Համընդհանուր ցնծությանն իր օրհնանքի խոսքն է ավե-  
լացնում հոգևորականությունը.

Այսպես միշտ ցըվին  
Խիզախ ամբարիշտք,  
Այսպես ձեր սուսերք  
Հաղթող ըլլան միշտ:

Եվ, ահավասիկ, հանդես է գալիս Արշակը: Թերզյանն այս-  
տեղ նրան ներկայացնում է որպես հերոս, մեծ հայրենասեր:  
Միաժամանակ առկա է սերտ կապ արքայի և ժողովրդի միջև.

Քեզմով՝ ժողովուրդի իմ՝ աղետքս կ'ամոքին:  
Պարզե, հրեշտակ խաղաղության  
Ոսկի թևերդ՝ ի Հայաստան.  
Իջի՛ր յերկնից, աղերսավոր  
Կը պաղատի քեզ Արշակ:

**Տեսիլ Բ. արքային դիմավորող բազմության մեջ է նաև իշ-**  
**խանուհի Փառանձեմը:** Նա ևս ողջունում է արքային.

<sup>51</sup> Թ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 178:

Սիրով խայտան ու բերկրանոք  
 Այսօր ամեն սիրտ՝ քաջդղ Արշակ.  
 Եվ կ'ողջունե զքեզ Հայաստան  
 Վեհ ՚ի գահույս և ՚ի նիզակ,  
 ի՞նչ կրնա կույս մ'ընծայաբեր  
 Չոնել քեզի սիրտ յերեր:  
 Փունջ խուռներամ խոնարհ ծաղկանց  
 Դողդոջ մատամբք քաղելով  
 Ոտիցդ առջև ահա սփռեմ  
 Լի տափնապալ ու հուսով.  
 Իցի՛վ զանոնք խոնարհեիր  
 Ընդունելու կարեկիր:

Տեսնելով Փառանձեմի գեղեցկությունը, Արշակը սիրա-  
 հարվում է նրան: Բայց իշխանուհին միայն ողջունելու համար  
 չէ, որ եկել է: Նա խնդրում է Արշակին՝ ներել և աքսորից ետ վե-  
 րադարձնել իր սիրելի նշանածին՝ իշխան Գնելին: Բայց արքան  
 կտրուկ մերժում է նրան, ասելով՝

Լոե՛, հանդուգն հակառակորդիս շնորհը մի՛ խնդրեր:  
 Զո՛ւր իրեն համար հայցիս գըթություն...  
 Իմ ու անոր մեջ վիճք կան և արյուն.

Այնուհետև Արշակը Փառանձեմին իր սերն է խոստովա-  
 նում, խոստանում նրան իշխանություն և փառք.

Այդ դալկահար այտերն ՚ի վար  
 Վազող արցունքն՝ ո՛վ նազելի՝  
 Գըթութենե բուռն սիրով  
 Կ'արբեցընեն՝ կայրեն զհոգի...  
 Մի՛ զիս ձըգեր այլ ալեծուփ  
 Ի մահաբեր տարակուսանս.  
 Դու ինքն ինձի շնորհե գթություն.  
 Փառքս ալ և գահ քեզի ըլլան:

Եվ, ավարտելով խոսքը, արքան հրամայում է իշխանու-  
 հուն իր հետ պալատ գնալ:

Ա հանգեսի Գ տեսիլում ներկայանում են գործողության  
 մյուս մասնակիցները՝ իշխան Գնելն ու Հայոց սպարապետ Վա-  
 զինակը: Իշխան Գնելը բոլորից գաղտնի վերադարձել է հայրե-

Նիք: Նա զայրացած է բռնակալ արքայի գործողություններից և լի է վրեժինդրությամբ.

«Կը տեսնեմ զքեզ վերջապիս՝ երկիր քաջաց՝ ո՛վ Հայրենիք որուն համար կը հառաջեի և ուսկից վանեց զիս անողոք բռնավութի մը պատվերը: Հոս վրեժն ու զայրույթը կ'առաջնորդեն զիս»:

Հանկարծ Գնելը նկատում է մոտեցող Վաղինակին, որն իր ընկերն ու համախոհն է: Նրանք միասին որոշում են կործանել արքային.

Գնել. «Նույն տեսչը երկուքս ալ կը վառե: Խողխողյալ հորս դիակը վրե՛ժ կ'աղաղակե, ՚ի մարտ կը դրգե զիս: Վրե՛ժ կը կանչե ամուսնույս պատիվը զոր պղծեց բռնավորին վախաշոտ նայվածքը: Մա՛զ ամբարշտին»:

Վ.Ա.Ղ.ԻՆԱԿ. «Մեռնի՛ բռնավորը»:

Ա հանդեսի Գ տեսիլն ու ողջ Ա հանդեսն ավարտվում են Գնելի ու Վաղինակի անդրդվելի որոշմամբ՝ բռնակալը պիտի կործանվի.

Ողջամբ եկար. թող նենգավորը մեր ձեռք կործանի

Ըստվերք նախնյաց ըզձեղ կարդան

Թշվառացյալ Հայրենիք.

Ավա՛ղ յարյուն թաթավեցան

Զեր արքունի ծիրանիք:

Այսչափ արցունք՝ այսչափ մահեր

Այսչափ արյուն ու ոճիրք,

Անվրեժինդիր չեն մընար ոչ,

Թե Հաշտ ժպտիս մեզ երկինք:

Միանանք,

Թող վըտանդ

Մեր եռանդն

Արծարծե.

Լըռություն

Ու արություն

Հաղթություն

Մեր ձեռքն է:

Այսպիս, Ա հանդեսը գլխավոր հերոսների էքսպոզիցիան է:

Բ հանդեսում տրվում է Ոլոմպիայի բնութագիրը, բացահայտվում են հիմնական կոնֆլիկտները: Ամբողջ գործողութ-

յունն աչքի է ընկնում դրամատիկական մեծ լարվածությամբ, ուր հետզհետե ուժեղանում է ու ավարտվում գործող անձանցից մեկի՝ իշխան Գնելի կործանումով:

Բ հանդեսը բաղկացած է 7 տեսիլից:

Ա տեսիլ. պալատի սրահներից մեկում դրուցում են հայոց կաթողիկոս Ներսեսն ու իշխանուհի Փառանձեմը: Ներսեսը պատմում է, թե ինչպես է Արշակը սպանել իր հորը՝ կույր ծերունի Տիրանին.

Լուր. - Հայրն Արշակա յանարդ շղթաներ  
Ահավոր բանտի մ'ի խոր կը հեծեր:  
Թշվա՛ռ կույր.՝ ի մթան ամբառնալով ձեռու  
Յուր որդվույն ՚ի դլուխ կը կարդար անեծու:

Երբեմըն ցնորյալ չարատանջ ցավեն  
Կուզեր ՚ի սուսեր յուր մխվիլ անդեն,  
Երբեմն իրեն գահ կ'երևար բանտն այն  
Ուր իշխել կարծեր նա միահեծան:  
Խելացնոր իշխանն երբեմն ամոքած

«Գըթություն՝ գոչեր անկյալ ձեռնամած՝  
Տարաբաղդ կույրին ո՛հ ո՞վ պիտի տա  
Կաթիլ մը լուսո զոր ՚ի դուր մուրա...»:

Այսպես կաղաչեր աղի արտասվոք  
Երբ ըստվերաց մեջ անձայն՝ անողոք՝  
Դաշույն յաջ՝ ծիծաղ ՚ի շրթունս վազեց  
Դահիճ մ՝ ու սրտին երկաթը մըխեց:

Հըշավոր արարք. պարզվում է, որ դահիճը հենց ծերունու որդին է՝ Արշակ թագավորը: Այդ են վկայում կաթողիկոսի խոսքերը.

Այդ անօրեննն  
Որ առ դըռւնս շիրմին խողիսողեց ըզծերն  
Եվ խըզեց ըզլույսն ըզկյանս և ըզգահ՝  
Արշակն է, որդին, թագավորն է...

Կաթողիկոսի խորին համոզմամբ՝ այդ գեպքից հետո արշավիրքներն անվերջ ալեկոծում են Հայաստանը:

Հաջորդ՝ Բ տեսիլում Ներսես կաթողիկոսը խնդրում է ամենաբարձրյալին դժալ ու դադարեցնել ցասումը.

Դադրեցուր՝ ո՛վ երկնից թագավոր,

Դադրեցուր քու ցասումնըդ հըզոր:

Դու գըթած ես՝ Բարձրյալ. կարեվեր

Պաղատին անշըռնջ հոգիք մեր:

Գ տեսիլում<sup>52</sup> իշխան Գնելին հաջողվում է գաղտնի թափանցել պալատ՝ ի կատար ածելու արքային սպանելու իր որոշումը: Ճանապարհին նա հանդիպում է Փառանձեմին: Գնելը կարծում է, թե իր սիրելին դավաճանել է իրեն: Բայց Փառանձեմը բացատրում է նրան. «Քեզի համար ներումն խնդրելու եկա»: Եվ նրանք որոշում են փախչել միասին:

ՓԱՌԱՆՁԵՄ – Փախչինք՝ Գնել՝ Հեռո՛ւ փախչինք.

Քուկդ է միայն Փառանձեմ.

Թե ամեն հույս կորսնցուցի՝

Գեթ նորեն սերըդ գտնեմ:

Ավաղ, սիրահար սրտերի երջանկությունն անսպասելի ընդհատվում է. ներս է մտնում Արշակի հավատարիմ թիկնապահ Վարդանը: Գ տեսիլում նա հայտնում է Փառանձեմին, թե արքան իր մոտ է հրավիրում իշխանուհուն: Գնելը փորձում է դիմադրել, պաշտպանել Փառանձեմի պատիվը, բայց Վարդանը նրան մահացու վիրավորում է:

Հաջորդ՝ Ե տեսիլում թագուհի Ոլոմպիայի ու իշխան Վաղինակի զրույցն է: Ոլոմպիան ներկայանում է լիրիկական գույներով. նա շատ է սիրում իր ամուսնուն և անսահման նվիրված է նրան: Միաժամանակ չի էլ կասկածում, թե փոխադարձաբար սիրված է Արշակի կողմից: Իշխան Վաղինակը նրան պատմում է իշխանուհի Փառանձեմի հանդեպ Արշակի տածած սիրո մասին: Ավելին, արքան մտադիր է թագուհուն բանտ նետել.

Լու՛ր և դողա. դժնյա դիվե մը դրդյալ

Հոս խողխողել կ ուզե Արշակ զՈլոմպի.

Եվ Փառանձեմ՝ առ ի տիրել անվեհեր

Կ'ուզե սպաննել ըզմիամոր քո որդի:

Ըզքեզ փրկել և զհայրենիս երդվընցա

Բայց դու, աղե՛, փութա՝ փախչինք Ոլոմպիա:

<sup>52</sup> Բ հանդեսի Ա, Բ, Գ, Դ տեսիլներն «Արշակ Բ» օպերայում բացակայում են:

Ոլոմպիան ցնցված է, նա կատարյալ ողբերգություն է ապրում: Իշխան Վաղինակը թագուհուն օդնելու պատրաստակամություն է հայտնում: Թագուհին ապշում է, որ արքայի զորավարը ցանկանում է օդնել մերժված թագուհուն: Շուտով պարզվում է, որ Վաղինակի նման վարքագծի պատճառն է

### Սերը...

Աղջիկ էիր դեռ՝ և մատաղ

Յայտըս քո վարդք ծըլեին

Երբ Պոսփիրու ՚ի ծովափունս

Տեսա զպատկերդ երկնային:

Բայց ծիրանիք կ'պճնեին

Ըղքեղ՝ ո՛վ կույս նազելի.

Մինչդեռ՝ ավաղ զուրկ ՚ի Հուսո

Ես նետահար մեռնեի:

Սպարապետը խոստովանում է, որ երկար տարիներ սիրում է Ոլոմպիային, իսկ վերջինս նրան չի էլ նկատում: Եվ քանի որ իրեն այդպես էլ բախտ չվիճակվեց ապրել Օլիմպիայի համար, ուստի պատրաստ է մեռնել՝ հանուն իր սիրելի էակի.

Այլ զի այսօր պատեհ է ինձ

Որ քեզ պաշտպան խիզախիմ,

Թե չըկըրցա քեղմով ապրիլ՝

Քեզի համար գեթ մեռնիմ:

Բ հանդեսի դադալը նախարարների ապստամբությունն է, որը ղեկավարում է սպարապետ Վաղինակը: Խոռվարաների դայրույթի պոռթկումի պահին ներս է մտնում Արշակը (Տեսիլ Զ): Ապստամբ նախարարները հարձակվում են արքայի վրա, փորձում սրախողիսող անել: Բայց նրանց սթափեցնում է Ոլոմպիան, այնուհետև՝ ներսեցը.

«Կեցե՞ք՝ քաջեր. երկինք պատուհասակոծ կ'ընեն զինքը՝ Լցուցիր չափը՝ արքա, և երկնից սրտմտությունը գլխուղ վրա կը կուտակի»:

Հանդիմանելով թագավորին, Հայոց հայրապետը նրան սթափելու կոչ է անում.

Լիրանանու մայրյաց նըման  
 Խիզախն՝ ՚ի վեր բարձրացավ,  
 Ուղեշքն յերկինս արձակելին  
 Մըրիկներու դիմագրավ:  
 Անցա. Հոխորտ կ' արձանանար.  
 Վերադարձա, ալ չըկար:

Այսպես հանդուգն ըզհոլաթես,  
 Պարզես՝ Արշակ՝ յաստեղս անդ.  
 Սըրույդ շողեն զարհուրելով  
 Փախչին գնդերն անվըկանդ.  
 Բայց մահացու ես, ոտքիդ տակ  
 Շիրիմ մը կա, վերն՝ Աստված:

Դրամատիկական լարվածությունն իր գագաթնակետին է  
 Հասնում, երբ ներս են մտնում Փառանձեմն ու մերձիմահ Գնելը:  
 Բ հանդեսի եղբափակիչ՝ Է տեսիլում սարսափահար Փառանձեմն  
 օդնություն է հայցում ներկաներից.

Օդնություն, օգնություն... վիրավոր է.  
 Վաղեցեք, վաղեցեք, կը մեռնի...  
 Արտասվոք դուրս թափվե՝ թշվա՛ռ սիրտ իմ՝  
 Այս աշխարհս անսապատ մ' է քեզի:  
 Տյարք իմ՝ ահ, կը մոռնամ հոս թե կին մ'եմ  
 Եվ բամբիչն յարենե արքունի.  
 Արտասվոք ձեր ոտից կը փարիմ ես՝  
 Բուժեցե՛ք այդ վերքերն ահոելի:

Բայց մահամերձ Գնելը սաստում է Փառանձեմին և դառ-  
 նալով Արշակին՝ անիծում նրան

Լսե՝ Արշակ:  
 Դու որ՝ արյան մեջ թաթիսեցիր  
 Զդահ մեծապանծ Հայաստանյայց,  
 Եվ զբնագավառն իմ Հայրենի  
 Նիզակիդ տակ թողեր ընկճած,  
 Դու Հայրասպան որ կը բազմիս  
 Դիականց ՚ի կույտս արյունոռոգ,  
 Իցի՛վ դու օր մը կըրեիր  
 Ցավս իմ ցավոց պես անողոք...

Եվ մըթության մեջ տեսնեիր  
Քու զոհերուդ ուրվականներն  
Որ արյունոտ եղունգներով  
Կը կեղեքեն սիրտդ աննըվեր.  
Թափիած արյանդ ամեն մեկ շիթ  
Կայծակ դառնա, և բարկաճայթ  
Գանկիդ ի խորըս փշրելով  
Դունչե ունկանդ մեջ անիծյալ...

Հեծեծալով յօտար շղթայս  
Եվ ոճիրներդ քեզ լոկ ընկեր  
Կորաքամակ հացըդ մուրաս  
Եվ ընդունիս տեղն անեծքներ,  
Եվ եթե փառք շիրմիդ վըրա  
Սփոք ճաճանչս առատարուխ  
Ու ան լուսով թող նշմարվին  
Նախատանացդ ամպ թույրաթուխ:

Անիծելով Արշակին, Գնելը հրաժեշտ է տալիս Փառանձեմին ու մեռնում նրա ձեռքերի վրա:

Այդ տրտում արցունքդ՝ ո՛վ հոգյակ՝ սրբե.  
Թող գլխույս հանդչիլ քու ծոցիդ վըրա.  
Թող քու մեկ ժալիտդ աչքես փարատե  
Զահեղ քնույն սոսկումն և զերկինս բանա:

Գ հանդեսը բաղկացած է չորս տեսիլից: Նախընթաց գործողություններից հետո անցել է երկու տարի: Արշակը ցանկանում է վերադառնալ Ոլոմալիայի դիրկը: Նա կրկին սիրում է նրան, զղջում, որ այդքան ժամանակ հալածել է թագուհուն ու բանտարկել: Նրա մասին է նա պատմում Ա տեսիլում՝ իր հավատարիմ թիկնապահ Վարդանին.

Այն օրվընե յորում անդութ  
Ոլոմալիո սիրտն արյունեցի՝  
Եվ Փառանձեմը կորզելու  
Գնելա զդիակ կոխսկուտեցի,

Աչքիս դիմաց անդնդախոր  
Բացվին վիրապք՝ ուսկից՝ ի զուր  
Փախչիմ ահիւվ զի նորանոր  
Փեռեկին վիհք քայլերուս շուրջ:

Այնուհետև արքան խոստովանում է Ոլոմպիայի հանդեպ  
իր սերը.

Ոլոմպիա... ո՞վ խայթ խղճիս... ի՞նչ հույս կը մնա քեզմե զրկված  
սրտիս:

Ով անույշ աղջիկ  
իմ սեր առաջին  
Քեզի խորհին ալ  
Լույս կուտա սրտիս:

Եթե թևափյուռ  
Հրեշտակ սիրասուն՝  
Հայցես իմ վըրաս  
Զերկնից գըթություն,

Գուցի յոսկեշող  
Սիրույդ քո փետուրս  
Բարձրանա հոգիս  
Յաշխարհս անդ մաքուրս.

Եվ 'ի պարագանդ  
Սուրբ գրկաց քույին՝  
Կորուսեալ երկինք  
Նորին ինձ բացվին:

Արշակի խոստովանությունն ամբողջությամբ լսում է դա-  
րանակալած Փառանձեմը, ներս է մտնում ու դիմում արքային  
(Տեսիլ Բ). «Լսեցի ամեն բան՝ մի՛ խոռվիր. թող աչքերդ սիրտգ  
չմատնեն. հավատարիմ սիրտդ կ'ուզե վերադառնալ Ոլոմպիադա-  
իր առաջին սիրույն»: Արշակը չի ժխտում. «Այո՛, անմեղի մը  
տանջանքը տեսնելով՝ կը խոցոտի հոգիս, կ'զդա և կուզե ողոքել  
երկնից ցատումը»: Փառանձեմն Արշակին հիշեցնում է իրեն  
սկզած խոստումները, պահանջում վերադարձնել այն քաղցրիկ օ-  
րերը, երբ ինքը երջանիկ էր իր նշանածի՝ Գնելի հետ.

Տուր ինձի՝ ո՞վ իշխան  
Այն ժամերն երջանիկ  
Երբ յափունս Եփրատա  
Նստելով լուռ մնջիկ,  
Չեռս ի ծնոտ սիրտ ի թունտ  
Խորհեի Գնելա:

Արքա՝ զինքն արթնցուը  
իր տըխուը անկողնեն.  
Այդ սիրած ծոցիս մեջ  
Արծարծե զշունչն անդրեն,  
իր աչկունք վերստին  
Մեյ մ'ինծի ժպտին...

Փառանձեմն արյան ծարավի է, նա չի հանգստանա, մինչեւ  
չլուծի իր վրեմբ. «Արյուն... ես Ոլոմպիո և իր զավկին անկեն-  
դան մարմնոց վրա միայն պիտի կարենամ ջնջել անհագ բրաց»  
արտասուբը»: Արշակը փորձում է սթափեցնել Փառանձեմին, սա-  
կայն վերջինս անդրդվելի է:

Հաջորդ՝ Գ տեսիլը պատկերում է անմարդաբնակ վայր  
այն աշտարակի մոտ, ուր բանտարկված է Ոլոմպիան: Այստեղ է  
սպարապետ Վաղինակը: Նա հրաժեշտ է տալիս ներկա գտնվող  
նախարարներին և խոստանում շուտով վերադառնալ զորքով և  
փրկել երկիրն Արշակից: Այդ պահին աշտարակից լսվում է թա-  
գուհու աղեկտուր լացը: Փառանձեմն արդեն հասցրել է ի կատար  
ածել իր ոճրագործության առաջին մասը՝ սպանել է Ոլոմպիայի  
որդուն: Վշտահար մայրը որդու անշունչ մարմինը գրկած՝ օրո-  
րում է նրան տրտմաբար.

Որչա՞փ ցավ քաշեցի.  
Ու ինչեր կորուսի...  
Աչքիս դեմ զիմ որդի  
Դանակն հոշոտեց...  
Յանջրդի մեկ բըլեր  
Քարե բարձ մ'եմ փորեր  
Եվ հոն եմ հանգուցեր  
Զայն նազելի գլուխ:  
Եվ ոչ լալ իսկ կրնամ  
Յիմ որդվույս գերեզման...  
Զեռնամած ես կ'իյնամ  
Ոտքիդ՝ Տիրամայր...

Գ հանդեսի եղրափակիչ՝ Դ տեսիլում դարձյալ Փառան-  
ձեմն է: Նա Արշակի հետ գտնվում է գերեզմանոցում: Ակսվում է  
ուժգին մրրիկ: Անսպասելիորեն տապանաքարերը շարժվում են,  
և գերեզմաններից ելնում են Արշակի զոհերի ուրվականները:

Ասովերները մոտենում են արքային: Փառանձեմն առաջարկում է փախչել, բայց Արշակը չի հասցնում:

Ա. ՍՏՎԵՐ. Ե՞ս քու Տիրան հայրդ եմ:

Բ. ՍՏՎԵՐ. Չե՞ս ճանչնար զ Գնել:

ԱՅԼԻ. ՍՏՎԵՐ. Դավաճանությանդ գոհ եղած նախարարաց ցեղն ենք:

Վերջում հայտնվում է մի երիտասարդ ուրվական և հարցնում՝ «Ու՞ր է մայրս, ո՞վ հափշտակեց զիս անոր անուշ դրկեն»:

Սարսափահար արքան ճանաչում է իր զավակին: Ուրվականներն անիծում են արքային, իսկ նա ներում է հայցում ու մերժում ստանում.

Ո՛չ, չկա՛:

Թող հանդերձելույն պատոի վարագույր.

Օ՞ն տես Փառանձեմ, տես և դու Արշակ

Ի՞նչ կը սահմանե ձեզ ճակատագիր.

Տեսնեն ամբարիշտք ըզտխուր ձեր վիճակ:

Թշնամի սուսերց դեմ հալածական

Հուսահատ մեռնիս յօտարին շղթայս.

Եվ ընդ լյառն ու ձոր թափառ կողակիցդ

Վայրի զազանաց մտնվի ՚ճիրանս:

«Արշակ Բ» լիբրետոյի եղբափակիչ՝ Դ հանդեսը բաղկացած է հինգ տեսիլից: Այստեղ էլ հենց կատարվում է հանգուցաւուծումը՝ Փառանձեմը թունավորում է Ոլոմպիային, նախարարները սպանում են Արշակին, կործանվում է թագավորությունը:

Ա տեսիլում թագուհի Ոլոմպիան է և նրա նաժիշտ Պոլիքսենը: Թագուհին ընկնում է հիշողությունների լուսավոր աշխարհը: Նրա աչքի առջև հառնում են հայրենի Բյուզանդիան և Բոսֆորը, մի խումբ երիտասարդ աղջիկներ ծաղիկներ են սփռում շուրջը. «Հոս երեցան ինձ հույլք երանավետ ոգյաց որ քաղցրաբույր ծաղիկներով գլխուս պսակներ կը հյուսեին, հոգիս իրենց քաղցր նվազներով կ'զմայլեր»: Պոլիքսենը սթափեցնում է թագուհուն. «Մեկը կուգա»: Ներս է մտնում. Արշակի թիկնապահ Վարդանը (Տեսիլ Բ): Նա եկել է հայտնելու, թե արքան, անսալով

կաթողիկոս ներսեսի խորհրդին, Ոլոմպիային ներում է շնորհում  
և պալատ հրավիրում: Նա պատասխանում է, թե «Ուշ է այսու-  
հետեւ»: Վարդանի «Ի՞նչ կ'պատվիրես որ ըսեմ թագավորին» հար-  
ցին թագուհին պատասխանում է. «Կը ներեմ իրեն ու կը մեռ-  
նիմ»: Վերջին խոսքերի ուղեկցությամբ ներս է մտնում Արշակը.

Կը ներե՞ս Ոլոմպիա. ո՛հ կրկնե՛ կրկնե այդ քաղցրալուր ձայնը:  
    ի փարատել զմութ գիշեր  
Ուր դանդաշե թշվառ հոգիս  
    Մեկ հաշտության ժպիտ մ'այտեղ  
    Ո՛վ Ոլոմպիա՝ կաթեցուր յիս:  
Անըիծ ճակտեղ ցոլացող լույս  
    Պարզե աչքերս և կը տեսնեմ  
    Թե յո՞ր վիրապ թավալեցա  
    Եվ ծնադիր ներումն հայցեմ:

Ոլոմպիան հարցնում է.

Միթե ներո՞ւմն հայցե մըրիկ  
    Արմատախիլ ըրած ծաղկեն,  
    Միթե ներո՞ւմըն խնդրեն ծովք  
    Անդնդառույզ ըրած լաստեն:  
Այլ թող ցրվի զայրույթն անհետ,  
    Վերադառնան նախկին վայրկյանք  
    Թշվառ է սիրտս ու կարեվեր  
    Այլ դարձյալ քուկդ է՝ ով Արշակ:

Գ տեսիլում Արշակը մեծ հանդես է կազմակերպում, փոր-  
ձում երգով ու նվագով գեթ փոքր-ինչ փարատել թագուհու վիշ-  
տը: Հաշտության պատրվակով Փառանձեմը թունավոր դինով լի-  
դավաթ է մատուցում Ոլոմպիային. «Այս երանավետ օրվանս մեջ՝  
քու ներմանդ առհավատչյա ըլլա ձեռքես այս բաժակս ընդունել»:  
Վերցնելով գավաթն ու ոչինչ կասկածելով, թագուհին ըմպում է  
թունավոր ըմպելիքը:

Դ տեսիլում ներսեսը տեսնում է նվազած թագուհուն և  
կռահում, որ նա թունավորված է: Կաթողիկոսը մեղադրում է Ար-  
շակին ու Փառանձեմին. «Անդգամք Արշակ և Փառանձեմ՝ ձեր ու-  
ճիրն է այս»: Արշակը մնում է կայծակնահար, մինչդեռ Փառան-

Ճեմը ցնծության մեջ է՝ նա լուծել է վրեժն այն մարդուց, ով խլել է իր երջանկությունը.

Հիմա վրեժս լուծեցի:

Բարեբաստիկ ես և անմեղ

Իմ ամուսնույն հետ կ'ապրեի.

Մատոնվելով ա՛հ զոհ ինկա

Մեկ անօրեն բռնավորի:

Ինքն ոտնակոլս ըրավ հոգիս.

Ինքն ամուսինս ալ խողիսողեց

Այն դաշույնով սրով անխնա

Իմ աղևոր հայրս ըսպաննեց:

Վրիժուց համար լոկ կապրեի...

Զինքն վհե վիհ քաշկոտեցի.

Հիմ՝ արյունով ահա ծածկյալ

Եղանք երկուքս ալ անիծյալ...

Զափազանց մեծ է Արշակի վիշտը. նա զրկվել է թագուհուց ու իր սիրելի որդուց: Արքան զղջում է ու տանջվում. «Ի՞նչ ըրի ես՝ Հիմար. ո՞ւր մղեց զիս ամոթալից տոփանաց մոլեգնությունը: Ո՛հ գեթ լալ կարենար սիրտս, ո՛հ գեթ հուսալ կարենայի:

Տիեզերք մթության մեջ կ'ընկղմին, արյան ծովու մը մեջ կընկուղանի երկիր, գերեզման մը կը կփնտոեմ՝ բայց ան ալ կ'զլանան ինձ»:

Բայց Արշակի սուգը ոչ թե խղճահարությամբ, այլ բերկրանքով է լցնում Փառանձեմի սիրտը. «Դժոխային բերկրանք կ'լուր զիս այդ սուգը. զվարթ կ'ժպտիմ փոթորկաց մեջ, մի՛ դուղար՝ արքա, երկուքս ալ միանգամայն փշրեց այդ կայծակը:

Եվ դու՝ իմս Գնել՝ իմ ամուսինս, գոհ եղիր, տես ո՞ւր քաշկոտեցի քու ամբարիշտ մարդասպանդ. արյան մեջ թաթըխված է, և հավիտենական ստվերաց մեջ ալ հետս պիտի իշնա»:

Ե տեսիլում Ոլոմպիան նվազած ընկնում է այն պահին, երբ ապստամբ նախարարները սպարապետ Վաղինակի գլխավորությամբ ներխուժում են պալատ և գոռում. «Մա՛հ Արշակա. կեցցե՛ Ոլոմպիա»: Բայց արդեն ուշ է, Ոլոմպիան մահանում է: Ապատամբները հարձակում են Արշակի վրա ու սպանում նրան:

Ահավասիկ լիբրետոյի բովանդակությունը:

Լիբրետոյում գործողությունները ծավալվում են երեք հիմնական խմբավորումների միջև, որոնց պայքարն էլ թատերատիրի զբամատիկ զարգացման շարժիչ ուժն է: Առաջին խմբի մեջ մտնում են Արշակը, նրան հավատարիմ թիկնապահ Վարդանը և թիկնապահ զորքը, որը կանգնած է Արշակի ու հայրենիքի պաշտպանության դիրքերում: Պարսից գորքի դեմ տարած փայլուն հաղթանակից հետո նրանք շարունակում են պայքարը կենտրոնախույս ու դավաճան նախարարների դեմ՝ ի փառս հայոց թագավորության, ի շահ նրա ամրապնդման ու կայուն խաղաղության ապահովման:

Նրանց հակագրվում են սպարապետ Վաղինակն ու թագուհի Ոլոմպիան, իրենց կողմնակից նախարարներով. սրանց նպատակն է վրեժ լուծել բռնակալ Արշակից, որը գրժել է ամուսնական ուխտն իր կնոջ նկատմամբ, տարվել հանցավոր սիրով ու տիրել իշխանուհի Փառանձեմին: Սպարապետ Վաղինակն օգտագործելով այն հանգամանքը, որ զորքն իրեն է ենթակա, ցանկանում է գահընկեց անել Արշակին, տիրանալ Ոլոմպիային, որին սիրել է դեռ Բյուզանդիայում, երբ նա տակավին օրիորդ էր, և Արշակը, փաստորեն, նրան հափշտակել է իր ձեռքից: Այդ օրվանից Վաղինակն առիթ է փնտրում վրեժիսնդրության համար: Եվ ահավասիկ առիթը ներկայացել է. Արշակը հանցավոր սիրով կապված է իշխանուհի Փառանձեմի հետ: Վաղինակը, տեսակեցնով թագուհու հետ, պատմում է նրան արքայի դավաճանության մասին և մղում վրեժիսնդրության:

Ինչ վերաբերում է կաթողիկոս Ներսեսին ու հոգևորականությանը, ապա նրանք չարացած են Արշակ Բ-ի վրա ոչ միայն ամուսնական ուխտը գրժելու, այլև Բյուզանդական կայսրության դեմ գործելու համար: Ուստի նրանք Վաղինակի և Ոլոմպիայի կողմնակիցներն են:

Բոլորովին այլ է իշխան Գնելի ու իշխանուհի Փառանձեմի վրեժիսնդրության շարժառիթը: Արշակը, տարվելով Փառանձեմի գեղեցկությամբ, հետապնդում է նրա նշանածին խոռվարար իշխան Գնելին, որն ստիպված փախել է Հայրենի օջախից և այժմ գաղտնի վերադառնալով, ցանկանում է անձնական հաշիվները մաքրել Արշակի հետ: Եվ այս վրեժիսնդրության հողի վրա նա դաշն է կապում սպարապետ Վաղինակի հետ: Իսկ Փառանձեմը, առերես հանձնվելով Արշակին, հոգու խորքում թաքցնում է իր

անձնական վիրավորանքը և ցանկանում վրեժինդիր լինել և՝ թագավորից, և՝ թագուհուց: Դա նրան հաջողվում է լիովին: Փառանձեմը գաղտնի մտնում է բանտ, որտեղ բանտարկված էին թագուհին և նրա որդին, սրախողիսող է անում Ոլոմպիայի որդուն, իսկ ավելի ուշ թունավորում թագուհուն:

Արշակի կերպարը որոշ չափով մոտ է շեքսպիրյան Մակբեթին: Նա ճիշտ այնպիսի չարագործ է, ինչպիսին Մակբեթն է: Արշակը հասկանում է չարի ու բարու տարբերությունը: Կատարելով ոճրագործություններ, նա գիտակցում է, որ խախտում է բարոյականության նորմերը, որոնց ինքը հավատում է: Բայց փառամուլությունն ու իշխանատենչության դեմ զորեղ են խղճի խայթից ու հատուցման վախից: Կրքերի գերի Արշակը, կատարելով ստորսպանություններ, ընդմիշտ զրկվում է հանգստից ու երջանկության հնարավորությունից: Իր դեմ գրգռելով բոլորին, Արշակը պայքարում է մինչև վերջ: Հասկանալով կատարվածի ողջ սարսափը և ունայնությունը, որի պատճառով իր կյանքը վերածվեց արյունոտ մղձավանջի, Արշակը չի սթափվում անգամ այն ժամանակ, երբ բոլորը դեմ են դուրս գալիս իրեն, քանզի նրա մեջ ապրում է հերոսի ոգին՝ թեև հանցագործություններով արատավորված: Արշակն, ի վերջո, պարտվում է: Բայց ողբերգության էությունը ոչ թե այն է, թե պայքար է գնում արյունաբերութագավոր Արշակի ու նրա՝ միավորված հակառակորդների միջև, այլ այն, որ երբեմնի հրաշալի ու ազնիվ մարդը (Ա հանդես), իսկական հերոսը վատ կրքերի ազդեցությամբ դառնում է արյունոտ հանցագործ: Արշակն արդեն ուներ Մակբեթի տենչած իշխանությունն ու փառքը, բայց դարձյալ չարագործ է: Որտեղից է առաջանում չարը մարդու մեջ, ինչպես է ներթափանցում մարդկային հոգիները, ի՞նչն է մարդկանց ստիպում փչացնել սեփական և ուրիշների կյանքը, սերմանել մահ ու ավերածություն իրենց շուրջ ու, ի վերջո, կործանվել՝ չհասնելով իսկական երջանկության:

Լիբրետոյի հիմքում, մեր համոզմամբ, մարդու բարոյական ու հոգեկան աշխարհում երկու հակադիր ուժերի, իրարամերժոկանքների՝ բարու և չարի, վեհի և նսեմի բախումն է, իսկ հիմնական գաղափարը արդարության հաղթանակն է չարի նկատմամբ, գաղափար, որ խորապես հոգեհարազատ էր թերզյանին:

Ինչ վերաբերում է Փառանձեմի կերպարին, ապա թերզյանը նրան ներկայացնում է որպես վրեժիսնդրությունից կուրացած հանցագործի: Կորսված է նրա երջանկությունը՝ նա պատրաստ է վրեժ

լուծել արքայից: Իշխանուհու հետագա գործողությունների շարժիչ ուժը սեփական վրեմիսնդրությունն է, որը սահման չունի: Թերզյանի վրիժառու հերոսուհու կերպարը նորություն չէր համաշխարհային դրամատուրգիայի պատմության մեջ: Հատակ հն աղերսները Փառանձեմի և հին հունական մեծ ողբերգակ Եվրիպիդեսի «Մեդեա» ողբերգության դիմավոր հերոսուհու՝ Մեդեայի միջեւ: Սույն ողբերգությունում, որն առաջին անգամ բեմադրվել է մ.թ.ա. 431 թվականին, հերոսուհին խանդի հողի վրա վրեմիսնդրությունից դրդված (Յասոնը՝ իր սիրելի ամուսինը, պատրաստվում է ամուսնանալ Կորնմոսի արքայադասեր հետ) նախ՝ սպանում է Յասոնի հարսնացուին. իր երկու զավակների միջոցով նրան է ուղարկում թույնով ներծծված շքեղ զգեստ և ոսկե պսակ, արքայադուստրը հագնում է դրանք և սարսափելի տանջանքներից մահանում: Զբարգարվելով դրանով, Մեդեան մի աներևակայելի հրեշավոր ոճիր էլ է գործում. ի տարբերություն Փառանձեմի, որն սպանում է ուրիշի Ոլոմպիայի որդուն, նպատակ ունենալով մեծագույն վիշտ պատճառել որդեսեր Արշակին, նա սպանում է Յասոնի երկու զավակներին, ի՞ր իսկ երեխաներին: Զարհութելի արարք, որ տեղավորվում է միայն խելագարության սահմաններում:

Կատարելով ոճրագործություններ, Փառանձեմը ոչ մի ակնթարթ խղճի խայթ չի զգում. ավելին, նա հապարտանում է իր վրեմով: Այս հարցում ևս նա նախորդներ ունի: Հիշենք հին հունական մեկ այլ ողբերգակի, ողբերգության սկզբնավորող Էսքիլոսի «Օրեստիա» միակ եռերգությունը, որը բեմադրվել է մ.թ.ա. 458 թվականին: Եռերգության առաջին մասում («Ագամեմնոն») Ագամեմնոնի կինը՝ Կլիտեմնեստրան, սպանում է պատերազմից հաղթանակով վերադարձած ամուսնուն: Կլիտեմնեստրային դեպի հանցագործության է մղում դարձյալ արյան վրեմը. Ազամեմնոնն Ավլոսում Արտեմիսին է զոհաբերել իր դուստր Իփիդենիային: Թափած արյունը նոր արյուն է պահանջում, գործում է արյան վրեմի օրենքը, ինչպես և Թերզյանի լիբրետոյում է: Սպանելով ամուսնուն և պալատից գուրս ելնելով Ագամեմնոնի արյամբ ցողված՝ Կլիտեմնեստրան պարձենում է իր ոճրագործությամբ:

Լիբրետոյում կարեոր տեղ է հատկացված Գնելին. թեև նա գործողությունից հեռանում է վաղաժամ՝ Բ Հանդեսի է տեսիլում, սակայն հետադայում ևս նա մասնակցում է իրադարձությունների ծավալմանը: Բայ էության, գործողության զարգացման խթան է դառնում մահամերձ Գնելի անհերք Բ Հանդեսի է տեսիլում. ոչ

մի մեղք չդորձած, բայց նենդաբար սպանված պատահու անեծքը սարսափեցնում է արքային: Այնուհետև Արշակը մշտապես հիշում է այդ մասին: Հենց մեռնող Գնելի համար Փառանձեմի վրեմիսնդրությունն էլ մղում է նրան անասելի ոճրագործությունների: Գնելի բոլոր անեծքները կատարվում են, քանզի ոչ մի ոճիր անպատիժ չի կարող մնալ:

Քանի որ Թերզյանի լիբրետոյում ուսմանտիկականը տեղադրությունը է ածվում մելոդրամատիկականի (իսկ վերջինիս բնորոշ է բարու և չարի հստակ տարանջատումը), միանդամայն բնական է Ոլոմպիայի բարի կերպարի առկայությունը: Թագուհին մելոդրամայի տիպիկ կերպար է. նա այնքան բարի է, անհիշաչար ու ներողամիտ, որ անդամ իրեն բաժին ընկած հալածանքներն ի զորուչեն նրա հոգում առաջացնել վրեժ և ատելություն՝ Արշակի ու Փառանձեմի հանդեպ: Նա չի մերժում Արշակի հրավերը և հայտնվում է իր պատվին կազմակերպված հանդեսում: Նա ընդունում է նաև Փառանձեմի ձեռքից գավաթը՝ ի նշան հաշտության, թեև հոգում անամօքելի է որդու կորստյան վիշտը: Թերզյանի Ոլոմպիան սպանվում է Փառանձեմի ձեռքով, մինչդեռ Բուղանդի վկայությամբ իշխանուհին թագուհուն սպանում է բոլորվին այլ հանդամանքներում:

Ոլոմպիայի կերպարը ստեղծելիս Թերզյանը նրան պարզեց է որդի, մինչդեռ պատմական թագուհին, որ Բյուզանդիայի Վալենտիանոս կայսեր զոհված եղբոր հարսնացուն էր և վերջինիս կողմից կոնկրետ էր տրվել Արշակին, զավակներ առհասարակ չի ունեցել: Ըստ երեսույթին, Թերզյանն ստեղծել է մանկան կերպարը, որպեսզի նրա սպանությամբ առավել սոսկալի դարձնի Փառանձեմի՝ վրեժից կուրացած հանցագործի ոճրագործությունները:

«Արշակ Բ» լիբրետոն պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի: Առաջին բաժնում, որն ընդգրկում է Ա և Բ հանդեսները, ներկայացվում են Արշակի ոճրագործությունները, որոնց հետեւում են անեծքները: Այսպես, Բ հանդեսի Ա տեսիլում Ներսես կաթողիկոսը Փառանձեմին պատմում է, թե ինչպես է արքան անձամբ սպանել իր Տիրան հորը (Խորենացու վկայությամբ Տիրանին Արշակի հրամանով սպանում են իր սենեկապետները, և ոչ թե արքան անձամբ): Նման փոփոխությունը Թերզյանի կողմից նպատակ ունի էլ ավելի ատելի ու գարշելի դարձնել գլխավոր հերոսին և անխուսափելի ու ցանկալի՝ նրա կործանումը:

Նույն հանդեսի Զ տեսիլում, երբ ապստամբած նախարարները հարձակվում են արքայի վրա, ցանկանալով հաշվեհարդար տեսնել նրա հետ, իշխաններին սաստում է ներսեսը. նախատելով Արշակին՝ նրան հորդորում է սթափվել, դադարեցնել ոճրագործությունները:

Բ հանդեսի է տեսիլում Արշակի հերթական ոճիրն է՝ նրա հրամանով ծանր վիրավորված Գնելը մեռնում է՝ անիծելով արքային:

Լիբրետոյի երկրորդ բաժնում միավորվում են Գ և Դ հանդեսները՝ Արշակը հատուցում է իր բոլոր չարագործությունների համար, քանզի գործած ոչ մի ոճիր չի կարող արժանի հատուցում չստանալ: Բազում մեղքերի ծանրության տակ արքան անխուսափելի անկում է ապրում և ի վերջո՝ կործանվում:

Գ հանդեսի Դ տեսիլում Արշակին են շրջապատում իր զույգերի ուրվականները և անիծում: Այստեղ է նա միայն իմանում, որ մեռած է նաև իր որդին: Հասկանալով իր արածները, արքան ներում է հայցում: Ի դեպ, լիբրետոյի երկրորդ բաժնում Արշակի կերպարն անսպասելի փոխվում է: Եթե առաջին բաժնում նա մի անկառավարելի չարագործ է, որն անտեսում է նաև ներսես կաթողիկոսի հորդորները, ապա երկրորդում արքան անվերջ զղջում է: Գ հանդեսի Ա տեսիլում Արշակը զղջում է, որ այդչափ հալածել է Ոլոմպիային, իսկ Դ հանդեսի Բ տեսիլում այցելում է բանտարկված թագուհուն և ներում հայցում: Դ հանդեսի Ե տեսիլում թունավորելով թագուհուն, Փառանձեմը զրկում է արքային իր սիրելի տիկնոջից: Եվ վերջում, այդքան տառապանքից հետո նախարարների ձեռքով սպանվում է Արշակը, ինչը միանդամայն բնական է ու տրամաբանական. նա սեփական կյանքով միայն կարող է հատուցել իր գործած մեղքերի համար:

«Արշակ Բ» լիբրետոն կառուցված է հմտորեն, թատրոնի պահանջներին լիովին համապատասխան և հագեցած է խոր գրամատիզմով: Միևնույն ժամանակ այն զերծ է ձգձգվածությունից, կազմված է սեղմ, առանց ավելորդաբանությունների, ինտրիգը զարգանում է աստիճանաբար՝ առաջ բերելով մեծ լարվածություն:

Թատերատեատրն օժտված է արիաների, զուգերգերի, նույնիսկ՝ կվինտեների համապատասխան կտորներով՝ կոմպոզիտորին և բեմադրողին ընձեռելով իրենց ստեղծագործական ողջ թափը ծավալելու ու զարգացնելու մեծ հնարավորություններ:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## «ԱՐՇԱԿ Բ» ՕՊԵՐԱՆ

«Ծովային մարդիկ ընդհանրապես քաջասիրու մարդիկ կ'ըլլան,  
բայց ձեր օքերային մեղեդիները արդարեւ յուղեցին սիրոս»<sup>1</sup>:

Անուրանալի է իտալական օպերային արվեստի դերն ու նշանակությունը ազգային երաժշտական թատրոնների ձևավորման դործում: Երկար տարիներ ապրելով իտալիայում, բացահայտելով *bel canto*-ի գաղտնիքները և գործնականորեն յուրացնելով իտալական օպերայի ավանդույթները, «ռուսական Ռուսինի» Մ. Գլինկան հենց իտալիայում հզացավ ռուսական ազգային օպերայի՝ «իշան Սուսանինի» ստեղծման գաղափարը. “Мысль о национальной  
музыке более и более прояснилась, я сочинил тему “Как матерь убили” (песнь сироты из “Жизни за царя”) и I тему Allegro увертиюры”<sup>2</sup>: Ֆ. Մ. Տոլստոյի<sup>3</sup> վկայությամբ, հընթաց 1832-ին Միլանում կայացած իրենց հանդիպման՝ Գլինկան նվադել է Վանյայի “Как матерь убили” երգի թեման: Հատկանշական է, որ Զուխաճյանը՝ «Հայկական Վերդին», նույնակես որոշում է իր անդրանիկ օպերան գրել իտալիայում, ուր դաշնամուրի և տեսական առարկաների իր առաջին ուսուցիչ, իտալացի պոլսարնակ մանկավարժ Մանձոնիի խորհրդով և հանձնարարականով ուղևորվել էր 1862-ին<sup>4</sup>, մասնագիտական երաժշտական կրթություն ստանալու նպատակով: Միլանում են

<sup>1</sup> Վ. Զարդարյան, Հիշատակարան, Տարեգիրք 1941 տարուոյ, Գահիրե, 1940, էջ 74:

<sup>2</sup> Մ. Գլինկա. Յանուար 1888, մայիս 1888, էջ 60.

<sup>3</sup> Տոլստոյ Ֆեոֆիլ (ծածկանուն՝ Ռոստիսլավ, 1810–1881) – գրող, կոմպոզիտոր, երաժշտական քննադատ:

<sup>4</sup> Գրավկանության մեջ շրջանառվում է Զուխաճյանի՝ Իտալիա մեկնելու թվականը՝ 1861, որը չի համապատասխանում իրականությանը. Հայտնի է, որ առաջնանը 1862-ի գարնանն ու ամռանը եղել է Կ. Պոլսում և համագործակցել իր երաժշտության նախկին ուսուցիչ Գ. Երանյանի հետ «Քնար Հայկական» հանդեսի (երկրորդ շրջան) և «Քնար Հայկական» երաժշտական ընկերության կազմին (երկրորդ շրջան)։ Ուստի, Զուխաճյանը հավանաբար Միլան է մեկնել 1862-ին աշնանը՝ ամենայն հավանականությամբ Գ. Երանյանի մահից (1862, 13 հոկտեմբերի) հետո։

անցնում ուսումնառության տարիները, նա ծանոթանում է իտալական օպերային երաժշտությանը, ի մասնավորի՝ Վերդիի ստեղծագործություններին:

Միլանում ուսանելու տարիներին պոլսահայ լուսանկարիչ, կոմպոզիտորի բարեկամ Գևորգ Ապտուլլահը (Ապտուլլահյան) Չուխաճյանին է ուղարկում «Արշակ» օպերայի լիբրետոն, որի հեղինակն էր թատերական գործիչ, դրամատուրգ, բանաստեղծ, ուսուցիչ, թարգմանիչ, գեղագետ, դրական քննադատ Թովման Թերզյանը: Կոմպոզիտորը ձեռնամուխ է լինում օպերայի ստեղծմանը. պատահական չէր թեմայի ընտրությունը, որը խիստ հոգեհարազատ էր երիտասարդ կոմպոզիտորին. չէ<sup>5</sup> որ Հայրենասիրական քնարը կոմպոզիտորի հարուստ ու բազմալար ստեղծագործական ժառանգության ուրույն ճյուղն էր:

Կ. Պոլսի Խասդյուղի թաղամասի Ներսիսյան վարժարանում ապագա երգահանը երաժշտության ասպարեզում իր առաջին քայլերը կատարեց «զարթոնքի» շրջանի պոլսահայ նշանավոր երաժշտական-հասարակական գործիչ, երգահան և երաժշտության դասատու վաղամեռիկ Գաբրիել Երանյանի (1827-1862) հմուտ առաջնորդությամբ: Ահավասիկ, թե ինչպես է ընութագրել Երանյանին Թեոդիկը. «Հայ մըն էր ան, Երանյան Գաբրիելը, որը անցյալ դարու կիսուն խավարյալի և լուսավորյալի պայքարներու միջոցին Հայտնություն մը եղավ պոլսահայոց մհջ, արվեստագետի իր նոր ձգտումներով: Այդ օրերուն, ցանցառ թիվով մեր երաժիշտները երկու բան գիտեին, արեկերյանն ու կրօնականը: Եվրոպականը գլխովին անծանոթ էր իրենց: Երանյան եղավ ահա նույն երաժշտության ժողովրդականացումին առաջին ուահվիրաներեն»<sup>5</sup>:

Երանյանի գրչին են պատկանում «Կիլիկիա» («Երբ որ բացվին գոներն հուսո», խոսք՝ Ն. Ռուսինյանի), «Առ Հայաստան» («Հայաստան, երկիր դրախտավայր», խոսք՝ Հ. Միրզա-Վանանդեցու) և «Արիք Հայկազունք» (խոսք՝ Հ. Սվաճյանի) աղգային-հայրենասիրական երգերը, որոնք իրենց Հայրենասիրական չնչով ժամանակին մեծ ժողովրդականություն վայելեցին, անցան

<sup>5</sup> Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Ժ-ԺԴ միացյալ տարեկիրք, Կ. Պոլիս, 1921, էջ 89-90:

դարերի միջով և այսօր էլ ապրում են լիարյուն կյանքով ու հնչում չնվազող ոգեսրությամբ:

Հենց Գ. Երանյանի և նրա ուսուցչի՝ Հ. Լիմոնճյանի նշանավոր աշակերտ և հետեւորդ ձայնագրագետ Ա. Հովհաննիսյանի ջանքերով ստեղծվեց երաժշտական առաջին պարբերաթերթը՝ «Քնար արևելյան» ամսաթերթը (1857-1858), որը հրատարակվում էր հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն և հունարեն: Սրանում տպագրվում էին գործիքային ստեղծագործություններ եվրոպական նոտագրությամբ՝ նպատակ ունենալով աշխարհին ներկայացնել գեռես անձանոթ արևելյան երաժշտությունը: 1861թ. սեպտեմբերի 1-ից «Քնար արևելյանին» փոխարինում է «Քնար հայկական» հանդեսը՝ 15-օրյա պարբերաթերթը, որը ստեղծվեց Գ. Երանյանի համաձեռնությամբ և նրա սան Ն. Թաշճյանի ակտիվ մասնակցությամբ: Հանդեսի էջերում զետեղվում էին թատրոնի բեմում արդեն հնչած և հասարակությանը քաջածանոթ ազգային-հայրենասիրական բովանդակությամբ երգեր, նաև՝ հանդեսի հեղինակների հորինած երգերը, երգեմն էլ՝ պատրաստի երաժշտական մեղեղիների օգտագործմամբ:

«Քնար հայկականի» առաջին շրջանը տևեց 6 ամիս (1861թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1862թ. փետրվարի վերջ), ապա՝ ընդհատվեց: Երկրորդ շրջանում (1862թ. ապրիլի 30) Երանյանը աշխատանքներում ներգրավվում է Տ. Զուխանջյանին և Կ. Ֆուքինին:

1862-ին մարտին Գ. Երանյանը Կ. Պոլսում կազմակերպում է հայ իրականության մեջ առաջին՝ «Քնար հայկական» երաժշտական ընկերությունը, որի գործունեության մեջ ի թիվս բաղմաթիվ երաժիշտների, բանաստեղծների, ազգային-ազատագրական շարժման գործիչների, ներգրավվում է Տ. Զուխանջյանին: Ընկերությունը հետապնդում էր «ազգային երգեր, թատերական նվազներ ու պարերգեր հրատարակելու, ընտիր նվազածություններ հառաջ բերելու և երաժշտության ճաշակ առհասարակ բոլոր հայոց մեջ ծավալելու գովելի նպատակը»<sup>6</sup>:

Տեսական համագործակցությունը Երանյանի հետ պայմանավորեց Զուխանջյանի ստեղծագործական բազմալար գործունեության վառ արտահայտված հայրենասիրական դիմագիծը:

<sup>6</sup> Ե. Պողոսյան, Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. 1, Վենետիկ, 1957, էջ 80:

Չուխաճյանի հայրենասիրական առաջին երգը հնչել է 1859թ. դեկտեմբերի 7-ին, Խասդյուղի «Հայկական թատրոնում» «Վասակ կամ անիծյալ ընտանիք» պիեսի ներկայացման ժամանակ: Վարագույրը բացվել է Չուխաճյանի դաշնամուրային նվագակցությամբ՝

Հոս ձայն կուտանք մենք ծաղկալից  
Հայստանի սուրբ դաշտերուն,  
Եվ կը ցըլի սրտից թախիծ,  
Երբ հայրենյաց հիշեմք զանուն<sup>7</sup>:

Խասդյուղի անդրանիկ հայ թատրոնի առաջին ներկայացման առթիվ 1859թ. ներսիսյան վարժարանի ուսուցիչ Գարեգին Զափրաստճյանը գրում է «Դաշնակ յառաջին ներկայացման հայկական թատրոնին, որի Խասդյուղ» ներբողը, որը երգվել է ներկայացումը սկսվելուց առաջ: Դաշնամուրի նվագակցությամբ գրված «Երգ թատերական. Օն մեր նախնի» (խոսք՝ Գ. Զափրաստճյանի, երաժշտ՝ Տ. Չուխաճյանի) մեներգն առաջին անգամ տպագրվել է «Քնար հայկական» երաժշտական հանդեսի երկրորդ շրջանի N 3-ում: Այս երգը, որը «Համակրությամբ ծափահարված է հանդիսականներու կողմե»<sup>8</sup>, ընդունվեց մեծ խանդակառությամբ և կանխորոշեց հայկական ազգային-հայրենասիրական երգերի ստեղծման ուղղությունը:

Հետագայում, 1867թ. փետրվարի 28-ին «Արևելյան թատրոնում» Ռ. Սետեֆճյանի «Վարդան Մամիկոնյան, փրկիչ հայրենյաց» ողբերգության ներկայացումը, որի երաժշտության հեղինակը Տ. Չուխաճյանն է, ձոնվեց Մ. Նալբանդյանի մահվան առաջին տարելիցին: Առաջին անգամ հնչում է «Ազատն աստված այն օրից» երգը, որը հետագայում լայն ժողովրդականություն է վայելում: Կ. Պոլսի «Մասիսը» 1867թ. N 788-ում անդրադառնում է աղմկալից հաջողություն ունեցած հիշյալ ներկայացումներին: «...կը համարձակինք ըսելու, թե հայ հասարակությունը տակավին վառվուն ոգով գրված խաղ մը տեսած չէր, ամենայն կեր-

<sup>7</sup> Հ. Հովհաննիսյան, Հայ թատրոնի պատմություն. XIX դար, Երևան, 1996, էջ 277:

<sup>8</sup> Տե՛ս Մ. Մուրադյան, Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության, Երևան, 1989, էջ 75:

պիվ արժանի Միքայել Նալբանդյանցի հիշատակին, որո համար անցյալ իրկեղուն երկրորդ անգամ կներկայացվեր «Նառամի» թատրոնին մեջ: Օր. Ե. Գարագաշյան Նալբանդյանցի տխուր շիրմին առջև ճառ մ'արտասանեց, որ նմանապես պ. Անտեֆենյանի հեղինակությունն էր, և փոքրիկ Վերգինե Գարագաշյան Նալբանդյանցի հոգին ձևացնելով՝ անոր շիրմեն դուրս ելավ և ազատության վրա անոր գրած տաղն երգեց, ուր ազատասեր բանաստեղծը նվագած է:

Ես մինչ ի մահ, գերեղման,  
Մինչ անարդ մահու սյուն,  
Պիտի գոռամ և գոչեմ,  
Անդադար աղասություն»:

Տարիներ անց, Զուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» կոմիկական օպերայի երրորդ գործողությունից լեբլեբիջիների N 17 «Մենք Քյոռողլու զավակներն ենք» հանրահայտ խմբերգը, անջատվելով օպերայից, ինքնուրույն կյանքի ուղեգիր ստացավ: Լայնորեն օգտագործված ազգային-հայրենասիրական երգերին բնորոշ հնչերանգային և ոլիթմական տարրերի շնորհիվ սահեցառությամբ ընկալվեց ու անմիջապես գրավեց ունկնդրին: Անհնար էր սրանում, թեկուղ քողարկված, չտեսնել հասարակ մարդու բողոքն ընդդեմ արիստոկրատների, թուրքիայի ընչաղուրկ ու ճնշված բնակչության ներկայացուցչի բողոքն ընդդեմ թուրքական վերնախավի: Այդ ուղղվածությամբ էլ ընկալվեց լեբլեբիջիների ռազմաշունչ երգն առաջադեմ հայ հասարակայնության կողմից, ստացավ հայերեն նոր տեքստ, դարձավ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը բնորոշող երգերից մեկը, մտավ ժողովրդի երաժշտական կենցաղ և տարածվեց Զուխաճյանի հայրենասիրական մյուս երգերի հետ:

Զուխաճյանի հայրենասիրական քննարի թրթիռների բարձրակետն, անտարակույս, «Զեյթունցիների քայլերգն» է, որը կյանքի կոչվեց 1862-ի Զեյթունի դյուցազնամարտի կապակցությամբ՝ դառնալով, հիրավի, հայոց ազգային հայրենասիրական երգերի դեռևս չգերազանցված գագաթը:

Զեյթունցիների սիրանքներին նվիրվեցին բազմաթիվ երգեր, այդ թվում՝ Գ. Երանյանի՝ 1862թ. Զեյթունի ապստամբության

յան նախօրյակին դրված «Կիլիկիան», որի խոսքերի հեղինակն է պոլսահայ մտավորական, «Ազգային սահմանադրության» նախագծի հեղինակ Նահապետ Ռուսինյանը։ Մկրտիչ Պեշիկթաշլյանի «Զեյթունի երգեր» հայտնի շարքի բանաստեղծություններից երկուսն իրենց կյանքը շարունակեցին՝ համարելով հայկական հայրենասիրական երգերի գանձարանը։ «Եղբայր եմք մեք» բանաստեղծությունը եղանակավորեց «Արևելյան թատրոնի» երաժշտական դեկավար խոալացի Կարլո Ֆոսքինին, իսկ «Թաղումն քաջորդույն» բանաստեղծության հիման վրա Մակար Եկմալյանն ստեղծեց իր առնաշունչ-վշտագին եղերերգը՝ եռաձայն արական խմբի կամ մեներգչի ու երկձայն արական խմբի համար, դաշնամուրի նվագակցությամբ։

Զեյթունյան երգերի շարքով հանդես եկավ նաև զեյթունցի հերոս բանաստեղծ Հարություն Չագրյանը<sup>9</sup>: Ճակատամարտերից մեկում նա վիրավորվում է թերուց, ինչի հետևանքով դառնում է անդամակույժ, իսկ ինքն էլ ստանում «Չողագ վարժապետ» անունը։

Չագրյանը հեղինակել է «Քայլերգ Զեյթունի», «Երգ Զեյթունցվոց», «Զեյթունցիներ», «Զեյթունցիք», «Մոմին փարան տուր» և այլ ոտանակորներ։ Հ. Չագրյանի և Տ. Չուխաճյանի ստեղծագործական համազործակցությամբ ծնվեց հիրավի հայոց ազգային-ազատագրական պայքարի օրհներգի նշանակություն ստացած «Զեյթունցիների քայլերգը», որտեղ հեղինակը կոչ է անում կտրիճ զեյթունցիներին արևածագի հետ առնել զենքերը, հեծնել ձիերն ու դիմել մարտի, բռնապետների առաջ չխոնարհվել։ Շատ ու շատ սարուկներ ազատագրվեցին, միայն հայ ժողովուրդն է մնացել հլու հպատակ օսմանյան բռնակալության ճիրաններում։

<sup>9</sup> Հ. Չագրյանը ծնվել է 1844թ. Զեյթունում։ 1860թ. նա տեղափոխվել է Կ. Պոլիս, սովորել Պալաթիո օճախ ուսումնական հաստատությունում, 1865թ. սովորել ուսումնառությունը, վերադարձել Զեյթուն և նվիրվել մանկավարժությանը։

Ի պատճին թուրքերի բռնության, 1878թ. Զեյթունում բռնկվում է նոր ապատամբություն՝ Ենի-Դունյան տոհմի Պատիկ իշխանի գլխավորությամբ, որին մասնակցելու համար Չագրյանը բռնի կերպով տարվում է Կ. Պոլիս, որտեղ ծիկիրու պարոն ծածկանունով հրատարակում է զեյթունյան երգերը։ Հետագայում Չագրյանը անդամակուլում է Բուլղարիա։ Վառնա քաղաքում նա հրատարակում է «Տավրոս» շարաթաթերթը (ընդամենը՝ 19 համար)։

## 1 Tempo di Marcia

Ա - բեն հ - լաւ, Զեյ - րմն - ցի - ներ, Դե' ձի հեծ - նենք, առ - նենք զեն - ցեր,  
 դի մենք յա - ռաջ. Ին - չո՞ւ, ին - չո՞ւ զը - լուս ծը - ռնենք  
 Բըն - նա - տ- րին մեր վիզ պարզած:

Արեւն ելաւ, Զէյթունցիներ,  
 Դէ' ձի հեծնենք, առնենք զէնքեր դիմենք յառաջ.  
 Ինչո՞ւ, ինչո՞ւ գլուխ ծունք  
 Բոնաւորին մեր վիզ պարզած:

Քանի՞ թմրինք, բաւ է եղբարք  
 Երջենք աչեր աջ ու ահեակ.  
 Շատ ստրուկներ եղան ազատ,  
 Միայն մենք մնանք հլու հնաղանդ:

Զէյթունցիներ, մեր զրօսանքն  
 Է պատերազմ եւ արշաւանք.  
 Սուր, թուր, գնդակ եւ հրացան  
 Մեր խաղալիքն են յաւիտեան:

Կեցցէ' Զէյթուն, ապրի' Զէյթուն,  
 Թող չտեսնէ ստրկութիւն.  
 Քանի ունի մեղ պէս քաջեր,  
 Ապրի' Զէյթուն, կեցցէ' Զէյթուն:

Բանաստեղծությունը հայ ժողովրդի համար ճակատագրական ու դժվարին ժամանակաշրջանում թարգմանեց Վ. Բրյուսովն ու "Յայունական մարաշ" վերտառությամբ զետեղեց "Պօէզիա Արմենիա" ժողովածուի մէջ:

«Զէյթունցիների քայլերգն» արժանացել է հայ և օտարագորդի երգահանների ուշադրությանը: Մ. Խպոլիտով-Խվանովը (1859-1935) երգի մեղեղին 1894թ. օգտագործել է իր «Կովկասյան էսքիզներ» սիմֆոնիկ ստեղծագործության առաջին շարքում՝ որ-

պես «Սարդարի երթի» գլխավոր թեմա, իսկ Գ. Կազաչենկոն (1858-1938)<sup>10</sup> մեներգչի, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված առաջին «Հայկական սյուլիտում»:

Մ. Եկմալյանը քայլերգի հիման վրա արական երգչախմբի համար ստեղծել է *a cappella* խրոխտ խմբերգը՝ «Կեցցե Զեյթուն» վերնագրով (որպես վերնագիր կոմպոզիտորն ընտրել է քայլերգի բանաստեղծական տեքստի վերջին քառյակի առաջին երկու բառերը, որն, իրականում, երգի իսկական ապոֆեոզն է, տրամաբանական շեշտը), իսկ 1974թ. Ալեքսանդր Հարությունյանը «Մեր հին երգերը» ռապսոդիայում (գրված դաշնամուրի, լարային նվագախմբի և հարվածայինների համար), ի թիվս այլ երգերի («Բլբուլն Ավարայրի», «Արաքսի արտասուրքը»), օդտագործել է Զուխաճյանի քայլերգը՝ ստեղծելով սիմֆոնիզացված վարիացիաների նմուշ:

Պատահական չէ, որ Ա. Խաչատրյանի հեղինակած ՀՍՍՀ պետական հիմնի<sup>10</sup> (1944) և «Զեյթունցիների քայլերգի» երաժըշտական լեզվում առկա են մի շարք ընդհանրություններ: Ավելին, ժամանակակիցների վկայությամբ ՀՍՍՀ պետական հիմնի մըցույթին Խաչատրյանն իր ստեղծած օրհներգի հետ ներկայացրել է նաև հենց «Զեյթունցիների քայլերգը»...

Եվ այսպես, 1865-ին Միլանից Պոլիս վերադառնալով, Զուխաճյանն իր հետ բերում է գրեթե ավարտված «Արշակ Բ» օպերան՝ բացառությամբ Նախերգանքի, որը հորինում է Կ. Պոլսում՝ բավական արտասովոր պայմաններում: Ամեն անգամ, երբ Զուխաճյանն այցելում էր Ապտուլլահին, լուսանկարիչը պահանջում էր, որպեսզի նա գրի Նախերգանքը: Զուխաճյանը խոստանում էր ավարտել Նախերգանքը առաջիկայում, մի քանի օրից: Խոստանում էր և ... խոստումը հերթական անգամ դրժում: «Օր մը, Զուխաճեան դարձեալ գացած էր Ապտուլլահի լուսանկարչատունը, բայց այդ անգամ բան չըսուեցաւ իրեն Նախերգանքին մասին: Դէորդ Ապտուլլահ կը խնդրէ որ այդ գիշեր իրենց մնայ. Տիգրան

<sup>10</sup> Հայկական ՍՍՀ պետական հիմն - վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություն երգչախմբի և մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար: Գրվել է 1944-ին, խոսք Սարմենի, ռուսերեն թարգմանությունը՝ Ա.Տեր-Հակոբրյանի: Փոխադրությունը երգչախմբի և դաշնամուրի համար լրաց է տեսել Երևանում 1945-ին: Պարտիտուրը և Փոխադրությունը փողային նվագախմբի համար հրատարակվել է 1947-ին:

կը համաձայնի: Գէորգ յօրինողին յատկացուած սենեակին մէջ, ուր դաշնակ մըն ալ կար, քանի մը տասնեակ երաժշտութեան թուղթեր, մատիտ, զմելի կը դնէ, որոնք նախապէս պատրաստած էր: Երբ Զուհաճեան քնանալու համար այդ սենեակը կ'առաջնորդուի՝ Ապտուլլահ կը յայտարարէ. Մինչեւ որ «Արշակ Բ»-ի նախերգանքը չպատրաստես, բանտարկուած պիտի մնաս այս սենեակին մէջ: Ու դուռը վրայէն կողպելով, բանալին իր քով կը պահէ: Զուհաճեան ըսուածը կատակ կը կարծէ, ու հանգիստ մը կը քնանայ, սակայն առաւօտուն կը հասկնայ որ ըսուածը իրականութիւն է: Ճարահատ, կը սկսի իր բանտին մէջ պատրաստել նախերգանքը: Ապտուլլահ իր ընտանիքին անդամներուն պատուիրած էր որ Զուհաճեանի նախաճաշը եւ կէս օրուան ճաշը կողովով մը վար իջեցնեն վերի յարկի պատուհանէն: Զուհաճեանի յատկացուած սենեակը տանը պարտէզին կողմն էր եւ ճաշը իրեն տրուած միջոցին, դրացի տուներէն օրիորդ մը կը տեսնէ բանտարկեալի մը այդ կերպով կերակրութիւր ու եղելութիւնը կ'երթայ կը պատմէ դրացի քանի մը օրիորդներու, որոնք հաւաքուելով՝ մինչեւ իրիկուն արգելք կ'ըլլան երգահանին, որ չի կրնար նախերգանքը վերջացնել: Երեկոյեան, երբ Ապտուլլահ տուն կը վերադառնայ եւ տեսնելով որ նախերգանքին կէսը միայն պատրաստ է, կը հրամայէ որ բանտարկութիւնը շարունակուի եւ երեկոյան ճաշն ալ նոյն կերպով կը տրուի: Զուհաճեան տեսնելով որ պատում չկայ, մինչեւ որ գործը չաւարտի, այդ գիշեր մինչեւ արշալոյս աշխատելով կը վերջացնէ: Առաւօտուն Զուհաճեան կը պոռայ որ լրացուցած է նախերգանքը: Ապտուլլահ գուրսէն կ'ուղե գաշնակի վրայ լսել պատրաստուածը: Զուհաճեան ներսէն կ'աղաղակէ թէ պատրաստած է: Ապտուլլահ կը պնդէ որ պէտք է լսէ: Վերջապէս Զուհաճեան կը նուագէ նախերգանքը: Ապտուլլահ դուռը կը բանայ ու կը շնորհաւորէ»<sup>11</sup>:

Զուխաճյանը նախերգանքը ձոնում է պոլսաբնակ հայտնի ճարտարապետ, գեղարվեստասեր Հակոբ Պալյանին. նրա<sup>12</sup> ապարանքում էլ 1868-ի վերջերին առաջին անգամ հնչում է նախեր-

<sup>11</sup> Ն. Պեշիկթաշլյան, Թատերական դէմքեր, Անթիլիսա, 1969, էջ 90:

<sup>12</sup> Որոշ աղբյուրների վկայությամբ նախերգանքն առաջին անգամ կատարվել է Հակոբ Պալյանի եղբոր՝ Սարգիս Պալյանի առանձնատանը:

գանքը՝ իտալական քառյակի կատարմամբ, Զուխաճյանի ղեկավարությամբ. նվազահանդեսին ներկա էր բարձր դասին պատկանող ավելի քան 100 ընտանիք: Ցնցող տպավորություն թողնելով ունկնդիրների վրա, Նախերգանքը մեծ ժողովրդականություն է ձեռք բերում՝ բազմիցս հնչելով Կ. Պոլսում, Զմյուռնիայում և Եվրոպայում՝ Վենետիկում, Նեապոլում, Վիեննայում (1873-ի համաշխարհային նվազահանդեսի ժամանակ) և Փարիզում (1891), տարածելով հայ երաժշտի անունը:

Նախերգանքը<sup>13</sup>, որի ողջ թեմատիկ նյութը վերցված է օպերայից, ներկայացնում է երկու հակադիր բեեռներ՝ մի կողմից գլխավոր հերոսների ողբերգական սիրո, տառապանքների ու կործանման պատմությունը, մյուս կողմից՝ կենսական ուժով փայլող և հավերժ հաղթանակող ժողովուրդը: Ուստի Նախերգանքը պայմանականորեն կարելի է բաժանել երկու հատվածների:

Առաջին հատվածում տրված են հերոսների ապրումների, գործողությունների, նաև՝ ճակատագրի թեմաները: Նախերգանքն սկսվում է օպերայի ընթացքում երկիմաստ նշանակություն ստացած B dur թեմայի շարադրմամբ: Մի կողմից՝ սա Արշակի և Օլիմպիայի հաշտության թեման է, իսկ մյուս կողմից՝ ներկայանում է որպես նրանց ողբերգական մահվան գաղափարի կրողը: Նախերգանքը սկսելով հերոսների մահվան թեմայով, Զուխաճյանն ընդգծում է օպերայի ողբերգական ավարտը:

Արշակի և Օլիմպիայի մահվան թեման, առաջին անգամ հնչելով Նախերգանքում, հետագայում հնչում է 4-րդ գործողության մեջ, երբ մեռնում են երկուսն էլ: Այս առիթով կարելի է հիշել Վերդիի «Տրավիատայի» նվագախմբային պրելյուդը. այն սկսվում է գլխավոր հերոսուհու՝ Վիոլետայի մահվան թեմայով, որն անհետանում է 1-ին և 2-րդ գործողությունների ընթացքում, ապա հայտնվում է վերջին՝ 3-րդ գործողության նվագախմբային մուտքում և գուժում հերոսուհու մոտալուտ մահը:

<sup>13</sup> «Արշակ Բ» օպերայի Նախերգանքի վերլուծությունը կատարված է ըստ Գ.Ա.Թ. Տ. Զուխաճյանի դիվանում պահվող պարտիտուրի (N 9, ձեռագիր 14 թերթ): Նախերգանքի պարտիտուրը շարադրված է մեծադիր թերթերից բաղկացած առանձին տետրում: Թանաքաղիք է, գրված է շատ խնամքով, մաքուր ու գեղեցիկ, դյուրին ընթեռնելի ձեռագրով:

## 2 Andante sostenuto

Մահվան թեմայի սկզբնական վարընթաց քրոմատիկ շարժումը դառնում է բոլոր մեռնող հերոսների ողբերգական մահը կանխագուշակող լայթինտոնացիա, որն անցնում է միայն նվազախմբում (սրա հիման վրա հն կառուցվում վարընթաց քրոմատիկ սողացող ակորդների շարքերը): Սա հանդես է գալիս առաջին գործողության վերջում՝ ուղեկցելով Գնելին. նա անխուսափելիորեն պիտի սպանվի հաջորդ՝ 2-րդ գործողության մեջ: Մահվան լայթինտոնացիան հնչում է 3-րդ գործողության ֆինալում՝ գերեզմանոցի տեսարանում, ուղեկցելով Արշակին. արքան պիտի սպանվի հաջորդ՝ 4-րդ գործողության մեջ: Բունի մահվան լայթինտոնացիան հնչում է Օլիմպիայի նվազախմբային ուղեկցության մեջ՝ 3-րդ գործողությունից ողբի ժամանակ. ընականաբար, թագուհին ևս սպանվում է հաջորդ՝ 4-րդ գործողության մեջ:

Մահվան լայթեմայի երկու մոտիվներից՝ առաջինը, հետեւղականորեն պահպանելով իր նվազախմբային «Հանդերձանքը», բազմիցս հնչում է 4-րդ գործողության ընթացքում՝ ստանալով նաև հերոսների հաշտեցման թեմայի նշանակություն:

Ի տարբերություն առաջինի, երկրորդ մոտիվը նվազախմբային չէ՝ հնչում է 4-րդ գործողության մեջ երկու անգամ, Օլիմ-

պիայի երգամասում։ Սա ձայնակարգային փոփոխությունից զատ, այլ փոփոխություններ չի կրում՝ ի տարբերություն առաջին մոտիվի, որը ենթարկվում է ինչպես տեմբրային, այնպես էլ ոիթմական տարբերակման։ Խայտաբղետ է նաև հետագայում նրա լադատոնայնական տարբերակների ցանկը։ Ֆլեյտայի և ջութակների ջերմ տեմբրի կատարմամբ և ալտերի, թափշութակների ու կոնտրաբասների նվազակցությամբ հնչում է Արշակի և Օլիմպիայի փոխադարձ սիրո չքնաղ թեման։

3 Andante con moto

Լայնահուն կանտիլենային մեղեղին կազմող երկու մուտիվներից առաջինը պատկերում է հերոսների երջանիկ սիրո սկզբնական փուլը՝ պայծառ ու լուսավոր: Սիրո թեմայի երկրորդ մուտիվը պատմում է այն մասին, թե ինչպես է Արշակը կրքոտ տարվում Փառանձեմով, հալածում թագուհուն, ապա՝ դարձի գալիս ու հաշտություն հայցում Օլիմպիայից: Բնականաբար, սրա բնույթն առավել հուզումնալից է ու անհանգիստ. ի հայտ են գալիս շեղումներ, ալտերացված հարմոնիաներ: Սիրո թեման կհնչի նաև օպերայում՝ 4-րդ գործողության մեջ՝ առաջին անգամ հանդես գալով Արշակի, այնուհետև երկու անգամ՝ Օլիմպիայի երգամասերում:

Այսպիսով, կարելի է եղրակացնել, որ Արշակի և Օլիմպիայի սիրո թեմայում սեղմ տրված է օպերայի համառոտ բովանդակությունը: Տպագորությունն է ստեղծվում, թե բոլոր դժվարություններն արդեն անցել են, և հերոսները վերագտնել են՝ իրենց կորսված երբեմնի երջանկությունը: Բայց ո՞չ. սիրո թեմային անմիջապես հաջորդում է թաղման քայլերգը, սպան ե moll խորալը:

4 Sostenuto e religioso

Հարային խմբի *sotto voce* կատարմամբ հնչում է սղո հանդիսավոր խորալը. մահը օպերայի գործողությունների և հերոսների «Հավատարիմ» ու «անբաժան» ուղեկիցն է: Սղո քայլերգն օպերայի ընթացքում հնչում է երկու անդամ, երկու դեպքում էլ առանց փոփոխության՝ չի փոխվում ո՛չ տոնայնությունը (*g. moll*) և ո՛չ էլ կատարողական կազմը (կաթողիկոս Ներսեսն ու արական երգչախումբը). տղամարդկանց ցածր ձայները խորալին հաղորդում են էլ ավելի մոայլ ու հանդիսավոր բնույթ:

Օպերայում քայլերգն առաջին անդամ հանդես է գալիս 2-րդ գործողության ֆինալում Գնելի, իսկ երկրորդ անդամ՝ 4-րդ գործողության ֆինալում Օլիմպիայի մահից հետո: Այլ խոսքով՝ հնչում է օպերայի զույգ գործողություններում՝ բոլորովին անմեղ մարդկանց ողբերգական մահվան կապակցությամբ: Բայց երեսույթին դա է պատճառը, որ Արշակի մահվանը չի հաջորդում սղո խորալի անցկացումը:

Թաղման քայլերգը նախերգանքում ծավալուն տեղ է դրավում: Գրված է պարզ եռմասանի ձեռում, որի միջին մասը շարադրված է զուգահեռ *Des dur-*ում, իսկ ուստիզում կրկնվում է առաջին մասը՝ թավջութակների ու դաշնամուրի նվազամասի որոշ փոփոխություններով: Իր քայլերգի տոնայնական կառուցվածքի ընտրության հարցում Զուխաճյանը հավատարիմ է նույն ժանրի գլուխդործոց՝ Շոպենի դաշնամուրային Ե *moll* սոնատից սղո քայլերգի տոնայնական կառուցվածքին:

Սղո խորալին հաջորդող փոքրիկ կապող հատվածը նախապատճենում է Արշակի և Օլիմպիայի սիրո թեմայի անցկացումը *Ges dur-*ում.<sup>14</sup> Թեման կատարում են ջութակներն ու թավջութակները և հանդեցնում Արշակի վարընթաց «Հառաչող» սեկունդաներով ծավալվող մելամաղձոտ թեմային՝ Փլեյտաների ու ջութակների կատարմամբ: Հերոսների մահվան թեմայի առաջին մոտիվի պես սա ևս օպերայի ողջ ընթացքում պահպանում է իր գործիքային բնույթը՝ բացառապես հնչելով նվազախմբում. ուղեկցում է Արշակի մուտքն ու առաջին անդամ հնչում նախաբանի երկրորդ բաժնում՝ նախորդելով արքայի անդրանիկ արիային, իսկ երկրորդ

<sup>14</sup> *Ges dur-*ը սիրո թեմայի տոնայնության՝ Ե *dur-*ի, ցածր վեցերորդ աստիճանի տոնայնությունն է, ինչպես կտևսնենք հետագայում, տոնայնությունների նման սիրցիային համադրումները օպերայի հարմոնիկ լեզվի կարևոր առանձնահատկություններից են:

անդամ հանդիպում է առաջին գործողության մեջ՝ Փառանձեմի ու Արշակի հանդիպման ժամանակ: Փաստորեն, Նախերգանքի առաջին բաժնում հանդես են գալիս Արշակին բնութմազբող երեք թեմաներ՝ սիրո, որը կապված է Օլիմպիայի, վարընթաց «Հառաչող» թեման կապված Փառանձեմի հետ և մահվան:

Եթե Նախերգանքի առաջին բաժնում հնչում են հերոսների ողբերգական ճակատազրի հետ կապված թեմաները, ապա երկրորդում անհատական հերոսներին հակադրվում է ժողովուրդը, իսկ կյանքում կատարվող ողբերգական իրադարձություններին՝ ժողովրդական տոնախմբության ուրախ տեսարանը:

Նախերգանքի երկրորդ բաժինն ամբողջությամբ հնչում է 4-րդ գործողության մեջ՝ Օլիմպիայի պատվին Արշակի կազմակերպած հանդեսում (բացառություն է կազմում տոնայնական փոփոխությունը. Նախերգանքում՝ F dur, իսկ օպերայի 4-րդ գործողության մեջ՝ E dur): Նույնատիպ հնարք 1875թ. կկիրառի Ժ. Բիզեն «Կարմեն» օպերայում, որի Նախերգանքում հեղինակն օգտագործում է փայլուն քայլերդի թեման 4-րդ գործողությունից:

Նախերգանքի երկրորդ բաժինը գրված է սոնդո ձևում: Սրբնթաց ու աշխույժ ոեֆենքը հնչում է ֆիեյտաների մոտ՝ լարային խմբի ու դաշնամուրի նվազակցությամբ:

5

Allegro

«Արշակ Բ» օպերայի նվագախմբային Նախերգանքը ստեղծագործության հիմնական դաղափարի անմիջական կրողն է և կանխագուշակում է հերոսների ողբերգական ճակատագիրը: Միաժամանակ այն վերարտադրում է ողջ օպերայի հուզական իրմաստային բովանդակությունն ու ներկայացնում երաժշտական լեզվի առավել բնորոշ առանձնահատկությունները:

**Ա. Լադատոնայնական կառուցվածքը.** Չուխաճյանը Նախերգանքում հենվում է մաժոր և մինոր ձայնակարգերի օգտագործման վրա: Առկա է կոմպոզիտորի հակումը դեպի բեմոլավոր տոնայնություններ. դիեզավոր ոչ մի տոնայնություն բացարձակապես չի հանդիպում, անդամ շեղումի ձևով:

Նախերգանքի լադատոնայնական կառուցվածքի այս առանձնահատկությունը մասամբ պահպանվում է օպերայի ընթացքում՝ բավական է նշել, որ օպերայի բոլոր չորս գործողություններն սկսվում են բեմոլավոր տոնայնություններում՝

Նախերգանք - B dur

Առաջին գործողություն - As dur

Երկրորդ գործողություն - C moll

Երրորդ գործողություն - C moll

Չորրորդ գործողություն - C moll

Նախերգանքում հանդիպող մաժոր տոնայնությունների տերցիային համադրումները խիստ բնորոշ են օպերային: Հանդիպում են նաև Չուխաճյանի կողմից սիրված և օպերայում հետևողականորեն կիրառված՝ համանուն տոնայնությունների համագրումները. սիրո թեմայի B dur անցկացմանն անմիջապես հաջորդում է թաղման քայլերգը համանուն Ե moll-ում:

**Բ. Տեմպ.** Նախերգանքում օդտագործված են միջին (չափավոր) և արագ տեմպեր: Դանդաղ որևէ տեմպ առհասարակ չկա: Օպերայի ընթացքում ևս Չուխաճյանը նախապատվությունը տալիս է չափավոր և արագ տեմպերին:

**Գ. Չափ.** Նախերգանքում օդտագործված են հիմնականում սլարդ և բարդ երկմաս չափեր՝ 2/4 և 4/4: Առաջին բաժնում իշխում է 4/4 (բացառություն է թաղման քայլերգը, որը ժանրի պահանջներին համապատասխան գրված է 2/4 չափում), իսկ երկրորդ բաժնի ոռնդոն ամբողջությամբ ծավալվում է 2/4 չափում:

Նախերդանքում եռամասս չափերն իսպառ բացակայում են:

Օպերայում ևս հիմնականում իշխում են վերոհիշյալ չափերը, թեև մերթընդմերթ հանդիպում են նաև այլ չափեր (3/8, 6/8 և այլն):

**Դ. Ակորդիկա.** կոմպոզիտորը լայնորեն կիրառում է տերցիային կառուցվածք ունեցող համահնչյուններ, մաժոր-մինոր ձայնակարգային համակարգի և ալտերացված ակորդներ: Մաժուրում Զուխաճյանը հաճախ է կիրառում հարմոնիկ S. մահվան թեմայի երկրորդ մոտիվում, ոռողջոյի ուժքընում: Նախերդանքի երաժշտական կտավում բազմաթիվ են քրոմատիկ, զարտուղող սեկվենցիաները, որոնք ընդգրկում են նաև հեռավոր կարգի աղդակից տոնայնություններ:

Օպերայի ընթացքում ևս Զուխաճյանը հարազատ է մնում սույն մոտեցմանը:

Եվ քանի որ ամբողջ օպերան աչքի է ընկնում մեղեդային լայն շնչով, շուտ հիշվող և վառ տպավորվող մեղեդիներով, հետևաբար, նույնպիսի բնույթ ունի նաև օպերայի խտացումը հանդիսացող նվազախմբային Նախերդանքը:

«Արշակ Բ» օպերայի Նախերդանքն ունեցավ արտասովոր ճակատագիր<sup>15</sup>:

Մասսարոյի մահից հետո Զուխաճյանի սան, արևմտահայ ջութակահար, դիրիժոր, կոմպոզիտոր Հարություն Սինանյանը (1872–1930) 1900-ին Նախերդանքը վերածում է կլավիրի և իր սեփական միջոցներով տպագրում 700 օրինակ: Վաճառքից ստացված հասույթով իզմիրի գերեզմանատանը Զուխաճյանի շիրմին կանգնեցվում է մեծ վարպետի մահարձանը. մարմարի վրա փորագրվում է Ալեքսանդր Փանոսյանի<sup>16</sup> հետեւյալ քառատողը.

<sup>15</sup> Նախերդանքի դարը ճակատագրի մասին հեղինակը «Անվերջանալի ոդիսական». Տ. Զուխաճյանի «Արշակ Բ» օպերայի Նախերդանքը» վերնագրով զեկուցումով Հանդես է եկել ՀՀ ԳԱԱ, Արվեստի ինստիտուտի գումարած Երիտասարդ Հայ արվեստաբանների գլուխական առաջին նստաշրջանի (16–17 նոյեմբերի, 2005) լիազորմար նիստում: Տե՛ս «Անվերջանալի ոդիսական». Տ. Զուխաճյանի «Արշակ Բ» օպերայի Նախերդանքը» Հոդվածը. Երիտասարդ Հայ արվեստաբանների գլուխական առաջին նստաշրջանի նյութեր, Երևան, 2005, էջ 6–13:

<sup>16</sup> Փանոսյան Ալեքսանդր (1858–1919) – բանաստեղծ, գրել է շատ կարծ հանգերով, հատուկ նշանակություն տալով ձևին՝ ոչ միշտ հօգուտ բովանդակության: Ունի նաև մանական բանաստեղծություններ: Բանաստեղծությունների մի մասն ամփոփված է «Այգեկութ» ժողովածուի մեջ: Կատարել է շատ թարգմանություններ: Գրել է նաև Ալփապլան ծածկանունով:

DÉDIÉ À LA MEMOIRE DU FEU,  
CELEBRE Compositeur

J. TCHOURHADJIAN

OLYMPIA  
OUVERTURE  
PAR  
D. TCHOURHADJIAN  
ARRANGÉE  
POUR PIANO

PAR

J. SINANIAN

CONSTANTINOPLE

EN VENTE CHEZ  
SOTIRI CHRISTIDES  
122 CITE DE PERA, 122

S. RAYNAUD

Imp. Christidis GALERIA

Մեծ երգահան, պարծանք ազգին որ տարագիր՝  
իդմիրի մէջ կնքեցիր կեանքդ անշըօրէն,  
8ուրտ ու լըոփին դամբանիդ տակ խաղաղ Հանգի՛ր,  
Որ երկնից մէջ անուշ երգերդ հոգիդ օրքին<sup>17</sup>:

Ժամանակի ընթացքում մոռացության է մատնվում օպերան՝ նաև Նախերգանքը, կորսվում պարտիտուրը: Բարեբախտաբար, տասնամյակներ անց (1942) Պ. Տիգրանովը հայտնաբերում է «Արշակ Բ»-ի պարտիտուրը, և 1945-ի նոյեմբերին Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում առաջին անգամ ներկայացվում է օպերան՝ արժանանալով ունկնդիրների ջերմ ընդունելությանն ու քննադատության բարձր գնահատականներին, ապա՝ Ստալինյան մրցանակի: Յավոք, օպերայից հանիրավի դուրս է մղվում Նախերգանքը: Կատարվում է աններելի սխալ, ստեղծվում պարագոքսալ իրավիճակ՝ բեմադրվում է օպերան առանց Նախերգանքի: Տասնամյակներ շարունակ ներկայացվում էր «Արշակ Բ»-ը՝ անդիտության մեջ պահելով Նախերգանքի գոյությանն անտեղյակ և դրա երաժշտությանն անձանոթ հանդիսատեսին...

Հերթական տիսուր ակորդով եզրափակվեց XX դարը Նախերգանքի ճակատագրում, երբ խզվեց տասնամյակների լուսությունը, և 2000-ին Կահիրենում առաջին անգամ լույս տեսան «Արշակ Բ» օպերայի պարտիտուրն<sup>18</sup> ու կլավիերը<sup>19</sup>: Նախերգանքն այստեղ առկա է. ցավոք, դրանում տեղ են գտել մի շարք թերություններ ու հեղինակային տեքստի կոպիտ աղավաղումներ:

Օպերայի առաջին գործողությունը, որը բաղկացած է երեք տեսլիից, պարունակում է Արշակ արքայի, իշխանուհի Փառանձեմի, իշխան Գնելի և սպարապետ Վաղինակի էսքիզային ընութագրերը:

Գործողությունն սկսվում է ծավալուն խմբերգային նախաբանով: Դաշտավայրում հավաքված ժողովուրդը հեռվից լսում է

<sup>17</sup> Վ. Զարդարյան, նշվ. աշխ., էջ 75:

<sup>18</sup> Տե՛ս Տիգրան Զուհածեան, Արշակ Բ. Երգի եւ դաշնակի համար, Գահիրէ, 2000:

<sup>19</sup> Տե՛ս Տիգրան Զուհածեան, Արշակ Բ. Նուագագրութիւն, Գահիրէ, 2000:

շեփորի ազդանշանը. Արշակ Բ-ն իր զորքով վերադառնում է՝ Պարսկաստանի ղեմ տարած փայլուն հաղթանակով: Բեմի ետևում հնչող երկու շեփորներն ունիսոն նվագում են As dur-ի տոնիկարկան եռահնջյուղունի հիմնական հնչյուղները: Հաղթական հնչողության ստեղծմանն են միտված As dur-ը (սա, ի դեպ, դառնում է նախաբանի լայթտոնայնությունը), արագ տեմպը, նվագախմբում համառորեն կրկնվող ոփթմական պատկերը, տրիոլային շարժումը, որն էլ դառնում է նախաբանի լայթոփթմը:

Հետզհետե զորքը մոտենում է՝ շեփորների հետ միասին հնչում է Արշակին ուղեկցող ողջ փողային նվագախումբը (banda):

Քայլերգի ֆանֆարային թեման հնչողության քանակական ու դիմամիկ աճով սրընթաց ու ինտենսիվ զարգանում է հասնելով գաղաթնակետին, ուր և հանդես է գալիս երգչախումբը: Հիշյալ նվագախմբային դրվագում չկա ոչ մի ոփթմական կանգառ, ամբողջ շարժումն ընթանում է տրիոլների անդադար բարախման ֆոնի վրա: Քայլերգի հաղթական թեման իր փայլուն հնչողությամբ հետագայում կհանդիպի ևս մի քանի անդամ՝ ստանալով ընդհանրացնող իմաստ և խորհրդանշելով ուրախության ու ցնծության կերպարը:

Քայլերգին հաջորդում է արքային ու զորքին ցնծությամբ դիմավորող ժողովրդի խրոխտ ու հանդիսավոր խմբերգը՝ կառուցված նախորդող քայլերգի թեմատիկ նյութի վրա. ժողովուրդը փառաբանում է Արշակին ու բանակը՝ պարսիկների ղեմ տարած հաղթանակի առթիվ: Խմբերգն իր առնական ինտոնացիաներով ու քայլերգային ոփթմով հնչում է որպես ցնծացող ժողովրդական զանգվածների հաղթական օրհներգ: Երգչախմբի հանդիսավոր հնչողությունն ընդգծվում է նրան կրկնօրինակող նվագախմբի հզոր շարժմամբ:

Նախաբանի խմբերգի առաջին մասին՝ տղամարդկանց խմբերգին հաջորդող միջին մասում կտրուկ փոխվում է երաժեշտության բնույթը. համադրումով հանդես է գալիս նոր տոնայնություն (Des dur), փոխվում է ուեգիսարը՝ բասերին ու տենորներին փոխարինում են սոպրանոներն իրենց լուսավոր, վճիռ ու քնքուշ ինտոնացիաներով: Արքային ու զորքին այս անդամ էլ ողջույնի իրենց խոսքն են ուղղում կանայք ու աղջիկները:

Զնայած նշված տարբերություններին, նախաբանի առաջին և երկրորդ մասերն ունեն նաև ընդհանրություններ՝ քեմոլավոր մաժոր ձայնակարգ, տրիոլային ոփթմ, C չափ: Անպաճույն ու պարզ է հարմոնիկ հենքը՝ թեման հնչում է դլխավոր աստիճանների եռահնչյունների ուղեկցությամբ:

Այսպիսով՝ նախաբանի առաջին մասը կուռ կառուցվածք է: Քանի որ նրա բովանդակությունը պարզ է ու հստակ, նույնպիսին է նաև տոնայնական կառուցվածքը: Որպես լայթտոնայնություն առանձնանում է As dur-ը, որով սկսվում է ու ավարտվում սույն բաժինը: Հարաբերական ինքնուրույնություն են ստանում Es dur-ը (տղամարդկանց խմբերգ) և Des dur-ը (կանանց խմբերգ), որոնք As dur-ի դլխավոր աստիճանների եռահնչյունների տոնայնություններն են: Նախաբանի երկրորդ բաժնում տրված է Արշակ արքայի կերպարի ծավալուն էքսպոզիցիան:

Արշակ Բի արիան (*Sostenuto, C, F dur*) վարպետորեն է նախապատրաստել կոմպոզիտորը. արքայի հանդես գալու պահին լուսած են երգչախմբերը, և հերոսը հայտնվում է ուշադրության կենտրոնում: Դլխավոր հերոսի մուտքի նման նախապատրաստումը, որը բնորոշ է մեյերբերյանի տիպի «grand opera»-ին, լիովին համապատասխանում է «Արշակ Բ» օպերայի մտահղացմանն ու բացառիկ նպատակասլացությամբ բնութագրում արքային:

Արշակի արիան սկսվում է F dur-ում, որը մինչ այդ դեռևս բոլորովին չէր հնչել. սրա ներմուծումը հնչում է շատ թարմ:

## 6 Sostenuto

L'alma felice go - de oh! po - pol mio con - te

Արշակի մեղեդին ունի հանդիսավոր, վեհ, հռեաորական բնույթ՝ շնորհիվ սեկունդաներով հանդարտ շարժման, նվագակցության ակորդային-խորալային շարադրանքի, պարզ հարմոնիկ դարձվածքների կիրառման:

Արշակի արիայում ընդգրկված է ևս մեկ թեմա. Երկրորդ հատվածում արքան խաղաղության հրեշտակին խնդրում է իջնել երկնքից ու տարածել իր թեհերը Հայաստանի վրա: Անպարտելի զորավարն այստեղ ներկայանում է որպես աստվածավախ աղնիվ մահկանացու՝ համոզված լինելով, որ իրեն տրված բարօրության «Հեղինակին» ամենակարող արարիչն է: Տեքստին համապատասխան փոխվում է երաժտության բնույթը՝ դառնում թախծոտ ու աղերսագին:

Արշակի արիան ընդմիջվում է երգչախմբի ռեպլիկներով, որոնցով ժողովուրդն իր աջակցությունն է հայտնում արքային. ակնհայտ է Արշակի ու ժողովրդի ամուր կապը: Նրանց ռեպլիկները կրկնվում են երկու անգամ, հաստատելով C dur-ը և ստեղծելով լույսի ու ստվերի էֆեկտ. ժողովուրդը՝ ff, իսկ Արշակը՝ pp:

Հաջորդում է Արշակի արիայի կրկնությունը. այս անգամ հերոսին ձայնակցում են Վարդանն ու խառը երգչախումբը՝ ամբողջ նվագախմբի լուսի հումկու ընկերակցությամբ: Փաստորեն Արշակը, Վարդանը և ժողովուրդն այստեղ միասնական են, խոսում են միենալոյն երաժշտական լեզվով, Արշակն իր ժողովրդի ծառան է, միաժամանակ՝ սիրված ու փառաբանված նրա կողմից, քաջության ու անձնվիրության մարմնացում:

Նախաբանն (պրոլոգ) ավարտվում է հզոր խմբերգային կոդայով, որին մասնակցում են օպերայի՝ Հանդիսատեսին ծանոթ բոլոր հերոսները՝ Արշակը, Վարդանը, խառը երգչախումբն ու ողջ նվագախումբը: Ամրապնդվում է ու հաստատվում գլխավոր հերոսի տոնայնությունը (F dur):

«Արշակ Բ»-ի նախաբանի զարգացման ողջ պլանը սինեմատիկորեն հիանալի է ներկայացրել Գ. Տիգրանովը<sup>20</sup>: Վերջինիս սինեմայից պարզորոշ երեւմ է՝

ա) երգչախմբի մեծ դերը, ինչն էլ օպերային հաղորդում է օրատորիայի գծեր,

բ) երաժշտական-բեմական գործողության պլանավորման մեծակերտ մասշտաբները,

գ) առանձին բաժինների միջև առկա ներքին տոնայնական կապը:

Օպերայի առաջին գործողության երկրորդ տեսիլում զանգվածային սկիզբն իր տեղն է զիջում հերոսների առավել անհատական բնութագրերին. առաջին պլան է մղվում գործողության գլխավոր հերոսներից ևս մեկը՝ իշխանուհի Փառանձեմը: Միաժամանակ Արշակի՝ արդեն ունկնդրին ծանոթ կերպարը բացահայտվում է նորանոր կողմերից (նշենք, որ Արշակի ու Փառանձեմը կապը անհամար է առաջական գործողության մեջ):

<sup>20</sup> Տիգրան Գ. Тигранов, Армянский музыкальный театр, т. 1, Ереван, 1956, стр. 152-153:

ուանձեմի կերպարներն օպերայի ընթացքում մեծ դարդացում են ապրում):

Տեսիլի կոմպոզիցիոն հիմքն է ծավալուն արիա-տեսարանը, որը վերածվելով երկխոսության, այնուհետև վերաճում է ծավալուն զուգերգի:

Տեսիլն սկսվում է նվագախմբային ոչ ծավալուն մուտքով, որն առաջին իսկ հնչյուններից հակադրվում է նախորդ տեսիլին: Ե moll-ի տոնիկական եռահնչյունի տրեմոլոյի ֆոնի վրա ք հնչողությամբ սրբնթաց գլորվող հուզաթաթավ մեղեղու ուղեկցությամբ ներս է մտնում Փառանձեմը: Տեսնելով գեղեցկուհուն, Արշակը հարցնում է Վարդանին. «Բայց ո՞վ է, որ դեպի մեզ կմատչի աղաչափոր կերպով և գեղեցկությամբ լուսահոս՝ արքայական աղջիկ մը, որ սրտիս մըրկաց մեջ սեր կճառագայթե»:

Վարդանը տեղեկացնում է, որ նա արքայի թշնամի Գնելի ամուսինն է: Ընդ որում Արշակի մինչ այդ լայնահուն երաժշտական լեզվի մեջ ներ են խուժում փոքրացրած ինտերվալներով ինտոնացիաներ՝ խաթարելով նրա կերպարի հանդարտությունն ու կանխագուշակելով դեպքերի աղետալի շրջադարձը: «Ի՞նչ կրնա խնդրիլ, որ զլանամ այդչափ գեղեցկության» - ասում է Արշակն, իսկ նվագախմբում հնչում են առաջին տեսիլից մեզ ծանոթ վարընթաց սեկունդաներով «Հառաչող» ինտոնացիաները: Վարդանից իմանալով, որ Փառանձեմն ուղում է ներում խնդրել Գնելի համար, արքան հաստատակամ առարկում է: Ի հաստատումն արքայի վրդովմունքի, նվագախմբում հնչում են փոքրացրած սեպտակորդի հնչյունները (նշենք, որ ԺԹ դարի երաժշտական էսթետիկայում փոքրացրած սեպտակորդն արտահայտում էր խոր հոգեկան հուզմունք): Փառանձեմը եկել է ողջունելու արքային ու շնորհավորելու փայլուն հաղթանակի առթիվ: Իշխանուհու անդրանիկ արիան<sup>21</sup> (Andantino, 3/4, Es dur)՝ հերսոնուհու կերպարի էքսպոզիցիան, իր վեհ մաքրությամբ, խորքնքշությամբ ու լուսավոր տիսրությամբ, օպերայի ոգեշնչված ու սքանչելի էջերից է:

<sup>21</sup> Զուխաճյանի ձեռադրերում սա եղակի դեպք է, երբ կլավիրում բանաստեղծական տեքստը բացակայում է:

## 7 Andantino



Վալսի տարրեր պարունակող այս փիլուն ու սրտառոչ  
մեղեղիում, որը քնքշություն ու ջերմություն է ճառագում, ընդ-  
հանրացված է Փառանձեմի զգացմունքների պոեզիան: Ուշադ-  
րությամբ ունկնդրելով կարելի է կռահել, թե ինչպիսի կենարար  
ուժ է սերն այս կնոջ համար: Արտաքնապես հանդարտ մեղեղա-  
յին գծում, որը ծավալվում է նվագախմբում օստինատույին ոիթ-  
մով տասնվեցերորդականների անհանգիստ թրթռացնող ֆոնի  
վրա, զգացվում է ներքին շարժում: Իշխանուհին անհանգիստ է.  
Է՞ որ նրա սիրելի Գնելն ամբաստանվել է և, խուսափելով հե-  
տապնդումից՝ հեռացել հայրենիքից: Հերոսուհու երգամասի մե-  
ղեղիական գիծը դառնում է հուզումնալից ու սրտատրոփի, ընդ-  
լայնվում է թեմայի ձայնածավալը՝ դրսեորվում է Փառանձեմի

Հոգու խռովքն ու տագնապը: Արիայի միջին մասում կտրուկ համադրումով համանուն es moll-ն է. նկատենք, որ հաջորդ տեսիլում հենց նույն տոնայնությամբ է ընությագրվելու դնելլ՝ առկա է երկու կերպարների տոնայնական ընդհանությունը:

Փառանձեմի՝ խոր տիբությամբ ու ջերմությամբ ներթափանցված երաժշտական դիմանկարում մեծ է հավատն Արշակի հանդեպ, իշխանութին հույս ունի, ավելին՝ նա վստահ է, որ արքան ականջալուր կլինի իր թափանձագին խնդրանքին, և ինքը կզանի իր կորսված երջանկությունը:

Արիային հաջորդում է Արշակի ու Փառանձեմի երկխոսության տեսարանը: Երկխոսություն-զուգերգում հեղինակը հմտորեն ու հաջորդությամբ է կիրառել հարց ու պատասխանի ձևը՝ դրամատուրգիական իրադրության առավելագույնս բացահայտման համար: Արշակի ու Փառանձեմի՝ իրար հաջորդող ասերգային ֆրազները ցայտունորեն պատկերում են երկու տրամադրությունների հակադրությունը՝ կոտրված Փառանձեմ, հալարտ ու զրիժառու Արշակ: Եվ պատահական չէ, որ Փառանձեմի ինտոնացիոն ֆրազները կրում են փոքր-ինչ քնարական-անկեղծ նրբերանգ, իսկ արքայի պատասխաններն աչքի են ընկնում առնական-կամային բնույթով: Ողջ երկխոսությունը ծավալվում է սույն տեսիլի նվագախմբային մուտքի թեմայի տարրերակի վարիացիոն անցկացումների ֆոնի վրա:

Երկխոսությունը նախապատրաստում է նրանց զուգերգը, որը սկսում է Արշակը (Allegro vivo, 3/4, A dur). Նա խիստ վճռական է. երաժշտական լեզվում և նվագակցության մեջ կիրառված օստինատային ոիթմի պայմաններում Զուխաճյանն օգտագործում է մաժոր-մինոր գունագեղ ակորդներ:

#### 8 Allegro vivo

Per lu-i cle men-za spe-ra-sti in va-no tre

Կատարվում է զարտուղություն հիմնական *A dur*-ից դեպի մինոր գոմինանտայի տոնայնություն (*e moll*): Նման հարմոնիկ ներդաշնակումը բխում է կերպարի զարդացումից. Արշակի կերպարն օպերայում տրված է զարդացման մեջ՝ եթե նախաբանում նա իր ժողովրդին նվիրված հայրենասեր կառավարիչ էր՝ բավական պարզ հարմոնիկ լեզվով, ապա այստեղ հանդես է գալիս որպես քինոտ վրիժանում. բարդանում է նրա հարմոնիկ լեզուն: Արշակի համոզմամբ Փառանձեմը զուր է իրենից հայցում գթություն, քանզի իր և Գնելի միջն «վիճք կան ու արյուն»: Մյուս կողմից՝ արքան ներկայանում է որպես կրքոտ սիրահար, որը Փառանձեմին իր սերն է խոստովանում, խոստանում գանձեր ու գահ:

Օպերայում նշանակալի դրամատուրգիական իմաստ են կրում ինչպես արիաները, այնպես էլ զուգերդերն ու անսամբլները, որոնք բացահայտում են ոչ միայն կերպարները, այլև՝ իրավիճակները: Նման նշանակություն է ստանում վերոհիշյալ զուգերդը. Փառանձեմն այլևս ներում չի հայցում, նա լիովին հուսահավում է ու հայտնում, թե ինքն ավելի շուտ մահը կընտրի՝ Արշակի սիրո փոխարեն: Զարմանալի է, թե ինչպես է Զուխաճյանին հաջողվել մաժոր ձայնակարգի միջոցով արտահայտել հերոսուհու անհուն վիշտը: Հարկ է այս առիթով հիշել Կոմիտասի «Անտունիի» նվագակցության մեջ տիրապետող մաժոր հնչողությունները (ընդ որում եղբափակում է այն դարձյալ *A dur*-ը), քանի որ այս գանգատում, հերոսուհու հուսաբեկության ու դատապարտվածության մեջ չկա լալիանություն ու թուլություն: Այս առումով Զուխաճյանը կանխագուշակում է Կոմիտասին դեռևս ԺԹ դարի 60-ականներին: Այսինքն՝ նա հարազատ է մնում հայ ժողովրդական երգային մտածողությանը: Նշենք նաև, որ նմանատիպ դեպքեր կան նաև համաշխարհային դասականների պրակտիկայում. ապացույց՝ Հենդելի «Սամսոն» օրատորիան եղբափակող մաժորային սգո քայլերգը:

Ավարտվում է Արշակի ու Փառանձեմի զուգերգի առաջին հատվածը՝ Արշակն անդրդվելի է, իսկ Փառանձեմը՝ հուսահատ: Ահավասիկ տոնայնական ևս մեկ գունեղ համադրման օրինակ. Էնհարմոնիկ զարտուղություն է կատարվում դեպի *c moll*, որտեղ էլ ծավալվում է զուգերգի հաջորդ փուլը, որն սկսում է իշխանութին (*Maestoso sostenuto, C, c moll*): Տոնայնության ընտրություն

Նը լավագույնս համապատասխանում է ստեղծված իրավիճակին. սա տեսիլում Արշակին ուղեկցող լայթտոնայինության նշանակություն ստացած A dur-ի համար հեռավոր կարգի աղդակից տունայնություն է. ինչպես տեսանք, զուգերգում խոր անջրպիտ առաջացավ Արշակի ու Փառանձեմի միջև։ Մյուս կողմից՝ ինչպես կտեսնենք հետագայում, օ toll-ը դառնում է Գնելին բնորոշ տունայնություն. այդ տոնայնության մեջ է ծավալվում իշխանի անեծքը օպերայի երկրորդ գործողության ֆինալում. Փառանձեմը հավատարիմ է Գնելին նաև տոնայնության առումով։

Տխուր, թախծոտ ու ողբալի են հնչում ճակատագրի հանդեպ իր անզորությունը գիտակցող իշխանուհու ինտոնացիաները։ Անշտապ է ծավալվում երաժշտությունը։

9 Maestoso sostenuto

Ուշագրավ է, որ հեղինակին հաջողվում է ողջ զուգերգի բնթացքում սպահպանել նվագակցության օստինատային ոիթմը։ Այս գեղքում կոմպոզիտորն ընտրել է զուսպ հարմոնիկ ներդաշնակում. սահմանափակվում է T-D-T հաջորդականությամբ։ Սակայն ինչքան վիշտ ու թախիծ կա մեղեդու մեջ։ Անշուշտ, այս մեղեդին Զուխաճյանի մեղեդային անսպառ տաղանդի լավագույն վկայություններից է։ Ինչքան հառաչանք ու արտասուր կա վարընթաց սեկունդաներով շարժման մեջ։ Եվ ինչքան խորհրդական համապատասխան է այս մեղեդը։

Դավորություն՝ pp հնչող նվագակցության մանր տևողությունների փսփսոցում։ Կարծեք, անվերջ նույնությամբ, անվրդով կրկնվում է ճակատագիրը, ֆատումը. ակնհայտ են աղերսները սրա և Բեթհովենի N 5 սիմֆոնիայից ճակատագրի թեմայի միջն՝ երկու դեպքում էլ՝ c *moll*, երկու դեպքում էլ՝ T-D։ Եվ ճակատագրին (նվագախումը) հակադրվող վերընթաց կամային թռիչք, որը ճակատագրի դեմ ընդգրելու մի անհաջող փորձ է (Ճետագայում այս սկզբնական վերընթաց կվարտային թռիչքը ներթափանցում է նաև Գնելի ու Օլիմպիայի երաժշտական լեզվի մեջ)։

Առաջին գործողությունում Արշակից ու Փառանձեմից զատ, տրված են նաև մյուս գործող անձանց՝ իշխան Գնելի ու պարապետ Վաղինակի դիմանկարային ուրվագծերը։

Առաջին գործողության ֆինալի դրամատուրգիական գաղաթը Գնելի ու Վաղինակի վրեժի զուգերգն է, ուր ամփոփված է Հերոսների վրդովմունքը, դառնությունը, կսկիծն ու մորմոքը։ Նրանք երկուսն էլ օպերայի ընթացքում ծարավի են վրեժի։ Եվ դա պատահական չէ, քանի որ ԺԹ դարի պատմառոմանտիկական օպերայի գեղագիտության բնորոշ գծերից էր սկեռուն ուշադրությունը զգացմունքների՝ սիրո և ատելության, տառապանքների ու վրեժի բացահայտման նկատմամբ։ Սույն զուգերգը համաձայնության զուգերգի փայլուն օրինակ է։ es *moll*-ում նվագախմբում համառորեն կրկնվում է քրոմատիկ չարագուշակ ֆրագը՝ օստինատային ոիթմի երեսուներկուերորդականների անհանդիստ բարախմամբ։ Աղբբում թեման անցնում է Գնելի երգամասում (*Andantino*, 3/8, es *moll*), որն այնուհետև նույնությամբ կրկնում է Վաղինակը։

10 *Andantino*

Վրիժառու ընկերներն իրենց հաստատակամությունն ու միահամուռ մարտական տրամադրությունն են արտահայտում զուգերգի եղրափակիչ բաժնում (*Allegro bellico*, 3/4, *As dur*): Անդի դինամիկ ալիքն ստեղծվում է հստակ կետագծված ոիթմով, վերընթաց շեղումներով, մասնակիցների ձայների ունիտն միաձուլմամբ:

11 *Allegro bellico*

*Օժտված* լինելով անուրանալի դրամատուրգիական տարղանդով, Զուխաճյանը երաժշտաբեմական գործողությունը զարդացնում է դրամատիկական սուր կոնֆլիկտների հենքի վրա ստեղծելով դինամիկ աճ զեպի բարձրակետ: Այս տեսակետից առանձնահում է ամբողջ երկրորդ գործողությունը:

Երկրորդ գործողությունը սկսվում է *Օլիմպիայի* արիայով, ուր հերոսուհին ներկայացված է քնարական գույներով (*Andante sostenuto*, C, *c moll*): Թագուհին սիրում է ամուսնուն, նվիրված է նրան անմնացրդ: Արիան վերածվում է երկխոսության՝ վաղինակի հայտնվելուն պես: Սպարապետի մուտքով փոխվում է ե-

բաժշտության բնույլմբ. բացահայտվում է Վաղինակի կերպարը նոր կողմից՝ եթե առաջին գործողության ֆինալում նա պատրաստ էր վրեմ լուծել Արշակից և նրա երաժշտական լեզվի բաղկացուցիչ մասն էին կազմում կամային-առնական ինտոնացիաները, ապա այստեղ հանդես է գալիս որպես ամօթխած սիրահար, ուր չի համարձակվում անդամ խոստովանել իր սերը: Սպարապետը թագուհուն է պատմում Արշակի նենդ պլանների մասին, հավատարմության երդում տալիս և Օլիմպիային օդնելու պատրաստակամություն հայտնում: Թագուհին ցնցված է. այդ մասին են վկայում նրա ինտոնացիաները: Նրան ապշեցրել է մի կողմից՝ արքայի ստոր դավաճանությունը, մյուս կողմից՝ Արշակի սպարապետի ջերմ վերաբերմունքը: Արտահայտիչ մեղեղային վոկալ ֆրազները, «Հառաչանքի» ու «Հողոցի» ինտոնացիաները, հուսահատության ասերգային բացականչություններն արտացոլում են Օլիմպիայի հոգեկան ծանր ավրումները:

Զուգերգի կենտրոնում Վաղինակի պատմությունն է (Andantino, 3/8, c moll). Հոսելով մեղեղային աղատ կանտիլենայով, այն մերթընդմերթ ընդհատվում է ցնցված Օլիմպիայի ոեպ-լիկներով:

12

Andantino

Fan - ciul - la an - cor di  
con - di - de to - se le guan - ce

spar - se, la tu - a so - a - ve

Վաղինակի մենախոսություն-խոստովանությունն աչքի է ընկնում մեղեղային շռայլությամբ ու զգացմունքային հագեցածությամբ. երաժշտությունն ընկալվում է որպես ջերմ սիրով շնչող սերենադ: Սպարապետի պատմության հարմոնիկ լեզուն առանձնանում է գունագեղությամբ և խիստ վառ է: Այդ մասին է վկայում ամենից առաջ լադատոնայնական կառուցվածքը՝ հիմնված գունեղ համադրումների վրա. առաջին բաժինը ծավալվում է C moll-ում, իսկ երկրորդը՝ պայծառ ու լուսավոր C dur-ում:

13

Oh! ver - gi - ne giu - li -

p

va pri - vo di spre - me, io mi - se - ro

Վաղինակի ու Oլիմպիայի զուգերգն անմիջականորեն հանգեցնում է երկրորդ գործողության բարձրակետին՝ տեսիլը եղարփակող սպարապետի համախոհների՝ ապստամբ նախարարների B

*dur* խմբերգին, որը դրված է քայլերգի ժանրում, կառուցված է շայտուն ու պարզ մեղեղու վրա (վերջինս շարադրվում է ունիսոն կամ օկտավաներով) և հիշեցնում է Զ. Վերգիի որոշ օպերաներից խոռվարարների համանման խմբերգերը:

Խմբերգի թեման կրկնվում է բազմիցս՝ ամեն անգամ ընդգրկելով նվազախմբի նորանոր գործիքներ ու գույներ, և ի վերջո՝ հնչում ողջ նվազախմբի ուղեկցությամբ: Այնուհետև երգչախմբին են ձայնակցում նաև՝ Վաղինակը, իսկ վերջում՝ նաև Օլիմպիան: Ստեղծվում է մեծ անսամբլ, որի բոլոր մասնակիցները տողորված են միևնույն գաղափարով:

Այսպիսով, երկրորդ գործողությունն առանձնանում է դինամիկ մեծ լարվածությամբ, որը շարունակվում է նաև ֆինալում, հանգեցնելով հերոսներից մեկի՝ Գնելի կործանմանը:

Երկրորդ գործողության ֆինալում սուր բախման մեջ են մտնում գործողության հիմնական թեմատիկ գծերը: Արշակի գեմապատամբության կոչ անող նախարարների ցասման բարձրակետում ներս է մտնում արքան՝ կատաղած իշխանները հարձակվում են նրա վրա: Նրանց կանխում է ներսեսը, որի «Կեցե՞ք՝ քաջեր, երկինք պատուհասակոծ կ'ընեն զինքը» Փրազները հնչում են լոռության մեջ՝ խիստ, զուսպ ու ազդեցիկ: Այնուհետև կաթողիկոսը սթափեցնում է Արշակին: Ի տարբերություն նախարանի, արքան այս դեպքում արհամարհում է ներսեսի խոսքերն ու պահանջում, որ նա լոի այլիս: Ներսեսը, սակայն, շարունակում է իր հորդորներն ու խրատները. նրա ծավալուն արիան լիովին բնութագրում է երկրի վրա աստծո ներկայացուցչին: Չուխաճյանը կաթողիկոսի կերպարի բացահայտման համար ընտրում է լուսավոր *C dur*-ը: Անշտապ ու խիստ հոսում է ներսեսի խոսքը՝ լարայինների պիցիկատոնների ուղեկցությամբ: Ներսեսի արիան ունի եռամաս կառուցվածք: Հարմոնիկ ներդաշնակման տեսակետից պարզ և տոնայնական առումով կայուն հատվածներին հակադրվում է միջին մասը, որտեղ կաթողիկոսի երաժշտական լեզվի մեջ են ներթափանցում գելլամացիոն ֆրազներ, վերընթաց քրոմատիկ քայլեր, միևնույն հնչյունի տեսական կրկնություններ: Այս հատվածն առանձնանում է նաև տոնայնական անկայունությամբ: Այս ամենը նվազախմբի տրեմոլոնների բր-ի պայմաններում ձեռք է բերում չարագուշակ բնույթ՝ կարծես, կանխագուշակելով

Հետագա ողբերդական իրադարձությունները: «Բայց մահացու ես, ոտքիդ տակ շիրիմ կա, վերն՝ աստված» ավարտում է Ներսեսը. Արշակն անդրդվելի է:

Հաջորդում է նոր բարձրակետ. ներս են մտնում Փառանձեմն ու մերձիմահ Գնելը, որին մահաբեր վերք է հասցել Վարդանը: Փառանձեմի օգնության կանչերն ուղեկցվում են նվազախմբի գամմայակերպ վերընթաց ու վարընթաց քրոմատիկ շարժումներով. Փառանձեմի փրաղները դառնում են առավել հուզված:

Օգնություն աղերսող ամուսնուն սաստում է Գնելը. տեսնելով Արշակին՝ նա անիծում է մարդասպանին: Իշխանի անեծքն (*Sostenuto, C, c moll*) իր ոիթմախնտոնացիոն կառուցվածքով ու դրամատուրգիական կարեոր նշանակությամբ հիշեցնում է Մոնտերոնի անեծքը Զ. Վերդիի «Ծիփոլետտո» օպերայից: Չուխաճյանը, հետևելով Վերդիի օրինակին և հարազատ մնալով Գնելին ընութագրող տոնայնական ոլորտին, անեծքի համար ընտրում է *c moll*-ը՝ ի նկատի ունենալով ողբերգական կերպարների բացահայտման վերջինիս հնարավորությունները (Բեթհովեն. Պաթետիկ սոնատ, Սիմֆոնիա N 5, Շոպեն. Էտյուդներ N 12 և N 24): Գնելի անեծքը հնչում է աղեցիկ, գրեթե լոռության մեջ:

14 Sostenuto

Scel - le ra - to, che di san - gue hai mac-

*f*

chia - to il re gal ser - to per cui

Երկրորդ գործողության ֆինալը եզրափակում է կաթողիկոս Ներսեսի ու նախարարների սգո խորալով սկսվող ու բոլոր անձանց մասնակցությամբ անսամբլով ավարտվող ծավալուն տեսիլը: Ներսեսի ու նախարարների սգո խորալը (*Religioso, 2/4, g moll*), ուր նրանք աղոթում են Գնելի Հոգու հանգստության համար, կատարում է ոեփրենի դեր՝ կրկնվելով երեք անգամ:

15 *Religioso*

The musical score consists of four staves of music. The top two staves are vocal parts, and the bottom two are instrumental parts, likely organ or piano. The vocal parts sing in Italian, with lyrics including "Si - gnor nel - le tu - e sfe - re su - pre - me rac -" and "co - gli rac - co - gli l'al - ma di tua giu - sti - zia non". The instrumental parts provide harmonic support, with the bassoon part featuring sustained notes and chords. The score is set in common time (indicated by '2/4') and uses a mix of major and minor keys, specifically 'g moll'.

Հնչելով արական երգչախմբի ու բասի ցածր ոեփիստրում, խորալի թեման ունի մոայլ, խորհրդավոր ու զուսպ բնույթ: Խորալ-ոեփրենի երկրորդ անցկացմանը հաջորդում է Փառանձեմի

թախտանձագին մեղեղին. «Մի՛ զիս առանձին մի՛ ձգեր գնել. անապատ մ՛են ինձ առանց քեղի կյանք»:

Խորալ-ուժքի բառին էր որդ անցկացումը նախապատրաստում է ֆինալը եղբափակող ծավալուն ահսամբլը: Չուխաճյանն այստեղ գնում է բեմական իրադրությունների խոշորացման ճանապարհով՝ հասնելով անհրաժեշտ գեղարվեստական ընդհանրացումների ու մասշտաբայնության: Ընդ որում դրամատիկ տեսիլների հուզական շիկացման համար նա վարպետորեն օգտագործում է տարրեր կերպարների սուր կոնտրաստային համագրումների հնարքները:

Արքայի գեմ ընդվզող նախարարների վրդովմունքը, մերձիմահ Գնելի անհեծքները, Օլիմպիայի և Փառանձեմի ողբերգական ապրումները, կաթողիկոս Ներսեսի վշտալի հորդորներն ու խրատները, Արշակի հուզումնալից ասերգը. նա փորձում է համեստականալ, թե ինչ է կատարվում իր շուրջ՝ այս բոլոր տարաբնույթ հոգեբանական գծերը միաձուլվում են երածշտական վիթխարի անսամբլում՝ բացահայտելով դրամատիկական իրավիճակի ներքին իմաստն ու հերոսների փոխհարաբերությունների հիրավիքարդը:

Օպերայի երրորդ գործողությունն ամբողջ ստեղծագործության դրամատիկական գործողության կենտրոնն է. այստեղ էլ տրված է օպերայի դրամատուրգիական զարգացման մեջ վճռական շրջադարձը, որը վրա է հասնում առանց նախալատրաստման:

Երրորդ գործողության մեջ շարունակվում են բացահայտվել հերոսների անձնական ապրումները: Այս և նախորդ գործողությունների միջև ընկած է երկամյա ժամանակահատված:

Երրորդ գործողությունը կտրուկ հակադրվում է նախորդ ներին. Եթե առաջին գործողությունն ուներ պայծառ ու հանդիսավոր ընույթ, իսկ երկրորդն առանձնանում էր լարված դրամատիզմով, ապա սա օպերայի ամենամռայլ ու դաժան հատվածն է: Այստեղ լիովին փոխված են մեզ ծանոթ հերոսները: Նախորդ գործողությունների ինքնավագուահ, առնական, խիզախ ու անվեհ հեր արքան, որն իր նպատակին հասնելու համար տարբեր ոճիր ներ էր գործում առանց խղճի խայլթ զգալու, այստեղ տրամադարձուեն փոխված է. նրա կերպարն օժտվում է մարդկային հատկանիշներով, որոնցից զուրկ էր մինչ այդ. նա զղջում է իր գործած

բոլոր չարիքների համար: Դա էլ բավական չէ. երբեմնի անվեհեր արքան սկսում է սարսափել, սարսուալ ինչ-որ ուրվականներից, ինչ-որ անեծքներից: Երբեմնի անխաղական Արշակը փորձում է շտկել իր սխալները՝ ներում հայցել Օլիմպիայից:

Մի խոսքով՝ հսկայական անդունդ է ընկած առաջին-երկրորդ և երրորդ գործողությունների Արշակների միջև: Չուխաճյանը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ նախկին արքայից ոչինչ չի մնացել. եթե անդամ նա այս գործողության մեջ դեռևս Փիդիկապես կենդանի է, ապա բարոյապես արդեն մեռած է:

Հենց Արշակն էլ սկսում է երրորդ գործողությունը: Նրա արիային նախորդում է նվագախմբային ոչ ծավալուն մուտքը, ուր ոչ միայն նախապատրաստում է արիան տոնայնապես, այլև ստեղծում ողջ գործողության մոայլ ու չարագուշակ մթնոլորտը: Նվագախմբային մուտքի թեման բաղկացած է երկու մոտիվից. առաջինը՝ նվագախմբի օկտավային հատու հարվածներն են, որոնց ունիսոն հնչողությունը ստանում է ահեղ ու դաժան ընույթ: Երկրորդ մոտիվը, որ կտրուկ հակադրություն է մտցնում, ունի լացակումած և հուզված բնույթը: Մեղեղին, սրբնթաց բարձրանալով վերին ռեգիստր, այնտեղից գահավիժում է վար: Պայմանականորեն սա կարելի է անվանել Արշակի տառապանքների լայնութունացիա: Հիշյալ մուտքին կարևոր դրամատուրգիական նշանակություն է վերապահված ողջ գործողության ընթացքում. սա կհայտնվի գերեզմանատան տեսարանում՝ դառնալով Ուրվականների խմբերգի թեմատիկ կորիզը: Այդ նույն կետագծված ինտոնացիաներն են հնչելու նաև առանձին ուրվականների (Տիրանի, Գնելի, Արշակի որդու) երաժշտական լեզվում:

Մուտքի երկրորդ մոտիվը ևս հետագայում լայնորեն կիրառվում է բացառապես նվագախմբում: Նրա տարբերակային անցկացումները հանդիպելու են Արշակի արիայում, գերեզմանատանն արքային ուղեկցող նվագակցության մեջ: Այսպես, նվագախմբային գուտքի երկու մոտիվները ստանում են միջանցիկ նշանակություն՝ հայտնվելով գործողության կուլմինացիոն պահերին:

Ինչպես տեսնում ենք, նվագախմբային մուտքում արդեն իսկ տրված է երրորդ գործողության հիմնական՝ Արշակի և Ուրվականների կոնֆլիկտը:

Նվագախմբային մուտքին հաջորդում է Արշակի ու Վարդանի կարճ երկխոսությունը, որը վերաճում է Արշակի արիային.

Արշակը զղջում է թագուհու հանդեպ իր ստոր արարքների, գնելին կործանելու համար. «Աչքիս առաջ անդնդախոր բացվին վերապք՝ ուսկից ՚ի զուր փախչիմ ահով՝ զի նորանոր փեռելին վիճք քայլերուս շուրջ»:

Արշակի կերպարի զարգացմանը զուգընթաց փոխվում է նրա երաժշտական լեզուն. նախկինում լայնաշունչ մեղեղիներին փոխարինում են ասերգային բնույթի դեկլամացիոն ինտոնացիաները: Եթե նախկինում Արշակի երաժշտական համարներն ունեին պարզ ու կայուն լազատոնայնական հիմք, ապա այստեղ, կամ ված հերոսի հոգեվիճակի հետ, արիայի տոնայնական հիմքը խիստ անկայուն է՝ *c moll – g moll – Es dur*:

Արշակի հոգեկան խռովքն ու իրավիճակի դրամատիզմն ընդգծվում է նաև կրկնվող հնչյունների քրոմատիկ շարժումով, որն ուղեկցվում է նվազակցության մեջ մաժոր սեքստակորդների շարքով (նմանատիպ օրինակ կար առաջին գործողության ֆինալում Գնելի երգամասում և նվազախմբում). կարծես այստեղ էլ այդ քրոմատիկ շարժումը կանխագուշակում է հաջորդ գործողության մեջ Արշակի կործանումը):

Արշակի արիան ավարտվում է *Es dur*-ում. հերոսի բնութագրման համար զուգահեռ տոնայնությունների ընդգրկման չուխաճյանական հաճախական կիրառվող հնարք: Սա լիովին համապատասխանում է տեքստին, քանի որ հենց այստեղ է արքան որոշուներում հայցել *Օլիմպիայից՝ հիշելով*, որ նա իր առաջին սերն է:

Հարկ է նշել, որ վերը շարադրված տեսարանն ունի մի կարեոր առանձնահատկություն ևս: Բեմական գործողության առողջությունը այս տեսարանը բավական գինամիկ է՝ բաժշտական լուծման առումով: Գործողության ստատիկան գործողությունը է ներքին դրամատիզմի ուժով: Դրամատիկ լարվածությունը նվազվում է զուտ երաժշտական միջոցներով, առանց թատերական բեմական հնարքների օգնության: Դրամատիզմն ստեղծվում է ոչ թե արտաքին բախումների ու հակադրություններից: Հետեւանքով, այլ՝ բխում բացառապես ներքին ապրումներից:

Երրորդ գործողության երկրորդ տեսիլը պատկերում է անմարդաբնակ վայր այն աշտարակի մոտ, ուր արդեն երկու տարի է, ինչ Արշակի հրամանով, ուխտադրժության մեջ մեղադրանքով՝ բանտարկված է *Օլիմպիան* իր որդու հետ: Այստեղ է իշխան Վաղինակն իր համախոհ իշխանների հետ:

Տեսիլը սկսվում է նվազախմբային մուտքով, որը հանգեցնում է Վաղինակի մուտքին. սպարապետը հրաժեշտ է տալիս ներկա իշխաններին. «Այո՞ւ կ'մեկնիմ՝ բարեկամք, և քիչ ժամանակի պիտի վերադառնամ հայոց արիադունդ քաջերով. կտեսնենք այն ատեն թե ինչ պիտի ըլլա բռնավորին անզգամ և ստահակ ժպրհությունը»: Ընդ որում, Վաղինակի ասերգն ուղեկցվում է մուտքի առաջին մոտիվի անցկացմամբ:

Իշխանները տեղեկացնում են Վաղինակին Օլիմպիայի Կլիփն եկած աղետալի դեպքերի մասին: Նրանց միաձայն երգվող ողովում խմբերգն ունի մոռայլ, խիստ ու զուսպ բնույթ. այստեղ պատմվում է, թե ինչպես է Փառանձեմը սպանել թագուհու որդուն: Չուխաճյանը մշատ է երաժշտական միջոցների օգտագործման հարցում. նա սահմանափակվում է խիստ ձայնատարությամբ խորալային հնչողությամբ՝ օգտագործելով պարզ ակորդային հաջորդականություններ:

Խմբերգի վերջում ձայնակարգային դարտուղության շնորհիվ կատարվում է անցում դեպի տեսարանի երկրորդ բաժինը, ուր Օլիմպիայի արիան է՝ հաջորդող մեծ խմբերգով: Ինչպես ասվեց, երրորդ գործողության մեջ օպերայի հերոսների կերպարները զգալի զարգացում են ապրել. բացառություն չէ և Օլիմպիան:

Եթե երկրորդ գործողության մեջ թագուհու դժբախտությունն ընդամենը ամուսնու դափաճանությունն էր, ապա այժմ նրա կերպարը ողբերգական երանդավորում է ստանում: Նա տարաբախտ որդեկորույս մայր է. վրեմի մոլուցքով տարփած Փառանձեմը գաղտագողի մտնելով աշտարակ, ուր բանտարկված էին թագուհին ու թագաժառանգը, սրախողիսող է արել անմեղ երեխային: Գունեղ տոնայնական տեղաշարժ է կատարվում զեպի շուալ, որն օպերայում կապվում է ողբերգականի ոլորտի հետ և մինչ այդ համարվում էր Օլիմպիային բնութագրող տոնայնությունը (հիշենք նրա արիան երկրորդ գործողությունից, նույն գործողությունից Վաղինակի արիան, որտեղ թագուհու անուղղակի բնութագրին է): Նվազախմբում անցնում է Օլիմպիայի ողբերգային կրկնապատկած սեքստաներով: Նորից կրկնվելով (մեկ օկտավ վար) այն ուղեկցում է թագուհու ողբը, որն իր վարչակաց «Հառաչող» ինտոնացիաների շնորհիվ ստանում է սրտաճմլիկ բնույթ: Օլիմպիայի սրտառուչ արիան (*Andante sostentato, 4/4, f moll*) ձավալվում է աղատ մենախոսության ձեռվ:



Մենախոսության առաջին մասն արտահայտում է հերոսուհու տառապանքներն ու ծանր ապրումները: Արիայի հիմքում ընկած սեկվենցիոն կրկնությունը երաժշտությանը հաղորդում է դիմամիզմ: «Որչափ ցափ քաշեցի. ոհ, ինչ կորուսի... Աչքիս դեմ՝ զիմ որդի դանակն յոշոտեց» - անամոքելի է որդու դիակը գրկած վշտաբեկ թագուհու վիշտը:

Կանանց խմբերգի ընթացքում նվագախմբի նվագամասում ծնվում է մի մոտիվ, որը հետագայում կանցնի տեսարանը եղրափակող անսամբլում՝ սկզբում իշխանների խմբերգի նվագակցության մեջ, այնուհետև հաջորդող կանանց խմբերգում: առկա են թեմատիկ կամուրջները միենույն տեսարանի տարբեր հատվածների միջև:

Երրորդ գործողության ֆինալում մեզ է ներկայանում օպերայի ևս մեկ «ռոմանտիկական հերոս»՝ բնությունը: Մարդու կյանքի ու բնության անբաժանելիության ռոմանտիկական պատկերացումների բացահայտումն էլ տրված է գերեզմանոցի տեսարանում, որն, ինչպես իրավագիրուն նկատել է Գ. Տիգրաննովը, «սահմանկեցուցիչ գերեզմանոցային ռոմանտիկայի բնորոշ նմուշներից է, իր կոլորիտով ու երաժշտական մարմնավորման սկզբունքներով հիշեցնում է ԺԹ դարի ռոմանտիկական օպերաների նմանատիպ տեսարանները՝ Վերդիի «Մակբեթ» և «Պարահանդես-դիմակահանդես» օպերաներից գուշակուհիների տեսարանները, Վերերի «Ազատ հրաձիգը» օպերայից «գայլային հովիտը»<sup>22</sup>:

Գիշեր է, ամպրոպ ու փոթորիկ, կայծակ ու որոտ: Նվագախմբում թավջութակների ու կոնտրաբասների խուլ ունիսոն քայլերի փոնի վրա փայտյա փողային գործիքների մոտ հայտնը վում են կարճ մոտիվային ֆրազների պատառիկներ: ասես, ինչ-որ ստվերներ

<sup>22</sup> Г. Тигранов, նշվ. աշխ., էջ 158:

և ուրվականներ լինեն: Սրանք աստիճանաբար «խտանում» են իմիտացիոն հնարքների շնորհիվ, այնուհետև՝ տարրապուժվում: Պղնձյափողային գործիքների հարվածները, լարայինների «գահակիժող» քրոմատիկ գամմաները ստեղծում են քամու ոռնոցի, ամպրոպի որոտի տպագրություն: Նվագախումբն այստեղ դառնում է դրամայի ակտիվ մասնակից, որը ոչ միայն արտահայտում է հերոսների հոգեվիճակը, ստեղծում գործողության հուզական մթնոլորտ, այլև ձեռք բերում նկարագրողական նշանակություն:

Ողջ տեսիլի ընթացքում զարգացման հիմնական սկզբունք է դառնում սեկվենցիոն մեթոդը: Տեսիլը բացվում է G dur-ով, որին հաջորդում է նույն նյութի սեկվենցիոն կրկնությունը H dur-ում, այնուհետև՝ էլիպսիսներից բաղկացած քրոմատիկ սեկվենցիաների շարքն է, ուր ընդգրկված են հետևյալ տոնայնությունները՝ G dur - F dur - Es dur: Տոնայնություններն իրար են հաջորդում մեծ սեկունդա ինտերվալով վար: Եթե շարքը շարունակվի (ինչն, անչուշտ, մենք գեռ կտեսնենք), ապա կառաջանա ամբողջատոն գամմա, որն, ինչպես հայտնի է, Փանտաստիկ, կախարդական կերպարների ստեղծման ինքնատիպ միջոցներից էր՝ Մոցարտից սկսած: Նշենք, որ ամբողջատոն գամմայի աստիճաններով իրար հաջորդող տոնայնությունների շղթաներն էական են դառնում այս տեսիլի համար:

Սեկվենցիոն կրկնությունների շարքը հանգեցնում է հիմնական g toll-ի DDVII-ին, որն առանց լուծվելու, աստիճանաբար մարում է: Մեկուկես տակտ տեսող կատարյալ լուսությունից հետ լիտավորների տրեմոլոյի ֆոնի վրա, կարծեք, գետնի տակից մուայլ հնչում է մեռելների խմբերգը. այն կրկնօրինակում են դաւարափակողներն ու տրոմբոնները: Միենույն նոտայի վրա չարագուշակ հնչում են Արշակի կողմից մահապատճի ենթարկված նախարարների գելլամացիոն ֆրազները (վերջինիս տարրերին ծանոթ ենք երրորդ գործողության նվագախմբային մուտքից):

Հանգուցյալների ահեղ ու դաժան խմբերգին հակադրվում են Արշակի սարսափահահար ֆրազները, որոնք հնչում են կտրտված, անկապ, լուսության մեջ՝ կ' ավելի խորացնելով հերոսի զարմանքն ու սարսափը: Նվագախմբում անցնում է զուգահեռ սեքսակորդների սողացող քրոմատիկ շարքը՝ գումարելով հաջորդ գործողությունում արքայի կործանման մասին: Այդ պահին հայտնվում է Փառանձեմը, և Արշակի կմկմոցը վեր է ածկում երկխոսության՝ ասերգային հատվածում

գերիշխում է փոքրացրած սեպտակորդի՝ այս տեսլիի լայթհարմոնիայի հնչողությունը։ Ի սարսափ Արշակի ու Փառանձևի, վերստին նույշնությամբ հնչում է հանգույցյալների խմբերգը։ Եվ ամենասարսափելի պահին *ff* հնչողությամբ պայմում է մրրիկը. ց *moll-f DDVII-7*ի լարված հնչողությամբ մեռելներն անհծում են. «Անե՛ծք...Վըե՛մ...»։ Անեծքն առավել սահմոկեցուցիչ է դառնում նվազախմբում դրա կրկնօրինակման հետևանքով։ Փաստորեն, Չուխաճյանը մեռելների համար լայթոիթմ է դարձրել կետագծված ոիթմը, իսկ նրանց լայթհարմոնիան *DDVII-7*ն է, որը միշտ կուղեկցի Ուրվականներին։

Սարսափահար Փառանձեմն առաջարկում է ճողովրել զերեզմանոցից, սակայն արքան չի հասցնում։ Հանկարծ տապանաքարերն սկսում են շարժվել, և, ո՞վ զարմանք, գերեզմանափոսերից, մեկը մյուսի ետևից գուրս են գալիս բոլոր նրանց ուրվականները, ում սպանել է Արշակը։ Այդ սարսափաղդու տեսարանն ամենայն մանրամասնությամբ ներկայացված է Փառանձևի ու Արշակի զուգերգում (*Allegro moderato, 2/4, g moll*). «Ի՞նչ հոնդյուն մահագույժ չորս դին կզոռան. ի տիեզերս սեասքող փայլակն կշողա»։

### 17 Allegro moderato

Paransema

Arsace

*Allegro moderato*

*p*

te - ne - bre l'a - er lam - peg - gial... qual gri - do fu - ne-bre in - tor - noe.


*ff*

*p*

cheg - gial av - vol - toin te - - ne - bre Fa - er - lam peg gia  
 cheg - gial av - vol - toin te - - ne - bre Fa - er - lam - peg gia

Չուզերդն ընդմիջվում է վախեցած Փառանձեմի արտասանությամբ՝ նրա երաժշտական լեզուն սահմանափակվում է առանձին հնչյունների կրկնությամբ, և դա բնական է, քանի որ իշխանուհին սարսափից կորցրել է խոսելու ունակությունը։ Նվազախմբում՝ *g* ու *moll*-ում Ուրվականների լայթհարմոնայի հնչյունների տրեմոլոնների ուղեկցությամբ հայտնվում է Առաջին Ուրվականը («Ես քո Տիրան հայրդ եմ»)՝ *g* հնչյունի կրկնությամբ, որին հաջորդում է երկրորդ Ուրվականը («Զե՞ս ճանչնար զ Գնել»)՝ այս հնչյունի կրկնությամբ, իսկ այնուհետև հանդես է գալիս Ուրվականների խումբը («Դավաճանությանդ զոհ եղած նախարարաց ցեղն ենք»), *f* հնչյունի կրկնությամբ։ Ուրվականների երթը եղրափակում է Արշակի վաղամեռիկ միակ որդու Ուրվականը («Ո՞ւր է մայրս, ո՞վ հափշտակեց զիս անոր անուշ գրկեն»)՝ դարձյալ *g* հնչյունի կրկնությամբ։

Ի մի բերելով Արշակին ներկայացած Ուրվականների երաժշտական բնութագիրը, պարզվում է, որ Չուխաճյանն այստեղ հնչյուններով ստեղծել է խաչ՝ *g - as - f - g*.



Խաչ կազմող Հնչյունների, նաև՝ տոնայնությունների օդ-  
տագործումը կոմպոզիտորի կողմից առավելագույնս համապա-  
տասխանում է գերեզմանոցի տեսարանին, ուր իսկական խաչերի  
բազմություն է. սրանց լուս ներկայությամբ կատարվում են  
զարհուրելի իրադարձությունները:

Դժոխային տեսարանից ուժասպառ Արշակը գթություն է  
հայցում: «Ո՛չ, չկա՛» - շանթում են Ուրվականները: Ակսվում է  
Ուրվականների խմբերը (*Sostenuto, C, D dur*) երկրորդ գործո-  
ղության բարձրակետը:

18 Sostenuto

A - na - te - mal! Vilrazza ar - sa - ci-de, che ti - neb - ri di san - quee ra - pi - na. Di tua  
A - na - te - mal! Vilrazza ar - sa - ci-de, che ti - neb - ri di san - quee ra - pi - na. Di tua

stir - pe se-gna-ta e la fi - ne, tra ul - tri - ce ti co-glie,e in - se - deit! Purnel  
stir - pe se-gna-ta e la fi - ne, tra ul - tri - ce ti co-glie,e in - se - deit! Purnel

Արական երգչախմբի ցածր ձայնները, ակորդային-խորալա-  
յին շարադրանքը, կետագծված ոիթմի կիրառումը, ողջ խմբերդի  
թեմատիկ նյութի կրկնօրինակումը նվագախմբի կողմից ստեղծ-  
ծում են խիստ, դաժան ու ահեղ տպագորություն: Խմբերդից  
փչում է մեռելային սառնություն ու քարացածություն. օգտա-  
գործելով տոնիկական ձայնառությունը, անվերջ ընդդելով տո-

Նիկական եռահնչյունը, կոմպոզիտորն Ուրվականների ֆրագներին հաղորդում է հանդարտություն ու կայունություն. նրանց բոլոր ասածները պիտի կատարվեն:

Ավարտելով անեծքը՝ Ուրվականներն անհետանում են: Ողջ խմբերդի ընթացքում նրանց ուղեկցում է իրենց լայթհարմոնիան՝ փոքրացրած սեպտակորդն ու տոնիկական ձայնառությունը:

Այս սարսափաղու տեսարանից հետո Արշակը հայտնվում է խելագարության եղբին: Նրա և Փառանձեմի զուգերդն էլ եղափակում է երրորդ գործողությունը:

Չորրորդ գործողության մեջ տրված է ողջ օպերայի գործողության գրամատիկական հանգուցալուծումը՝ նախարարների ձեռքով Արշակի սպանությունը: Նախորդ գործողություններից և ոչ մեկում կոմպոզիտորը չէր հասել երաժշտական-դրամատուրգիական տարրեր ձեւերի այնպիսի ծավալուն օգտագործման, ինչպես չորրորդ գործողության մեջ: Այստեղ առավել կարեոր սկզբունքային նշանակություն են ստանում անսամբլները:

Մեղեդային հմայքով ու արտահայտչականությամբ են առանձնանում գործողության գրեթե բոլոր էջերը. թե՛ անսամբլային համարները, թե՛ ինքնուրույն նվագախմբային դրվագները, որոնցով հագեցած է սույն գործողությունը:

Չորրորդ գործողության մեջ ներկայանում է աշտարակում դեռևս բանտարկված Օլիմպիան:

Գործողությունն սկսվում է ծավալուն նվագախմբային անտրակտով. նվագախումբը դառնում է գրամայի լիիրավ գործող անձ եթե մինչ այդ հիմնականում ընկերակցում էր օպերայի հերոսներին և ուներ ենթակա նշանակություն, ապա այստեղ կոմպոզիտորը դրսեռում է սիմֆոնիկ նվագախմբի անսպառ հնարավորությունների բացահայտման բացառիկ հմտություն: Հենց նվագախմբին է հանձնարարված Օլիմպիայի մանկական տարիների վերհուշի վերաստեղծումը, երբ հերոսուհու աչքի առջե վերակենդանանում է հարազատ Բյուզանդիան:

Բնականաբար, նվագախմբային անտրակտում հեղինակը հարազատ է մնում իր իսկ օպերայի մյուս և միակ «բյուզանդական» տեսիլի՝ երկրորդ գործողության առաջին պատկերից Վաղինակի արիային, ուր պատմվում էր թագուհու մանկական տարիների, Բյուզանդիայի ու Բոսֆորի մասին: Անտրակտում Զուխաճ-

յանը պահպանում է «բյուզանդական» տեսիլից Վաղինակի արիայի և տոլլ տոնայնությունը: Հենց սկզբում հնչում է Վաղինակի հիշյալ արիայի երկրորդ մոտիվը, որը շարադրված է միաձայն, և նման ու եմինիսցենցիան այստեղ միանդամայն տեղին է:

Շարադրված հատվածն էլ նախապատրաստում է Բոսֆորի ծավալուն թեմայի շարադրումը: Լարայինների ճոճուն նվագակ ցությունն ստեղծում է Բոսֆորի ալիքների ծփանքը:

Ծագալվելով հիմնականում և տոլլ-ում, թեման շոշափում է երկու տոնայնություն և՝ Es dur և G dur, ինչի շնորհիվ անտրակատի տոնայնական կառուցվածքի հիմքում հայտնվում են հիմնական և տոլլ-ի տոնիկական եռահնչյուն կազմող տոնայնությունները՝ և տոլլ- Es dur - G dur - և տոլլ:

Բոսֆորի թեմայի ցուցադրմանը նվիրված անտրակուը հանդեցնում է Օլիմպիայի ու Պոլիքսենի ասերգային երկխոսությանը: «Լսել կ'թվի ինձ մանկությանս երջանիկ օրերուն ախորժ նվագներ» - ասելով Օլիմպիան զլուխը հենում է պատին, և նրա աչքերի առջև հառնում է հայրենիքը՝ Բյուզանդիան ու Բոսֆորը. երիտասարդ աղջիկները ծաղիկներ են սփռում իր շուրջ, ծաղկեպսակներ հյուսում: Հայրուցինացիաների պատկերման համար Չուխաճյանն օգտագործում է երկրորդ գործողությունից Վաղինակի արիայի առաջին հատվածի նվագախմբային տարբերակը. թեման երգում են թավջութակներն իրենց ջերմ տեմբրով: Պահպանված է արիայի թեմայի տոնայնությունը, թե՛ Andantino տեմպը, թե՛ 3/8 չափը:

Նվագախմբում հնչող Վաղինակի արիայի թեման հանդածակի ընդհատվում է. Պոլիքսենը սթափեցնում է թագուհուն «մեկը կուգա»: Գործողության նման կտրուկ փոփոխությունն արտացոլվում է նաև երաժշտության մեջ. կատարվում է տոնայնական տեղաշարժ և տոլլ-ին համադրվում է լուսավոր ու պայմանական մեջ առ ։ Տարբեր ուր հնչում է նախերգանքից արդեն մեզ ծանոթ Արշակի և Օլիմպիայի մահվան (հաշտության) թեմայի առաջին մոտիվը (սա միշտ հնչում է նվագախմբում), որի առաջին հնչյունների ուղեկցությամբ ներս է մտնում Արշակի թիկնապահ Վարդանն ու հայտնում մեծագույն նորությունը. «Ներսեսի բարձր խորհուրդը հաղթեց՝ թագավորը ավելի մեղմ խորհրդութեղի տալով՝ նախկին պատվույդ կ'վկայակոչե գրեղ»:

Օլիմպիայի ու Վարդանի երկխոսությունը Արշակի մուտքով վեր է ածվում նախ մի չքնաղ զուգերգի, իսկ այսուհետեւ ծավալուն անսամբլի:

«Կը ներե՞ս Օլիմպիա. ոհ կրկնե՛ կրկնե այդ քաղցրալուր ձայնը» - Արշակի մուտքը, բնականաբար, ուղեկցվում է Հաշտության թեմայի առաջին մոտիվով, որին անմիջապես հաջորդում է նրա երկրորդ մոտիվը՝ Օլիմպիայի «Կը ներեմ ու կը մեռնիմ» պատասխանում: Եվ քանի որ Օլիմպիան, այնուամենայնիվ, ներում է Արշակին, ի հաստատումն նրանց հաշտության նվազախմբում հնչում է հաշտության թեմայի առաջին մոտիվը՝ հանգեցնելով նրանց զուգերգին, որն սկսում է արքան. Արշակի երգամասում Նախերգանքից ծանոթ լայնահուն, լուսավոր թեման է:

Նախընթաց՝ երկրորդ և երրորդ մուայլ զործողությունների դժբախտությունների միջով անցած Արշակը ներում է Հայցում իր կողմից դաժանորեն հալածված տիկնոջից ու խոստովանում իր սերը: Փոխստում են արքայի երաժշտական ֆրազները, որոնք ներծծված են սիրով ու ջերմությամբ՝ արտահայտելով նրա հոգեկան անդորրն ու հանգարտությունը: Այդ են վկայում նվազախմբի ճոճուն նվազակցությունը, ը հնչողությունը, ժամանակակից առաջին հարմոնիկ հենքը:

Սիրո թեմայի առաջին մոտիվն արքայի երգամասում հնչում է ամբողջությամբ, բայց երկրորդ մոտիվի սկզբնական հատվածն անցնում է նվազախմբում և հետո միայն Արշակի մոտ (սիրո թեմայի ամբողջական անցկացման մենաշնորհը կոմպոզիտորը վերապահում է Օլիմպիային):

19

Տեսիլը եղբափակում է F dur ծավալուն անսամբլը, որին մասնակցում են Օլիմպիան, Արշակը, Պոլիքսենը, Վարդանն ու նամիշտների երգչախումբը: Անսամբլը հնչում է որպես ներման ու հերոսների հաշտեցման օրհներդ:

Ծավալուն անսամբլը նախընթաց մռայլ գործողություններից հետո դառնում է առաջին լուսավոր հանգրվանը՝ կամրջելով օպերայի առաջին և վերջին գործողությունները:

Կրկին վերականգնվում է առաջին գործողությունից Արշակի կերպարի երրեմնի վեհությունը. այդ է վկայում նաև անսամբլի տոնայնության ընտրությունը (*F dur*), որը ևս պատահական չէ. նույն տոնայնության մեջ իր առաջին արիայով ներկայացավ բոլորի կողմից սիրված ու առաքինի Արշակը:

Չորրորդ գործողության երկրորդ տեսիլն աննախաղեպ օպերայի ողջ պարտիտուրում. Հարազատ մնալով ֆրանսիական ռոմանտիկական մեծ օպերայի ավանդույթներին, Չուխաճյանը մտցրել է բալետային մեծ տեսարան:

Արշակը, փորձելով երգով ու նվագով գեթ փոքր-ինչ մեղմել իր տարաբախտ թագուհու վիշտը, Օլիմպիայի վերադարձի առթիվ պալատում մեծ հանդես է կազմակերպում: «Զվարթ հնչեն նվագները» - արքայի հրամանին հաջորդում է գունեղ տոնայնական տեղաշարժ՝ նախորդող տեսիլը եզրափակող *F dur*-ից դեպի երրորդ կարգի ազգակից *E dur*. սկսվում է հանդեսը:

Բալետի հարմոնիկ լեզուն գունեղ է ու ցայտուն: Այդ է վկայում առաջին հերթին նրա՝ գունագեղ համադրումների վրա հիմնված տոնայնական կառուցվածքը: Բալետի առաջին համարում պարզ երեսում է երկու բաժին: Առաջին բաժնի հիմքում ընկած են *C dur*-ի տոնիկական եռահնչյուն կազմող տոնայնությունները (*E dur* - *C dur* - *E dur* - *G dur*):

Հնչում է նաև նախերգանքից մեզ ծանոթ ոռնդոյի երկրորդ դրվագի թեման, որն այստեղ ևս, ինչպես նախերգանքում, ենթարկվում է մոտիվային մշակման ու սեկվենցիոն զարգացման հասցնելով հաշտության թեմայի առաջին մոտիվի սկզբնական վարընթաց քրոմատիկ ֆրազի քառակի անցկացմանը տարբեր ուղիստրներում, տարբեր գործիքների նվագամասերում:

Սույն տեսիլում այս քրոմատիկ ֆրազը կհնչի բազմից ստանալով դրամատուրգիական կարեռ նշանակություն. չէ՞ որ հանդեսն ու նրան հաջորդող խնջույքը նվիրված են Օլիմպիայի ու Արշակի հաշտեցմանը, իսկ մյուս կողմից, այն հանդես է գալիս նաև իր երկրորդ նշանակությամբ՝ չէ՞ որ սա նաև մահվան թե-

ման է, որը քանիցս կրկնվելով՝ գուժում է գլխավոր հերոսների մոտալուտ կործանումը:

Սկսվում է պարահանդեսային մի հիասքանչ պար՝ պոլկան, որը հնչել էր նախերդանքում (ոռնդոյի ուժքրեն և առաջին դրվագ): Պոլկայի տոնայնական կառուցվածքի հիմքում ընկած տոնայնությունները կազմում են cis moll-ի տոնիկական եռահնչյուն (E dur - cis moll - gis moll), ուստի բալետի վերը նկարագրված հատվածում տոնայնությունները համախմբված են միևնույն տերցիային տոն ունեցող եռահնչյունների շրջանակում:

Բալետի երկրորդ համարը, որն անմիջականորեն վերաճում է խնջույքի, կտրուկ հակադրվում է նախորդ համարին. լուսավոր Ե dur-ին փոխարինում է մտածկոտ ա moll-ը, պարզ 2/4 չափին՝ բարդ 6/8: Այս համարում գործ ունենք պարի թեմայի սիմֆոնիկացիայի հետ, ուր հեղինակը կիրառում է մոտիվային մշակման բաղում հնարավոր, այդ թվում՝ պոլիֆոնիկ եղանակներ:

Թեմաների մոտիվային մշակմանը զուգահեռ մեծ նշանակություն է ստանում նրանց տեմբրային մշակումը. Չուխաճյանը դրսեռում է սիմֆոնիկ նվագախմբի հնարավորությունների օդագործման կատարյալ վարպետություն:

Ոչ կոնտրաստային առաջին մասին հակադրվում է երկրորդը. ակնհայտ է, որ թեմայի նվագակցությունն առաջին մասի թեմայի առաջին մոտիվի հայելանման տարբերակ է, իսկ բուն թեմայի հիմքում առաջին մասի թեմայի երկրորդ մոտիվն է: Ընդ որում, ամբողջ ժամանակ պահպանվում է կրկնակի ձայնառությունը:

Դինամիկ զարգացման ողջ ծանրությունն ընկնում է գործիքավորման վրա՝ ավելանում են նորանոր գործիքներ, ընդլայնվում է թեմայի ձայնածավալը, ինչի շնորհիվ այն հնչում է առավել պայծառ:

Մեղեդին կորցնում է իր նախկին խրոխտ բնույթը, դառնում հուզված ու անհանգիստ: Հստ ամենայնի, սա եղել է Չուխաճյանի ամենասիրելի մեղեդիներից մեկը, քանի որ հետագայում կոմպոզիտորն օգտագործել է իր «Լեբլեբիչի Հոր-հոր աղա» կոմիկական օպերայում:

Ծավալուն բալետային տեսարանը հանգեցնում է խնջույքի տեսարանին. խմբերգում բոլոր ներկաները ողջունում են Օվեմպիային՝ վերադառնալու առթիվ, խմում նրա կենացն ու գովերգում մեծահոգությունը:

20 Խնջույքը բացում է արական երգչախումբը:

Տեսնորներն ու բասերն ունեն առանձին երգամասեր, իսկ խմբերզը ծավալվում է փոխկանչերի ձևով: Հաջորդող կանանց խմբերզը, որը թեմատիկ տեսակետից բխում է նախորդող բալետային տեսարանից, ստանում է ոեֆքենի նշանակություն քառ նիցս հնչելով հետագայում:

Խմբերզին հաջորդող հերոսների երկխոսություններից առ տիճանաբար ձևափորվում է անսամբլը: Փառանձեմն առերես հաշտվում է դեպքերի նման ընթացքին և մասնակցում խնջույքին: Տեսնելով նրան, Օլիմպիային հավատարիմ սպարապետ Վաղինակը նախազգուշացնում է վերջինիս, որ չխարվի Փառանձեմի ժամանով, քանզի նրա խոռքերը կեղծ են և «սրտին մեջ նենդություն կա»: Սրան Օլիմպիան պատասխանում է, թե «ըստդիմության հայտնի համար առ առաջնորդե ինձ»: Այդ ընթացքում Փառանձեմն Օլիմպիայից գլուխություն է հայցում:

Այս անսամբլը, որը թեմատիկորեն բխում է նախընթաց խմբերզից, ծավալվում է և ավարտվում Ե մար-ում: Համազրումով հանդես եկած C մար-ում անցնում է անսամբլի թեման. Փառանձեմն Օլիմպիային մոտենալով ասում է. «Սիրտս ՚ի դող՝ ո՛վ տիկին՝ ոտիցդ կ' մոտենամ, մի՛ մերժիր կարեկիր գլուխությունդ ցնորյալ հոգվույս»: Եվ ի ապացույց իր կողմից այդչափ տենչած հաշտության, խնդրում է

իր ձեռքից վերցնել զինով լի գալաթն ու ըմպել: Օլիմպիան, ոչինչ  
կասկածելով, վերցնում է բաժակն ու խմում թունավոր դինին:

Փաստորեն, ողբերգական իրադարձություններն սկսվում  
են համընդհանուր խրախճանքի փոնի վրա՝ դրանով իսկ էլ ավե-  
լի ընդգծելով իրավիճակի ողբերգականությունը: Այս հարցում  
զուխաճյանը հարազատ է մնում ԺԹ գարի իտալական ոռմանտի-  
կական օպերայի ավանդույթներին. Հիշենք Վերդիի «Տրավիա-  
տայի» Յ-րդ գործողությունը, երբ մեռնող Վիոլետայի ողբեր-  
գությանն է հակազրվում փողոցով անցնող ուրախ կառնավալը:

Դեպքերի ողբերգական շրջադարձն առաջինը նկատում է  
ու հասկանում կաթողիկոս Ներսեսը «Ո՛չ կեցիր ինչ կընես՝ կին  
դու թշվառ, մատնված ես»:

Աչափամիկ այսաեղ էլ միանգամից անհետանում է նա-  
խընթաց ուրախ խնջույքային մթնոլորտը, և դրամատիկ գործո-  
ղության մեջ կատարված կտրուկ շրջադարձին հաջորդում է դեպ-  
քերի սրբնթաց զարգացումն օպերայի ֆինալում, ինչը ևս հա-  
տուկ էր իտալական ոռմանտիկական օպերայի էսթետիկային: Ա-  
պացույց Վերդիի «Ըիփոլետոպյի» Յ-րդ գործողությունը:

Տեսնելով կատարվածը, Արշակն ապշած է ու ցնցված,  
մինչդեռ հաղթանակած Փառանձեմը երջանիկ է, որ վերջապե-  
լուծել է իր վրեժը: Հերոսուհու արիայի (Andante maestoso, C, E  
dur) թե՛ երգամասում և թե՛ նվազախմբի նվազամասում հնչում է  
իշխանուհու վրիժառության մոտիվը:

## 21 Andante maestoso

The musical score consists of two systems of music. The top system starts with a piano introduction in G major, 2/4 time. The vocal entry begins with the lyrics "Felice allor col mio sposo - so vi -". The piano accompaniment features a steady bass line with harmonic chords. The second system continues with the vocal line "ve - a can - di-da e be - a - ta" over a similar harmonic progression.

Նա ներկաներին պատմում է, թե ինչպես Արշակը խլեց իր բենից երջանկությունը, իր սիրելի ամուսնուն՝ Գնելին. Փառանձեմի ինտոնացիաները հնչում են վստահ ու հաղթական:

Արիայում Փառանձեմի կերպարի զարգացումը հասնում է իր գագաթնակետին. ինչպիսի անդունդ է ընկած առաջին և վերջին գործողություններում իշխանուհու կերպարի միջև: Արիայի միջին մասում (*C dur*) Փառանձեմը պատմում է, որ արքան ու միայն ոտնակոխ արեց իր հոգին, այլև «սրով անխնա իմ ալերը հայրս սպանեց»: Ողջ միջին մասը ծափալվում է վրիժառության մոտիվի անցկացումների ֆոնի վրա:

Փառանձեմի հաղթական ելույթին հաջորդում է Արշակի դղջումի արիոգոն (*Andante moderato, C, e moll*), որը կարուկ հարկադրվում է նախընթաց հատվածին: Վշտահար արքան, կորցնելով սիրելի տիկնոջը, զղջում է իր բոլոր արարքների համար: Այդպահին նվազախմբում անցնում է Արշակի զղջումի մոտիվը, որն ուղեկցում է հերոսին ողջ արիոգոյի ընթացքում, կհնչի հետագայում՝ *O lիմպիայի վերջին արիայում*:

22 Andante moderato

Արշակի երաժշտական լեզուն այստեղ զուրկ է մեղեղալի նությունից՝ վշտից իրեն կորցրած արքան հազիվհազ կարողանում է կրկնել միենույն հնչյունը: «Գերեզման մը կը փնտռեմ՝

բայց ան ալ կ'զլանան ինձ» - ավարտում է իր արիողոն վշտահար արքան՝ ընդմիշտ հեռանալով բեմից:

Տեղի ունեցած իրադարձությունները մեծապես զայրացնում են նախարար-ասպետներին. «Հայաստանի պատիվը զմեղ համախմբե՛ ո՛վ քաջեր» - նրանց *A dur* խմբերդն ունի դաժան և աչեղ բնույթ:

23

*Allegro marziale*

Ասպետները լի են Արշակին կործանելու վճռականությամբ: Քայլերգի խրոխա հնչյունների ուղեկցությամբ էլ նրանք հեռանում են՝ ի կատար ածելու իրենց վճռը:

Նախարարների մարտական ինտոնացիաներին փոխարինում է Պոլիքսենի և Օլիմպիայի կարճ ասերգային երկխոսությունը, որին հաջորդում է մահամերձ Օլիմպիայի վերջին ասերգը, ապա՝ արիան: Ասերգն սկսվում է նվագախմբային փոքրիկ մուտքով, ուր հնչում է Արշակի վերջին արիողոյից նրա զղջումի մուտիվը, որի տարրերակային անցկացումներն էլ նախապատրաստում են արիան:

Օլիմպիան հանդես է դալիս լայնահուն չքնաղ մեղեղիով, որում առկա է հրաժեշտի արիաներին բնորոշ վերընթաց փոքր սեքստա թոփչը:

24 *Andante sostenuto*

*con dolore*

Oh voi dique - sta mi - se-ra con for-ti all'o - ra e-stre - ma!

*pp*

Արիայի (*Andante sostenuto, C, d moll*) առաջին և երկրորդ բաժինների միջև տեղափորփած է հաշտության թեմայի վրա հիմնված նվազախմբային ինտերմեցո. տարրեր գործիքների մոտ անցնում են նրա մոտիվները (այստեղ սա կիրառվում է որպես մահվան թեմա): Խոսելով որդու գերեզմանի մասին, հերոսուհին բնութագրվում է նույնպիսի դեկլամացիոն ինտոնացիաներով՝ ինչպես 3-րդ գործողությունից նրա արիայի առաջին մասում: ակնհայտ է նաև տոնայնական ընդհանրությունը՝ *F dur: Oղիմպիայի* արտասանական ֆրազներն ուղեկցվում են նվազախմբում մահվան թեմայի երկու մոտիվների հակառակ անցկացմամբ:

*Oղիմպիան*, ինչպես 2-րդ գործողության մեջ Գնելը, կյանքին հրաժեշտ է տալիս մաժոր ձայնակարգում: Մեռնում է օպերայի ևս մեկ անմեղ հերոս:

Եվ նորից, ինչպես 2-րդ գործողության ֆինալում, հնչում է սգո խորալը՝ *g moll* թաղման քայլերը, կաթողիկոս Ներսեսի զլիսավորությամբ: Հնչում ճիշտ այնպես, ինչպես Գնելի մահից հետո, ինչը միանգամայն բնական է ու անհրաժեշտ:

Խորալի ավարտից մի փոքր շուտ ներս է մտնում Վաղինակը. նա շտապում է հայտնել սիրելիին, որ բռնակալ *Արշակի* արդեն կործանված է: Բայց, ավաղ, ուշ է արդեն: Սգո խորալի հակաղրվում է օպերան եղրափակող *G dur* անսամբլը. բոլորի «անագորույն ճակատագիր» բացականչությունների կրկնության ֆոնի վրա Վաղինակի անամոքելի վիշտն է: Ավարտվում է օպերան *G dur*-ում, ինչպես ավարտվել էր 2-րդ գործողությունը՝ Զուխաճյանը դրանով իսկ լադատոնայնական կամուրջը ստեղծում տարածության վրա, օպերայի զույգ գործողությունների միջև:

\* \* \*

Զուխաճյանը թեմայի մեկնաբանման հարցում դրսեորել մեծ խորություն և ամբողջականություն: Թերզյանի լիբրետոյի հիմնական գաղափարը Զուխաճյանն օպերայում մարմնավորել գեղարվեստական ընդհանրացման մեծ ուժով՝ պատմական դրաման կոմպոզիտորի ջանքերով դարձել է օպերային արվեստի ու շագրավ ստեղծագործություն:

soprano  
 Bando do lor che ro de La ni ma del no stro Rè  
 tenor  
 Bando do lor che ro de La ni ma del no stro Rè  
 basso  
 Bando do lor che ro de La ni ma del no stro Rè  
 alto  
 Mentre  
 Alorsace  
 al alma felice  
 di shi po pel mio con te shi spia gav l'a li  
 can di de so ora L'Ar menia o po ce sun di dal cal pro  
 pi gio l'in va ca il cor d'Ar sa ce e tu sulla mi as  
 Prince George

«Արշակ Բ» օպերայի 1-ին գործողության կլավիրի հեղինակային ձեռագիրը

«Արշակ Բ» օպերան լիովին ամբողջական ստեղծագործություն է ինչպես ձևի, այնպես էլ ոճի տեսակետից: Հսկայական պարտիտուրի ողջ ընթացքում պահպանվում է օպերայի երաժշտական գարգացման միասնական ոճական ու դրամատուրգիական գիծը: Իր զգացմունքայնությամբ ազդեցիկ օպերայի բովանդակությունը մարմնավորված է խիստ, պարզ ու հասկանալի երաժշտական կերպարներում:

«Արշակ Բ» օպերան ցույց է տալիս ողջ հորինվածքի օրդանական սերտ միաբանությունն ու կոմպոզիցիոն ձևի համապատասխանությունը գաղափարագեղարվեստական բովանդակությանը: Երաժշտական լեզվի արտահայտչականությունը և ողջ կոմպոզիցիայի կուռ ներդաշնակությունն ու ամբողջականությունը պայմանավորված են կոմպոզիտորի մտածողության ու մանտիկական ուղղվածությամբ:

Օպերայում Չուխանյանը հասնում է մեծ ողբերգական ընդհանրացման: Սակայն ողբերգականությունը չի փոխակերպվում հոռետեսության: Օպերայի Փինալը՝ գլխավոր հերոսի մահը, չի կարելի համարել նրա գաղափարահիմաստային հանրագումարը: Արշակը մեռնում է, քանզի կործանման է դատապարտված յուրաքանչյուր չարագործ, յուրաքանչյուր բռնակալ:

Եվ հաղթանակում է հայ ժողովրդի բարոյական բարձրագույն իդեալը՝ պետք է չարիք չգործել, քանի որ անպատճառ վայթե ուշ գալիս է ժամը հատուցման:

Երաժշտական կերպարների ցայտունությունը, ձևի մեծակերտությունը, խոշոր վարպետությունն ու բովանդակության խորությունը պայմանավորում են «Արշակ Բ» օպերայի հսկայական պատմական ու գեղարվեստական նշանակությունը:

Չուխանյանն իր հերոսներին բնութագրելիս դրսեռորւմ է մեծ վարպետություն: Այդ են վկայում նրանց կերպարների ճշմարտացիությունն ու ճկունությունը: Օպերայում առկա է կերպարների տիպականացում: Արշակը, Փառանձեմը, Օլիմպիան Վաղինակը, Գնելն ու Ներսեսը վառ գծագրված բնավորություն ներ են, ընդհանրացված, ու միենույն ժամանակ խորապես անհատական, որոշակի հոգեկան առանձնահատկությունների կրողներ:

Գլխավոր հերոսներից յուրաքանչյուրի համար Չուխանյանն օգտագործում է բազմազան երաժշտապարտահայտչական մի-

չոցներ: Արշակի, Փառանձեմի, Օլիմպիայի, Վաղինակի, Գնելի ու Ներսեսի կերպարներից յուրաքանչյուրին բնորոշ է միայն իրեն հատուկ երաժշտական լեզուն:

Չուխաճյանը կարևորագույն նշանակություն է տալիս հերոսների հոգեկան աշխարհի ճշմարտացի վերակերտմանը: Օպերայի հիմնական կերպարների երաժշտական բնութագրերն աչքի են ընկնում ցցունությամբ ու անհատական ինքնատիպությամբ:

Օպերայում առավել լիարժեք ու բազմակողմանի են բաշահայտված Արշակի ու Փառանձեմի կերպարները:

Արշակի կերպարն ամենավառն ու տպավորիչն է: Օպերայի կենտրոնական ֆիգուրին կոմպոզիտորը պատկերում է առավել արտահայտչականությամբ ու ջերմությամբ: Արշակի երգամասում լայնահուն մեղեղային ասերգերի առատությունն ընդգծում է կերպարի նշանակալիությունը:

Բազմանիստ է Արշակի երաժշտական կերպարը: Ի տարբերություն լիբրետոյի նենդ ու դաժան, սարսափազդու և հանդիսականի ցասումը հարուցող արքայի, Չուխաճյանն իր հերոսի երաժշտական կերպարը կերտում է սիրով՝ մեղմելով նրա դաժանությունը: Այս առիթով կարելի է հիշել Ֆիլիպի կերպարը Վերդիի «Դոն Կառլոս» օպերայից, որի արիա-մենախոսությունը 4-րդ գործողությունից մենության ողբերգության լավագույն արտահայտություններից է և, իրավամբ, համարվում է համաշխարհային օպերային գրականության գլուխգործոցներից մեկը: Չուխաճյանական Արշակը նույնպես խորապես դժբախտ է, մեկուսացած բոլորից, միայնակ անգամ իր սեփական ընտանիքում:

Հետագայում, 1890թ. իր «Пиковая дама» օպերան ավարտելուց մի քանի ժամ անց Պ. Չայկովսկին կորի. «Օպերան ավարտեցի երեք ժամ առաջ... Օպերայի ավարտը հորինեցի երեկ... Եվ, երբ հասա Գերմանի մահվան պահին և եղրափակիչ խմբերգին, ես այնպես խղճացի Գերմանին, որ հանկարծ ուժեղ արտասվեցի: Հետագայում հասկացա, թե ինչու... Պարզվում է, որ Գերմանն ինձ համար սոսկ երաժշտություն հորինելու առիթ չէր, այլ ամբողջ ժամանակ խսկապես կենդանի մարդ էր, ընդ որում, ինձ համար շատ համակրելի»<sup>23</sup>:

<sup>23</sup> Վայկովսկի, 1840-1893, Մոսկվա, 1990, ստ. 134.

Արշակի երաժշտական կերպարն օպերայի ընթացքում զարգանում է և փոխում իր բնույթը՝ ստեղծագործության դրամատուրգիական զարգացման համապատասխան։ Տեսիլներում, ուր Արշակը հանդիս է գալիս որպես զորավար ու ժողովրդական հերոս (օպերայի նախաբան), նրա երաժշտական լեզուն ձեռք է բերում հոետորական, պաթետիկ բնույթ, մեղեդիները ծավալվում են անշտապ։ Առկա է արքայի և ժողովրդի միասնականությունը արիան բազմիցս ընդմիջում է երգչախմբի ու եսլիկներով։

Նորանոր գույներով է հարստանում Արշակի կերպարը Փառանձեմի հետ տեսիլներում։ Առաջին գործողությունից Արշակի ու Փառանձեմի զուգերգն, անկասկած, Զուխաճյան-կոմպոզիտորի բարձրագույն նվաճումներից է։ Զուգերգի սկզբում զարմանալիորեն գեղեցիկ լայնաշունչ մեղեդին արտահայտում է Արշակի հոգում առաջացած մեծ ու լուսավոր սերը։ Խոսվարար նախարարներին հիշելիս նրա խոսքերը դառնում են հուզված ու պոռթկուն, և երգամասում հայտնվում են կտրուկ ու վճռական ինտոնացիաներ, որոնց վախեցնող բնույթը ցայտունորեն ընդգծվում է նվագախմբային դինամիզացված նվագակցությամբ։ Զուգերգի եղրափակիչ մասի երաժտությունը լի է ոգեսրությամբ ու կրակութիումով։

Ողջ զուգերգում վարպետորեն է զուգորդվում միասնական դինամիկ աճի լարվածության կուտակման գիծը զանազան հուզական իրավիճակների ճկուն փոփոխության հետ, ինչը կերպարներին հաղորդում է կենսական անհրաժեշտ հավաստիություն։

Արշակի կերպարի բուռն զարգացումը շարունակվում է 2-րդ գործողության մեջ։ Այստեղ էլ հենց կատարվում է բեկում Արշակի կերպարում։ Ժողովրդի, իր հպատակների կողմից երբեմնի սիրված արքան (նախաբան) այժմ թիրախ է դառնում իր իսկ նախարարների համար։ դրամատուրգիական այս գիծը, շարունակվելով մինչև 4-րդ գործողություն, հանգեցնում է տրամաբանական հանդուցալուծմանը՝ Արշակն այսուհետեւ դատապարտված է։

Զուխաճյանն Արշակին միանգամայն այլ բնութագիր է տալիս 3-րդ գործողության մեջ։ Նրա երաժշտական լեզվում տեղի են ունենում զգալի փոփոխություններ։ Նախկին հերոսական ու կամային հնչերանգներին փոխարինում են քնարական ու փափուկ մեղեդիական զարձվածքները։

Հերոսի բնութագիրն առավել լիարժեք տրված է Յ-րդ գործողությունն սկսող՝ Արշակի արիայում, որը կենտրոնացված մենախոսություն-մտորում է. սրանում հոգեբանական մեծ վարպետությամբ բացահայտվում է նրա բարդ հոգեվիճակը: Արիայի երաժտությունն ընդգծում է Օլիմպիային խորապես սիրող մարդու վճռականությունը, նպատակամղվածությունը, զուսպ վրդովմունքը. արիան դառնում է Արշակի կերպարի զարդացման նոր փուլ:

Արշակի կերպարի զարդացման մեջ շրջադարձային նշանակություն է ստանում Յ-րդ գործողության ֆինալը՝ գերեզմանոցի տեսարանը: Այստեղ նախկին խօսախում անվեհեր հերոսից ոչինչ չի մնում, փոխվում է նաև նրա երաժշտական լեզուն: Հանդուցյալների ուրվականների ահեղ ու սարսափազդու խմբերդին հակադրվում են Արշակի սարսափահար ֆրազները. նվագախմբում հնչում է քրոմատիկ «սովացող» ակորդների շարքը՝ գումարվ հաջորդ գործողության մեջ արքայի կործանումը: Ուրվականների հետ տեսիլներում Արշակը կորցնում է իր երաժշտական լեզվի անհատականությունը. նա, կարծեք, տարրալուծվում է այդ գժոխային տեսարանում՝ ողջ տեսիլը ծավալվում է մեկ լայթհարմոնիայի ֆոնի վրա, իսկ արքայի երաժշտական լեզվի մեջ են ներխուժում եռատոնային քայլերն ու սինկոպանները: Չորրորդ գործողության մեջ Արշակը ներկայանկոպանները: Չորրորդ գործողության մեջ Արշակը կողմով. նրա երաժշտական ֆրազները դառնում են ջերմ ու սիրագորով, հանդարտ ու մեղեդային, և միանգամայն տրամարանական է, որ Չուխաճյանը հենց այստեղ է Արշակի համար նախատեսում նախերդանքում հնչած սիրութեմայի անցկացումը, բայց այլ տոնայնության մեջ (D dur):

Արշակի կերպարի վերը նշված փոփոխությունն ու ջերմացումը շարունակվում է 4-րդ գործողության առաջին տեսիլը եղբափակող անսամբլում, որի տոնայնության ընտրության (F dur) շնորհիվ Չուխաճյանը կամրջում է օպերայի առաջին (Արշակի առաջին արիան և նախարանի երկրորդ բաժինը նույնպես դրված է F dur-ում) և վերջին գործողությունները: Տարածության վրա նման թեմատիկ ու լադատոնայնական կամուրջների ստեղծումը նպաստում է օպերայի կուռ կոմպոզիցիոն կառուցվածքի ձևավորմանը:

Իր գլխավոր հերոսի բազմանիստ կերպարի վերջին շտրիխը Զուխաճյանն ավելացնում է 4-րդ գործողության ֆինալում։ Տեսնելով, որ Օլիմպիան թունավորվել է, Արշակն անմիտար է դառնում։ Արշակի՝ օպերայի վերջին համարը նրա է moll արիոգոն է՝ ողբացող հերոսի դիմանկարը. ճակատագրական ելքի կանխագուշակումը դառնություն է ներմուծում։ Ստեղծվում է հիասթափությունների ուղիով քայլող, ստորացված ու իրեն կորցրած արքայի դիմապատկերը. նա միայնակ է ու անօգնական։ Զուխաճյանը, զարգացնելով իր հերոսի կերպարը, նրան հանգեցնում է տրամարանական վախճանի։ Սակայն կոմպոզիտորն Արշակին բեմում չի սպանում. նա խնայում է արքային։ Արշակի մահվան մասին հանդիսատեսն իմանում է Վաղինակից։ Այսինքն՝ արքայի կործանումը չի կարելի դիտել որպես նպատակ, մեռնում է ոչ թե հերոսը, որն ի սկզբանե վատն է, այլ կործանվում է չարը, հաղթանակում ժողովրդի բարոյական վեհ իդեալը՝ չարն անխուսափելիորեն պիտի կործանվի։

Այդ է պատճառը, որ վերջին գործողության մեջ Զուխաճյանը փոքրինչ մեղմում է Արշակի հանդեպ նախորդ գործողությունների ընթացքում հանդիսատեսի մոտ առաջացած ատելությունը։ Հանդիսատեսն ինչոր տեղ ափսոսում է զլիսավոր հերոսի մահվան համար՝ հիշողության մեջ ունենալով 4-րդ գործողության մեջ նրա կերպարի դրական կողմերի ընդգծումը։ Բայց... յուրաքանչյուր ոք պարտավոր է պատասխան տալ իր նախկին արքարքների համար, քանզի վաղ թե ուշ անպատճառ գալիս է ժամը հատուցման։

Թագուհի Օլիմպիայի լուսավոր ու մաքուր կերպարը սիրոնվիրվածության ու հավատարմության մարմնավորում է։

Օլիմպիային բնորոշ են բացառիկ բարոյական մաքրությունն ու առաքինությունը։ Թագուհու երաժշտական բնութագրում կոմպոզիտորը բացահայտում է նրա նվիրվածությունը։ Արշակին և իր որդուն, նրանց հանդեպ տածած սերը։ Դրա հետ մեկտեղ, Զուխաճյանն ընդգծում է Օլիմպիայի պասսիվ ինքնազուհերությունը, հնագանդության ու դատապարտվածության զգացումը. անգամ օպերայի ամենավճռական դրամատիկ պահերին նա չի դրսելում դեպքերի և իրադարձությունների հանդեպ սեփական մոտեցումը, մնում է անհաղորդ։

Նրա կերպարն օպերայի ընթացքում հոգեբանական զգալի փոփոխություններ չի կրում: Օլիմպիայի կերպարի հետ է գերազանցապես կապված «Արշակ Բ» օպերայի երաժշտության քնարական ոլորտը: Պարտիտուրում նրան այնքան էլ մեծ տեղ չի հատկացրել Զուխաճյանը: Սակայն թագուհու մասնակցությամբ տեսիլներն առանձնանում են անկրկնելի մթնոլորտով և ակամա ուշադրության են արժանանում: Արանցում ապրում է քնքուշ ու մաքուր զգացմունքների պոեզիան, դրանք գրավում են իրենց անմիջականությամբ ու անկեղծությամբ: Դա առավել վառ է բացահայտվում Օլիմպիայի և Վաղինակի գուգերգերում:

Իր քնարականությամբ Օլիմպիայի կերպարին է հարում սպարապետ Վաղինակի կերպարը: Օլիմպիայի հետ զուգերգերում նա հանդես է գալիս որպես թագուհուն նվիրված հավատարիմ սիրահար: Այս գեազքերում ընդհանուր է նրանց արտահայտչամի- ջոցների երանդապնակը: Ինչ-որ առումով Վաղինակին ևս կարելի է ընդգրկել օպերայի «բյուզանդական» ոլորտի մեջ, քանզի Գրդ գործողություննում Օլիմպիայի մանկական տարիների վերհուշի ողջ տեսարանը կառուցված է Վաղինակի արիայի թեմայի նվա- զախմբային անցկացումների վրա:

Ի տարբերություն Օլիմպիայի կերպարի միակողմանի բա- ցահայտման, Վաղինակն օպերայում միայն կրքոտ սիրահար չէ: Նրա կերպարն ունի նաև այլ դրսեկորումներ: Վաղինակն առաջին անգամ հայտնվում է 1-ին գործողության ֆինալում, որի գա- դաթնակետը նրա և Գնելի վրեժի զուգերգն է: Ի տարբերություն Օլիմպիայի, որն օպերայի պասսիվ հերոս է և դրամատուրգիական զարգացման մեջ էական դեր չի խաղում, Վաղինակի կերպարն ա- ռանձնանում է իր նպատակամղվածությամբ, գործողությունների տրամաբանական ու հետևողական զարգացմամբ:

Այս տեսակետից սպարապետի կերպարն ինչ-որ չափով մոտ է Փառանձեմի կերպարին, որն օպերայի ընթացքում բուռն զարգա- ցում է ապրում: Իշխանուհին առաջին անգամ ներկայանում է 1-ին գործողության մեջ. նա հուսահատ է ու տիսուր: Տիրությունն է ար- տահայտված նրա անդրանիկ արիայում, որին հաջորդող՝ Փառա- նձեմի և Արշակի զուգերգում հստակ գծագրվում է իշխանուհու բնութագիրը. նա փորձում է դիմակայել Արշակի կրքին, լի է իր ի- բավունքների համար պայքարելու վճռականությամբ: Ինչպես Փա-

ուանձեմի սերր, այնպես էլ ատելությունը սահմաններ չի ճանաչում. սա ուժեղ, հպարտ և կրքոտ բնավորություն է: Վիշտ ու հուսափառություն է լսվում նրա՝ Արշակին ուղղված դիմում-աղեր՝ սում. սիրելի Գնելին հիշելիս իշխանուհու խոսքը պայծառանում է բացահայտելով այդ միայնակ ու տառապող հոգու լուսավոր երազ՝ ների աշխարհը: Սակայն հրաշալի տեսիլը շուտով ցրվում է: Համոզվելով, որ արքայական կամքն անդրդվելի է, Փառանձեմը հաշուվում է: Մուայլ վճռականության ինտոնացիաները չարագուշակ բացով ժայթքում են նրա երգամասում՝ այսուհետեւ գրանք հերոսուհան անքաժան ուղեկիցներն են: Ուշագրավ է տեսիլում Փառանձեմին բնութագրող տոնայնությունների ընտրությունը՝ *Es dur - A dur - C moll*. ստացվում է փոքրացրած եռահնչյուն, ինչն էլ վկայում է կերպարի զարգացման դրամատիզմի ու մեծ ներուժի մասին՝ Փառանձեմի կերպարն օպերայի ընթացքում մեծ զարգացում է ապրում և հասնում հիրավի դրամատիկական բարձունքների:

Իշխանուհու կերպարի զարգացումը շարունակվում է 2-րդ գործողության ֆինալում, երբ նրա ձեռքերի վրա շունչն է փչույն գնելը: Փառանձեմի կերպարում բեկումնային շրջադարձ է կատարվում՝ իշխանուհին լցվում է Արշակի հանդեպ անհուն վրեժով: Անողոք վրիժառու Փառանձեմի կերպարը նորություն չէր ժիշտ դարձի իտալական ոռմանտիկական օպերայում՝ Կառլոս (Վերդի. «Ճակատագրի ուժը»), Սիլվա (Վերդի. «Էլոնանի»), Ռինատո (Վերդի. «Պարահանդես-դիմակահանդես»):

Վեհմինդիր Փառանձեմի վերջին չարագործությունը կատարվում է օպերայի ֆինալում: Ի տարբերություն *Olimpiadij* և Արշակի բնութագրման, երբ Զուխանցյանն ընտրել էր համապատասխանաբար համանուն և զուգահեռ տոնայնություններ, Փառանձեմի արիայի լաղատոնայնական կառուցվածքի հիմքում մասնոր տոնայնությունների տերցիային համադրման սկզբունքն է (*E dur - C dur - E dur*):

Ավարտվում է Փառանձեմի կերպարի դրամատուրգիական առաքելությունը. նա լուծել է իր վրեժը՝ սպանել Արշակի որդուն և տիկնողը:

Օպերայում անհատական գունավորում ունի Գնելի կրաշկոտ ու խիզախ կերպարը: Նա օպերայի ամենակարճ կյանքն ունեցող հերոսն է. թեև Գնելն օպերան լքում է վաղաժամ (2-րդ

գործողության ֆինալ), այնուամենայնիվ, նրա շունչը զգացվում է ամբողջ ժամանակ. իշխանի ուրվականը հայտնվում է Յ-րդ դոր-ձության ֆինալում, նրա մահվան վրեմքը դառնում է գործողությունների հետագա ծավալման զորավոր խթան:

Գնելի ինտոնացիոն ոլորտն, անշուշտ, հարազատ է Փառանձնամի երաժշտական լեզվին: Առաջին անգամ նա հանդես է դալիս ու *moll*-ում. նկատենք, որ 1-ին գործողությունից Արշակի ու Փառանձնամի զուգերգում, երբ վերջինս ներում էր հայցում գնելի համար, նրան դարձյալ ուղեցվում էր ու *moll*-ը: Ինչոր առողմով Գնելը մոտ է նաև Օլիմպիայի կերպարին. նրանք երկուսն էլ օպերայի անմեղ զոհերն են:

Գնելի երաժշտական լեզուն լրացվում է նոր տոնայնությամբ (*Ges dur*). Նախերգանքում հենց *Ges dur*-ում էր հնչել Արշակի և Օլիմպիայի սիրո թեմայի 2-րդ անցկացումը՝ Գնելն իր գործությամբ անուղղակի ձեռվ ավերում է նրանց երջանկությունը:

Գնելի միակ ինքնուրույն ծավալուն համարը 2-րդ գործողության ֆինալից նրա անեծքն է, ուր Զուխաճյանը կտրուկ շրջադարձ է կատարում բեմոլավոր տոնայնությունների ոլորտից դեկավոր տոնայնությունների տերցիային համադրման շնորհիվ ստացվում է մաժոր եռահնչյուն: Գնելը կյանքից հեռանում է միանդամայն հանգիստ խղճով. սպանվելով անարդ բռնակալի ձեռքով, նա անիծում է արքային և վստահ է, որ իր անեծքն անպատճառ իրականանալու է:

Բոլորովին այլ կերպ է ներկայացված կաթողիկոս Ներսեսը, որի կերպարն առանձնանում է խիստ վեհությամբ: Նրա երգամասի հավասարաչափ-կենտրոնացած մելոդիկան մոտ է ասերգին և վկայում է կաթողիկոսի կերպարի խստության ու անդրդվելիության մասին:

«Արշակ Բ» օպերայում բավական ցայտուն է ներկայացված ժողովուրդը. դրա վկայությունն են ստեղծագործության մեջ առատորեն հանդիպող և մեծ վարպետությամբ գրված երաժշտական-հաղեցած խմբերգային տեսարանները: Ժողովուրդը դառնում է կրամատիկական գործողության ակտիվ մասնակիցը: «Արշակ Բ» պահպանվում է ծավալուն խմբերգային տեսարանները տալիս են ժողովրդի ընդհանրացված կերպարը: Իր դրամատուրգիական նշանա-

կությամբ «Արշակի» երգչախումբը մոտենում է անտիկ ողբերգության երգչախմբին. երգչախումբը սկսում է ու ավարտում օպերան, իսկ կենտրոնական գործողություններում մղվելով առաջատար պլան՝ ստանում ինքնուրույն նշանակություն: Նշենք, որ գործողության կուլմինացիոն պահերը համընկնում են խմբերգային կամ անսամբլային համարների հետ:

Օպերայի խմբերգերը բազմազան են իրենց բնույթով՝ գործողության զարգացման տարրեր փուլերում ստանում են այլազան գործառույթներ:

Նախաբանում հաղթանակով վերադարձող զինվորներին ու զորավարներին ցնծությամբ դիմավորող ժողովրդի խմբերգն իր քայլերգային սիթմով ու առնական ինտոնացիաներով ընկալվում է որպես հաղթանակի օրհներգ: Նախաբանի կանանց խմբերը գը հագեցած է քնարականությամբ:

Երկրորդ և չորրորդ գործողությունների ֆինալների հոգեարականների սգո խորալը հնչում է իբրև ռեքվիեմ:

Երկրորդ գործողության առաջին կուլմինացիայում հնչող խոռոշարար նախարարների *B dur* խմբերգն արտահայտում նրանց վճռականությունը:

Երրորդ գործողությունից իշխանների կիսաձայն երգվող *e moll* խմբերգը մռայլ է ու չարագուշակ: *O*լիմպիային մխիթարյան նամիշտների խմբերգին հակագրվում է նրանց ու իշխանների *dur* խմբերգը (3-րդ գործողություն):

Տարաբնույթ խմբերգերի մեջ նախադեպը չունեցող նոր վականների ահեղ ու սարսափազգու խմբերգին, որն իր մեռելային սառնությամբ սարսափէ սփռում շուրջբոլորը, հակագրվույէ 4-րդ գործողությունից *A dur* պայծառ ու լուսավոր խմբերգին որն արտահայտում է պալատում իշխող համերաշխությունն ներդաշնակությունը:

Այսպիսով, զանգվածային տեսարանների ու խմբերգային դրվագների առատությունը օպերային ոչ միայն հաղորդում մեծակերտություն ու վեհություն, այլև հստակ գծագրում հիմքնական դրամատիկական կոնֆլիկտի սոցիալ-հասարակական ուղղվածությունը: Հենց առնական էներգիայով, կոչական ինտոնացիաներով ու ռազմական քայլերգային ոփթմերով ներթափական գործությունը:

փանցված խմբերգային տեսարաններում է առավելագույն ուժով բացահայտվում Զուխաճյանի օպերայի հայրենասիրական պաթուը: Նման տեսարաններում կոմպոզիտորը ներկայանում է որպես ժամանակակից օպերային գրելառնին կատարելապես տիրապետող վարպետ-դրամատուրգ: Իր հսկայական թափով առանձնանում է արդեն իսկ նախաքանը՝ կոնտրաստային երգչախմբերի վարպետ հերթագայման, նվագախմբային ֆակտուրայի աստիճանական հարստացման (նվագախմբին գումարվում է *banda-n*) և մենակատարների (Արշակ, Վարդան) ընդգրկման շնորհիվ կոմպոզիտորն ստեղծում է փայլով ու վեհությամբ լեցուն ծավալուն երաժշտական տեսարան:

Օպերայում նշանակալի տեղ են գրավում անսամբլները, որոնք հանդիսանում են հերոսների կերպարների, նրանց փոխհարաբերությունների ու բախումների բացահայտման միջոց: Օպերայի դրամատուրգիայի առանձնահատկություններից է ծավալուն զուգերգերի՝ գ. Գյողակյանի դիպուկ գնահատմամբ «Երկխոսության» տեսարանների առատությունը: «Մենամարտ-զուգերգերը» կամ «Համերաշխության զուգերգերը» օպերայի երաժշտական դրամատուրգիային բացառիկ դինամիկա են հաղորդում, մեծապես բարձրացնում բեմում կատարվող գործողությունների էմոցիոնալ հագեցվածությունը: Պետք է նշել, որ 19-րդ դարի առջին կեսի արևմտաեվրոպական օպերաներում այդքան մեծ թվով երկխոսության տեսարաններ չեն օգտագործում և միայն «Արդարաց» հետո (1871թ.) դրանք լայն տարածում գտան: Հատկանշական է, որ այս առումով «Արշակ Երկրորդ» օպերան կարծես կանխորոշում է համաշխարհային օպերային արվեստի զարգման ընդուշ տենդենցիանը»<sup>24</sup>:

«Արշակ Բ» օպերայի պարտիտուրը վկայում է, որ Զուխաճյանն ստեղծագործաբար էր յուրացրել ԺԹ դարի իտալական ուղանանտիկական օպերայի, ի մասնավորի՝ Վերդիի օպերային արստեղծագործության ավանդույթները, տիրապետել օպերային արվեստի տեխնիկային և ուներ կոմպոզիտորական պրոֆեսիոնալ վարպետություն:

<sup>24</sup> Գ. Գյողակյան, Տիգրան Զուխաճյանը և նրա «Արշակ Երկրորդ» օպերան, Երևան, 1971, էջ 28:

Ավարտուն համարների (արիա, արիողո, անսամբլներ՝ խմբերգեր, նվագախմբային դրվագներ և այլն) կողքին Զուխաճյանն ստեղծում է անընդմեջ զարգացող միջանցիկ տեսարաններ ու գործողություններ, ինչը փաստում է կոմպոզիտորի դրամատուրգիական անուրանալի տաղանդի մասին:

Շուշլորեն օժտված լինելով մեղեդային ձիրքով, լայնաշշունչ կանոնիլենայի զարգացման ունակությամբ, Զուխաճյանն օպերայում օգտագործում է բազմազան վոկալ հնարքներ, օպերային մելոդիկայի այլազան տիպեր (քնարական, հերոսական), կերպում վիրտուոզ սկզբունքներ (ռուլագներ, կոլորատուր պատմական կան նպատակներով:

«Արշակ Բ» օպերայի երաժշտական կտավում կարելոր դրվագապահված սիմֆոնիկ նվագախմբի նվագամասին: Թեև նվագախումբը հիմնականում նվագակցում է երգամասին, նրա համար ծառայելով տոնայնական-հարմոնիկ հենք, «նկարագրում» բեմական իրավիճակները, այնուամենայնիվ, օպերայում առկա ինքնուրույն նվագախմբային համարներ: Դրանք են.

1. Նախերգանքը՝ կառուցված օպերայի հիմնական երաժշտական թեմաների հաջորդական շարադրման վրա:

2. Երրորդ գործողության ֆինալից գերեզմանոցի տեսարաններ:

3. Զորբորդ գործողության անտրակտը (Օլիմպիայի մասն կության տարիների հիշողությունները):

Սրանք ծրագրային-նկարագրողական դրվագներ են՝ բրաժշտական ռոմանտիզմին խիստ բնորոշ մենակատար գործիքների տեմբերի օգտագործման սկզբունքներով հանդերձ:

4. Զորբորդ գործողությունից բալետային տեսարանը:

5. Նվագախմբային մուտքերը, որոնք ստեղծում են տվյալ տեսարանի հոգեբանական մթնոլորտը:

«Արշակ Բ» օպերայի նվագախմբային ոճը համապատասխանում է երկի հիմքում ընկած ընդհանրացնող սկզբունքներին: Դեպի մեծակերտություն Զուխաճյանի հակումն օպերայի նվագախմբում դրսերպից ոչ թե տեմբերի անհատականացմամբ, ոյլ դեպի հնչյունային զանգվածները դրսերպած ձգտումով: Նվագական դրամատուրգիական զանգված: Կոմպոզիտորին

տաքըրքում է ոչ թե գունեղ էփեկտը, այլ ճկուն ցայտունությունն ու արտահայտչականությունը։ Միաժամանակ, վոկալ գիծն ամենուր պահպանում է իր ցայտունությունն ու արտահայտչական զգլիւթյունը։

Նվագախմբային ֆակտուրայի զանգվածայնությունն օպերայում նշանակալիորեն պայմանավորված է ձայների ունիսոն և օկտավավային կրկնապատկմամբ, փողային գործիքների (հատկապես՝ պղնձյա) հաճախակի կիրառմամբ։ Որպես ամուր հիմք հանդես է դալիս լարային խումբը։ Գործիքավորման հնարների և դրառման սկզբունքների հարցում ջուխաճյանը հարազատ է ժմղթարի վաղ խուլական օպերաներին։

## 2 Ֆլեյտա

### 2 Հոբոյ

### 2 Կլարնետ

### Բաս կլարնետ

### 2 Ֆագոստ

### 4 Գալարափող

### 2 Շեփոր

### 3 Տրոմբոն

### Բոմբարդոն

### Լիտավորներ

### Թմբուկ, ափսեներ, եռանկյունի

### Տավիդ

Մենակատարման

Սովորանոներ - Օլիմպիա, Փառանձեմ

Մեցցո-սոսպրանո - Պոլիքսեն

Տենորներ - Գնել, Վաղինակ

Բարիտոններ - Արշակ, Վարդան

Բասեր - Ներսես, Տիրանի ուրվական

## Ճութակներ I, II

### Ալտեր

### Թավջութակներ

### Կոնտրաբասեր

«Արշակ Բ» օպերայի գեղարվեստական բարձր արժեքը պայմանավորված է ամենից առաջ անսպառ մեղեղիական հարս-

**Առությամբ:** Ստեղծագործության երաժշտության հիմքը վառ արտահայտված երգայնությունն է. մարդկային ձայնը հանդես է գալիս որպես ողջ օպերայի երաժշտական կտավի ստեղծման որոշիչ գործոն: Երգայնություն և ախորժաձայնություն՝ ահավասիկ օպերայի մելոսի հիմնական հատկանիշները: Չուխաճյանն օպերայում ներկայացնում է ռոմանտիկական երաժշտական լեզվի ձևավորման գործում մեղեղային ոլորտի հսկայական ընդհանրացնող ուժն ու առաջատար գերը: Մեղեղայնության հարստությունը դրսելորվում է ինչպես օպերայի ավարտուն համարներում, այնպես էլ ասերգային տեսարաններում: Չուխաճյանի մեղեղիները հոսում են ազատ ու անկաշկանդ, ինչը համարվում է ցանկացած կոմպոզիտորի համար հազվագյուտ և հրաշալի հատկանիշ: Անգամ առանձին գործողությունների և համարների նվազախմբային մուտքերը, իրենց բնույթով վոկալ, շարադրմամբ ու հնչողությամբ համեստ մեղեղիները, հանդիսանալով ռոմանտիկ օպերային բնորոշ ռոմանսային-գործիքային պրելյուդի մի տարատեսակ, առանձնանում են իրենց երգային արտահայտչականությամբ: Թվում է, թե նորանոր դյութիչ մեղեղիների ստեղծման հարցում կոմպոզիտորի երևակայությունն անսահման է: Եվ պատահական չէ, որ հենց մելոդիզմի բնորոշ արտահայտչականությունն էլ դառնում է մարդկային կրքերի ու զգացմունքների նրբերանգների մարմնավորման հիմնական միջոցը: «Արշակ Բ» օպերայի երաժշտական լեզվում նկատվում է հարազատությունը ԺԹ դարի առաջին կեսի իտալական օպերային արվեստին: Սակայն Չուխաճյանը չի հետեւ ինչ-որ առանձին նմուշների, այլ ստեղծագործաբար օգտագործել իտալական ռոմանտիկական օպերայի (Ռոսինի, Բելինի, Դոնիցետի, Վերդի) ողջ փորձը: Բնական է, որ նոր հայկական երաժշտական դպրոցի կազմավորման նախնական փուլում Չուխաճյանն իր առջև, երեկի թե, նպատակ չէր դրել հասնել եվրոպական օպերային արվեստի ավանդույթների և երաժշտական լեզվի ազգային ինքնատիպության օրգանական սինթեզին: Ինչպես իրավացիորեն նկատել է Գ. Տիգրանովը, դիմելով եվրոպական լսարանին Չուխաճյանը պատմեց Հայաստանի մասին բոլորին հասկանալի իտալական օպերայի լեզվով:

«Արշակ Բ»-ի երաժշտական լեզվի արտահայտչականության կարևոր գործոններից է հարմոնիան, որը նշանակալի դեր ու

Նի երաժշտական կերպարների բացահայտման գործում: Չուխաճյանը հենվում է եվրոպական մաժոր և մինոր ձայնակարգային համակարգերի ու դրանց ակորդիկայի վրա: Ակնհայտ է կոմպոզիտորի հակումը դեպի մաժոր-մինոր ձայնակարգային համակարգի ալտերացված ակորդները:

Չուխաճյանն օպերայում լայնորեն է կիրառում լայթհարմոնիայի սկզբունքը.

Ա. Փոքրացրած սեպտակորդը Ուրվականների լայթհարմոնիան է, ընդ որում հեղինակը կիրառում է դա թե՛ ուղղաձիգ և թե՛ հորիզոնական հնչողությամբ:

Բ. Վարընթաց սեկունդաներով քրոմատիկ «սողացող» ակորդների շարքը, ուղեկցելով հերոսներից մեկին՝ գուժում է հաջորդ գործողության մեջ նրա սպանությունը: Այս սկզբունքը հեղինակը կիրառում է ոչ թե էպիգոդիկ, այլ հետեղականորեն՝ ամեն անգամ պահպանելով վերջինիս նվագախմբային «հանդերձանքը»:

Չուխաճյանի հարմոնիկ լեզվի կարեոր առանձնահատկություններից է ձայնառությունների բազմակողմանի կիրառումը: Օպերայում հանդիպում են.

1. Տոնիկական ձայնառություն - գրեթե ամբողջությամբ տոնիկական ձայնառության ֆոնի վրա են ծավալվում Փառանձեմի Es dur արիան (1-ին գործողություն), Արշակի e moll արիոգոն (4-րդ գործողություն), Օլիմպիայի վերջին արիայի d moll հատվածը (4-րդ գործողություն) և այլն:

Տոնիկական ձայնառության կիրառման հարցում դրսելորվում է Չուխաճյանի հարագատությունը հայ ժողովրդական երաժշտական մտածողությանը. նկատենք, որ ձայնակարգի առաջին աստիճանի վրա ձայնառություններ հետագայում լայնորեն պիտի օգտագործեր կոմիտասը՝ հիշենք «Զինար ես», «Կուժն առա» մեներգերի դաշնամուրային նվագակցությունները:

Տոնիկական ձայնառության կիրառման նմուշներ կան.

ա) Օլիմպիայի մանկական տարիների վերհուշի տեսարանում (4-րդ գործողություն),

բ) պոլկայում (4-րդ գործողություն),

գ) 2-րդ գործողության նվագախմբային մուտքում,

դ) մահվան թեմայի երկրորդ մոտիվում և այլն:

2. Դոմինանտային ձայնառությունը հանդիպում է նախարանում, Արշակի «Հառաչող» սեկունդաներով վարընթաց շարժման վրա կառուցված մոտիվում (Նախերգանք, 1-ին գործողություն), ինչպես նաև ծավալուն դոմինանտային նախաիկտերն առկա են եռամաս ձևերի ու եպրիդներից առաջ:

3. Կրկնակի ձայնառություն հանդիպում է հիմնականում բալետում (4-րդ գործողություն):

4. Ձիգուրացված ձայնառության կիրառման դեպքեր կան բալետում (4-րդ գործողություն), Օլիմպիայի վերջին արիայում (4-րդ գործողություն) և այլն:

Չուխաճյանն օպերայում կիրառում է soprano ostinato, որի լավագույն նմուշներից է սգո խորալը (Նախերգանք, 2-րդ և 4-րդ գործողությունների ֆինալներ):

Ձայնառությունների կիրառման կողքին Չուխաճյանի հարմոնիկ լեզվին առավել բնորոշ է շարժուն և մեղեղիական տեսակիտից ինքնուրույն դինամիկ բասը. օպերայի շատ էջերում հանդիպում ենք մելոդիզացված բասի, որի ցայտուն նմուշներից է Փառանձենի E dur արիան (4-րդ գործողություն):

«Արշակ Բ» օպերայի լադատոնայնական կառուցվածքն առանձնանում է բացառիկ մտածվածությամբ ու տրամաբանվածությամբ. կոմպոզիտորը չի գիմում ոչ մի պատահական տոնայնության, նրա լադատոնայնական մտածողությանը բնորոշ է խիստ նպատակասլացությունը: Առանձին համարների, տեսիլների, անգամ՝ գործողությունների սկիզբն ու վերջը կապված է լադատոնայնական միասնականությամբ: Այսպես, որևէ տեսիլի կամ հերոսների երաժշտական բնութագրերի սկզբնական ու վերջնական տոնայնություններն ընտրելիս կոմպոզիտորը հարազատ է մնում քրոմատիկ կիսատոնային քայլերին.

ա) առաջին գործողությունը սկսվում է As dur-ում և արգարտվում G dur-ում,

բ) Նախերգանքի ոռնդոյի ու փրենը ծավալվում է F dur-ում, իսկ պոլկան (4-րդ գործողություն)՝ E dur-ում,

գ) Արշակի անդրանիկ արիան (1-ին գործողություն) շարադրված է F dur-ում, իսկ վերջին արիոգոն (4-րդ գործողություն)՝ e moll-ում:

Բացի նշված դեպքերից, երբ վերջնական տոնայնությունը գտնվում է սկզբնականից կես տոն վար, Փառանձեմի երաժշտական բնութագրի մեջ հակառակ երեսություն է՝ առաջին արիան (1-ին գործողություն) գրված է Es dur-ում, իսկ վերջինը (4-րդ գործողություն)՝ E dur-ում:

Բացի կիսատոնային համադրումներից Զուխաճյանն օդապորձում է տոնայնությունների տերցիային համադրումներ.

ա) Նախերգանքն սկսվում է B dur-ում, ավարտվում՝ G dur-ում,

բ) սիրո թեման Նախերգանքում հնչում է 2 անգամ՝ B dur և Ges dur, 2 անգամ էլ՝ 4-րդ գործողության մեջ (D dur և F dur),

դ) սկո խորալը Նախերգանքում հնչում է b moll-ում, իսկ 2-րդ և 4-րդ գործողությունների ֆինալներում՝ g moll-ում,

դ) Վաղինակի երաժշտական կերպարը բնութագրող առաջին ու վերջին տոնայնություններն են՝ Es dur և G dur:

Շարունակելով կատարելագործել տոնայնությունների տերցիային համադրման սկզբունքը, Զուխաճյանն այս կամ այն տեսարանի տոնայնական կառուցվածքի հիմքում դնում է հիմնական տոնայնության տոնիկական եռահնչյունը կազմող տոնայնությունները.

ա) 4-րդ գործողության անտրակտի և Օլիմպիայի մանկական տարիների վերհուշի տեսարանի տոնայնական կառուցվածքի հիմքում հիմնական c moll-ի տոնիկական եռահնչյունը կազմող տոնայնություններն են՝ c moll - Es dur - G dur - c moll:

բ) 4-րդ գործողությունից բարետային տեսարանում է կենտրոնի շուրջ համախմբված են C dur և cis moll տոնայնությունների տոնիկական եռահնչյունները կազմող տոնայնությունները:

Տերցիային համադրումներ Զուխաճյանն օգտագործում է ոչ միայն առանձին տեսիլներում, այլև՝ հերոսների երաժշտական բնութագրերի ստեղծման ժամանակ:

Զուխաճյանը լայնորեն է կիրառում ձայնակարգային դարտուղությունները, որոնց հանդիպում ենք Փառանձեմի արիայում (1-ին գործողություն)՝ Es dur - es moll - Es dur, Վաղինակի արիայում (2-րդ գործողություն)՝ c moll - C dur - c moll:

Տվյալ կերպարի բացահայտման համար համանուն տոնայշնություններից զատ հեղինակն օգտագործում է նաև զուգահեռ տոնայնություններ.

ա) Արշակի արիան (1-ին գործողություն) *F dur - d moll - F dur,*

բ) Արշակի արիան (3-րդ գործողություն)՝ *c moll - Es dur:*

Այս կամ այն տեսարանի տոնայնական կառուցվածքի նկատմամբ բացառիկ տրամաբանական ու հիմնավորված մոտեցման արտահայտությունն է 3-րդ գործողության ֆինալի գերեզմանոցի տեսարանի այն հատվածը, ուր Արշակին են ներկայանում Ուրվականները. զարտուղող սեկվենցիաների հաջորդականությունից ստեղծվում է խաչ կազմող տոնայնությունների շարք:

Համաշխարհային երաժշտության պատմությունից հայտնի է, որ կոմպոզիտորները, Մոցարտից սկսած, Փանտաստիկ կերպարների ստեղծման համար օգտագործում են ամբողջատոն գամմա. ավելին՝ Գլինկայի «Ռուսլան և Լյուդմիլա» օպերայում այն հանդիսանում է հերոսներից մեկի՝ Զերնոմորի երաժշտական բնութագրի կարևոր բաղկացուցիչ մասը: Ամբողջատոն գամման լայնորեն են կիրառել նաև Դարդոմիժսկին, Բորոդինը, Ռիմսկի-Կորսակովը, Դերյուսին: Ամբողջատոն գամմայի օգնությանն ավելի ուշ դիմեց նաև Չայկովսկին՝ 1890-ին գրած «Պիկովայ դամա» օպերայում կոմսուհու Ուրվականի բնութագրման համար:

Եվ, ահավասիկ, Զուխաճյան իր օպերայում Ուրվականների տեսարանի ստեղծման համար օգտագործում է ոչ թե պարզապես ամբողջատոն գամմայի շարքը, այլ՝ կիրառում քրոմատիկ սեկվենցիաներ, որոնց տոնայնությունների շարքն էլ հենց առաջցնում է ամբողջատոն գամմա: Այսինքն, Զուխաճյանի մոտ ամբողջատոն գամման հանդես է գալիս քողարկված ձևով, ինչն, անշուշտ, վկայում է հեղինակի տոնայնական վառ երևակայության մասին:

Զուխաճյանի հարմոնիկ լեզվի կարևոր առանձնահատկություններից է 2-րդ, 3-րդ և հետավոր կարգի ազգակից տոնայնությունների համադրումը: Հաճախակի են անսպասելի էնհարմոնիկ զարտուղությունները, որանց համար կոմպոզիտորը հիմնականում օգտագործում է փոքրացրած սեպտակորդ:

Օպերայի պարտիտուրում շատ են քրոմատիկ և զարտուղող սեկվենցիաները, որոնք երաժշտությանը հաղորդում են թարմություն և գունեղություն: Քրոմատիկ սեկվենցիայի փայլուն օրինակ է Նախերգանքի ոռնդոյի երկրորդ դրվագը. սեկվենցիայի կազմի մեջ մտնող տոնայնությունների ընտրությունն այստեղ պատահական չէ՝ առաջանում է պենտատոնիկա:

As dur - b moll - c moll - Es dur - f moll - As dur

Մողուլացնող սեկվենցիաներ են կիրառված գերեզմանոցի տեսարանի սկզբում՝ մըրթիկի պատկերման ժամանակ, Արշակի արիայում (3-րդ գործողություն), 3-րդ գործողության ֆինալի դերեզմանոցի տեսարանում (Ուրվականների խաչը) և այլն:

Չուխաճյանը լայնորեն է կիրառել զարգացման պղլիփոնիկ միջոցները. Հանդիպում են իմիտացիաներ, միևնույն թեմայի մեծացրած և փոքրացրած անցկացումներ, թեմայի հայելանման տարբերակի կիրառություն և այլն:

Կոմպոզիտորն օգտագործում է նաև թեմայի տարբերակային փոխակերպումներ՝

ա) 3-րդ գործողության ֆինալի գերեզմանոցի տեսարանում Ուրվականների թեմայի թեմատիկ կորիզն առկա է նույն գործողության 1-ին և 2-րդ տեսիլների նվազախմբային մուտքերում,

բ) 4-րդ գործողության բալետի և հաջորդող խմբերգային տեսարանի թեմատիկմում:

Օպերայում բազմիցս հանդիպում են ուեմինիսցենցիաներ, ինտոնացիոն կամուրջներ.

ա) 4-րդ գործողության անտրակտը կառուցված է 2-րդ գործողությունից Վաղինակի արիայի ֆրազի մոտիվային զարդացման վրա,

բ) Օլիմպիայի մանկական տարիների վերհուշի տեսարանում (4-րդ գործողություն) ամբողջությամբ հնչում է 2-րդ գործողությունից Վաղինակի արիայի առաջին՝ c moll հատվածը:

Երաժշտական դրամատուրգիայի ամբողջականությանը հասնելու նպատակով կոմպոզիտորը տարածության վրա ստեղծում է լադատոնայնական և թեմատիկ կամուրջներ, իսկ միջանցիկ զարգացման անընդհատությունն ու մի դրվագից մյուսը հկուն անցումներն ապահովում են օպերայի ձեի միասնականության ամրապնդումը:

Հավարտ շարադրանքի՝ «Արշակ Բ» օպերայի ևս մեկ կարևոր առանձնահատկության մասին: Չուխաճյանի մեռնող հերոսները կյանքին հրաժեշտ են տալիս մաժորում՝ Գնելը՝ *D dur - H dur - G dur*, իսկ *Oլիմպիան* իր մահառաջի արիան սկսելով *d moll*-ում, այն ավարտում է *D dur*-ում: Ավելին, ոչ միայն հերոսն է մեռնում մաժորային հնչողությունների ուղեկցությամբ, այլև ողջ տեսարանն է շարադրվում մաժորում: Երկրորդ գործողության ֆինալում մեռնում է Գնելը, իսկ գործողությունն ավարտվում է *G dur*-ում: Չորրորդ գործողության ֆինալում մեռնում են *Oլիմպիան* ու *Արշակը*, և օպերան ավարտվում է զարձյալ *G dur*-ում: Այսպիսով, մահերով լի մռայլ օպերան ավարտվում է մաժորում: Այս հարցում Չուխաճյանը հանդես է գալիս որպես համարձակ նորարար. Վերդիի «Տրավիատայում» մեռնում է գլխավոր հերոսուհին՝ Վիոլետան, և օպերան ավարտվում է *des toll*-ում: Վերդիի մյուս գլուխողործոցում՝ «Ռիգոլետոյում» մեռնում է Զիլգան՝ օպերան կրկին ավարտվում է *des toll*-ում: Եվ միայն «Արշակի» ստեղծումից երեք տարի անց, 1871-ին գրած «Աիդայում» Վերդին հանդում է Չուխաճյանի մոտեցմանը. օպերայի 4-րդ գործողության մեջ գլխավոր հերոսների՝ Աիդայի և Ռիգամեսի մահառաջի զուգերգը շարադրվում է *Ges dur*-ում. *Ges dur*-ում էլ ավարտվում է օպերան:

Չուխաճյանի սույն մոտեցման հիմքում, անտարակույթ, նրա լավատեսական աշխարհընկալումն է, որը բխում է հայ ժողովրդի ազգային խառնվածքից: Հիշենք հայ ժողովրդի մտածողությանը բնորոշ լավատեսական ողու փայլուն դրսեորումը «Սասունցի Դավիթ» էպոսը: Լավատեսության հետ մեկտեղ այս տեղ արտահայտվում է ժողովրդի անխախտ հավատն իր արդար գործի վերջնական հաղթանակի նկատմամբ: Մհերը չի մեռնում, այլ կենդանի փակվում է ժայռի մեջ, որպեսզի, երբ հնչի չարիքով ու նախանձով լեցուն հին աշխարհի վերջին ժամը, երբ «աշխարհ ավերվի, մեկ էլ շինվի», պատոի ժայռը, գուրս գա լույս աշխարհ՝ անցնի «քառսուն օրվա ճամփա» մեկ ժամում և աշխարհի երեսին: սփռի համընդհանուր ուրախություն ու երջանկություն:

Այս հարցում Չուխաճյանը կանխագուշակում է իր հանճարեղ հայրենակցին՝ մեծն կոմիտասին, որը հետագայում՝

լուր աշխարհի պիտի հայտարարեր, որ հայ երգերը մեղկ ու լալկան չեն, այլ համակ ուժ են ներկայացնում: Այսպիսով կարելի է եղբակացնել, որ իր անդրանիկ օպերայում Զուխաճյանը հենվում է հայ ժողովրդի ազգային մտածողության և ժողովրդական երաժշտության լադային մտածողության ամուր արմատների վրա:

Ահավասիկ Տ. Զուխաճյանի «Արշակ Բ» օպերայի երաժշտական լեզվի այն հիմնական առանձնահատակությունները, որոնք հնարավորություն են ընձեռում ստեղծագործությունն իր կատարելությամբ համարել օպերային արվեստի դասական նմուշներից մեկը:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### «ԱՐՇԱԿ Բ» ՕՊԵՐԱՅԻ ԲԵՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Արտասովոր դասավորվեց «Արշակ Բ» պատմառոմանտիկական օպերայի բեմական ճակատագիրը։ Նախապես օպերան կոչվում էր «Օլիմպիա» կամ «Օլիմպիադա», ստեղծագործության մյուս գլխավոր հերոսի՝ Արշակի տիկնոջ անվամբ։ Կարծիքներից մեկի համաձայն անվանափոխության հեղինակը տաճկական դրաքննությունն էր, որը, բնականաբար, չպիտի հանդուրժեր օպերան կոչել հայոց թագավորի անունով։ Ժամանակակիցներից ոմանք էլ պնդում են, թե Չուխանջյանն ինքն է անվանափոխել օպերան, որպեսզի դա առավել մատչելի լինի Կ. Պոլսի բազմազդ հասարակությանն ու ապահովի օպերայի հաջողությունը։

«Արշակ Բ» օպերայի ներկայացման մասին իրարամերժ տեղեկություններ են պահպանվել։ Ն. Ալեքսանյանի վկայությամբ օպերան չի բեմադրվել՝ նաումի թատրոնի հրկիզման պատճառով։ Բայց Չուխանջյանի սան Սմբատ Քեսենջյանի հուշագրությունը փաստում է, որ ««Արշակ Բ» օփերան, 1869-ի վերջերը, առաջին անգամ ներկայացուցուեցաւ, Բերա, Նաումի թատրոնին մէջ, իտալական օփերայի խումբի մը կողմէ, հոծ բազմութեան մը ներկայութեան։ Այնտեղ էին Արեւելեան թատրոնի մասնախումբը, գրեթէ բոլոր հայ գերասանները։ Այդ ներկայացման համար իտալական խումբը մեծ ծախսեր ըրած էր։ Խաղը երեք անգամ ներկայացնելով հազիւ հազ կրցան ծախսերը գոցել։ Վերջին ներկայացման հասոյթին կէսը Չուհանջեանին յատկացուեցաւ, իբր հեղինակի իրաւունք։ Այդ ներկայացումը «Արշակ Բ»-ի վերջին բեմադրութիւնը եղաւ»<sup>1</sup>։ Մենք վստահում ենք Քեսենջյանի հուշերին, քանի որ նաև Հ. Սինանյանը մահստրոյի ամենասիրելի սաներն էին և նրա կողքին էին մինչև կենաց վախճանը։ Քչերին է հայտնի, որ Քեսենջյանը՝ Չուխանջյանի «պահապան հրեշտակը», հերթապահել է մահվան մահճում տառապող կոմպոզիտորի սնարի մոտ։ Հենց նրանից է խնդրել մահստրոն իր սիրելի Ուսուցչի՝ անմահ Վերդիի «Օթելլոյի» պարտիտուրը, գրկել այն, սեղմել կրծքին ու հրաժեշտ ավել երկրային կյանքին։ Ուստի Սմբատ Քեսենջյանին չվստահե-

<sup>1</sup> Ն. Պեշիկթաշլեան, Թատերական դէմքեր, Անթիլիսս, 1969, էջ 91։

լու, նրա հուշերը կասկածի տակ առնելու հիմքեր չունենք: Բարսեղ թուղարյանը<sup>2</sup> նույնպես վկայում է, որ օպերան բեմադրվել է 1869-ին, Նաումի թատրոնում՝ իտալական թատերախմբի կողմից, լեփ-լեցուն դահլիճում: Համենայնդեպս հայտնի անժիւտելի փաստ է, որ օպերայից առանձին հատվածներ, ինչպես նաև Նախերգանքը շատ անգամ հնչել են թե՝ Պոլսում, թե՝ Եվրոպայում: «Օլիմպիայի զանազան հատուածներ, գրում է Պոլսում ծնված ֆրանսահպատակ իտալացի երաժշտական քննադատ Ադոլֆո Թալասոն, Վիեննայի ու Նախովի երաժշտահանդեսներուն մէջ նուագուելով՝ արագօրեն տարածեցին հայ երաժշտապետին անունը»<sup>3</sup>:

1870-ին տպագրած իր հոդվածներից մեկում Մինաս Զերազը գրում է. «Գիշեր մը, յորում պ. Տ. Չուխանյանա ողբերգին ներածումը պիտի ներկայացվեր, կայսերական թատրին առջևեն կանցնեի շուտաքայլ: Հետաքրքրությամբ մը, զոր դյուրին է բացատրել, ուզեցի ականջ դնել արմենյան տաղանդի մը հրաշակերտին... կրնայի<sup>4</sup> երևակայել հալու մը հաղթանակը Աբոլոնա հանրապետության մեջ... Հիանալի<sup>5</sup> չէ, պ. ընթերցող, տեսնել որ ամեն ճյուղի մեջ հայը կը հաջողի... Հառաջ անցիր, պ. Չուխանյան, թե տուր խանդիդ, հայոց տիտղոսները ավելցու»: Ինչպես եղրակացնում է Գ. Ստեփանյանը, Մ. Զերազի հիշատակած «Ներածումը» «Օլիմպիայի» Նախերգանքն է, ընդ որում Զերազը ծանոթ է եղել նաև ամբողջ օպերային, քանի որ իր հոդվածում «ասում է, թե ինքը լսել է մի մասը, բայց մտքում պատկերացրել ամբողջությունը, «ինչպես հնագետ մը, որ ավեր շենքին մեկ քանի բեկորը տեսնելով՝ կամբողջացնե զայն մտովի»»<sup>6</sup>:

Օպերայից առանձին հատվածների կատարմամբ «Արշակ»-ն այն աստիճան հայտնի է դառնում Եվրոպայում, որ 1873թ. Չուխանյանը հրավիրվում է Վիեննա՝ բեմադրելու իր անդրանիկ օպերան համաշխարհային ցուցահանդեսի շրջանակներում:

Կոմպոզիտորի մահից հետո օպերան մոռացության է արվում: Երկար ժամանակ նրա պարտիտուրը համարվում էր անվերադարձ կորսված: Ենթադրություններից մեկի համաձայն պարտիտուրն այրվել էր Պոլսի Նաումի թատրոնի հրդեհի ժամանակ, մեկ այլ վար-

<sup>2</sup> Տի՛ս Pars Tuglaci. Turkish Bands of Past and Present. Istanbul, 1986, p. 124:

<sup>3</sup> Ն. Պեշիկթալեան, նշ. աշխ., էջ 83:

<sup>4</sup> Գ. Ստեփանյան, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, Հատոր 2, Երևան, 1969, էջ 192:

<sup>5</sup> Գ. Ստեփանյան, նշ. աշխ., էջ 193:

կածով՝ կոմպոզիտորի մնացած բոլոր ստեղծագործությունների հետ ոչնչացվել էր Արդուկ Համբիդի հրամանով։ Եվ միայն կոմպոզիտորի երաժշտական ժառանգության առաջին լուրջը դիտական ուսումնասիրությունը ստանձնած հայ ականավոր երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, ՀԽՍՀ և ԽՍՖՀ արվեստի վաստակավոր գործիչ Գեորգի Տիգրանովին հաջողվեց գիտական պրատումների շնորհիվ անհայտությունից փրկել ստեղծագործության լրիվ պարտիտուրը, վերակենդանացնել օպերան։ Ծանոթանալով Չուխաճյանի արխիվային նյութերին, 1942թ. երաժշտագետն ընկնում է «Արշակ» հետքի վրա և բազմաթիվ ձեռագրերի ուսումնասիրության ու համեմատման շնորհիվ հավաքում օպերայի լրիվ պարտիտուրը<sup>6</sup>։ Միաժամանակ, Երևանի Հանրային գրադարանում հայտնաբերվում է «Արշակ Բ» օպերայի 1871թ. Կ. Պոլսում հրատարակված լիբրետոյի հայերեն տպագիր օրինակը։ Շուտով Ալ. Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում Գ. Տիգրանովը, ներկայությամբ Հայկանուշ Դանիելյանի, Միքայել Թավրիզյանի, Արմեն Գուլակյանի և Մուշեղ Աղայանի, դաշնամուրի վրա նվագում է իր հայտնաբերած օպերան՝ ինչպես կհիշի հետագայում Տիգրանովը։ «Հայկանուշ Դանիելյանը մեծ ցանկություն հայտնեց երգել օպերայում, և ողջ թատրոնը ուղում էր սկսել աշխատանքը»<sup>7</sup>։ Նման մինույրուտում օպերայի պարտիտուրը հանձնվում է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնին, որը, չնայած պատերազմական ժամանակաշրջանի (1942-43թթ.) դժվարություններին, ձեռնամուխ է լինում բեմադրության աշխատանքներին՝ ունենալով Հկկ Կենտկոմի և Հայաստանի կառավարության աջակցությունն ու օժանդակությունը։ Թատրոնը հրաժարվում է թ. Թերզյանի լիբրետոյի գաղափարական ու դրամատուրգիական կոնցեպցիայից, բեմադրության համար ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ոեմիսոր Ա. Գուլակյանը<sup>8</sup> գրում է նոր լիբրետո՝ ուժնացնելով սյուժեի հայրենասիրական դիմք։

<sup>6</sup> Պահպում է ԳԱԹ, Տ. Չուխաճյանի դիվանում, N 8, ձեռագիր 350 թիրթ։ Պարտիտուրից բացի այսաեղ են գտնվում 1-ին և 4-րդ (մասամբ) գործությունների կլավիքների ձեռագիր օրինակները նույնպես. N 11, ձեռագիր 34 թիրթ, N 12, ձեռագիր 58 թիրթ։

<sup>7</sup>Տե՛ս Մ. Թուքան, Դվաжды рожденная (К 100-летию армянской оперы), «Комсомолец», 1971, 13 июня.

<sup>8</sup> Նույն տեղում։

<sup>9</sup> «Արշակ Երկրորդ» օպերայի համար Ա. Գուլակյանի դրած լիբրետոն տե՛ս Հավելված 2-ում։

Եվ ահավասիկ, 1945թ. նոյեմբերի 29-ին, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 25-ամյակի առթիվ, կոմպողիտորի մահից ուղիղ 47 տարի անց Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի բեմում ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Միքայել Թավրիզյանի դեկավարությամբ առաջին անգամ հնչում է «Արշակ Երկրորդի» կախարդող երաժշտությունը՝ արժանանալով ջերմ ընդունելության: Ներկայացման մեջ ընդգրկվել էին Հայ բեմի առաջատար ուժերը՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Հայկանուշ Դանիելյանը (Օլիմպիա), ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սագանդարյանը (Փառանձեմ), ՀԽՍՀ ժողովրդական արտիստուհի Տարա Տալյանը և Պավել Լիսիցյանը (Արշակ Երկրորդ): Նկարչական ձևավորումն իրականացրել էր նկարիչ Պատվական Անանյանը:

Ու չնայած հեղինակային օրինակից կատարված բազմաթիվ շեղումներին ու աղավաղումներին, «Արշակ Երկրորդի» բեմադրությունը դարձավ ոչ միայն խորհրդային Հայաստանի, այլև Խորհրդային Միության մշակութային կյանքի առավել վառ ու նշանակալի իրադարձություններից մեկը՝ արժանանալով Երկրի բարձրագույն պարգևին՝ Ստալինյան մրցանակի:

Իր անդրանիկ բեմադրության օրվանից օպերան մշտական տեղ գտավ թատրոնի խաղացանկում՝ երկար տասնամյակներ չի ծնելով բեմից՝ ընդհուպ մինչև 1990-ականներ...

1956-ի հունիսին Հայ արվեստի տասնօրյակի շրջանակներում օպերան երկրորդ բեմադրությամբ ցուցադրվում է Մոսկվայի Մեծ թատրոնում: Ներկայացման դիրիժորն էր ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Սուրեն Չարեքյանը, ուսեմիսորը՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի գլխավոր ուժիսոր Վավիկ Վարդանյանը: Բեմադրության նկարչական ձևավորումն իրականացրեցին նկարիչներ Աշոտ Միրզոյանն ու Ալեքսանդր Շաքարյանը: Գլխավոր հեռուսների դերերերով հանդես եկան ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանը (Օլիմպիա), ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Միհրան Երկաթը (Արշակ Երկրորդ), ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Նար Հովհաննիսյանը (Ներսես)՝<sup>10</sup>: Բեմադրության

<sup>10</sup> «Արշակ Երկրորդ» օպերայի 1-ին, 2-րդ և 3-րդ բեմադրությունների մասին մանրամասն տես՝ Գ. Գյողակյան, Տիգրան Չուխաջյանը և նրա «Արշակ Երկրորդ» օպերան, Երևան, 1971, 47 էջ:

վերջին գործողության մեջ ավելացավ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» պարային հնտերմեդիան:

«Արշակ Երկրորդի» երրորդ բեմադրությունը տեղի ունեցավ 1971-ին և ձոնվեց Հայոց օպերային արվեստի ծննդյան 100-ամյա հոբելյանին: Դիրիժորն էր Օհան Դուրյանը, նկարիչը՝ Ռոբերտ Նալբանդյանը: Գլխավոր հերոսների դերերգերը կատարեցին Միհրան Երկաթը (Արշակ Երկրորդ), Գոհար Գասպարյանը (Օլիմպիա), Գոհար Գալաջյանը (Փառանձեմ), Նար Հովհաննիսյանը (Ներսես), Հենրիկ Ալավերդյանը (Վասակ)...

Եվ այսպես, հանդիսատեսին «Արշակ Բ» օպերան տարիներ շարունակ ներկայացել է իր տարբերակով, որը շատ ու շատ հեռու էր հեղինակային մտահղացումից: Նոր լիբրետոյում պահպանվեց թերզյանական լիբրետոյից շատ քիչ՝ բան: «Արշակ Երկրորդի» «հեղինակները» կատարեցին մի շարք նորամուծություններ.

Ա. Գնելի կերպարը, որը թերզյանական օպերայում դրամատուրգիական կարևոր առաքելություն ուներ, այստեղ դուրս է մղվել:

Բ. Գնելի (տենոր) փոխարեն օպերա է մուտք գործել նրա հորեղբոր որդին՝ Տիրիթը (տենոր), որն այստեղ հայրենիքի դավաճան է. նա Մերուժան Արծրունու հետ դաշն է կապում Պարսից Շապուհի հետ, սակայն Արշակը բացահայտում է դավադրությունն ու անձամբ նետահարում նրան՝ որպես հայրենիքի դավաճանի:

Գ. Օպերայից դուրս է մղվել սպարապետ Վաղինակի (տենոր) կերպարը, որին փոխարինել է պատմական Վասակ Մամիկոնյանը (բաս):

Դ. Օպերայի հերոսների շարքում ավելացել է պատմական Սպանդարատ Կամսարականը (բաս), որը թերզյանի լիբրետոյում բացակայում էր: Սպանդարատը որոշում է լուծել Արշակի կողմից բնաջնջված իր տոհմի՝ Կամսարականների վրեժը՝ թունավորելով արքային: Սակայն Արշակի համար նախատեսված թունավոր գիրին ըմպում է Օլիմպիան և մահանում:

Ե. Դուրս է մղվել Արշակի և Օլիմպիայի որդու կերպարը, որին սպանում էր Փառանձեմը:

Զ. Ավելացել են Դրաստամատի (տենոր) կերպարը, Բյուզանդիայի Վաղես կայսեր և պարսից Շապուհ արքայի դեսպանների կերպարները:

Իսկ մյուս հերոսները, թեև պահպանվել են, սակայն փոխվել են տրամագծորեն, դարձել անճանաչելի:

Ա. Ջալլի փոփոխություններ է կրել Արշակի կերպարը:

Բ.Օլիմպիան, որի կերպարը Թերզյանի մոտ պասսիվ էր, այստեղ, 2-րդ գործողության մեջ ընդգրկվում է Սպանդարատի կազմակերպած հակապետական խռովության մեջ: Սպանդարատի խորհրդով, Փառանձեմի հանդեպ կրքով տարված Արշակի սերը վերադարձնելու նպատակով նա հանձն է առնում համոզելու իր հորը՝ Բյուզանդիայի Վաղես կայսերը, որպեսզի նա զորքով շարժվի դեպի Հայաստան, պատերազմ հայտարարի Արշակին ու դրանով իսկ ծնկի բերի իր դատեր անհավատարիմ ամուսնուն:

Գ.Թերզյանական անողոք վրիժառու Փառանձեմը, որը սպանում է Արշակի որդուն, ապա կնոջը՝ Օլիմպիային, գուլակյանական տարբերակում, տեղեկանալով Արշակից, որ Գնելը խռովարար է եղել և հենց դրա համար էլ սպանվել է արքայի կողմից, ևս դատապարտում է իր սպանված ամուսնուն և անցնում Արշակի կողմը՝ դառնալով ջերմ հայրենասեր և անմնացորդ նվիրվում Արշակին ու հայրենիքին:

Նոր լիբրետոյի հետ կապված երաժշտագետ Ալեքսանդր Շահվերդյանն ու կոմպոզիտոր Լևոն Խոջա-Էջնաթյանն իրականացնում են օպերայի երաժշտության կամայական խմբագրումն ու լրամշակումը (առանձին տեսարանների ու համարների տեղափոխություն, խմբագրական վերանայում, առանձին երաժշտական համարների լրամշակում): Լ. Խոջա-Էջնաթյանը կատարում է օպերայի գործիքավորման նոր խմբագրությունը:

Առնվազն զարմանք է առաջացնում այն փաստը, որ «Արշակ երկրորդի» երեանյան բեմադրության նախապատրաստական աշխատանքներում չի ներգրավվել օպերայի պարտիտուրը հայտնաբերած Գ. Տիգրանովը. դրա պատճառը մեզ անհայտ է: Մի կողմից թվում է, թե այդ բոլոր խմբագրական աշխատանքները պիտի ղեկավարեր նա, քանի որ ինքն էր հայտնաբերել օպերան և իրենից լավ ոչ ոք չգիտեր օպերայի երաժշտությունը: Մյուս կողմից, երեկի թե նա ի զորու լիներ կասեցնել չուխաճյանական երաժշտության նման անհանդուրժելի «սրբագրումները»: Ինչեւ: Նոր տարբերակից դուրս են մղվել նախերդանքը, ինչպես նաև չուխաճյանական օպերայի երաժշտական կտավում նշանակալի տեղ զբաղեցնող և դրամատուրգիական շրջադարձային դեր ունեցող տեսարանները.

Ա.3-րդ գործողության ֆինալի գերեզմանոցի տեսարանը,

Բ.6 toll թաղման խորալը, որը հնչում է որպես ոեքվիեմ օպերայի գույգ գործողությունների ֆինալներում՝ մի դեպքում՝

Գնելի, մյուս գեպօւմ՝ Օլիմպիայի մահվան առիթով։ Աս ծավա-  
լուն տեղ էր գրավում նաև Նախերգանքում։

Գ.Խախտավել է օպերայի տոնայնական լարվածքը՝ թերզյանա-  
կան օպերայի Նախերգանքի (B dur) ու Փինալի (G dur) միջև տոնայ-  
նությունների տերցիալին համադրման (ինչը Չուխաճյանի երաժշ-  
տական լեզվի բնորոշ առանձնահատկություններից է) փոխարեն օ-  
պերան ավարտել են ոչնչով չպատճառաբանված As dur-ում։ Եվ դա  
այն դեպքում, որ Չուխաճյանն իր օպերայի հսկայական պարտիտու-  
րում չի օգտագործել ոչ մի պատահական տոնայնություն։

Նոր տարբերակում «Հեղինակները» կամայականորեն են  
վարվել երաժշտական նյութի հետ։ Այսպես՝

Ա.Արշակ Բ-ի անդրանիկ F dur արիան, որը տեղափորված  
էր 1-ին տեսիլում, նոր տարբերակում հանձնարարված է կաթո-  
ղիկոս Ներսեսին՝ 1-ին գործողության 2-րդ պատկերում։ Մինչ-  
դեռ 1-ին պատկերում տեղափորված Արշակի արիայում բոլորովին  
այլ երաժշտություն է (f toll)։

Բ.1-ին գործողությունից Տիրիթի N 6 արիողոն իրենից ներ-  
կայացնում է Գնելի c toll անհձքը՝ 2-րդ գործողության Փինա-  
լից (N 5)։ Փոխված է տոնայնությունը՝ h toll։

Գ.1-ին գործողությունից N 7 պատկերում Օլիմպիայի և  
Սպանդարատի տեսարանում թագուհու երաժշտական լեզվում  
տեղ է գտել մեղեղի, որն առհասարակ բացակայում է հեղինակա-  
յին օրինակում։ Նույն տեսարանում տեղափորված Օլիմպիայի  
կանցոնայում առանց փոփոխության Վաղինակի c toll - C dur  
պատմությունն է՝ 2-րդ գործողությունից։

Դ.2-րդ գործողությունից երրորդ «Դավադրություն» տե-  
սարանում Տիրիթի երգամասում տեղ է գտել Արշակի ու Փառան-  
ձեմի զուգերգը 3-րդ գործողության Փինալի գերեզմանոցի տե-  
սարանից։ Փառանձեմի երգամասը հանձնարարված է նախարար-  
ների երգչախմբին։

Ե.2-րդ գործողությունից N 10 «Լուսաբաց» ինտերմեցո-  
յում 4-րդ գործողության նվազախմբային անտարկոն է՝ Օլիմ-  
պիայի մանկական տարիների վերհուչի տեսարանը, Բյուզանդիա-  
յի տեսիլքը։

Զ.2-րդ գործողությունից N 11 Փառանձեմի ու Տիրիթի գու-  
ղերգում օգտագործված է 1-ին գործողության Փինալից (N 3)  
Գնելի և Վաղինակի տեսարանի երաժշտական նյութը։

Է.3-րդ գործողության սկզբում Արշակի և Փառանձեմի տեսարանում Փառանձեմի երգամասում (Խարդավանք, կեղծիք ու չարդավ հետեւում են քեզ ամենուր...) Արշակի արիայի թեման է օպերայի 3-րդ գործողությունից, որտեղ Արշակը զղջում է Օլիմպիայի հանդեպ արած ստորոտթյունների, Գնելին կործանելու համար:

Ը.Ն 14-ում Օլիմպիայի երգամասում տեղավորված է սիրուայթթեման (*A dur*)՝ պարզեցված նվազակցությամբ:

Թ.Բոլորովին նոր երգչտական նյութ է Արշակի՝ օպերայում վերջին արիողոն՝ «Ես կցանկամ, որ մեր երկիրը...»:

Ժ.Օպերայի վերջին՝ 4-րդ գործողությունից N 19-ում երդչախմբի երգամասում (*Oρν* է հաշտության հանուր է տոնն այսօր ցնծությամբ լիցուն) օդտագործված է 1-ին գործողության ֆինալից (N 5) Գնելի և Վաղինակի վրեմի զուգերդի թեմատիկ նյութը:

ԺԱ.Թերզյանական «Արշակի» 4-րդ գործողությունից Փառանձեմի վրեմի արիայի թեման հանձնարարված է՝ մի մասը՝ 4-րդ գործողությունից Օլիմպիային (Զի սաղում հանդեսում արարքդիշխանուհի Փառանձեմ), մյուս մասը՝ Արշակին (ի՞նչն է այդպես քեզ հուզել, Փառանձեմ), որը հետո կրկնում են Սպանդարատն ու նախարարների խումբը:

ԺԲ.4-րդ գործողության ֆինալում սոպրանոների և ալտերի երգամասում, ապա Օլիմպիայի կատարմամբ հնչում է 4-րդ գործողության ֆինալից եղբափակիչ խմբերդի ուղեկցությամբ Վաղինակի և Փառանձեմի G *dur* մեղեղին, որով էլ ավարտվում է օպերան:

Նշված փոփոխությունների հետեւանդով ոչ միայն փոխվել է օպերայի գաղափարական բովանդակությունը, այլև խաթարվել է երգչտական լեզուն: Օլիմպիան խոսում է մերթ իր, մերթ Վաղինակի, մերթ Փառանձեմի լեզվով: Փառանձեմը հանդես է դալիս մերթ սեփական, մերթ Արշակի ինտոնացիաներով: Գնելի երգամասը բգկտված է. սրա մի մասը տեղ է գտնել Տիրիթի, մի մասը՝ Փառանձեմի, մյուս մասը՝ երգչախմբի երգամասերում: Կաթողիկոս Ներսեսը «սեփականացրել» է Արշակի երգչտական լեզուն: Տիրիթն արտահայտվում է մերթ Գնելի, մերթ Արշակի ու Փառանձեմի ֆրազներով: Կերպարները զրկվել են անհատականությունից, ինչը Զուխաճյանի օպերայի երգչտական լեզվի կարեոր առանձնահատկություններից է: Զէ՞ որ Զուխաճյանն իր կերպարների ստեղծման համար յուրաքանչյուր դեպքում կիրառել է միայն տվյալ հերոսին հատուկ երգչտական լեզու: Նոր «Արշա-

կում» պահպանվել է լոկ չուխաճյանական օպերայի երաժշտությունը, մինչդեռ անտեսված են Տ. Չուխաճյանի՝ օպերային խոշոր դրամատուրգի նվաճումները։ Այսպես երրորդ գործողության ֆինալի գերեզմանոցի տեսարանը, որը Չուխաճյանի՝ դյուտն է (նկատի ունենք տոնայնություններով խաչի ստեղծումը), «Արշակ Երկրորդում» բացակայում է, մինչդեռ դրանից Արշակի ու Փառանձեմի զուգերգի թեման տեղ է գտել Տիրիթի երգամասում։ Անհասկանալի փոփոխություններ...

Չնայած նշված «բարեկիոխումներին», «Արշակ Երկրորդը» հիասքանչ ստեղծագործություն է՝ իր հզոր երաժշտությամբ, մեղեղային շուայլությամբ։ Հեղինակը իսկապես հանճարեղ կոմպոզիտոր է, ուստի կատարված աղավաղումների հետևանքով անգամ չի խամրել օպերայի երաժշտության փայլը. այն պահպանել է իր հմայքը և անմիջապես գրավում է ունկնդրին ու սիրվում...

\* \* \*

1990-ականների սկզբներին Կահիրենում հղանում են «Արշակ Բ»-ի հեղինակային տարբերակի վերածնման միտքը։ 1998-ին, Տ. Չուխաճյանի մահվան 100-ամյա տարելիցի կապակցությամբ թատրոնական գործիչ Ժիրայր Փափազյանը և Կահիրեաբնակ երաժիշտ Հայկ Ավագյանը Փարիզում ստեղծում են «Տիգրան Չուխաճյան» կենտրոնը և ձեռնամուխ լինում «Արշակ Բ»-ի հեղինակային բեմադրության կազմակերպմանը։ Այդ ընթացքում՝ 2000թ., Կահիրենում լույս են տեսնում «Արշակի» կլավիրն ու պարտիտուրը։ Հանգանակվում է 1 մլն ամերիկյան դոլար, որի շնորհիվ 2001թ. սեպտեմբերի 8-ին, 16-ին (ցերեկը և երեկոյան), 21-ին, 27-ին և 30-ին Սան-Ֆրանցիսկոյի War Memorial Opera House-ում տեղի է ունենում «Արշակ Բ»-ի համաշխարհային պրեմիերան՝ Լորիս Ճգնավորյանի ղեկավարությամբ։ 6 ներկայացումները, որոնցում ներգրավված էին ինչպես Հայ (Հասմիկ Պալյան, Տիգրան և Հայկ Մարտիրոսյաններ), այնպես էլ օտար՝ ամերիկացի, Փրանսիացի, վրացի, կանադացի, բուլղար, պարսիկ երգիչներ, որոնք երգում էին Հայերեն։ Բեմադրվում է օպերան հեղինակային մտահղացմամբ, Հայերեն լեզվով։ Առաջին ներկայացման մեջ (8 սեպտեմբերի) հանդես եկան Քրիստոֆեր Ռոբերթսոնը (Արշակ), Հասմիկ Պալյանը (Օլիմպիա), Նորա Կյուլպիչը (Փառանձեմ) Ֆիլիպ Ուեպը (Գնել), Կորին Կիծը (Վաղինակ), Տիգրան Մարտիրոսյանը (Ներսես), Դեյվիդ Օքբրիւնտը (Վարդան), Կատյա Էսքալերան (Պոլիքսեն), Զոն Աղամ-

սը (Տիրան արքայի ուրվական) և Բրայան Ջոլիին (Արշակի և Օլիմպիայի որդու ուրվական): Բեմադրությունն առաջ բերեց հակասական կարծիքներ՝ ինչպես հիացական գովասանքներ, այնպես էլ բացասական արձագանքներ թե՛ ամերիկյան մամուլի և թե՛ հայ մասնագետների կողմից, որոնց առանձնապես հավատ չէին ներշնչում ո՛չ Կահիրեի «չուխաճյանագետները», ո՛չ ամերիկյան բեմադրիչները: Մելանյա Արովյանը զբեց. «Բեմադրությունը զուրկ էր հայկականությունից: Ուազմիկները հագել էին պարսկական թե աֆղանական հանդերձանք: Իշխանուհի Փառանձեմը հառնում է գեղջուհու զգեստներով, գգգված վարսերով՝ որպես մի վհուկ: Իսկ Արշակ արքան ավելի շատ հիշեցնում էր սափրած գլխով դահիճի: Թագուհի Օլիմպիային իջեցնում են բեմի վրա ու բարձրացնում առյուծի վանդակում...»<sup>11</sup>:

2001թ. սեպտեմբերյան 6 ներկայացումներից հետո «Արշակը» վերստին լուեց: Հստ էության, «Արշակ Բ»-ի ամերիկյան բեմադրությունը չդարձավ կարեոր հանգրվան, ունեցավ ընդամենը 6 ներկայացում և մարեց ասուլի պես: Զծառայեց չուխաճյանական օպերայի վերածնման նպատակին: Ավելին. առաջ բերեց ամերիկյան մամուլի քննադատական գնահատականները: Մի՛թե 1 մլն ամերիկյան դոլարը հանդանակվեց նրա համար, որ «San Francisco Chronicle»-ը 2001թ. սեպտեմբերի 10-ի համարում գրի. «Չուհանի երաժշտութիւնը շատ բաներով կը զիջի Վերտիին եւ ունի լոկ աքատեմիք հետաքրքրութիւն»<sup>12</sup>: Արդյո՞ք ամերիկյան բեմադրիչների միջակ բեմադրության նպատակն էր, որպեսզի «Los Angeles Times»-ը 2001թ սեպտեմբերի 10-ին փաստեր, թե ««Արշակ Բ»» չի կրնար ներկայացնել հայկական արուեստը, քանի որ զուրկ է հայկականութենք»<sup>13</sup>: Ակամա հիշում ենք Վերդիին, որի գլուխգործոց «Տրավիատայի» պրեմիերան 1853-ի մարտի 6-ին Վենետիկի *La Fenice* թատրոնում տապալվեց՝ հանդիսատեսն օպերան դիմավորեց սուլոցներով: Այդ առիթով Վերդին իր օպերաների ծառուղում տնկեց լացող ուռենի, իսկ հաջորդ օրը իր սան, դիրիժոր Մուցիոյին հղած նամակում գրեց. «Երեկ «Տրավիատան» տապալ-

<sup>11</sup> Արք Արշակ: между молотом и наковалней, “Новое время”, N 795, 14 ноября, 2001г.

<sup>12</sup> «Ջահակիր» (Աղքային գրական ընկերային շաբաթաթերթ), հինգշաբթի, 1 նոյեմբերի, 2001:

<sup>13</sup> Նույն տեղում:

վեց: Մեղքը ի՞մն էր, թե՝ երգիչներինը: Ժամանակը ցույց կտա»<sup>14</sup>. Սակայն անցան տարիներ, և «Տրավիատան» հարթեց իր ճանապարհը դեպի բազմահազար ունկնդիրների սիրտը դառնալով առնենասիրված օպերաներից մեկը: Երևի թե «Արշակի» աստեղնային ժամը 2001-ին չպիտի գար, Սան-Ֆրանցիսկոյում չպիտի գար: Այլ պիտի գա շուտով, պիտի գա Հայաստանում...

## POSTSCRIPTUM

Սիրելի ընթերցող.

Շնորհակալ եմ, որ Համբերատար ընթերցեցիր իմ մտորում՝ ներն ու խոհերը հայոց օպերային երաժտության առաջնեկի հանճարեղ ու հիանքանչ, միաժամանակ՝ տարագիր ու գժբախտ «Արշակ Բ» օպերայի մասին: Ճիշտ 108 տարի առաջ, 1898-ին, երբ դադարեց բարախել Զուխաճյանի սիրտը, թիֆլիսյան «Մուրճը» մեծահամբավ երաժշտապետի հիշատակին նվիրված մահախոսականում դրեց. «Զուխաճյանի ողբերգությունը կայսնում է նրանում, որ նա ծնվեց ու ապրեց Տաճկահայաստանում»:

Անցել են 138 երկար ու ձիգ տարիներ, բայց Տաճկահայաստանում 1868-ին ծնված «Արշակ Բ» օպերան չի՝ կարողանում տարագրությունից գալ հայրենիք. ճանապարհը չի գտնում:

Բայց մի՞թե «Արշակ Բ» օպերան հեղինակային մտահղացմամբ այդպես էլ հայրենիքում՝ Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան ազգային օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում բեմ չի բարձրանալու:

Մի՞թե «Արշակ Բ»-ը չի նվաճելու աշխարհի հեղինակավոր օպերային թատրոնների բեմերն ու չի խլելու տարբեր ազգերի բարձրաճաշակ հանդիսատեսների հրաօներն ու եւս-երը:

Մի՞թե ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը պետական բարձր հովանագործությամբ ու աջակցությամբ չի կարողանալու հայ ժողովրդին նվիրել «Արշակ Բ» օպերայի կապիրի և պարտիտուրի, նաև՝ Տ. Զուխաճյանի երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակության փառահեղ հատորները:

Երիցս ո՞չ:

Եվ ես հուսով եմ, ավելին՝ վստահ, որ նշված երեք հարցերին էլ մոտ ազգայում կտանան իրենց դրական լուծումը:

<sup>14</sup> Соловцова Л., Джуゼппе Верди, Москва, 1986, стр. 169.

ԵՐԵՎԱՆԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՎՐԱՅԻ ԱՇԽԱՏԱ

# ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՎՐԱՅԻ ԱՇԽԱՏԱ  
ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԱՐԴԱԿ Բ<sup>1</sup>

ԹԱՏԵՐԱՆՈՒԱԳԻ Ի ԶՈՐՍ ՀԱՆԴԵՍՍ

ՔԵՐԹՈՒԱԾ

ԹՈՎՄԱՍ Ռ. ԹԷՐՁԵԱՆԻ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԶՈՒԽԱՃԵԱՆ ՏԻԳՐԱՆԱՅ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՔԻՐԻՇՃԵԱՆ ԵՎ. ԸՆԿ.  
1871

<sup>1</sup> Լիբրետոյի տիտղոսաթերթը՝ ըստ 1871թ. Կ. Պոլսում լույս տեսած լիբրետոյի մեքենագիր օրինակի, որը պահպում է ԳԱԹ, Տ. Զուխաճյանի դիվանում:

## ԱՐԴԱԿ Բ.<sup>2</sup>

Թատերան վագի ի չորս հանդես

### ԱՌՎԱԾՄԱՇՈՒՔ ՊԱԼՅԱՆ ՀԱԿՈԲ ՊԵՅ ՈՒՂԵՐՁ

Ի Պիմպլյան հովտեն  
Քորքն ինունք ի՝ հույլ՝  
Դափնեհյուս ոլորս  
Փունջըս գեղանշույլ  
Ածյալ բերեին  
Յափունս Պոսփորին:

Եվ նըլվագաձայնք  
Յայերս աստղագարդ  
Յունկն անդ Վեհազին  
Կրկնեին զըլվարթ.  
«Ո՛վ մեծ՝ զայս Քեզ ձոն  
Հըղե Ապուլոն»:

Ու՝ անդեն համախումբք  
Յագամանդյա տառ  
Դրոշմեին անջինջ  
Փառաց ի՝ տաճար.  
«Քե՛զ անմահություն՝  
Հակոբ Վեհազուն»:

Լիբրետոն շարադրված է ըստ Թ.Թերզյան, Երկեր, Երևան, «Նախի» հրատ. ԻՊՔի, էջ 177-222:

Առաջիկա թատերանվագիս նյութը Ոլոմպիադա մահն է, և  
բաց՝ ի սակավաթիվ քերթողական զարգերե՝ պատմական  
ավանդությանց հավատարիմ հետևություն մը: Երկրորդեն մինչեւ  
երրորդ Արարվածը երկու տարվան միջոց մը ենթադրելու է՝  
Փառանձեմա բնավորության փոփոխվիլը մեկնելու համար:

Խաղը բուն իսկ իտալերեն գրած ըլլալովս բավական  
դժվարավ եղած են թարգմանության այն տեղվանքն ուր հարկ  
էր երգին համար՝ իտալերեն ոտանավոր նույնչափ՝ ի Հայ  
փոխել: Արտասանելի (recitativo) տողերը արձակ թարգմանեցի:

Գալով խաղիս ընդհանուր հյուսվածքին՝ բանասիրաց  
ծանոթ է թե որչափ տաժանելի է երգի առնվելու թատերգություն  
մը գրելը: Նվագահանին քմաց և արհեստին համեմատ ամեն օր  
խաղին այս կամ այն մասը հոշոտելու՝ այլափոխելու՝ ավելցնելու  
կամ հապավելու է: Եթե այսչափ դժվարությանց մասամբ հաղթել  
կրցա՝ Մեծ. Հեքիմյան Սրապիոն էֆենտիին շնորհիվն է. իսկ  
մնացյալ թերությանց համար՝ ընթերցողաց ներողամտությունը  
կ'խնդրեմ:

## ԱՆՁԻՆՔ

ԱՐՇԱԿ. Արքա Հայոց

ՆԵՐՍԵՍ ՄԵԾՆ. Կաթողիկոս

ՈԼՈՄՊԻԱ. Դշտու Հայոց՝ դուստր Կայսեր Արևելից

ՓԱՌԱՆՁԵՄ. Իշխանուհի՝ ամուսին

ԳՆԵԼ. Իշխանին

ՎԱՂԻՆԱԿ. Հայոց Սպարապետ

ՎԱՐԴԱՆ. Թիկնապահ արքունի

ՊՈԼԻՔՍԵՆ. Նաժիշտ Ոլոմպիա

ՍՏՎԵՐ ՏԻՐԱՆԱ. ԹԱԳԱՎՈՐԻՆ և այլք

Քահանայք, ժողովուրդ, Զորական

Կ ա տ ա ր ի գ ո ր ծ ն յ Ա ր մ ա վ ի ր ք ա ղ ա ք ի ,

Հ ա յ ո ց 3 6 5 թ վ ի ն :

## ՀԱՆԴԵՍ Ա.

Դաշտավայր, յաջմե՝ ժայռք խթնատեսիլք և անտառախիտ. յահեկե՝ նշմարի ի՝ խորս լյառն Այրարատ։ Մուտք Արշակա ի՝ հաղթական կառու՝ բանակավ հառաջո և հետո. ընթանան ժողովուրդք ի՝ ձայն բերկրության։

## ՏԵՍԻԼ Ա.

ՊԱՐ. Հետո ԱՐՇԱԿ, ՎԱՐԴԱՆ և ԲԱՆԱԿՆ

## ՊԱՐ Ա.

Արդեն բանակը պատերազմեն կ'վերադառնա՞։

## ՊԱՐ Բ.

Բլրոց վրա կ'գոնչեն<sup>3</sup> շեփորք և Արշակա խիզախ դրոշը կ'ծփաւ։

## ՊԱՐ ԱՄԲՈՂՋ

Ի փայլականց այն սուսերին  
Կան թշնամիք ահաբեկ.  
Եվ երկինք հաշտ կը ծիծաղին  
Երբոր Արշակ դա ի՝ վեգ։

## ԿԱՆԱՅՔ

Անարատ լուսո  
Երկնավոր հոսանք՝  
Ո՞վ պերճ թագավոր  
Հյուսեն քեզ պըսակ։  
Հինդոսեն յեփրատ  
Դարձար նայեցար,  
Ահիվ խոռվեցավ  
Թշնամյաց ճամբար։

<sup>3</sup> Ըստ Կ. Պոլսում լույս տեսած լիբրետոյի՝ կ'գոնջեն։

## ԱՂՋԿՈՒՆՔ

Շա'նթ պատերազմաց՝  
 Կ'ոստնուս ամպերեղ.  
 Ավերք են ետիդ՝  
 Սարսափ առջևեղ:  
 Ցըցունքներդ՝ ի սփյուռ  
 Ահավո՞ր ճաճանչք՝  
 Յարյանց ասպարեղ  
 Ծըփան հողմատանջք:

## ՊԱՐ

Հաղթություն ժպտի  
 Որդվոցդ՝ Հայրենիք.  
 Թող նոր<sup>4</sup> բողբոջին  
 Ճակտուդ մրտենիք:  
 Ոտնակոխ ընկճած  
 ԶՊարսկին խրոխտություն  
 Դարձ առնու այսրեն  
 Արքայն վեհազուն:

## ՔԱՀԱՆԱՅՔ

Այսպես միշտ ցրվին  
 Խիզախ ամբարիշտք,  
 Այսպես ձեր սուսերք  
 Հաղթող ըլլան միշտ:  
 Չընդունի զանոնք  
 Գըթած մեկ երկիր.  
 Այլ շիրիմ բացվին  
 Ծովք անդնդալիր<sup>5</sup>:  
 (նույն ժամայն մտանե Արշակ)

## ՊԱՐ

Կեցցե՛ դյուցազն, կեցցե՛ արքա, ուխտ անքակտելի կ'երդ՝  
 նունք իրեն:

<sup>4</sup> Ըստ 1871թ. Կ. Պոլսում լույս տեսած լիբրետոյի՝ Հար:

<sup>5</sup> Ըստ 1871թ. Կ. Պոլսում լույս տեսած լիբրետոյի՝ անդնդալիտ:

## ԱՐԵԱԿ

Ո՞վ իմ հավատարիմք՝ շատ են<sup>6</sup> բերկրանք և նըլագք:

## ՎԱՐԴԱՆ

Զքեղ զվարթ ձայներով հաղթական կ'ողջունե ժողովուրդդ:

## ԱՐԵԱԿ

Իցի՛վ թե կարենար ընձեռել հոգվույս իր նախկին երջանիկ  
խաղաղությունը: Անծանոթ կոկիծ մը սիրտս կը հյուծե:

## ՊԱՐ

Ի բաց ՚ի բաց վշտերը որ մեր թագավորին սիրտը կը  
կեղեքն:

## ԱՐԵԱԿ

Քեզնով՝ ժողովուրդդ իմ՝ աղետքս կ'ամոքին:

Պարզե, հրեշտակ խաղաղության

Ոսկի թեկերդ ՚ի Հայաստան.

Իջի՛ր յերկնից, աղերսավոր

Կը պաղատի քեղ Արշակ:

Պատմուճանիդ ծալքեն սփռե

Սեր ՚ի Հոգիս, ծաղկունս ՚ի դաշտ.

Եվ փարատին ՚ի ժպիտ քո հաշտ

Պատերազմաց ուրվականք:

## ՊԱՐ

Իջի՛ր յերկնից, քեղի տաճար  
Հոգիքս ըլլան վշտահար:

## ԱՐԵԱԿ

Բայց ո՞վ է, որ դեպ ՚ի մեղ կը մատչի աղաչավոր կերպով՝  
և գեղեցկությամբ լուսահոս պարկեշտուչի արքայական աղջիկ  
մը որ սրտիս մրրկաց մեջ սեր կը ճառագայթե:

<sup>6</sup> Ըստ 1871թ. Կ. Պոլսում լույս տեսած լիբրետոյի՝ լավին:

## ՎԱՐԴԱՆ

Փառանձեմն է նա. քու հակառակորդ իշխանիդ խոսեցյալը:

## ԱՐՇԱԿ

Ի՞նչ կրնա խնդրել որ զլանամ այդչափ գեղեցկության:

## ՎԱՐԴԱՆ

Ներումն այն հանդուգն պատանվույն...

## ԱՐՇԱԿ

Գնելա ամուսի՞ն, ո՞հ, ո՞չ, այդ չ'ըլլար:

## ՏԵՍԻԼ Բ.

ՓԱՌԱՆՉԵՄ ԵՎ ՆՈՒՅՆՔ

## ՓԱՌԱՆՉԵՄ

Միրով խայտան ու բերկրանոք  
 Այսօր ամեն սիրտ՝ քաջդ Արշակ.  
 Եվ կ'ողջունե զքեզ Հայաստան  
 Վեհ ՚ի գահույս և ՚ի նիզակ,  
 Ի՞նչ կրնա կույս մ'ընծայաբեր  
 Զոնել քեզի սիրտ յերեր:

Փունջ խուռներամ խոնարհ ծաղկանց  
 Դողդոջ մատամբք քաղելով  
 Ոտիցդ առջև ահա սփռեմ  
 Լի տագնապով և հուսով.  
 Իցի՞վ զանոնք խոնարհեիր  
 Ընդունելու կարեկիր:

## ԱՐՇԱԿ

Ոչ մըտենյաց պըսսակքն ո՞վ կույս  
 Եվ ոչ երկրիս այլ պարզե  
 Ախորժ են ինձ, քան ըզծիծաղ  
 Այդ այտերուդ վարդագեղ.

Երկինք մըն են աչք քո ծովի  
Եվ հոն հոգիս կ'ընկղմի...  
Իմ դառնությանցս ու արյուններուս  
Մըրկակոծ ծովուն մեջ՝  
Հուսածիծաղ դու ծիածան  
Պարզե թևերդ ՚ի վայրէջ.  
Եվ փարատին սրտես ՚ի բաց  
Մութ հիշատակք իմ վշտաց:

### ՓԱՌԱՆՉԵՄ

Աղերսավոր կուգամ՝ արքա՝  
Գնելին համար:- Տուր ինձ դնա:

### ԱՐՇԱԿ

Զի՞նքն անվանել ժպրհիս.- վայրագ  
Զարթնուն ՚ի միտս իմ հիշատակք:

### ՓԱՌԱՆՉԵՄ

Հո՞ս՝ պլլըված քո ծնգերուն,  
Ո՞վ վեհ՝ խնդրեմ զիսաղաղություն:

### ԱՐՇԱԿ

Լըռե՛ հանդուգն հակառակորդիս շնորհը մի՛ խնդրեր:  
Զո՞ւր իրեն համար հայցես դըթություն...  
Իմ ու անոր մեջ վիճք կան և արյուն.  
Քեզի սիրոս ու բարձ նըվիրեցի ես.  
Եվ հափշտակեց ինքն ըզքեղ ձեռքես:

### ՓԱՌԱՆՉԵՄ

Բայց դու կ'ուրանա՞ս ըզսեր Ոլոմպիա  
Որ քեզի միայն ապաստանյալ կա:  
Քա՞վ յինեն ըլլալ դրուժան երդմնագանց.  
Ո՞չ ըզմահ կ'ընտրեմ փոխան վատության:

## ԱՐԵԱԿ

Խոնարհե՛ սիրտ գոռող, գողա.  
Դու կը խոսիս ընդ Արշակա:

## ՓԱՌԱՆՁԵՄ

Եթև պատկեր ես Աստուծո  
Անմեղության պաշտպան կեցիր.  
Հառաչանացս և արտասվաց  
Պատասխանե դու կարեկիր:  
Ծաղիկ ծլյալ յամայության  
Թե աննըվեր ձեռք խըզեն զայն՝  
Բընիկ կանթեն հեռու՝ մեկեն  
Կը թոռմի նա իրեն ցավեն:

## ԱՐԵԱԿ

Այդ դալկահար այտերն ՚ի վար  
Վազող արցունքն՝ ո՞վ նազելի՝  
Գըթութենե բուռըն սիրով  
Կ'արբեցընեն՝ կայրեն զհողի...  
Մի՛ զիս ձըգեր այլ ալեծուփի  
Ի մահարեր տարակուսանս.  
Դու ինքն ինձի շնորհե գթություն.  
Փառքս ալ և գահ քեզի ըլլան:

## ՓԱՌԱՆՁԵՄ

Աննվե՛ր:

## ԱՐԵԱԿ

Պիտի զա՞ս հետո:

## ՓԱՌԱՆՁԵՄ

Ո՞վ ահավոր կսկիծ. անսփոփի տանջանք: (Ելանեն):

## ՏԵՍԻԼ Գ.

ԳՆԵԼ, ապա ՎԱՂԻՆԱԿ

### ԳՆԵԼ

Կը տեսնեմ զքեզ վերջապես՝ երկիր քաջաց՝ ո՞վ հայրենիք,  
որուն համար կը հառաչեի և ուսկից վանեց զիս անողոք բռնավորի  
մը պատվերը։ Հոս վրեժն ու զայրույթը կ'առաջնորդեն զիս։

(Դեպ ՚ի ծայռը դառնալով սեահանդերձ դիմակը վար  
առած պատերազմող մը կը նշմարե):

Ո՞վ է այդ խորհրդավոր կերպով մոտեցողը. կասկածոտ՝  
աջը երախակալին կտանի:

ՎԱՂԻՆԱԿ (Մոտենալով)

Ո՞վ ես դու՝ քաջ։

### ԳՆԵԼ

Այնպիսի մեկն եմ որ հոս մահաբեր պիտի գամ։

ՎԱՂԻՆԱԿ

Բա՛ց դեմքդ։

### ԳՆԵԼ

Ի՞նչ ձայն է այդ... ո՞վ երկինք... վաղինա՞կ...

ՎԱՂԻՆԱԿ

Գնե՞լ՝ դու հոս...

### ԳՆԵԼ

Վրեժիսնդիր պիտի մտնեմ այդ ամբարշտին արքունյացը  
մեջ։ Ի՞նչ լուր։

ՎԱՂԻՆԱԿ

Աղետք և կորանք։

### ԳՆԵԼ

Նո՞ր եղեռն մ'ալ։ Ո՞չ խոսե։

## ՎԱՂԻՆԱԿ

Պարսից բանակն յարյան ննջեր  
 Հետըս դառնայր գունդն Հայոց  
 Երբ հեղակարծ մեզ Արշակեն  
 Հասավ հրաման մ' և անդեն՝  
 Ընդ անձանոթ ճամապարհ  
 Մեզմե առաջք մը կ'երթար:  
 Եվ անդը ՚ի գիրկ կույր խավարի  
 Եվ շեփորաց ՚ի գոնչյուն  
 Այն քաջազունք կը հարձակին  
 Ի թշնամյաց բազմություն.  
 Բայց՝ ո'վ երկինք՝ ի՞նչ տեսարան  
 Հայտնեց մեզ լույսն արեգական:

## ԳՆԵԼ

Ահ, այդ աղմուկըն գժնդակ  
 Զիս ալ խոցեց փախստյա.  
 Եվ փայլականց ՚ի լույս դողդոջ  
 Դիաթավալ ես տեսա  
 Կերկերածայն և դալկահար  
 Յարյան լողալ զքաջորյար.  
 Հոն՝ զոհ ինկած անհագ սըրո  
 Եվ հողացյալ ննջեին  
 Երամք կանանց և ծերունիք  
 Եվ երախայք մարց ՚ի ստին:  
 Վրեժինդրության ձայն ահեղ  
 Կը բարձրանար ամեն տեղ:

## ՎԱՂԻՆԱԿ

Անժույժ այլ ևս՝ և քստմնելով  
 Յայլչափ սաստիկ կորանաց  
 Անձնասպան սուր<sup>7</sup> մը խորհեցա  
 Մըխել իսկույն իմ լանջանց.  
 Բայց վրեժն, ու մեղմ այլ մեկ խորհուրդ  
 Զսպեց առ վայր մի զիմ զայրույթ:

<sup>7</sup> Ըստ Կ. Պոլսում լույս տեսած լիբրետոյի՝ սուսեր:

## ԳՆԵԼ

Նույն տեսչը երկուքս ալ կը վառե: Խողխողյալ հորս դիակը  
վրե՛ժ կ'աղաղակե, 'ի մարտ կը դրդե զիս: Վրե՛ժ կը կանչե  
ամուսնույս պատիվը զոր պղծեց բոնավորին վավաշոտ նայվածքը:  
Մա՛հ ամբարշտին:

## ՎԱՂԻՆԱԿ

Հո՛ս աջըդ:

## ԳՆԵԼ

Մեռնի՛:

## ՎԱՂԻՆԱԿ

Մեռնի՛ բոնավորը:

## ԳՆԵԼ և ՎԱՂԻՆԱԿ

Ողջամբ եկար: թող նենգավորը մեր ձեռոք կործանի  
Հստվերք նախնյաց՝ ըգձեզ կարդան  
թշվառացյալ հայրենիք.  
Ավա՛ղ յարյուն թաթավեցան  
Զեր արքունի ծիրանիք:  
Այսչափ արցունք՝ այսչափ մահեր  
Այսչափ արյուն և ոճիրք  
Անվրեմնդիր չեն մընար՝ ոչ,  
թե հաշտ ժպտիս մեզ՝ երկինք:  
Միանանք,  
թող վըտանդ  
Մեր եռանդն  
Արծարծե:  
Լըռություն  
Ու արություն.  
Հաղթություն  
Մեր ձեռքն է:

## ՀԱՆԴԵՍ Բ.

(Արահ յարքունիս. Անդրի Տիրանա)

ՏԵՍԻԼ Ա.

ՆԵՐՍԵՍ և ՓԱՌԱՆՉԵՄ

ՆԵՐՍԵՍ

Պարծանք Հայաստանի՝ ի՞նչպիսի ամպ մը կպատի դքեզ  
ի՞նչպիսի տրիտուր ընդունեցան արժանիքդ:

ՓԱՌԱՆՉԵՄ

Ո՞վ Հայր՝ թերես Տիրանա վրա կլոսուիս:

ՆԵՐՍԵՍ

Ա, յո՛:

ՓԱՌԱՆՉԵՄ

Ո՞չ, ի՞նչ եղավ. ըսի:

ՆԵՐՍԵՍ

Լո՛ւր. — Հայրն Արշակա յանարդ շղթաներ  
 Ահավոր բանտի մ'ի խոր կը հեծեր:  
 Թշվա՛ռ կույր. 'ի մթան ամբառնալով ձեռու  
 Յուր որդվույն 'ի գլուխ կը կարդար անեծու:  
 Երբեմն ցնորյալ չարատանջ ցավեն  
 Կ'ուզեր ՚ի սուսեր յուր մխվիլ անդեն,  
 Երբեմն իրեն գահ կ'երեար բանտն այն  
 Ուր իշխել կարծեր նա միահեծան:  
 Խելացնոր իշխանն երբեմն ամոքած  
 «Գլթություն»՝ գոչեր անկյալ ձեռնամած՝  
 Տարաբաղդ կույրին ո՛չ ո՞վ պիտի տա  
 Կաթիլ մը լուսո զոր ՚ի զուր մուրա...  
 Այսպես կաղաչեր աղի արտասվոք.

Երբ ըստվերաց մեջ անձայն՝ անողոք՝  
Դաշույն յաջ՝ ծիծաղ՝ ՚ի շրթունս վաղեց  
Դահիճ մ՝ ու սրտին երկաթը մըխեց:

### ՓԱՌԱՆՁԵՄ

Ո՞վ ահանգնալուր վեպ...

### ՆԵՐՍԵՍ

Այն անօրենն  
Որ առ դըռունս շիրմին խողխողեց ըզծերն  
Եվ խըզեց ըզլույսն ըզկյանս և ըզգահ՝  
Արշակն է, որդին, թագավորն է...

### ՓԱՌԱՆՁԵՄ

ԱՇ.

Ի՞նչ աղմուկ կը լսեմ:

### ՆԵՐՍԵՍ

Այս լուրը արհավըռք և մոլեգնությամբ լըցուց համայն  
արքունիքը:

### ՏԵՍԻԼ Բ.

ՊԱՐ ԵՎ ՆՈՒՅՆՔ

ՊԱՐ

Բարե՛. ՚ի սուզ կան համակյալ արքունիք,  
Դարանակալ հսկեն չորս դին արհավիրք.  
Իբրև ըզնավ մըրկավար յ Օվկիան  
Ի դող ու ՚ի վիշտս ալեկոծի Հայաստան:  
(Ամենքն ծնրադիր յաղոթս)

### ՆԵՐՍԵՍ

Դադրեցուր՝ ո՞վ երկնից թագավոր,  
Դադրեցուր քու ցասումնըդ հըզոր:  
Դու գըթած ես՝ Բարձրյալ. կարեվեր  
Պաղատին անշըռնիջ հոգիք մեր:

## ՊԱՐ

Դու միայն ես մեր հույս. դու միայն  
կրնաս զցավըս փոխել բերկոռության:

## ՓԱՌԱՆՉԵՄ

Քաղցր անուրջք՝ ցրկեցեք անդր՝ ի բաց  
եվ դու սիրտ իմ՝ թշվառ սիրտ իմ՝ լաց:  
(Ելանեն)

## ՏԵՍԻԼ Գ.

## ԳՆԵԼ և ՓԱՌԱՆՉԵՄ

(Արտասվելով Հեցյալ սյան ուրեք)

## ԳՆԵԼ

Ահա անօրինին բույնը. ահա այն խորանը ուր պիտի  
զինվի վրիժուցս նվիրական անգամը: Ի զուր մատնեց զի՞ս  
ուներիմ բաղդը: Իր դահճաց հետքերը կոխելով հոս մտա:  
Բայց ի՞նչ է այս քաղցր ու մահաղույժ տեսիլը որ աչքի՞ս  
կը դարնե. զո՞վ կը տեսնեմ:

## ՓԱՌԱՆՉԵՄ

Դու հո՞ս գնել՝ իմ ամուսինս...

## ԳՆԵԼ

Դո՞ւ ալ՝ ո՞վ կին:

## ՓԱՌԱՆՉԵՄ

Քեզի համար ներումն խնդրելու եկա:

## ԳՆԵԼ

Հո՞ս ինձի ներո՞ւմն... ո՞վ ՚ի դերե ելած հույսերս...

## ՓԱՌԱՆՁԵՄ

Ի՞նչ անգութ կասկածով  
Տագնապիս՝ ո՞վ դնել.  
Տառապյալ հոգվույս մեջ  
Կ'ուզե՞ս սուր մը միւել:

## ԳՆԵԼ

Երբ որ մըրիկն յօտար երկնից անապատ  
Գոռայր ահեղ՝ ի ժայռս հեցյալ զիմ ճակատ  
Հառաչելով կը դառնայի ես յայն կողմ  
Ուր կարծեի կար սիրտ մը դեռ զիս սիրող:

## ՓԱՌԱՆՁԵՄ

Ի ծաղկի անդ տիոց  
Քույդ էք՝ դնել՝ իմ հոգիս.  
Անոր հուսկ հառաչանքն  
Դու միայն ընդունիս:

## ԳՆԵԼ

Քաղցրակարկաչ ալյաց՝ հողմույն մըրկավար  
Եվ թռչնեկին որ ամպերեն սըլանար  
Հարցընեի թե լուր մը բնավ կա՞ր ինծի  
Թե մոռցըված էի մտերմաց ՚ի սրտի:

## ՓԱՌԱՆՁԵՄ

Փախչինք՝ դնել՝ հեռո՛ւ փախչինք.  
Քուկդ է միայն Փառանձեմ.  
Թե ամեն հույս կորսնցուցի՝  
Գեթ նորեն սերըդ գտնեմ:

## ԳՆԵԼ

Կ'ուզե՞ս նորեն հետըս ճաշակել  
Ջաքսորանաց դառըն հաց  
Թե բռնավորըն ճողոպրի  
Ցիմ վրեմիսնդիր դարանաց:

ՓԱՌԱՆԶԵՄ

Դաշույնով աջըս կը զինեմ,  
Կ'այրացընե զիս քո սեր:

ԳՆԵԼ

Թե հալածե՞ զիս թշնամին  
Եվ ես իյնամ կարեվեր:

ՓԱՌԱՆԶԵՄ

Հանջքըս վահան կ'ըլլան քեզի  
Կամ կը մեռնիմ ոտքիդ դեմ:

ԳՆԵԼ

Եկ. գրկվինք՝ կին. իմս ես դու  
Եվ հիմա զքեզ կը գտնեմ:

ՓԱՌԱՆԶԵՄ

Երջանիկ եմ... բայց ո՞վ է այդ եկողը:

ԳՆԵԼ

Պատգամավորը մը:

ՓԱՌԱՆԶԵՄ

Ինչո՞ւ զինյալ:

ԳՆԵԼ

Թագավորեն է:

ՏԵՍԻԼ Դ.

ՎԱՐԴԱՆ, ԴԱՀԻՃՔ և ՆՈՒՅՆՔ

ՎԱՐԴԱՆ

Ողջո՞ւյն բամբշանդ. թագավոր կը պատվիրե քեզ հետս գալ:

ՓԱՌԱՆԶԵՄ

Երկինք:

ԳՆԵԼ (Վարդանանշ)

Ի՞նչ կը խնդրես:

ՎԱՐԴԱՆ

Ո՞վ ես դու որ կը համարձակիս...

ԳՆԵԼ (Փառանձեմա)

Կի՞ն դու...

ՓԱՌԱՆԶԵՄ

Հետդ եմ:

ԳՆԵԼ (Վարդանանշ)

Կ'արհամարհեմ ուրեմն...

ՎԱՐԴԱՆ

Ո՞վ հանդգնությանդ...

ԳՆԵԼ

Սահման լեզուդ՝ բոթարեր պատգամավոր:

ՓԱՌԱՆԶԵՄ (Գնելան)

Ո՛չ, լուե:

ՎԱՐԴԱՆ

Եկուր:

ԳՆԵԼ

Ա՛հ ժպիլհ, պիտի չերթա:

ՓԱՌԱՆԶԵՄ

Երկինք:

ՎԱՐԴԱՆ

Ո՞վ է այդ: (Զորք հառաջանան):

ԳՆԵԼ

իրեն մոտենալու համար դիակիս վրայեն անցնելու է:

ՎԱՐԴԱՆ

ՏԵՂԻՇ' ՄՈՒՐ:

ԳՆԵԼ

ԵՐԵԿՔ:

ՓԱՌԱՆԶԵՄ

ԳԹՈՒԹՅՈ՛Ն:

ԳՆԵԼ (ՅԵՐԿՈՒՍԻ ՎԻՐԱՊՈՐՅԱԼ)

Մատնվեցա:

ՎԱՐԴԱՆ

Բաժանվին իրարմե:

ԳՆԵԼ

ՀԱՄԲՈ՛ՆՋՐ մը...

ՓԱՌԱՆԶԵՄ

ԹԵՐԿՇ' և վերջինը: (ԵԼԱՆԵՆ)

ՏԵՍԻԼ Ե.

ՈԼՈՄՊԻԱ, ՀԵՍՈՊ ՎԱՂԻՆԱԿ

ՈԼՈՄՊԻԱ

Զինուց շշուկ մը և օգնություն կանչելու աղաղակներ՝  
ականջիս զարկին. տագնապյալ ոդվով անցա արքունի սյամերեն, ի  
հոս եկա...

ՎԱՂԻՆԱԿ (Մանելով)

Առանձին է:

## ՈԼՈՄՊԻԱ

Վաղինակ... Հոս ամեն մարդ սրտիս մեջ կասկածներ կը  
հարուցանե:

## ՎԱՂԻՆԱԿ

Տիկին՝ հավատարիմ անձ մը՝ ոչ թե շատերուն պես  
վարձկան և անագորույն՝ աչքիդ առջե կը տեսնես:

## ՈԼՈՄՊԻԱ

Ի՞նչ կըսես:

## ՎԱՂԻՆԱԿ

Անկեղծ են շրթունքս. զքեզ փրկել կ'ուզեմ՝ Ոլոմպիա:

## ՈԼՈՄՊԻԱ

Ո՞ր վտանգք ինձի դարանակալ կ'սպասեն. ի՞նչ ահավոր  
հակատագիր կը հալածե զիս. ո՞վ կ'դրդե զքեզ:

## ՎԱՂԻՆԱԿ

Սեր հայրենյաց... և...

## ՈԼՈՄՊԻԱ

Խոսե՛:

## ՎԱՂԻՆԱԿ

Սե՛ր...

## ՈԼՈՄՊԻԱ

Ի՞նչ կ'սեմ:

## ՎԱՂԻՆԱԿ

Լո՛ր և դողա. դժնյա դիվե մը դրդյալ  
Հոս խողխողել կ'ուզե Արշակ զՈլոմպիա.  
Եվ Փառանձեմ՝ առ ՚ի տիրել անվեհեր՝

Կ'ուղե սպաննել ըզմիամիտ քո որդի:  
Ըղքեղ փրկել և զհայրենիս երդվընցա՝  
Բայց գու, աղե՛, փութա՛՝ փախչինք՝ Ոլոմպիա:

### ՈԼՈՄՊԻԱ

Եկ ի՞նչ է պահանջածդ:

### ՎԱՂԻՆԱԿ

Աստված մը կ'գրդե զիս... Աերը...  
Աղջիկ էիր գեռ՝ և մատաղ  
Յայտըս քո վարդք ծըլեին  
Երբ Պոսփորու՚ի ծովափունս  
Տեսա զպատկերդ երկնային:  
Բայց ծիրանիք կ'պճնեին  
Ըղքեղ ո՞վ կույս նազելի.  
Մինչդեռ՝ ավա՛ղ զուրկ՚ի հուսո՛  
Ես նետահար մեռնեի:  
Այլ զի այսօր պատեհ է ինձ  
Որ քեզ պաշտպան խիզախիմ,  
Թե չըկըրցա քեզմով ապրիլ՝  
Քեզի համար զեթ մեռնիմ:

### ՈԼՈՄՊԻԱ

Ինչպիսի՛ լսոսքեր... կ'սոսկամ...

### ՎԱՂԻՆԱԿ

Նախատե՛՝ անգոսնե՛՝ զիս, բայց գեթ զավակդ Հիշե՛:

### ՈԼՈՄՊԻԱ

Զավա՛կս...

### ՎԱՂԻՆԱԿ

Կ'ուղե՞ս փրկել:

### ՈԼՈՄՊԻԱ

Ա՛հ, զավակս ազատե... և հետո... սիրոս անձկութենի  
կ'բեկանի:

## ՎԱՂԻՆԱԿ

Տեղի տուր՝ Ոլոմալիա՝ տեղի տուր:

## ՈԼՈՄՊԻԱ

Ո՛հ լոե՛... ի՞նչ շռինդ է այս:

## ՎԱՂԻՆԱԿ

Իմ մարդիկու են:

## ՈԼՈՄՊԻԱ

Ի՞նչ մըթարձակ շողյուն զինուց:

ՆԱԽԱՐԱՐՔ (Արտաքո)

Մութ ամպերուն ծոցեն հանկարծ  
Փայլակն ոստնու բոցավիյուռ.  
Այսպես ՚ի գունդըս դյուցազանց  
Շողան սուսերք վրեժինդիր:  
Հզկայ երկինս ծածկել ուզեց  
Արշակ ՚ի մութ վերարկուն՝  
Այլ փոթորկաց մեջեն ժպտի  
Ազատության զըվարթուն:

## ՎԱՂԻՆԱԿ

Անոնք են. ահա հասան:

## ՈԼՈՄՊԻԱ

Երկինք...

ՆԱԽԱՐԱՐՔ (Մտանելով)

Փախչինք. գիշերվան մութ թևերը հովանավորեն զմեզ:

## ՏԵՍԻԼ Զ.

ԱՐԴԱԿ, ՆՈՒՅՆՔ, Հետո ՆԵՐՍԵՍ

### ԱՐԴԱԿ

Դանդաղեցաք անօրեն դավաճանություններն ՚ի գլուխ  
հանելու. վրեժինդիր կ'հսկե Արշակ: Ուխտադրութ կին...

ՆԱԽԱՐԱՐՔ (Սուսերամերկ)

ՄԵռի՛ր՝ բռնավոր:

### ՈԼՈՄՊԻԱ

Աստված իմ... (Պաշտպանելով զԱրշակ):

### ՆԵՐՍԵՍ

Կեցե՛ք քաջեր. երկինք պատուհասակոծ կ'ընեն զինքը:՝  
Եցուցիր չափը՝ արքա, և երկինից սրտմտությունը գլխուղ վրա կը  
կուտակի:

### ԱՐԴԱԿ

Ծեր դու՝ նոր արյուն թափել մի՛ տար ինձի:

### ՆԵՐՍԵՍ

Պիտի խոսիմ, լսե՛ ինձ՝ Արշակ: Աստված շրթանց՝  
կ'ազդե:

Լիբանանու մայրյաց նըման  
Խիզախն ՚ի վեր բարձրացավ,  
Ուղեշքն յերկինս արձակեին  
Մըրիկներու դիմագրավ:  
Անցա. հոխորտ կ'արձանանար.  
Վերադարձա, ալ չըկար:

Այսպէս հանդուգն ըգհոլաթես,  
Պարզես Արշակ յաստեղս անդ.  
Մըրույդ շողեն զարհուրելով  
Փախչին դնդերն անվըկանդ.

Բայց մահացու ես, ոտքիդ տակ  
Շիրիմ մը կա, վերն՝ աստված:

## ԱՐԴԱԿ

Զսպե շրթունքդ անխորհուրդ,  
Գընա՛ Աստուծույդ պաղատե  
Որ այս դրուժան մատնիչներն  
Գա իմ ձեռքես ազատե:  
Բացվին դըրունք՝ թիկնապահք.  
Տես և դողա՛:  
(Կը բացվին դոները. Գնել վիրավոր՝ ի մահ Փառանձեմա  
բաղկաց մեջն է):

## ՏԵՍԻԼ Է.

ԳՆԵԼ, ՓԱՌԱՆՁԵՄ և ՆՈՒՅՆՔ

## ՓԱՌԱՆՁԵՄ

Օգնությո՛ւն, օգնությո՛ւն... վիրավոր է.  
Վաղեցեք, վաղեցեք, կը մեռնի...  
Արտասվոք դուրս թափվե՝ թշվա՛ռ սիրտ իմ՝  
Այս աշխարհս անապատ մ' է քեզի:  
Տյարք իմ՝ ահ, կը մոռնամ հոս թե կին մ'եմ.  
Եկ բամբիշն յարենե արքունի.  
Արտասվոք ձեր ոտից կը փարիմ ես՝  
Բուժեցե՛ք այդ վերքերն ահոելի:

## ԳՆԵԼ

Լոե՝ երակացս մեջ՝ ո՛վ կին՝ գերբնական ավյուն մը կը  
վազե դժոխարձակ բոցերու նման՝ հրացայտ կայծականց պես...  
սիրտս կը բորբոքի: Հանդերձելույն ջահը աչքերս կը լուսավորե.  
լուն՝ Արշակ:

Դու որ՝ արյան մեջ թաթխեցիր  
Ջզահ մեծապանձ Հայաստանյայց,  
Եկ զբնագավառն իմ հայրենի  
Նիղակիդ տակ թողեր ընկճած,  
Դու հայրասպան որ կը բազմիս

Դիականց՝ ի կույտս արյունոռող՝  
 իցի՝ զ դու օր մը կըրեիր  
 Յավս իմ ցավոց պես անողոք...  
 Եվ մըթության մեջ տեսնեիր  
 Քու զոհերուդ ուրփականներն  
 Որ արյունոտ եղունգներով  
 Կը կեղեքեն սիրտդ. աննըլեր.  
 Թափած արյանդ ամեն մեկ շիթ  
 Կայծակ դառնա, և բարկաճայթ  
 Գանկիդ ՚ի խորըս վշրելով  
 Դոնչեն ունկանդ մեջ՝ անիծյալ...

Հեծեծելով յօտար շրթայս՝  
 Եվ ոճիրներդ քեզ լոկ ընկեր՝  
 Կորաքամակ հացըդ մուրաս  
 Եվ ընդունիս տեղն անեծքներ,  
 Եվ եթե փառք շիրմիդ վըրա  
 Սփուե ճաճանչս առատաքուին՝  
 Ոչ ան լուսով թող նշմարվին  
 Նախատանացդ ամպ թույրաթուխ:

**ԱՐՇԱԿ (Ա.Հաբեկ)**  
**Ո՞վ արհավիրք:**

**ԱՄԵՆՔ**  
**Մահագույժժ օր:**

**ԱՐՇԱԿ (Ցուրյալ)**

Ինչո՞ւ՝ ի մթան՝ ով շիրմաց ճիվաղ  
 Արյան տառերով անունս կ'զըրես.  
 Վրեմինդիր սուսերդ կը փայլի՝ ավա՛ղ  
 Զերդ չարագույժ աստղ յերկնից ասպարեզ:

**ՆԵՐՍԵՍ**

Ո՞վ տեր յերջանկաց անդ ըընակարան  
 Ընդունե՛ զհոգի թշվառ պատանվույն.  
 Թող չիջնա կայծակ քո սրտմըտության  
 Հանիրավության այս ահեղ գահուն:

## ԳՆԵԼ

Այդ տրտում արցունքի՝ ո՛վ հոգյակ՝ սրբե.  
թող գլխույս հանգչիլ քու ծոցիդ վըրա.  
թող քու մեկ ժպիտդ աչքես փարատե  
ջահեղ քնույն սոսկումն ու զերկինս բանա:

## ՓԱՌԱՆԶԵՄ

Մի՛ զիս առանձին մի՛ ձըդեր՝ գընել.  
Անապատ մ'են ինձ առանց քեղի կյանք.  
թե մեզ հարսնապսակ վարդերով հյուսել  
Զկրցանք՝ նոճիք ըլլան մեր պսակ:

## ՎԵՑԱՆՎԱԳ

ԳՆԵԼ, ՈԼՈՄՊԻԱ, ՓԱՌԱՆԶԵՄ, ԱՐՇԱԿ, ՆԵՐՍԵՍ

Սե՛ր անգութ՝ անագորույն խիղճ  
Այն սրտին մեջ կ'ոգորին  
Այդ շիրմեն՝ որ կ'կորզե զ Գնել  
Նոր աղետք՝ ի դուրս ժայթքին:

## ՊԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ

Ի՞նչ արհավրոք կը լնում...  
Ահա գալուկ մահաքեր  
Կը տարածվի դեմքին վրա  
Ուր մահն իշխան է բազմեր...

## ԳՆԵԼ

Կը նվաղիմ ես... ո՛վ հըճվանք  
Հող՝ սրտիդ վրա... հող մեռնիմ...

## ՓԱՌԱՆԶԵՄ

Կը նվաղիմ ես... ո՛վ դժնդակ տադնապ...

## ԱՐՇԱԿ և ՆԵՐՍԵՍ

Կը մեռնի... կը մեռնի...

## ԱՄԵՆՔ

Օր ցավոց...

## ՀԱՆԴԵՍ Գ.

(Հետ երկու ամաց)  
Սրահ արքունի

ՏԵՍԻԼ Ա.

ԱՐՇԱԿ և ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆ

Հանդարտե՞՝ պերճդ Արշակ: Այն բարձր աշտարակեն ուզ  
աքսորյալ է՝ թող Ոլոմպիա տաժանելի խորհրդներով չտագնապե  
թագավորիս խաղաղությունը:

ԱՐՇԱԿ

Դու ճակտիս վրա ոսկենչույլ թագի մը գոհարները միայն  
կը նշմարես. բայց չես նշմարեր հոն արյան կաթիլներուն  
փայլը արծարծյալ հրո կայծերուն պես:

Այն օրվենե յորում անգութ

Ոլոմպիո սիրտն արյունեցի՝

Եվ Փառանձեմը կորզելու

Գնելա զդիակ կոխսկուտեցի,

Աչքիս դիմաց անդնդախոր

Բացվին վիրապք ուսկից ՚ի զուր

Փախչիմ ահիվ զի նորանոր

Փեռեկին վիհար քայլերուս շուրջ:

ՎԱՐԴԱՆ

Հեռացուր մտքեղ՝ արքա՝ այդ մահահամբույր հիշատակները:

ԱՐՇԱԿ

Ոլոմպիա՝... ո՛վ խայթ խղճիս... ի՞նչ հույս կը մնա քեզմե  
զրկված սրտիս:

Ով անույշ աղջիկ

իմ սեր առաջին՝

Քեզի խորհրդն ալ

Լույս կուտա սրտին:  
 Եթե թևասփյուռ  
     Հրեշտակ սիրասուն՝  
     Հայցես իմ վըրաս  
     Զերկնից գըթություն,  
 Գուցե յոսկեշող  
     Սիրույդ քո փետուրս  
     Բարձրանա հոգիս  
     Յաշխարհս ընդ մաքուրս.  
 Եկ՚ ի պարավանդ  
     Սուրբ գրկաց քույին՝  
     Կորուսյալ երկինք  
     Նորեն ինձ բացվին:  
 Բայց Փառանձեմը կը տեսնեմ ո՞վ կոկիծ, դնա՛  
 հավատարիմդ իմ՝ մինակ թող զիս: (Ելանե Վարդան):

### ՏԵՍԻԼ Բ.

#### ՓԱՌԱՆՁԵՄ և ԱՐՇԱԿ

#### ՓԱՌԱՆՁԵՄ

Լսեցի ամեն բան՝ մի՛ խռովվիր, թող աչքերդ սիրուդ՝  
 չմատնեն. Հավատարիմ սիրտդ կ'ուզե վերադառնալ Ոլոմպիադա-  
 իր առաջին սիրույն:

#### ԱՐՇԱԿ

Այո՛, անմեղի մը տանջանքը տեսնելով՝ կը խոցոտի հոգիս,  
 կ'զղա և կուզե ողոքել երկնից ցասումը:

#### ՓԱՌԱՆՁԵՄ

Հապա՛ քու երդումդ:

#### ԱՐՇԱԿ

Ամեն բան կմոռնամ:

## ՓԱՌԱՆԶԵՄ (Կեղծ անուշությամբ)

Կ'մոռնա՞ս մինչև անդամ այն գաղտնիքները դո՞ւ  
հաճույքից արբեցության մեջ սիրուհիույդ վստահեցար...

## ԱՐԴԱԿ

Վախցի՛ր զայրույթես՝ ո՛վ կին անխորհուրդ:

## ՓԱՌԱՆԶԵՄ

Սիրո իրավունքը կրնաս խորտակել, բայց ոճիրներն զմեկ  
դավակից ըրին. այդ հանգույցը չփշըիր:

## ԱՐԴԱԿ

Այդչափ անգութ մ'ըլլար Փառանձեմ, մ'արհամարհել  
Արշակա արտասուքը, ոչ միայն ինձի զթաս՝ այլ և քեզի...

## ՓԱՌԱՆԶԵՄ

Ոչ, ոչ, դու պարկեցտության կողցյալ կոկոնները այտերես  
խղեցիր, հիմա նվաստ եմ՝ որչափ զիս նվաստացուցիր, և  
անարգությունս քեզի վարձք կը բերեմ:

## ԱՐԴԱԿ

Կ'ուզե՞ս փեռեկյալ վհի մեջ...

## ՓԱՌԱՆԶԵՄ

Ե՛ս ալ հոն պիտի գահավիժիմ:

## ԱՐԴԱԿ

Խնդրե՛ և տամ ուզածդդ:

## ՓԱՌԱՆԶԵՄ

Այս:

## ԱՐԴԱԿ

Երդվյալ ՚ի պատիվ Արշակա:

## ՓԱՌԱՆՁԵՄ

Տուր ինծի՝ ո՞վ իշխան  
 Այն ժամերն երջանիկ  
 Երբ յափունս Եփրատա  
 Նստելով լուռ մնջիկ  
 Զեռն 'ի ծնոտ սիրտ ՚ի թունտ  
 Խորհեի Գնելա:

Արքա՝ զինքն արթնցուր  
 Իր տըխուր անկողնեն.  
 Այդ սիրած ծոցիս մեջ  
 Արծարծե զշունչն անդրեն,  
 Իր աչկունք վերստին  
 Մեյ մ'ինծի ժպտին...

## ԱՐՇԱԿ

Կուլա՞ս ո՞վ իմս նազելի...

## ՓԱՌԱՆՁԵՄ

Հուսահատ ցավեր՝ վրիժուց անհագ տռփանք մը  
 արտասվացս միակերպ զրդիո կ'ըլլան, և պիտի չդադրին մինչե  
 անոնց զինը չտուժվի ինծի:

## ԱՐՇԱԿ

Կ'դողամ այդ սպառնալից խոսքերեն... գլթություն...

## ՓԱՌԱՆՁԵՄ

Այն զին եղերքը զոր դու ինքնին բացիր ՚ի կորուստ  
 Հասարակաց ո՞վ Արշակ՝ կ'վարանի՞ս ինծի հետելու և սիրտ ՚ի  
 յերեր կ'աղաչես...

## ԱՐՇԱԿ

Հայտնի խոսե՛, ի՞նչ է խնդրածդ:

## ՓԱՌԱՆՁԵՄ

Արյուն... Ես Ոլոմպիո և իր զավկին անկենդան մարմնոց  
 Վրա միայն պիտի կարենամ ջնջել անհագ բբացս արտասուքը:

## ԱՐԴԱԿ

Կը ցնորիս դու:

## ՓԱՌԱՆՁԵՄ

Պիտի տեսնես:

## ԱՐԴԱԿ

Ո՞չ մեկդի թող կոկիծն ու զայրույթը, դոնե վրիժուց ժամել  
Հապաղեց:

## ՓԱՌԱՆՁԵՄ

Կեղծյոք մի՛ խարվիր, արդեն ամեն բան պատրաստէ:  
(Ելանե):

## ԱՐԴԱԿ

Ի՞նչ արհավրոք կ'լնում. (Ելանե):

## ՏԵՍԻԼ Գ.

(Անապատ տեղի. – Աշտարակ՝ յորում  
Ոլոմպիա նաժշտոքն հանդերձ)

ՎԱՂԻՆԱԿ և ՊԱՐ ՆԱԽԱՐԱՐԱՑ

## ՎԱՂԻՆԱԿ

Այս՝ կ'մեկնիմ՝ բարեկամք, և քիչ ժամանակե պիտի վերա  
դառնամ Հայոց արիագունդ քաջերով. կը տեսնենք այն ատեն թի  
ի՞նչ պիտի ըլլա բռնավորին անդամ և ստահակ ժաղհությունը.  
բայց գաղտնի արցունքները ձեր բբերը կ'մթնցնեն: Ի՞նչ նո՞  
վտանգ մոտալուտ կ'սպառնա մեղի:

## ՊԱՐ

Գնա, մի՛ խուզարկեր:

## ՎԱՂԻՆԱԿ

Կ'երդվնցնեմ զձեզ:

## ՊԱՐ

Աղետալի վեպ որ հոգին կ'զարհուրեցնե:  
 Սփռած էր գիշեր ըդթևսն ահարկու  
     Ոչ ձայն մը յերկրի, ոչ աստղ ՚ի յերկին.  
     Լոկ ահագնաթունդ գոռայր շառաչմամբ  
         Կայծակն յանապատս և հողմն ՚ի ծովին  
 Յայն պահ ճեպընթաց՝ ստվեր հերարձակ՝  
     Հառաջ կ'մատչի... բացվին դրունք բանտին.  
     Կ'մտնե. հանկարծ ճիչ մը սայրասուր  
     Լսելի կ'ըլլա... ու ամեն ձայնք դադրին:

## ՎԱՂԻՆԱԿ

Ոհ ի՞նչ քստմնելի ահեղ կասկածներ  
 Փըշերով խայթեն զհոգիս կարեվեր...

## ՊԱՐ

Արյունաթաթավ դաշույն յաջ ՚ի սյամս  
     Արձանացյալ կա Արշակա սիրուհին.  
     Դողա՝ հառաջե՝ սարսոփ՝ նահանջե,  
         Կ'շտապե քայլերն նայելով չորս դին:  
 Իսկ Ոլոմպիադա որդվոյն վրա ինկած  
     Կը գրկե զանշունչ դին՝ տարաբա՛ղդ մայր՝  
     Եվ ծաղիկներով պլսակ մը հյուսած  
         Կ'օրորե զնա քաղցր երգովք տրտմաբար...

## ՎԱՂԻՆԱԿ

Ո՞վ վայրագ մոլեգնություն, ահեղ ոճիր զոր արյամբ  
 Քավելու է:

## ՊԱՐ

Զե՞ս լսեր երդ մը...

## ՎԱՂԻՆԱԿ

Իր ձայնը կթվի ինձ... գուցե երգովք վշտերն ամոքին:

## ՈԼՈՄՊԻԱ (Աշտարակեն)

Տիրամա՛յը՝ գըլթություն.  
Տես աղե զվիշտս անհուն  
Տարաբաղդ թագուհվույն  
Որ քեզ պաղատի:

## ՊԱՐ ՆԱԺՇՏԱՑ

Լուր իրեն հայցվածոց  
Երկնից թագուհի:

## ՈԼՈՄՊԻԱ

ՈՌՀՅԱՎԻ ցավ քաշեցի.  
Ոչ ինչեր կորուսի...  
Աչքիս դեմ՝ զիմ որդի  
Դանակն հոշոտեց...  
Յանջրդի մեկ բռլեր  
Քարե բարձ մ'եմ փորեր  
Եվ հոն եմ հանգուցեր  
Զայն նազելի գլուխ:  
Եվ ոչ լալ իսկ կրնամ  
Յիմ որդվույս գերեզման...  
Զեռնամած ես կ'իյնամ  
Ոտքիդ՝ Տիրամայր...

## ՊԱՐ ՆԱԺՇՏԱՑ

Լուր իրեն հայցվածոց՝  
ՈՌՎ մայր վշտահար...

## ՎԱՂԻՆԱԿ

Մի՛ լար մի՛՝ սեր ոգվույս,  
Միակ գանձդ իմ և հույս.  
Վըեժիսնդիր իմ սրույս  
Թշնամիդ զոհվի:

## ՊԱՐ ՆԱԺՇՏԱՑ

Զքեզ փրկել կամ մեռնիլ  
կ'երդնունք՝ թագուհի:

## ՏԵՍԻԼ Դ.

(Անապատ անջրդի տեղի. ցիր և ցան գերեղմանք  
ի խոր դղյակ կիսակործան. ~ մըրիկ.~)

ԱՐԵԱԿ, ապա ՓԱՌԱՆՁԵՄ. ՊԱՐ ՍՏՎԵՐԱՅ

## ՊԱՐ ՍՏՈՐԵՐԿՐՅԱԾ

Դողա՛ նօրեն. ~ դողացե՛ք՝ վատք  
Զի մոտալուտ է ժամդ հետին:

## ԱՐԵԱԿ

Ի՞նչ կը խնդրես ինձմե՛ ստվեր անբարբառ. մենավոր  
սրաշներուս մեջ մտար և զիս զարհուրած քնես սթափելով՝ սրտիս  
ահավոր վերքերը մատնանիշ կ'ընես և կ'դողաս. անպաշտպան են  
լանջքս հոն հագեցուր կատաղությունդ:

## ՓԱՌԱՆՁԵՄ

Հո՞ս է Արշակ. ո՞հ թող չգիտնա իր որդվույն ահավոր  
ճակատագիրը... ո՞վ խեղճ...

## ԱՐԵԱԿ

Ի՞նչ կ'խնդրես Փառանձեմ. դու՛ ալ գիշերային դալկահար  
կ'շրջիս այս մահագույժ տեղվանքը...

## ՓԱՌԱՆՁԵՄ

Սերը դրդեց զիս:

## ԱՐԵԱԿ

Սե՛ր... և եղե՛ռն...

## ՊԱՐ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ

Դողա 'նօրեն, դողացեք վատք  
Զի վերահաս է ժամն ետին:  
(Մըրիկն պայթի)

## ՊԱՐ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ

Անե՛ծք... վրե՛ժ...

## ՓԱՌԱՆՁԵՄ

Փութա՛, փախչինք. ի՛նչպիսի գերեզմանական տիսուր ձայն  
մը՝ արհավրոք կ'պակուցանե զիս:

## ԱՐՇԱԿ

Ո՛վ սոսկումն... գերեզմաններեն դուրս կ'ելլան բոլոր  
անոնք զոր սպանեցի:

(Արձանանան ստվերք):

## ԱՐՇԱԿ և ՓԱՌԱՆՁԵՄ

Ի՛նչ հռնտյուն մահագույժ  
Զորս զին կը գոռա.  
Ի տիեզերս սկասքող  
Փայլակըն շողա:  
Արյանց ծով փրփրագեղ  
Կ'ողողե զերկիր:  
Դիակներ կ'զգայուն  
Կոհակը ՚ի կայտիռ:  
Ահավոր վիրապներ  
Ոտքիս տակ են բացվեր:

## ՍՏՎԵՐՔ

Անօրեն ամոլք  
Հանդերձյալ ցավոց  
Այս ահեղ տեսիլ  
Նախերգանքն է լոկ:

## ԱՐԾԱԿ

Կը մոտենան զայրացյալ սովերք:

## ՓԱՌԱՆՁԵՄ

Փախչինք...

## Ա. ՍՏՎԵՐ

Ե՞ս քու Տիրան հայրդ եմ:

## Բ. ՍՏՎԵՐ

Չե՞ս ճանչնար զ գնել:

## ԱՅԼ ՍՏՎԵՐՔ

Դավաճանությանդ զոհ եղած նախարարաց ցեղն ենք:

## ԱՐԾԱԿ

Ո՞վ սոսկումն:

## ՄԱՏԱՂ ՍՏՎԵՐ ՄԸ

Ու՞ր է մայրս, ո՞վ հափշտակեց զիս անոր անուշ գրկեն:

## ՓԱՌԱՆՁԵՄ

Այդ է Ոլոմպիո...

## ԱՐԾԱԿ

Իմ որդիս է դա... ո՞վ վիրավորեց զիհնքը...

## ՍՏՎԵՐՔ

Քու զոհերդ ենք՝ արքա.— անիծյալ եղիք...

## ԱՐԾԱԿ

Գթություն...

ՍՏՎԵՐՔ

Անիծյա՞լ...

ԱՐՇԱԿ

Գլթություն...

ՍՏՎԵՐՔ

Ո՛չ, չկա:

Թող հանդերձելույն պատոի վարագույր.  
Օ՛ն տես Փառանձեմ, տես և դու Արշակ  
ի՞նչ կը սահմանե ձեզ ճակատագիր.  
Տեսնեն ամբարիշտք ըզտիսուր ձեր վիճակ:  
Թշնամի սուսեց դեմ հալածական  
Հուսահատ մեռնիս յօտարին շղթայս.  
Եվ ընդ լյառն ու ձոր թափառ կողակիցդ  
Վայրի գաղանաց մտնվի ճիրանս:  
(Անհետ լինին ստվերք)

ԱՐՇԱԿ (Ցնորյալ)

Ո՛չ եկուր եկուր՝ հրեշտակ մըթության  
Թե չըկա ուստեք մեզ հույս գըթության՝  
Թող խիղճը լըռե և մերկ յոսկըստի  
Կանդնենք անվեհեր ըզգահն արքունի:  
Սուր պատե գերկիր... յաղետս ընդհանուր  
Ես ալ կը մոռնամ իմ բաղդըս տըխուր:

ՓԱՌԱՆՁԵՄ

Ուր ալ ո՛վ իշխան՝ կոչե բաղդն զմեզ,  
Զիս քովըդ պատրաստ միշտ պիտի գտնես.  
Թե յարյունազանդ ծիրանիս՝ և թե  
Պըսակյալ շիրմաց մութ նոճիներե՝  
Հանդերձյալ դարուց յանհուն օվկիան  
Հոգինիս մեկտեղ պիտի սլանան:

## ՀԱՆԴԵՍ Դ.

Այլ սրահ յարքունիս

## ՏԵՍԻԼ Ա.

ՈԼՈՄՊԻԱ, և ՊՈԼԻՔՍԵՆ

## ՈԼՈՄՊԻԱ.

Ինչպես կ'արբեցնե հոգիս անցելույն քաղցր հիշատակը.  
ո՞չ թույլ տուր ինձ յերազել, մեռնելե առաջ ներել կ'ուզեմ:

## ՊՈԼԻՔՍԵՆ

Քիչ մը հանդիսա շնորհե վաստակաբեկ մարմնույդ:

## ՈԼՈՄՊԻԱ.

Լսել կ'թվի ինձ մանկությանս երջանիկ օրերուն ախորժ  
նվագները:

(Գլուխը կ'հենու հանդէելու համար.— Տեսիլ. կ'երեան  
Բյուզանդիոն և Պոսփոր. հույլք մատաղ աղջկանց ծաղիկներ  
կ'սփռեն ելն. ելն):

## ՈԼՈՄՊԻԱ.

Ու՛ր կ'հեռանաք՝ ստվերք խաղաղության. հոս՝ հոգնած  
հոգվույս քով քիչ մը դաղրեցք: (Սթափելով): Ո՞չ զոք տեսար  
հոս՝ Պոլիքսեն:

## ՊՈԼԻՔՍԵՆ

Ոչ զոք:

## ՈԼՈՄՊԻԱ.

Հոս երեցան ինձ հույլք երանավետ ոդյաց որ քաղցրաբույր  
ծաղիկներով գլխուս պսակներ կը հյուսեին, հոգիս իրենց քաղցր  
նվագներով կ'զմայլեր:

## ՊՈԼԻՔՍԵՆ

Մեկը կուգա:

## ՏԵՍԻԼ Բ.

ՎԱՐԴԱՆ, ՆՈՒՅՆՔ, ՀԵտո ԱՐՇԱԿ

## ՎԱՐԴԱՆ

Ներսեսի բարձր խորհուրդը հաղթեց՝ և թագավորը ավելի  
մեղմ խորհրդոց տեղի տալով՝ նախկին պատվույտ կ վկայակոչե  
զքեզ:

## ՈԼՈՄՊԻԱ.

Ուշ է այսուհետեւ:

## ՎԱՐԴԱՆ

Ի՞նչ կ'պատվիրես որ ըսեմ թագավորին:

## ՈԼՈՄՊԻԱ.

Թե կը ներեմ իրեն և կը մեռնիմ:

ԱՐՇԱԿ (Մանելով)

Կը ներե՞ս Ոլոմպիա. ո՛չ կրկնե՛ կրկնե այդ քաղցրալուր  
ձայնը:

Ի փարատել զմութ գիշեր

Ուր դանդաչե թշվառ հոգիս

Մեկ հաշտության ժակիտ մ'այտեղ

Ո՛վ Ոլոմպիա՝ կաթեցուր յիս:

Անբիծ ճակտեղ ցոլացող լույս

Պարզե աչքերս և կը տեսնեմ

Թե յո՞ր վիրապ թագալեցա

Եվ ծնրադիր ներումն հայցեմ:

## ՈԼՈՄՊԻԱ.

Միթե ներո՞ւմն հայցե մըրիկ

Արմատախիլ ըրած ծաղկեն,

Միթե ներո՞ւմըն խնդրեն ծովք

Անդնդասույղը ըրած լաստեն:  
Այլ թող ցրվի զայրույթին անհետ,  
Վերադառնան նախկին վայրկյանք  
Թշվառ է սիրտս ու կարեվեր  
Այլ դարձյալ քուկդ է՝ ով Արշակ:

#### ԱՐՇԱԿ

Մեկդի՛ թող սուզն ու զայրույթը, բա՛ց սիրտդ բերկրանաց:

#### ՈԼՈՄՊԻԱ

Այս՛ մոռնալ կուզեմ ամեն բան, բայց միայն հավատարիմ  
ՀԱ սերը:

#### ՏԵՍԻԼ Գ.

Սրահ շքեղ

ԱՐՇԱԿ, ՈԼՈՄՊԻԱ, ՎԱՂԻՆԱԿ, ՆԱԽԱՐԱՐՔ

ՓԱՌԱՆԶԵՄ (Յերկուսն վարագուըին)

#### ԱՐՇԱԿ

Զվարթ հնչեն նվագները. (Հանդեսը կ'սկսի):

#### ՓԱՌԱՆԶԵՄ

Ժա՛մն հասավ:

#### ԱՐՇԱԿ

Ո՛վ երկինք... և ես հուսա՛լ համարձակեցա:

#### ՓԱՌԱՆԶԵՄ

Հուսա՛լ... և ի՞նչ:

#### ԱՐՇԱԿ

Լոե՛:

#### ՓԱՌԱՆԶԵՄ

Ես 'ի գործ կը փութամ:

ԱՐԴԱԿ

Հաղթեցիր՝ դժնդակը բաղդ:

ՓԱՌԱՆԶԵՄ

Ծիծաղե՛՛ ստվեր գնելա:

ՎԱՂԻՆԱԿ (ՈԼՈՅԱԼԻԱՅԻ)

ԶՀՐԱՊՈՒՐԵ զքեղ այդ ժպիտը. այդ խոսքերը կեղծ են,  
սրտին մեջ նենդություն կա:

ՈԼՈՄՊԻԱ (ՎԱՂԻՆԱԼԻ)

Բաղդիս պիտի հետեւիմ ուր ալ առաջնորդե ինձ, ալ չեմ  
կրնար հանդուրժել այսչափ Ականաց:

ՊԱՐ ԱՍՊԵՏԱՑ ԵՎ ԲԱՄԲԵԱՆՑ  
(ԳԻՒՎՈ բաժակը 'ի ձեռին)

Դու քաղցր 'ի լանջըս դյուցազանց  
Վառես աշխույժ

Բո՛ց օշարակ:

Երբ լիուլի դգչեն բաժակք  
Սիրտք մոռանան  
Զցավս համայն:

ՓԱՌԱՆԶԵՄ

Սիրտս 'ի դող՝ ո՛վ տիկին՝ ոտիցդ կ'մոտենամ, մի՛ մերժի՛  
կարեկիր զթությունդ ցնորյալ հոգվույս: Արժանի չեմ  
սրտմտությանդ:

ՈԼՈՄՊԻԱ

Արդար են երկինք:

ՊԱՐ

Թող դըռնչեն զվարժ երդովք  
Այս մեծաշուք արքունիք.  
Վերադարձավ ահ՝ ՈԼՈՅԱԼԻԱ  
Դառնան վայրկյանք երջանիկ:

Զերդ տովթահար վարդ որ ցողով  
Արշալուսույն կազդուրի՝  
Պայծառ ճակտին վրա ծիծաղ  
Նորաբողբոշ կը ծի:

### ԱՐԴԱԿ

Այս գվարթ բաժակը ցրվե սրտին դառնությունները:

### ՈԼՈՄՊԻԱ

Հուսո նշույլ մը կ'ողողե զիս, երջանկությունս կատարյալ է:

ՓԱՌԱՆՁԵՄ (Բաժակ մը մատուցանելով)

Այս երանավետ օրվանս մեջ՝ քու ներմանդ առհավատչյա ըլլա ձեռքես այս բաժակս ընդունել: (Ոլոմպիա կ'խմե):

### ՏԵՍԻԼ Դ.

ՆԵՐՍԵՍ և ՆՈՒՅՆՔ

ՆԵՐՍԵՍ (Ոլոմպիայի)

Ո՛չ, կեցիր՝ ինչ կ'ընես՝ կին դու թշվառ, մատնված ես:

### ԱՄԵՆՔ

Մատնվա՛ծ:

### ՆԵՐՍԵՍ

Թունավորված:

### ԱՄԵՆՔ

Ո՛վ երկինք:

### ՆԵՐՍԵՍ

Անդամք Արշակ և Փառանձեմ՝ ձեր ոճիրն է այս:

(Արշակ կայծակնահար կ'մնա, Փառանձեմ վայրենի հաղթանակավ հառաջ կ'մատչի):

## ՓԱՌԱՆՉԵՄ

Հիմա վրեժս լուծեցի:

Բարեպաստիկ ես և անմեղ

Իմ ամուսնույս հետ կ'ապրեի.

Մատնվելով ա՛հ.զոհ ինկա

Մեկ անօրեն բռնավորի:

Ինքն ոտնակոխ ըրավ հոգիս.

Ինքն ամուսինս ալ խողխողեց

Այն դաշույնով սրով անիսնա

Իմ ալեոր հայրս ըսպաննեց:

Վրիժուց համար լոկ կապրեի

Զինքն վհե վիհ քաշկոտեցի.

Հիմ՝ արյունով ահա ծածկյալ

Եղանք երկուքս ալ անիծյալ...

## ԱՄԵՆՔ

Երկնային արդարություն՝ քու հրամանացդ առջև  
դարձուրած գետնաբեկ կը խոնարհինք:

## ԱՐԴԱԿ

Ի՞նչ ըրի ես՝ հիմար. ո՞ւր մղեց զիս ամոթալից տոփանաց  
մոլեգնությունը: Ո՞հ գեթ լալ կարենար սիրտս, ո՞հ գեթ հուսալ  
կարենայի:

Տիեզերք մթության մեջ կ'ընկղմին, արյան ծովու մը մեջ  
կ'ընկլուզանի երկիր, գերեզման մը կը փնտռեմ՝ բայց ան ալ  
կ'զլանան ինձ:

## ՆԵՐՍԵՍ և ՔԱՀԱՆԱՅՔ

Աղոթից վարժած շրթունք լոեցին մինչև հիմա. բայց  
արդեն լրացավ բարկությունը, հանդու՞զն՝ զերկինս և զերկիր  
կ'իշխսս ի մարտ հրավիրել, հիմա լսե ինձմե քու վճիռդ:

Կ'անիծեն զքեզ բացված գերեզմանները, քու թափած  
արյունդ զքեզ կ'անիծե, լքյալ յերկրի՝ դատապարտյալ յերկնից,  
ամենքը կ'աղաղակեն քեզ «անիծյալ»:

## ՓԱՌԱՆՁԵՄ

Դժոխային բերկրանք կ' լնու զիս այդ սուգը. զվարթ  
կ' ժպտիմ փոթորկաց մեջ, մի՛ դողար՝ արքա, երկուքս ալ միանգա-  
մայն փշրեց այդ կայծակը:

Եվ դու՝ իմս Գնել՝ իմ ամուսինս, գոհ եղիր, տես ո՛ւր  
քաշկոտեցի քու ամբարիշտ մարդասպանդ. արյան մեջ թաթխված  
է, և հավիտենական ստվերաց մեջ ալ հետս պիտի իջնա:

## ՊԱՐ ԱՍՊԵՏԱՑ

Հայաստանի պատիվը զմեզ համախմբե՛ ո՛վ քաջեր.  
ծածանին յայերս ոսկեշող դրոշք. չորս դինչե մարտագոռ  
չոփինդը՝ ավետարեր Աղատութեան:

Զեն ՚ի ձեռին չիյնա պատերազմի մեջ՝ ո՛վ որ ցասման  
բոցերով չբորբոքիր՝ ո՛վ որ մահ չերդնուր այն ամբարշտին,  
որ արյանց մեջ ընկղմեց զՀայաստան:

## ՎԱՂԻՆԱԿ

Ո՛հ թե որ բոցեռանդն սերը կարենար կյանք ներշնչել  
նվազյալ սրտի մը... զքեզ փրկելու համար իմ կյանքս կուտայի,  
քու տեղդ մահը զիս կը հափշտակեր...

Ո՛ սնոտի իդձ... արդեն մահկանացու վարդերը իր  
այտերուն վրա կը թոռմին ... դեմքին վրա մթնշաղ ժպիտ մը կը  
փայլի... գլուխը կիսոնարհե... ավա՛ղ...

## ՈԼՈՄՊԻԱ. (ՑԱՌԵԼՈՎ)

Ատոնք Բյուզանդիոնի ծովափունքը չե՞ն... լուսնով  
արծաթափայլ կը շողան... և ալիքները փայփայող զեփյուռը  
մազերդ ալ կը գգվե՛ աղջիկ դու:

Մայրդ սիրատարփ կը հսկե վրադ, և քեզի համար  
ծաղիկներ ու թագեր կերպե. քու շրթանցդ վրա կը հանգուցանե  
իր շրթունքը. ո՛րչափ գեղեցիկ է առավոտդ՝ ով կույս...

## ՊԱՐ ՏԻԿՆԱՆՑ

Դու որ այնչափ անգութ ցավեր կը եցիր՝ գլա՞ իրեն  
տիրամայր. ճակատ փշապսակ սիրտ նետահար՝ կը կողկողի:

Թող եթերային գնդերդ երկնավոր լույսեր սփռեն իր,  
դերեզմանին մթության մեջ. դու ընդունե՛ հոգին՝ Աստված. գլա՞  
իր այնչափ տառապանաց:

(Ելանեն խռովյալք Արշակ և Փառանձեմ. անոնց ետևեն  
կ'երթան Հայրապետը և քահանայից պարը)

## ՊԱՐ

Մա՛հ անդամին:

## ԱՐԵԱԿ

Ապստամբաց աղաղակներ մահս կը խնդրեն:

## ՊԱՐ

Մահ անդամ ամոլին. և վրեժն ՚ի գլուխ ելլա:

## ԱՐԵԱԿ

Դողացեք վատեր. ձեզի կ'սպասե մահը:  
(Տեսարանեն կ'անցնի սուսերամերկ)

## ՏԵՍԻԼ Ե.

ՈԼՈՄՊԻԱ, ՊՈԼԻՔՍԵՆ, ՊԱՐ ՏԻԿՆԱՆՑ

## ՊՈԼԻՔՍԵՆ

Չես սթափվիր դեռ՝ դուստր իմ:

## ՈԼՈՄՊԻԱ

Հետո ես՝ Պոլիքսեն, սիրտս բերկրանոք կ'զեղանի... լո՛ւյլի  
լո՛ւյս կ'ուզեմ: Ո՛վ Աստված դու իմ անգութ ցավոց մեջեն քաղ  
իմ հոգիս՝ ինչպես փշոց մեջեն վարդը:

Ով դուք թշվառ մեկ սրտի  
 Հետին ժամուն ըսփոփանք  
 Ոհ գըթությամբ լըսեցեք  
 իրեն ըլթանց հուսկ բաղձանք:  
 Երբոր մեռնիմ՝ հանգուցեք  
     Զիս սիրեցյալ զավկիս քով,  
     Եվ գերեզմանս մի՛ խռովեք  
     Հառաչանոք ու արցունքով:  
 Նոճիք միայն շուք սփռեն  
     Պառկած հողիս ՚ի ծաղկունս  
     Եվ տերեոց մեջ զեփյուռն  
     Թող օրբելու գա իմ քունս:  
 Բայց ո՛չ արգեն զհոլաթես  
     Պարզե հողիս դեպ յերկին,  
     Եվ մըթությանց անդր ՚ի խոր  
     Սիրո աշխարհք կը փայլին:  
 (Շունդն զինուց)

### ՊՈԼԻՔՍԵՆ

Ի՞նչ աղմուկէ է:

ՊԱՐ (Արտաքո)

Մա՛չ Արշակա. կեցցե՛ Ռոմպլիա:

ՈԼՈՄՊԻԱ (Նվազելով)

Խաղաղություն:

ՊԱՐ

Ինկավ ամոլն անգդամ  
 Լուծվեցավ վրեժն Ռոմպիա  
 Վերկենցաղե՛, Հայրենիք,  
 Ռողիսդ ինկած է ահա:

ՎԱՂԻՆԱԿ (Մտանե սուսերամերկ)

Հաղթություն, այո՛, հաղթություն. այսպես կործանեց  
Ասոված անօրենները: (Ոլոմպիա տեսնելով): Ազատեցա՛ր  
Ոլոմպիա:

ՈԼՈՄՊԻԱ.

Այո՛, կը մեռնիմ:

ՎԱՂԻՆԱԿ

ԱՇ...

ԱՄԵՆՔ

Անագորո՛ւյն ճակատագիր...

1871

# ՀԱՎԵԼՎԱԾ 2

# ՏԻԳՐԱՆ ԶՈՒԽԱՑՅԱՆ

## ԱՐԵԱԿ ԵՐԿՐՈՐԴ<sup>1</sup>

ՕՊԵՐԱ

4 գործողությամբ, 6 պատկերով

---

<sup>1</sup> «Արշակ Երկրորդ» օպերայի լիբրետոն շարադրված է (առաջին անդամ) ըստ օպերայի անսիալ աշխատանքային կլավիրի, որը գտնվում է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում եռորդ իրականացվել են «Արշակ Երկրորդի» բեմադրությունները:

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

- Ա ր շ ա կ ՝ Ե ր կ ը ո ր դ, Հայոց արքա ..... բարիտոն  
Օ լ ի մ պ ի ա, Նրա կինը ..... սոպրանո  
Փ ա ռ ա ն ձ ե մ, իշխանուհի ..... մեցյո-սոպրանո  
Ն ե ր ս ե ս Կ ա թ ո ղ ի կ ո ս ..... բաս  
Վ ա ս ա կ Մ ա մ ի կ ո ն յ ա ն, Հայոց սպարապետ ..... բաս  
Տ ի ր ի թ, Արշակ Երկրորդի եղբորորդին ..... տենոր  
Ս պ ա ն դ ա ր ա տ Կ ա մ ս ա ր ա կ ա ն ..... բաս  
Դ ը ա ս տ ա մ ա տ ..... տենոր

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

## ՊԱՏԿԵՐ I

### N 1 ԽՄԲԵՐԳ

Ե թ գ չ ա խ ո ւ մ բ  
( ս ո պ լ ր ա ն ո ն ե ր , ա լ տ ե ր , տ ե ն ո ր ն ե ր , բ ա ս ե ր )

Արդ մերն է հաղթանակը,  
Նենդ, դաժան Շապուհն է պարտված, լքյալ,  
Մեր երկրում նորեն հայրենի  
Թող ծաղկե պայծառ շեն կյանքը երջանիկ:

Ս ո պ լ ր ա ն ո ն ե ր և ա լ տ ե ր  
Փա՛ռք քեզ, Արշակ, դու արքան մեր մեծ:

Ս ե ն ո ր ն ե ր և բ ա ս ե ր  
Փա՛ռք քեզ, Արշակ, դու արքան մեր մեծ:

Ս ո պ լ ր ա ն ո ն ե ր և ա լ տ ե ր  
Փա՛ռք քեզ, Վասակ, սպարապետ, դու մեր:

Բ ո լ ո ր ը  
Արքա, արի անմար փառքով պսակեցիր  
Հայաստանը սրբազան,  
Փա՛ռք քեզ, Հայրենյաց զավակունք քաջարի,  
Խիզախ, անվեհեր գոռ պաշտպաններիդ:

Ս ո պ լ ա ն ո ն ե ր և ա լ տ ե ր

կուսանք հայոց արդ ցնծացեք, նոր կյանք,  
նոր սեր նորեն ծաղկեն ազատ երկրում մեր,  
Հասել է ժամը, ժամը հանդիպման, հուրը  
Անշեց սիրո պահել եմ քեզ համար անմար:

Տ ե ն ո ր ն ե ր և բ ա ս ե ր

Կյանք թե արյուն մենք չենք խնայել,  
Եր Սպարապետ մեր քաջ Վասակն արի,  
Զի սասանի մեղ պարսիկ նենդ, քանի  
Կա, իշխում է մեր Արշակն արի:

Բ ո լ ո ր ը

Արդ մերն է հաղթանակը,  
Նենդ, դաժան Շապուհն է պարտված, Լքյալ,  
Մեր երկրում նորեն հայրենի թող  
Ծաղկե պայծառ շեն կյանքը երջանիկ:

Ս ո պ լ ա ն ո ն ե ր և ա լ տ ե ր

Փա՛ռք քեզ, Արշակ, դու արքա մեր մեծ:

Տ ե ն ո ր ն ե ր և բ ա ս ե ր

Փա՛ռք քեզ, Արշակ, դու արքա մեր մեծ:

Ս ո պ լ ա ն ո ն ե ր և ա լ տ ե ր

Փա՛ռք քեզ, Վասակ, Սպարապետ, դու մեր:

Տ ե ն ո ր ն ե ր և բ ա ս ե ր

Փա՛ռք քեզ, Վասակ, Սպարապետ, դու մեր:

## Բ ո լ ո ր ը

Արքա, արի անմար փառքով պսակեցիր  
Հայաստանը սրբազան,  
Փա՛ռք քեզ, փա՛ռք քեզ,  
Փա՛ռք քեզ, հայրենյաց զավակունք քաջարի,  
Քաջարի, անվեհեր մեր պաշտպաններիդ:  
Յնձա՛երկիր, չքնաղ իմ Հայաստան,  
Յնձա՛դու, ազգ իմ դյուցազունների, ցնձա՛:  
Քանց վառ արև պատիվդ է, վառ արևի պես  
Հղորությունն է լույս սկիռում:

Տ ե ն ո ր ն ե ր և լ ո ր ա ս ե ր

Փա՛ռք քեզ, փա՛ռք քեզ, վեհ Արշակ:

Բ ո լ ո ր ը

Փա՛ռք քեզ, փա՛ռք քեզ, մեծ արքա:

Տ ե ն ո ր ն ե ր և լ ո ր ա ս ե ր

Փա՛ռք քեզ, փա՛ռք քեզ, Հայաստան:

Բ ո լ ո ր ը

Փա՛ռք քեզ, փա՛ռք քեզ, Հայաստան,  
Դու անմահ ես, Հայ ժողովուրդ,  
Դարերում անմահ է փառքդ Հավետ:  
Դու չքնաղ ես, Հզոր արքա,  
Դու Հզոր ես, չքնաղ Արշակ:  
Երջանիկ փայլով քո դեմքը Հար շողա,  
Հաղթի՛ր, վառ փայլով Հար սուրդ շողա,  
Հաղթի՛ր, վառ փայլով Հար սուրդ շողա,  
Հաղթի՛ր, վառ փայլով Հար սուրդ շողա,  
Ապրի՛ր դու, մեր արքա, դու  
Շանթ ու մահ տուր թշնամյաց բյուր,  
Գովք քեզ, գովք քեզ, արքա դու մեծ,

Հպարտանք դու մեր, քեզ գովք,  
Քեզ արև, երկար օրեր,  
Ի ցնծում մեզ ամենիս  
Արքա, Արշակ, քեզ գովք:

## N 2

ԱՐՇԱԿԻ ԵՎ ԵՐԳՉԱԽՄԲԻ ՏԵՍԱՐԱՆԸ

Ա. Բ Հ Ա Կ

O', սիրեցյալ իմ, վեհ ժողովուրդ, ողջույն քեզ:

Ե Բ Գ Հ Ա Կ Ո Ւ Մ Բ

Ապրի՛ր դարեր:

Ա. Բ Հ Ա Կ

Անմահ ես դու, իմ ժողովուրդ, առ քեզ՝ ողջույն:

Ե Բ Գ Հ Ա Կ Ո Ւ Մ Բ

Ապրի՛ր դարեր:

Ա. Բ Հ Ա Կ

Հույժ բերկրանքով եմ լսում շեփորն փառքի գոռ,  
Հայրենիքիս սուրբ ձայնն եմ ես լսում վեհ,  
O', դու պարծանք իմ:

Ե Բ Գ Հ Ա Կ Ո Ւ Մ Բ

Հույժ բերկրանքով ենք լսում շեփորն փառքի գոռ,  
Հայրենիքի սուրբ ձայնն ենք լսում վեհ,  
O', հպարտանք դու, դու մեր արև վառ...

Ա. Բ Հ Ա Կ

Մենք հպարտ ենք այսօր, է Աստված մեր զորավիդ,  
Ոսոխ նենդ Շապուհը վտարված է մեր երկրից,

Առ կյանք, անդորր, իմ հայրենիք, քո որդվոց արյամբ  
գնված,  
թող նրանց հիշատակը սուրբ հավերժ վառ կենա:

### Ա. Լ տ ե ր և տ ե ն ո ր ն ե ր

Մենք հպարտ ենք այսօր, թող Աստված մեզ միշտ փրկի,  
Ոսով նենդ Շապուհը վտարված է մեր երկրից,  
Առ կյանք, անդորր, իմ հայրենիք, քո որդվոց արյամբ  
գնված,

թող նրանց հիշատակը սուրբ հավերժ վառ կենա:

Կյանք, անդորր քեզ, հայրենիք,

Կյանք, անդորր քեզ, հայրենիք

Կյանք, անդորր քեզ, հայրենիք,

Կյանք, անդորր քեզ, հայրենիք:

### Ա. Բ շ ա կ և ա լ տ ե ր և տ ե ն ո ր ն ե ր

Հրճվի՛ր խաղաղության հովանու ներքո, երկիր,

Դու բարեբեր հող իմ երկրի, ծաղկի՛ր փարթամ,

Անհուն իմ սերը արդ ստանձնիր դու, քաջ իմ ժողովուրդ,

թող հավետ փառքը քո փայլի որպես վառ արե:

### Ա. Լ տ ե ր և տ ե ն ո ր ն ե ր

Ապրի՛ր, հար ապրի՛ր դու, արքա մեր մեծ:

### Ա. Բ շ ա կ

Դու անմահ ես և կմնաս անմահ:

## N 3

### ՏԵՍԱՐԱՆ

ԱՐԴԱԿ, ՎԱՍԱԿ, ՆԵՐՍԵՍ ԵՎ, ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

### Ե ր դ չ ա խ ո ւ մ բ

Վառ ծաղկունք պայծառ մեզ փառք ու գովք են արդ  
երգում վեհ,  
Փա՛ռք տոհմին Արշակունյաց, փա՛ռք տոհմին  
Մամիկոնյաց:

Ա. թ չ ա կ

Փա՛ռք Վասակին արի, փա՛ռք,  
Նեցուկ գահի և երկրի պարծանք դու:

Վ ա ս ա կ

Իմ մեծ արքա, ի փառու քո և իմ երկրի ես կյանքս կղոհեմ:

Ե թ գ չ ա խ ո ւ մ թ

Վառ ծաղկունք պայծառ մեղ փառք ու գովք են արդ  
Երգում զեհ,

Փա՛ռք տոհմին Արշակունյաց քաջ:

Ս ո ս լ թ ն ո ն ե թ և ա լ տ ե թ

Փա՛ռք տոհմին քաջ Մամիկոնյաց,  
Փա՛ռք մեծ, փա՛ռք մեծ:

Տ ե ն ո թ ն ե թ և ա ս ե թ

Թո՛ղ բարձրյալ Աստծո օրհնությունը զձեղ հավետ  
զորավիրա:

Ն ե թ ս ե ս

Մեծն մեր Աստված օրհնի զքեղ, արքա՛, արքայածին մեր,  
Դարեր ու դարեր թող անսպառ լինի տոհմը Արշակունյաց  
մեծ:  
Դու, Արարիչ, մարտերում ահեղ, ազգն իմ դու չլքեցիր,  
Հափ'ր, դու ընտրյալ հոտի քո աղերսը առ քեղ, Արարիչ  
մեր:

Ն ե թ ս ե ս ե ս և ե թ ե թ գ չ ա խ ո ւ մ թ

Ամենակարող Արարիչ մեր:

Ա. թ չ ա կ

Հափ'ր դու իմ աղերսը խոնարհ:

Ն ե ր ս ե ս և ե լ ե ր դ չ ա խ ո ւ մ ը  
Ամենակարող Արարիչ մեր:

Ա ր շ ա կ

Դու պահպանի՛ր ժողովուրդս հավետ:

Ն ե ր ս ե ս

Օ՛, այր քաջարի, և դու օրհնյալ լինես,  
Երկրի գահին նեցուկ պատիվ դու,  
Դու լեռ հար Վասակ արքայի հետ միաբան,  
Հայոց երկիրն է անխորտակ առ միշտ:

Վ ա ս ա կ

Հոգով թե սրտով քեզ հետ եմ միշտ,  
Հզոր ժողովուրդ իմ, փա՛ռք քեզ,  
Քանի բազկիս մեջ է սուրը իմ նախնյաց,  
Մահ թշնամյաց քո, հայրենիք չքնաղ:

Վ ա ս ա կ և ե ր դ չ ա խ ո ւ մ ը

Ամենակարող Արարիչ մեր:

Վ ա ս ա կ

Հսի՛ր դու իմ աղերսը խոնարհ:

Ե ր դ չ ա խ ո ւ մ ը

Ամենակարող Արարիչ մեր:

Վ ա ս ա կ

Դու պահպանիր ժողովուրդս հավետ:

Ե ր դ չ ա խ ո ւ մ ը

Մեծն մեր Աստված օրհնի զքեզ, արքա, արքայածին մեր՝  
Դու լեռ հար Վասակ արքայի հետ միասին,

Եղ մեզ չեն հաղթի երբեք,  
Մեզ չեն հաղթի, ո՞չ, երբեք,  
Մեզ չեն հաղթի, ո՞չ, երբեք:

Ա, ը շ ա կ, Վ ա ս ա կ և Ն ե ր ս ե ս

Մեզ չեն հաղթի:

Ե ր դ չ ա խ ո ւ մ ը

Մեզ չեն հաղթի:

Ա, ը շ ա կ, Վ ա ս ա կ և Ն ե ր ս ե ս

Գոռ թշնամիք:

Ե ր դ չ ա խ ո ւ մ ը

Գոռ թշնամիք, անմահ դու լիու,  
Օ՛, հայրենիք իմ, Հայաստան:

#### N 4

##### ՏԵՍԱՐԱՆ

ՓԱՌԱՆՁԵՄ, ՕԼԻՄՊԻԱ, ԴՐԱՍԱՄԱՏ, ՏԻՐԻԹ,  
ՍՊԱՆԴԱՐԱՏ, ԱՐՇԱԿ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՄԲԵՐԳ

Ա, ը շ ա կ

Փառանձեմ, և դու եկար ողջունելու,  
Ուրախ եմ, մոտեցիր ինձ,  
Բայց սեազգեստներով երբեք չեն  
Արքայի մեծ տոնը ողջունում:

Դ ը ա ս ա մ ա տ

Ների՛ք, արքա, այրուն հեզ վշտահար,  
Անզոր է մոռանալ իր վիշտը խոր:

Ա. Բ Հ Ա Կ

Մոտ եկ, մոտ, Փառանձեմ:  
Այդպես տիսուր:

Փ ա ռ ա ն ձ ե մ

Օ՛, դու, մեծ արքա, դու մեր, հաղթակիր մեր,  
Ողջույն առ քեզ անմխիթար այրուց,  
Հանուր ժամին ցնծության  
Աղերսում եմ քեզ, ով արքա,  
Ողորմած եղիր առ ինձ:

Ա. Բ Հ Ա Կ

Ել ոտքի, գեղեցկուհի Սյունյաց,  
Եվ մի ստորացնիր քեզ դու ի դեմ բազմաց,  
Ասա՛, քեզ ո՞վ է նեղել, խոսի՛ր:

Փ ա ռ ա ն ձ ե մ

Բախտն է ինձ խոցել դաժան,  
Անգութ է բախտը իմ, անգութ,  
Սյամ աղերսում եմ, տեր,  
Թո՛ղ, որ ես Սյունիք դառնամ:

Տ ի լ ի թ

Տե՛ս, ինչ հանդուգն արարք, ինդրել ի դեմ բազմաց,  
Բայց արդյո՞ք սա մի ծպտյալ բողոք չէ դեմ քո, իմ արքա՛:

Ա. Բ Հ Ա Կ

Տիրիթթ, վստահ ես դու:

Փ ա ռ ա ն ձ ե մ

Օ՛, թո՛ղ դառնամ հայրենի լեռները,  
Թո՛ղ, միայն այնտեղ հանդիստ կառնեմ,

Թախծուտ դեմքով, սգաշոր հագիս՝  
Զքնաղ ապարանքիդ վայել չեմ լինի:  
Օ՛, ողորմած եղիր, արքա,  
Միթե աղերսս գութդ չի շարժի:

Փ առանձին

Արքա դու մեծ, ողորմած եղիր, թո՛ղ ես գնամ  
Սյունիք, այնտեղ միայն հանգիստ կառնեմ:

Միանին

Դը աստամատ

Դու ողորմած եղիր, արքա, լսի՛ր աղերսը նրա:

Ա. ըշակ

Ի՞նչ չքնաղ է նա, թեպետ թախիծ կա աչքերում:

Տիրիթ

Կասկածից դուրս է՝ նա, արքա, զուր չէ սգաղգեստ,  
չարձակես դու նրան, թող նա մնա այստեղ:

Դը աստամատ

Թող դառնա Սյունիք՝ աղերսը դու լսիր նրա:

Ա. ըշակ

Ի՞նչ չքնաղ, գեղեցիկ, թեպետ վշտահար:

Փ առանձին

Դու ողորմած եղի՛ր, լսի՛ր աղերսը,

Փ առանձին

Ինձ արձակիր լեռներն իմ անդորր, անդ ես կգտնեմ,  
հանգիստ կառնեմ: Սյունյաց երկրում հանգիստ  
կառնեմ, Սյունյաց երկրում, ա՛իւ:

Միանին

Դ թ ա ս տ ա մ ա տ

Արձակիր նրան, արքա, լիի՛ր աղերսը մեր, լեր գիմառատ  
աղերսին մեր, լեր ողորմած դու, արձակիր, արձակիր,  
թող, արքա:

Տ ի ր ի թ

Ոչ, նրան դու չարձակես, պետք չէ, պետք չէ, արքա,  
թող նա մնա այստեղ, արքա, դու չարձակես նրան,  
արքա, չարձակես, չարձակես:

Ա, թ շ ա կ

*O'*, ինչո՞ւ է նա այսպես համառ, կամակոր. ուզում եմ  
ես պարզել ամենը: *O'z*, արդյոք ճիշտ է կասկածը:  
Տիրիթի, պետք է որ ճշտել, իրոք, ամենը:  
Մինչ այդ չի դառնա Այունիք երբեք, ոչ:

Փ ա ռ ա ն ձ ե մ

Աղերսալից խնդրում եմ քեզ, այնտեղ միայն հանդիսատ  
կառնեմ:

Ա, թ շ ա կ

Ուզում եմ քեզ տեսնել, բայց ոչ այստեղ և ոչ թախծուտ,  
սկազգեստ, լուռ:

Ա պ ա ն դ ա ր ա տ

Թագուհի մեր *Oլիմպիան*:

Ա, թ շ ա կ

Ուրախ եմ, ո՞ւր է նա:

Ա պ ա ն դ ա ր ա տ

Եվ հետն դեսպանք Բյուզանդիոն երկրի Վաղես կայսեր:

Ա, թ շ ա կ

Բնավ ուրախ չեմ ես նրանց այցին, իշխան Սպանդարատ,  
*Oլիմպիա*, թագուհիդ իմ, ողջույն առ քեզ:

## Օ Լ Ի Մ Ա Լ Ի Ա

Օ՛, Տիրակալ ամուսին իմ, առ քեզ ողջույն,  
Հաղթողին անհավատների փառք մեծ,  
Դու, Հայոց և բյուզանդիոն նենդ թշնամյաց Հաղթող:

## Ա Ր Հ Ա Կ

Լոկ թշնամյաց Հայոց:

## Օ Լ Ի Մ Ա Լ Ի Ա

Բյուզանդուչի եմ ես, ողջունում են քեզ դեսպանք մեծ  
Վաղեսի:

## Ա Ր Հ Ա Կ

Դեսպանք թող սպասեն:  
Առ քեզ նորեն ողջույն, իմ վեհ ժողովուրդ:

## Ե Ր Գ Հ Ա Խ Ո Ւ Մ Բ

Վառ ծաղկունք պայծառ քեզ փառք ու  
Գովք են արդ երգում վեհ,  
Փա՛ռք տոհմին Արշակունյաց քաջ,  
Փա՛ռք տոհմին քաջ Մամիկոնյաց, փա՛ռք մեծ,  
Փա՛ռք տոհմին Արշակունյաց մեր, փա՛ռք մեծ,  
Փա՛ռք տոհմին Արշակունյաց մեր, փա՛ռք մեծ,  
Փա՛ռք մեծ Մամիկոնյաց տոհմին մեծ,  
Փա՛ռք Ներսեսի տոհմին, փա՛ռք մեծ,  
Փա՛ռք մեծ Մամիկոնյաց տոհմին մեծ,  
Փա՛ռք Ներսեսի տոհմին մեծ,  
Փա՛ռք մեծ Հայ ժողովուրդ մեր, խիզախ դու  
Ազգ մեր՝ ապրիր դարեր դու, ապրիր Հավետ դու,  
Դու երջանիկ ազգ, օ՛, դու հերոս:

## ՊԱՏԿԵՐ II

N 5

ՓԱՌԱՆՁԵՄԻ ԵՎ ԱՐՇԱԿԻ ԶՈՒԳԵՐԳԸ

Ա. բ շ ա կ

*Օ՛չ, ինչ գեղեցիկ ես, Փառանձեմ, նման սեղ դիցուհու  
Մի մթագնիր գեմքդ լույս, մի՞թե կանչս քեզ վշտացրեց:*

Փ ա ռ ա ն ձ ե մ

*Արքա, կատարեցի քո կամքը ես, եկա առ քեզ, տեր,  
Լույս ծածկոցով պատված է վիշտն մթին իմ,  
Օ՛, տեր, կատարիր դու էլ իմ խնդիրը հեղ:*

Ա. բ շ ա կ

*Այո՛, դու արժան ես, լինեմ ես գլխառատ,  
Բայց Այունիք դու չես դառնա:*

Փ ա ռ ա ն ձ ե մ

*Ո՛չ,  
Աստ երկինք, գետինք, ծաղկունք ինձ հիշեցնում են  
Դառնագին այն օրը նավասարդի  
Դժնի, երբ քո կամքով ահեղ իսկ  
Մահ դաժան առավ նա, Գնելը,  
Սիրած իմ ամուսինն անուշ:*

Ա. բ շ ա կ

*Գնելը քո անուշ ցանկաց հայրենիքն  
Ու արքային իր թշնամուն մատնել:*

Փ ա ռ ա ն ձ ե մ

*Ո՛չ, մի հավատա, բամբասանք է թշնամու խարդախ,  
Երջանկությունն իմ նրանք խորտակեցին:*

Ա. թ շ ա կ

Նա դավաճանեց:

Փ առ ան ձ ե մ

Դա ճիշտ չէ, ո՞չ:

Ա. թ շ ա կ

Երկրին հայրենի:

Փ առ ան ձ ե մ

Մի հավատա դու, արքա:

Ա. թ շ ա կ

Եվ կործանվեց:

Միասին

Փ առ ան ձ ե մ

Քանց շող սիրո ոգին՝ էր հրաշագեղ նա,  
 Քանց ձյունն իմ լեռանց՝ անբիծ ու անարատ էր նա,  
 Հուր բերկրալից սիրո Գնելն պարզեց ինձ,  
 Քանց երազն ոսկյա անցած օրերն իմ բերկրալից խնդուն:  
 Ազնիվ էր նա, ոչ չարագործ, դավաճան զաղիր,  
 Ու հայրենի երկրին չէր նա դավել երբեք:  
 Քանց շող սիրո ոգին՝ էր հրաշագեղ նա,  
 Քանց երկինք իմ երկրի՝ մաքուր ու ջինջ էր լույս  
 նրա հոգին:

Անմխիթար է կյանքն իմ, տեր:

Ա՛խ, նիրհել, անզգայանալ,  
 Ա՛խ, ցանկամ հավետ հանգչել:

Ա. թ շ ա կ

Օ՛, դու, մաքուր, անմեղ էակ,  
 Զարժեր նա քեզ և քո ազնիվ սիրույն:

Փ առանձին

Հոկ արցունքն է ինձ սփոփանք, տեր:

Ա. բշակ

Ուրվականն անշունչ գնելի միթե հզոր է, քանց խինդը  
կյանքի վառ, քանց փառքն ու կամքն արքայի, ո՛չ

Փ առանձին

Կյանքը էլ ինձ բերկրանք չէ, չեմ ուզում, որ լինի, ո՛չ:

Ա. բշակ

Սիրածը դավ նյութեց իմ և հայրենիքի դեմ,  
Կամեց տեսնել նա մահն իմ՝ գահն էր նրա տեսնչը:  
Վաղես կայսեր հետ դաշնով դավակից էր:  
Նա թշնամուն մեր երկիրն հանձնել կամեց:  
Գիտցիր, որ ակնհայտ է այդ դավաճանությունն նենգ,  
Դավաճան էր նա զաղիր, նա չէր արժան ազնիվ  
սիրուն քո:

Ո՛չ, մարդասպան չեմ ես, և արդար էր դատն իմ խիստ,  
Պատիվն իմ հայրենիքի, գահի կամեց  
Նրան մահվան դատապարտել:

Փ առանձին

Հսածս ահավոր է, ուխտադրուժ էր, դավադիր,  
Ո՛չ, անհավատալի է, գնելն իմ չէր կարող  
արքայասպան լինել:

Փ առանձին

Ուխտադրուժ էր իմ գնելն, ահավոր է հավատալ: Օ՛,  
ողորմած տեր, ես սիրում էի նրան ողջ հոգով,  
սիրում էի նրան ողջ հոգով:

Ա. բշակ

Մոռացիր դու նրան, մոռացիր հուշը նրա: Գնելն այն  
անարժան էր և՛ քեզ, և՛ քո գեղեցկությանը ցոլք:

Փառանձեմ

Դառն է իմ վիճակը, տեր, դժբախտ եմ ես,  
ինձ համար այլևս մոռացում չկա,  
Մորմոքով լեցուն օրերն իմ տեր, հանձնեմ,  
Ես մերժված եմ լույս երկնքից:  
Թող իմ բախտը դառը գութը քո շարժի,  
Կարեկից եղիր դու իմ վշտին,  
Օ՛, արքա դու մեծ, գթա, խղճա ինձ,  
Արդ կաթողին ես աղերսում եմ՝  
Թող ինձ, թող Սյունիք դառնամ:

Ա. Պշակ

Սյունիք, ո՛չ, չես դառնա դու, անկարող եմ ես,  
Դու կմնաս իմ պալատում արդ.  
Այդպես է կամքը արքայիդ քո,  
Վանիր թախիծ, դյութիչ էակ:

Փառանձեմ

Օ՛, արքա դու մեծ, գթա, խղճա,  
Արդ կաթողին ես աղերսում եմ՝  
Թող ինձ, թող Սյունիք դառնամ:

Փառանձեմ

Թույլ տուր ինձ, աղերսում եմ ես, թույլ տուր ինձ,  
աղերսում եմ ես:

Ա. Պշակ

Ո՛չ, մի՛ խնդրիր դու ինձ, Փառանձեմ, մի խնդրի՛ր դու<sup>1</sup>  
ինձ, Փառանձեմ:

Ա. Պշակ

Մնա դու...

Միասնական

Փ առ ան ձեմ

Չեմ մնա ես...

Ա, բ շ ա կ

Հնդիմանում ես դու ինձ:

Փ առ ան ձեմ

Դե, հրամայի՛ր սպանել:

Ա, բ շ ա կ

Ինչո՞ւ ես ինձ դաժան կարծում, դիցուհի,  
ես դաժան չեմ, Փառանձեմ:

Փ առ ան ձեմ

Ինչ դժբախտ եմ ես:

Ա, բ շ ա կ

Դրաստամատ, չքեղ պալատ կառուցել Փառանձեմին,  
Շքեղ խումբ տալ նրան:

N 6

ԱՐԵԱԿԻ ԵՎ ԴՐԱՍՏԱՄԱՏԻ ՏԵՍԱՐԱՆԸ

Դ բ ա ս տ ա մ տ տ

Արքա դու մեծ,  
Որպես քո հարճը նա կապրի այդ պալատում:

Ա, բ շ ա կ

Ո՛չ, իմ Դրաստամատ ազնիվ,  
Թոռ' նա զարդարի պալատն այդ,  
Շուք տա չքնաղ իր ցոլք գեղեցկությամբ,

Նա՛, դուստրը ազնիվ գոռ իշխան Անդովքի,  
Նա՛, Փառանձեմը հրաշագեղ...

Դ բ ա ս տ ա մ ա տ

Խոնարհվում եմ քո կամքի առաջ, տեր,  
Դեսպանք Վաղես կայսեր ծարավ են քո տեսքին, տեր իմ:

Ա. բ չ ա կ

Դեսպանք թող սպասեն...  
Կամենում եմ այժմ բախտն իմ փորձել,  
Օն որսի, օն արագ:

Դ բ ա ս տ ա մ ա տ

Ի՞նչ որսի՝ հենց հիմա:  
Արդ ուշ է որս փնտրել, արքա:

Ա. բ չ ա կ

Կուզեմ բռնել եղնիկ զարմանահրաշ,  
Որին որսալ ցարդ չեն կարող ոչ ոք:

Դ բ ա ս տ ա մ ա տ

Նետահարիր նրան:

Ա. բ չ ա կ

Զարդն բնության սիրիր, երկրպագիր, մի խոցիր:

ՏԵՐԻԹԻ ՌԵԶԻՍԵՏՎԱԾ ԵՎ ԱՐԻՈԶՈՆ

Տ ի լ ի թ

Որսում է եղնիկին արքան, ժամ անպատեհ,  
Զգաստ, Տիրիթ, որսում է նա Փառանձեմին:  
Ո՛չ, Արշակ, սիսալվում ես դու.  
Գնելին կործանեցի ոչ թե նրա համար,

Որ Փառանձեմն քո հարճը դառնա:  
 Նրա համար չեմ ես հանդեպ գահին քո  
 Դավ, նենգություն, զայրույթ խիստ սերմանում,  
 Որ դու այսուհետ էլ արքա լինես:  
 Ո՛չ, ո՛չ, գոռող արքա, վախճանը մոտ է քո, մոտ:  
 Օ՛, այսօր դու գոռ հաղթող ես,  
 Գիտցի՛ր, վաղը պարտված կլինես,  
 Թշնամիդ եմ, ես բարեկամ եմ  
 Շապուհին մեծ՝ քեզ մահ կտանք:  
 Դավաճան եմ ես, մատնիչ, թե նենգ  
 Արքայասպան զաղիր: Ո՛չ և ո՛չ...  
 Արշակի կամքով երբեք ես  
 Չեմ լինի հայոց արքա, ո՛չ:  
 Պետք է թագը իմ ձեռքով առնեմ,  
 Կործանում տամ թշնամյաց իմ:  
 Դե սոսկա խենթ, գոռող Արշակ դու,  
 Կործանումդ եմ նյութել ես քո,  
 Մահ դաժան և անարգանք սե  
 Իմ ջանքով իսկ քեզ են սպասում:  
 Իսկ ինձ սպասում է թե՛ թագն արքայական,  
 Թե՛ Փառանձեմը՝ իմ չքնաղ թագուհին.  
 Կերկրպագեմ ես նրան:

## N 7

ՕԼԻՄՊԻԱՅԻ ԵՎ ՍՊԱՆԴԱՐՍՏԻ ՏԵՍԱՐԱՆԸ ԵՎ ԶՈՒԳԵՐԳԸ

Օ լ ի մ պ ի ս  
 Որտե՞ղ է տերն իմ, չգիտե՞ս դու այդ, Տիրիթ:

S ի ր ի թ
